Ակադեմիական գրադարան

ԿԼԱՐԱ ԲԱՐՏՈՆ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆՊԱՍՏԱՎՈՐՈՒՅՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ

934030 947.925

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԼԱՐԱ ԲԱՐՏՈՆ

ՁԵԿՈՒՅՑ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ

Ա 99386

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՄԱՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2012

ՀՏԴ 941 (479.25) (042.3
ԳՄԴ 63. (2Հ) 52
Բ 375

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Զեկույցի թարգմանությունն ու հրատարակումը հնարավոր են դարձել Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության աջակցության շնորհիվ

The translation and publication of this report was made possible through the support of the Embassy of the United States of America in the Republic of Armenia

Բարտոն Կլարա
Բ 375 Զեկույց: Ամերիկյան Կարմիր խաչի նպաստամատույց առաքելությունը Փոքր Ասիա / Կ. Բարտոն, թարգմ. անգլերեն բնագրից՝ Խաժակ Դրամփյանի, Անժելա Ղասաբյանի. - Եր.: Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, 2012. – 194 էջ:

Սույն հրատարակությունը ներկայացնում է «Ամերիկյան կարմիր խաչ» կազմակերպության հիմնադիր և նախագահ, ամերիկյան պատմության նշանավոր դեմքերից մեկի՝ Կլարա Բարտոնի կազմակերպած նպաստամատույց առաքելության զեկույցը՝ 1895-1896 թթ. համիդյան կոտորածներից տուժած հայ բնակչությանն օգնություն տրամադրելու մասին: Այս հատորը չափազանց կարևոր տեղեկություններ է պարունակում Կ. Բարտոնի գլխավորությամբ իրականացված մարդասիրական առաքելության չորս արշավախմբերի գործունեության մասին, մանրամասն նկարագրելով կոտորածներից փրկված հայերին օգնություն ցուցաբերելու դժվարին գործի կազմակերպումը:

ՀՏԴ 941 (479.25) (042.3
ԳՄԴ 63. (2Հ) 52

ISBN 978-9939-822-22-8

© Կլարա Բարտոն, 2012.
© ՀՅԹԻ, 2012.

«ՄԱՐՏԱԴԱՇՏԻ ՀՐԵՇՏԱԿԻ» ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1896 թ. փետրվարին «Ամերիկյան Կարմիր խաչ»-ի հիմնադիր և նախագահ, մեծ մարդասեր Կլարա Բարտոնը ժամանեց Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս՝ կազմակերպելու և ղեկավարելու 1894-96 թթ. կոտորածներից տուժած հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու աշխատանքները: Թեև Ամերիկյան Կարմիր Խաչի այս առաքելության մանրամասները ժամանակին լայնորեն լուսաբանվել են ամերիկյան և հայկական մամուլում, պատմագիտական աշխատություններում, դրանք դեռևս չեն դարձել մասնագետների հատուկ ուսումնասիրության առարկա:

1922 թ. հայ հասարակական-քաղաքական գործիչ և դիվանագետ Գարեգին Բաստերմաջյանը ճշմարտացիորեն գրում էր. «1895 թ. մեծ կոտորածից հետո, Կլարա Բարտոնի անձնական օրինակի շնորհիվ, մենք հայտնաբերեցինք ևս մեկ քրիստոնյա տերություն և ազգ, որը նվիրված է մեր ընդհանուր կրոնի վսեմ սկզբունքներին, հանդիսանում է ազատության և արդարության չեմպիոն, բոլոր ճնշված և տառապյալ ժողովուրդներին օգնության ձեռք մեկնող բարեկամ: Մենք երախտապարտ ենք Կլարա Բարտոնին, նա առաջինն էր այն ամերիկացիներից, որոնք ոգեշնչեցին մեզ այդ հավատով»:

Կլարիսա (Կլարա) Հարլոու Բարտոնը ծնվել է 1821 թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ Մասաչուսետս նահանգի Նորդ Օքսֆորդ քաղաքում՝ բարեկեցիկ ֆերմեր Ստեֆանի և տնային տնտեսուհի Սառայի ընտանիքում: Նրանք ունեին հինգ երեխա, որոնցից ամենակրտսերը Կլարան էր: Նա այնքան խելացի և ուշիմ երեխա էր, որ իր ավագ եղբայրների և քույրերի օգնությամբ ոչ միայն կարողացել էր ինքնուրույն ուսում ստանալ, այլև 17 տարեկան հասակում սկսել էր դասավանդել դպրոցում: 1850 թ. նա ընդունվում է Նյու Յորք նահանգի Քլինտոն քաղաքի Լիբերալ ինստիտուտը, իսկ երկու տարի անց հիմնում Նյու Ջերսի նահանգի առաջին հանրային դպրոցը Բորդենթաուն քաղաքում: 1854 թ. Կլարա Բարտոնը մեկնում է ԱՄՆ մայրաքաղաք Վա-

շինգտոն, ուր աշխատանքի է ընդունվում ԱՄՆ Արտոնագրային գրասենյակում: Այդ ժամանակ սա բացառիկ դեպք էր, երբ ԱՄՆ-ում կինը աշխատանքի էր նշանակվում դաշնային կառավարության գրասենյակներից մեկում:

ԱՄՆ Քաղաքացիական պատերազմի (1861-65 թթ.) ընթացքում Կլարա Բարտոնը մի խումբ ընկերների հետ միասին նվիրվում է վիրավորված զինվորներին օգնություն ցուցաբերելու և կազմակերպելու գործին: Մինչ այդ ԱՄՆ-ում կանանց ընդհանրապես արգելված էր այցելել դաշտային հոսպիտալ, զինվորական ճամբար կամ հայտնվել մարտադաշտում: Սակայն Կլարա Բարտոնին հաջողվեց իր նվիրումով և խիզախությամբ վստահություն ձեռք բերել պետական պաշտոնյաների ու սպայական կազմի մոտ, և շատ շուտով երկիրը ճանաչեց նրան որպես «մարտադաշտի հրեշտակ»: 1864 թ. նա պաշտոնապես ստանձնեց ԱՄՆ «Միության բուժքույրերի» ղեկավարի պարտականությունները և սկսեց միջոցներ հավաքել ու կազմակերպել հոսպիտալների մատակարարման, ինչպես նաև բուժքույրերի պատրաստման աշխատանքները: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինկոլնի հանձնարարությամբ նա ղեկավարեց մարտադաշտերում կորած զինվորների մասին տեղեկությունների հավաքագրման, ցուցակների տպագրության և մահացածների ինքնությունը հաստատելու աշխատանքը:

1869 թ. Կլարա Բարտոնը մեկնեց Եվրոպա: Շվեյցարիայում նա ծանոթացավ Միջազգային կարմիր խաչի կոմիտեի գործունեությանը և Ժենևի կոնվենցիայի հիմնադրույթներին, ինչպես նաև որպես կամավոր մասնակցեց Կարմիր Խաչի փրկարար աշխատանքներին՝ 1870-71 թթ. Ֆրանկո-պրուսական պատերազմի ընթացքում: 1873 թ. Կլարա Բարտոնը վերադարձավ ԱՄՆ և մեծ ծավալի բարոզչական գործունեություն ծավալեց Կարմիր Խաչի գաղափարները տարածելու ուղղությամբ: 1881 թ. մայիսին Կլարա Բարտոնը հիմնում է Ամերիկյան ազգային կարմիր խաչ կազմակերպությունը և հասնում նրան, որ մեկ տարի անց ԱՄՆ-ը միանում է Ժենևի կոնվենցիային: Կլարա Բարտոնի գործուն աշխատանքի շնորհիվ 1884 թ. Ժենևի կոնվենցիայի տեքստում ԱՄՆ առաջարկով կատարվեց լրացում, համաձայն որի Միջազգային կարմիր խաչը պետք է զբաղվեր մարդասիրական գործունեությամբ ոչ միայն պատերազմի, այլև բնական աղետների դեպքում:

Կլարա Բարտոնը ղեկավարեց Ամերիկյան կարմիր խաչը մինչև 1904 թ.:

Կազմակերպությունը մեծ ծավալի մարդասիրական աշխատանք տարավ Միացյալ Նահանգներում, մասնավորապես, 1882 և 1884 թթ. Սիսսիսիպի և Օհայո գետերի վարարումից առաջացած ջրհեղեղների, 1886 թ. Տեխասի սովի, 1887 թ. Ֆլորիդայի դեղնախտի համաճարակի, 1888 թ. Իլինոյսի երկրաշարժի, 1889 թ. Պենսիլվանիայի ջրհեղեղի, 1898 թ. իսպանա-ամերիկյան պատերազմի ժամանակ: Կլարա Բարտոնը զգալի դերակատարություն ունեցավ կանանց իրավունքների պաշտպանության գործում, ինչպես նաև կանանց ընտրական իրավունքներ տրամադրելու օգտին ԱՄՆ-ում ծավալված շարժման մեջ սերտորեն համագործակցելով ամերիկյան կանանց իրավունքների հայտնի պաշտպաններ Սյուզեն Էնթոնիի և Լյուսի Սթոնի հետ:

Կլարա Բարտոնը մահացել է 1912 թ. ապրիլի 12-ին Մերիլենդ նահանգի Գլեն Էքո գյուղաքաղաքում, 91 տարեկան հասակում: Նրա գրչին են պատկանում «Կարմիր խաչի պատմությունը», «Կարմիր Խաչը խաղաղության և պատերազմի մեջ», «Իմ մանկության պատմությունը» և այլ գրքեր:

Կլարա Բարտոնը գրեթե նոր էր ամփոփել Հարավային Կարոլինայի կղզիներում Ամերիկյան Կարմիր Խաչի կողմից կատարած աշխատանքը և զբաղված էր Կարմիր Խաչի պատմության գրքի խմբագրությամբ, երբ նամակներ սկսեց ստանալ 1894-95 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող կոտորածների ընթացքում տուժած հայերին օգնություն ցուցաբերելու խնդրանքով: Սա մի անսովոր խնդիր էր Կլարա Բարտոնի համար, քանի որ այն ոչ բնական աղետ էր, ոչ էլ պատերազմական գործողությունների արդյունքում տեղի ունեցած դժբախտություն: Խոսքը գնում էր «մարդու կողմից իրականացված կոտորածի մասին, որն իր մեջ պարունակում էր նուրբ քաղաքական տարրեր»:

Այդ օրերին Նյու Յորքում հիմնադրվել էր Հայ ազգային օգնության կոմիտեն (National Armenian Relief Committee), որի կազմում ընդգրկված էին ազդեցիկ հասարակական գործիչներ: 1895 թ. վերջին Կոմիտեն և Ամերիկյան միսիոներական խորհուրդները միասնաբար դիմեցին Կլարա Բարտոնին և Կարմիր Խաչին՝ օգնության և փրկարար աշխատանքները կազմակերպելու, սննդի և պարենի մատակարարումն ապահովելու նպատակով: Օգնության հայթայթման աշխատանքներն արդեն իսկ սկսված էին Մեծ Բրիտանիայում և Միացյալ Նահանգներում, սակայն Թուրքիա հասցնելու և տեղում գործը կազմակերպելու համար որևէ այլ կազմակերպություն

համապատասխան փորձ ու միջոց չուներ: Օսմանյան կայսրությունում ապրող ու գործող հարյուրավոր ամերիկացի միսիոներները նույնպես տուժել էին կոտորածների հետևանքով, փաստորեն, բանտարկված էին իրենց տներում և որևէ օգնության ծրագիր իրականացնելու հնարավորություն չունեին: Կլարա Բարտոնին ուղղված նամակներում պատվելի Ջադսոն Սմիթը Բոստոնից և Սպենսեր Թրասքը Նյու Յորքի Ամերիկյան օգնության կոմիտեից նշում էին, որ թեև կոտորածների ընթացքում սպանվածներին հնարավոր չէր վերակենդանացնել, սակայն միայն Ամերիկյան կարմիր խաչը կարող էր օգնության ձեռք մեկնել տասնյակ հազարավոր քաղցած, որբ և անօգնական մարդկանց: Նրանք հավատացած էին, որ որպես ոչ քաղաքական և ոչ աղանդավորական կազմակերպություն Կարմիր խաչը կարող է հայտնվել այնպիսի վայրերում, ուր նույնիսկ բանակը չէր կարող հասնել: Ինչպես հետագայում նշում էր Կլարա Բարտոնը, կոտորածներից տուժած հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու հարցում Ամերիկյան Կարմիր խաչին ընդգրկելու գաղափարը պատկանում էր Կոստանդնուպոլսում գործող ամերիկացի միսիոներ, պատվելի Հենրի Օ. Դուայթին:

Թեև Կլարա Բարտոնը 74 տարեկան էր և «խուսափում էր պատասխանատվությունից», նա համաձայնեց մասնակցել ծրագրին, պայմանով, որ Կարմիր խաչը հանդես է գալու ամերիկյան ժողովրդի անունից և ապահովված է լինելու համապատասխան ֆինանսական միջոցներով: 1895 թ. դեկտեմբերի 14-ին նա հայտարարեց, որ համապատասխան ֆինանսական միջոցների ձեռքբերումից անմիջապես հետո Ամերիկյան կարմիր խաչը օգնության արշավախումբ է ուղարկելու դեպի Հայաստան՝ օժանդակություն ցուցաբերելու 350 հազար չքավոր և սոված մարդկանց: Նա խնդրեց Կարմիր խաչին հատկացնել 5 մլն դոլար և 20 հոգանոց աշխատախումբ, սակայն հետագայում այդ թիվն իջավ 500 հազարի, այնուհետև 100 հազարի և վերջում՝ ընդամենը 50 հազար: Ի վերջո ամերիկյան և բրիտանական տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցով հանգանակվեց 116 հազար դոլարից ավելի գումար, որից 15 հազար 400 դոլարը առաքելության ավարտից հետո, որպես արտակարգ անհրաժեշտության հիմնադրամ, մնաց ամերիկյան միսիոներական կազմակերպության տրամադրության տակ: Պետք է նշել, որ գումարները հիմնականում հավաքվել էին Միացյալ Նահանգների բողոքական և ավետարանական եկեղեցիների միջոցով:

«Մարդ արարածներ էին սովամահ լինում, - հետագայում գրում էր Կլարա Բարտոնը, - և նրանց հնարավոր չէր հասնել: Առաջին կոտորածներից հետո որևէ լուր չկար հազարավոր քաղաքներից ու գյուղերից, որոնց վրայով կրակ ու սուր էր անցել, և միայն Կարմիր խաչն էր, որ կարող էր նրանց հասնելու ինչ-որ հույս տածել: Ուրիշ որևէ մեկը դաշտային աշխատանքի պատրաստ չէր, այն ուներ փորձված դաշտային աշխատողներ, և Թուրքիան Կարմիր խաչի պայմանագրի ստորագրող պետություններից էր»: Բացի այդ, ստեղծված առիթը հնարավորություն էր տալիս Կլարա Բարտոնին լռեցնելու իրեն և Կարմիր խաչին քննադատողներին, ապացուցելու, որ մարդկանց օգնությունն իր կյանքի և իր ղեկավարած կազմակերպության առաքելությունն է, և որ միայն Ամերիկյան կարմիր խաչը կարող էր իրականացնել նման բարդ խնդիր:

Օսմանյան կայսրության կառավարությունը կասկածանքով էր վերաբերում արտասահմանից եկող յուրաքանչյուր օգնության ծրագրի, տեսնելով դրանցում քաղաքական ինտրիգ կամ միջամտություն իր ներքին գործերին: Թուրք իշխանությունները հայտարարում էին, որ օգնության նպատակով երկիր թույլ չեն տալու մուտք գործել «նույնիսկ այնպիսի համբավ ունեցող կազմակերպությանը, ինչպիսին է Կարմիր խաչը»: Մասնավորապես, Օսմանյան կայսրության դեսպանությունը Վաշինգտոնում, փաստորեն, մերժել էր մուտքի արտոնություն տրամադրել Ամերիկյան կարմիր խաչի ներկայացուցիչներին: Սակայն Կլարա Բարտոնը, հավատալով միջազգային պայմանագրի ուժին, չնայած իր հասակին և վատառողջ վիճակին, որոշեց անձամբ մեկնել Կոստանդնուպոլիս և բանակցել Բարձր դռան հետ: Նա սկսեց իր ճամփորդությունը 1896 թ. հունվարի 22-ին անորոշության զգացումով, քանի որ վստահ չէր, թե արդյո՞ք Բարձր դուռը թույլ տալու է Կարմիր խաչի պատվիրակությանը մուտք գործել երկիր, թե ոչ: Փետրվարի 6-ին Ամերիկյան Կարմիր խաչի պատվիրակությունը ժամանեց Լոնդոն, որտեղ Կլարա Բարտոնը Կոստանդնուպոլսից լուր ստացավ այն մասին, որ Միացյալ Նահանգների դեսպանության ղեկավար, նախարար Ալեքսանդր Թերրելը կարողացել է համոզել Բարձր դռանը թույլ տալ Ամերիկյան Կարմիր խաչի պատվիրակությանը մուտք գործել Թուրքիա: Այստեղից էլ, Վիեննայի ճանապարհով, պատվիրակությունը մեկնեց Թուրքիա և Կոստանդնուպոլիս հասավ փետրվարի 16-ին: Կլարա Բարտոնին ուղեկցում էին Ջուլիան Բ.

Հաբբեթը, պ-ն Փուլմանը, Չարլզ Քինգ Վուդը և դաշտային հատուկ գործակալ Էդուարդ Մ. Ուիստարը: Հետագայում պատվիրակությանը միացան լեզվաբան Էռնեստ Մեյսոնն ու իր մայրը, ինչպես նաև ամերիկացի բժիշկ Այրա Հարրիսը:

Կոստանդնուպոլիս ժամանելուն պես Կլարա Բարտոնը հանդիպումներ ունեցավ Միսիոներական խորհրդի անդամների, ամերիկյան «Ռոբերտ» քոլեջի տնօրեն Ջորջ Ուոշբըրնի հետ: Այնուհետև Ալեքսանդր Թերրելի և նրա թարգմանիչ, փորձված դիվանագետ Գարգիուլոյի ուղեկցությամբ Կլարա Բարտոնը հանդիպում ունեցավ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշայի հետ: Հանդիպման սկզբում Թերրելը Միացյալ Նահանգների կառավարության անունից իր մտահոգությունը հայտնեց կոտորածների արդյունքում երկրի ներքին շրջաններում տառապյալ ժողովրդի կացությամբ, միաժամանակ հավաստիացնելով, որ օգնության խնդիրը բացառապես մարդասիրական բնույթ ունի և չի հետապնդում քաղաքական, ազգային կամ կրոնական նպատակներ: Իր խոսքում Կլարա Բարտոնը նշեց. «Մենք բերել ենք միմիայն ինքներս մեզ, մեզ չի ուղեկցելու թղթակից և ...մենք տուն հասնելուն պես գիրք չենք գրելու Թուրքիայի մասին: Մենք դրա համար չենք այստեղ: Քողարկված ոչինչ չի արվելու: Մեր կողմից ուղարկվելիք բոլոր հաղորդագրությունները գնալու են բաց, Ձեր հեռագրատան միջոցով, և ես ուրախ կլինեմ, եթե մեր բոլոր գրվածները տեսանելի լինեին Ձեր կառավարության համար: Իհարկե, ես այժմ չեմ կարող ասել նրանց բովանդակության մասին, բայց կարող եմ երաշխավորել նրանց ճշմարտության, անկեղծության և ազնվության համար, և թե ինչպես են դրանք օգտագործվելու յուրաքանչյուր պատասխանատու մարդու կողմից: Ես երբեք չեմ քննարկելու կամ թույլատրելու ծածուկ կամ գաղտնի գործողություն Ձեր կառավարության նկատմամբ, և պետք է ներեք ինձ, փաշա, եթե ասեմ, որ, փոխադարձաբար, նույն վերաբերմունքն էլ ձեզնից եմ սպասելու»: Այս խոսքերից անմիջապես հետո Թևֆիկ փաշան պատասխանում է. «Եվ դա Դուք կունենաք: Մենք հարգում ենք Ձեր դիրքը և Ձեր աշխատանքը»:

Նկատի առնելով Ամերիկյան կարմիր խաչի և նրա ղեկավար Կլարա Բարտոնի միջազգային համբավն ու հեղինակությունը, Բարձր դուռն իր համաձայնությունն է տալիս ամերիկյան կազմակերպության կողմից հայկական կոտորածների արդյունքում տուժած բնակչության և շրջանների հա-

մար առաջարկվող օգնության և գյուղատնտեսության վերականգնման ծրագրերին: Միաժամանակ կառավարության նախապայմանն այն էր, որ ծրագիրը չի կարող իրականացվել Կարմիր խաչի նշանաբանով, այլ պետք է ձևակերպվի որպես Կլարա Բարտոնի անձնական արշավախումբ: Բարձր դուռը մտահոգ էր, որ մահմեդական բնակչությունը խաչն ընկալում է որպես քրիստոնեության խորհրդանիշ, ինչը կարող էր էլ ավելի խորացնել արդեն իսկ պայթյունավտանգ կրոնական թշնամությունը: Արշավախմբերի անվտանգությունն ապահովելու նպատակով կառավարությունը յուրաքանչյուրին կցում է զինվորական հատուկ ուղեկցորդներ: Կլարա Բարտոնը հետագայում նշում էր, որ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի հետ իր զրույցն առաջին և վերջին հանդիպումն էր թուրք պաշտոնյայի հետ Կոստանդնուպոլիս կատարած այցելության ժամանակ: Բարձր դուռն ու տեղական իշխանությունները որևէ դժվարություն չհարուցեցին առաքելության ողջ ընթացքում:

Նախնական ծրագրի համաձայն, արշավախումբը պետք է ճամփորդեր Սև Ծովի երկայնքով դեպի արևելք և այնուհետև ցամաքային ճանապարհով հասներ Հայաստան: Սակայն Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարրին խորհուրդ է տալիս առաջին հերթին օգնություն ցուցաբերել Մարաշի և Զեյթունի բնակչությանը, որը ենթարկվում էր վտանգավոր համաճարակների: Արդեն իսկ մարտի 18-ին Կլարա Բարտոնի գլխավոր օգնական, Թուրքիայում Ամերիկյան ազգային կարմիր խաչի կողմից դաշտային գլխավոր գործակալ նշանակված Ջուլիան Հաբբելը մեկնեց Ալեքսանդրետ, որտեղ սկսեց քարավաններ պատրաստել դեպի Այնթափ, ուր որոշված էր հիմնել հարավային դաշտի կենտրոնակայանը: Այստեղից էլ նրանք ուղևորվեցին հյուսիս-արևելք դեպի Խարբերդ, Մարաշ օգնություն հասցնելով քաղաքներում պատսպարված հազարավոր փախստականներին: Կլարա Բարտոնը մնաց Կոստանդնուպոլսում իր ֆինանսական քարտուղար Փուլմանի հետ, որպեսզի տեղում համադրի ծրագրի իրականացման գործընթացը: Կոտորածներին հետևեցին բծավոր տիֆի, դիզենտերիայի և ծաղկի համաճարակները: Մասնավորապես, Զեյթունում և Մարաշում ծագած համաճարակի առաջն առնելու նպատակով հրավիրվեց Արևելքում ժանտախտի և համաճարակների հայտնի մասնագետ Այրա Հարրիսը, որի կենտրոնակայանը գտնվում էր Սիրիայի Տրիպոլի քաղաքում: Հիվանդների

թիվը երկու քաղաքներում հասնում էր շուրջ 10 հազարի, իսկ մահացողների թիվն օրըստօրե մեծանում: Սակայն, շնորհիվ ամերիկացի մասնագետների գործունեության, շատ շուտով հիվանդների թիվը և մահացու դեպքերը կտրուկ նվազեցին:

Կարմիր խաչը չորս արշավախումբ գործուղեց «Հայկական Թուրքիա», Միջերկրականից Սև ծով ընկած տարածաշրջանները, հասցնելով անհրաժեշտ օգնություն, վերանորոգելով տներ և վերաբնակեցնելով ողջ մնացածներին: Առաջին արշավախումբը ղեկավարում էր Ջուլիան Բ. Հաբբելը, երկրորդը՝ Էդուրդ Մ. Ուիստարը, երրորդը՝ Չարլզ Քինգ Վուդը, չորրորդը՝ Այրա Հարրիսը: Արշավախմբերն այցելեցին Քիլիս, Այնթափ, Մարաշ, Զեյթուն, Բիրեջիկ, Ուրֆա, Դիարբեքիր, Ֆարկին, Խարբերդ, Բալու, Մալաթիա, Արաբկիր, Ակն, Սըվազ, Թոքատ և Սամսուն: Երբ փախստականները կրկին վերահաստատվեցին իրենց տներում և գյուղերում, նրանք ապահովվեցին սննդամթերքով, դեղորայքով, հագուստով, սերմնահատիկով, մանգաղներով, ջուլհակահաստոցներով և անիվներով: Նույնիսկ քրդերի կողմից գողացված անասունները գնվեցին և վերադարձվեցին տերերին: Բացի այդ, գյուղացիներին տրվեց շուրջ երկու հազար գութան քաշող եզ և զանազան գյուղատնտեսական գործիքներ, մասնավորապես, շուրջ 500 գութան: Կարմիր խաչի ֆինանսական քարտուղարին հանձնարարվել էր նաև ուղարկել 5 հազար լիրա (22 հազար դոլար) պատվելի Գեյթսին, որը պետք է բաժանվեր արշավախմբերի միջև անասուն գնելու և 1897 թ. բերքահավաքն ապահովելու համար:

Կլարա Բարտոնի հրահանգով, օգնության բաժանումը տեղերում իրականացվում էր գյուղական կամ շրջանային հանձնախմբերի միջոցով, որոնց կազմում ընդգրկված էին հիմնականում տեղի եկեղեցու առաջնորդներ և ճանաչված առևտրականներ, որոնք բաջատեղյակ էին ժողովրդի կարիքներին և սովորություններին: Ըստ Բարտոնի՝ ամենից դժվար խնդիրը կոտրածներից փրկվածների անտարբերությունն էր աշխատանքի և ապագայի նկատմամբ, ինչը սարսափելի վշտի և վախի հետևանք էր: Կարմիր խաչի ներկայացուցիչները մտահոգ էին, որ շարունակական օգնությունը կարող էր էլ ավելի խորացնել այդ իրավիճակը, ինչի արդյունքում մարդիկ կհայտնվեին ծայրահեղ չքավորության վիճակում: Այդ իսկ պատճառով ամերիկացիները զգալի աշխատանք տարան նաև մարդկանց աշխատան-

քով ապահովելու և համայնքների տնտեսական կյանքը վերականգնելու ուղղությամբ:

Թուրքիայում Ամերիկյան կարմիր խաչի գործունեության ողջ ընթացքում առաքելությանը մեծ օգնություն և օժանդակություն ցուցաբերեցին ամերիկյան միսիոներները: Մասնավորապես, Կլարա Բարտոնն իր զեկույցում հիշատակում էր Հենրի Դուայթի, Ջոզեֆ Գրինի, Ջորջ Նեվիի, Ջորջ Ուոշբորնի, Գրեյս Քիմբալի, տիկին Լիի, «Ռոբերտ» քոլեջի հիմնադիր, վետերան միսիոներ Սայրըս Համլինի դուստրերի և այլոց անունները:

Սակայն այս ընթացքում ամեն ինչ չէ, որ կատարվեց Կլարա Բարտոնի ցանկությամբ: Միացյալ Նահանգներից բազմաթիվ հոռետեսական հեռագրեր և նամակներ էին ստացվում իր հասցեով առ այն, թե իբր օգնության առաքելությունը պետք է դադարեցնել, քանի որ թուրք կառավարությունը խոչընդոտում է Կարմիր խաչի գործունեությունը, արշավախմբերի երթուղիները սխալ են ընտրված եղել, ֆինանսական միջոցները հարկավոր են Կարմիր խաչին ԱՄՆ-ում կարիքները հոգալու համար և այլն: Ծրագրի նվիրատուները դժգոհ էին այն բանից, որ առաքելության հաջողությունը կապվում էր ամբողջությամբ Կլարա Բարտոնի, այլ ոչ թե Ամերիկյան կարմիր խաչի կամ նվիրատուների անվան հետ: Վիրավորված և զայրացած նման վերաբերմունքից՝ Կլարա Բարտոնը հեռագիր հղեց ամերիկյան կոմիտեներին «ազատելով նրանց հետագա նվիրատվություններ կատարելու անհրաժեշտությունից»: «Մենք կավարտենք մեր աշխատանքն առանց հետագա օժանդակության», - գրում էր նա:

Կլարա Բարտոնի գործունեությունը քննադատության ենթարկվեց նաև ԱՄՆ-ի հայ համայնքի ռռոշ ներկայացուցիչների կողմից, որոնք գտնում էին, որ թեև Ամերիկյան Կարմիր Խաչի առաքելությունը պետք է սահմանափակվեր միմիայն Օսմանյան կայսրության հայ բնակչությանն ուղղված օգնությամբ, արշավախմբի անդամներն օժանդակում էին նաև թուրք մահմեդականներին: Այդ օրերին նման քննադատությամբ աչքի ընկավ նաև «The Christian Herald» օրաթերթը, որը 50,182 դոլար էր հավաքել կոտորածներից տուժած հայերին օգնություն տրամադրելու նպատակով: Հետագայում Կլարա Բարտոնի կյանքի ու գործունեության մասին ուսումնասիրություններ կատարած որոշ հեղինակներ գնահատում էին առաքելության կողմից թուրք բնակչությանը ցուցաբերած օգնության հանգամանքը Կարմիր

խաչի բոլոր կարիքավորներին հասնելու սկզբունքով, ինչպես նաև ոչ միայն հայերին օժանդակելու թուրք պաշտոնյաների հետ հնարավոր պայմանավորվածությամբ:

ԱՄՆ վերադառնալուց մի քանի ամիս անց Պետական դեպարտամենտը Կլարա Բարտոնին հանձնեց սուլթան Աբդուլ Համիդի կողմից իրեն շնորհված «Շեֆակերի» երկրորդ աստիճանի շքանշանը՝ իր կատարած աշխատանքի համար: Որոշ հեղինակներ համարում են, որ Կլարա Բարտոնի առաքելության անսպասելի արդյունքներից մեկն այն էր, որ նա ակամա դարձավ բարի կամքի դեսպան և մեծապես նպաստեց թուրք-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը:

Չնայած քննադատությանը և տարբեր խոսակցություններին, Կլարա Բարտոնը բարձր էր գնահատում Ամերիկյան կարմիր խաչի կողմից իրականացված առաքելությունը, որի արդյունքում հնարավորությունների սահմաններում ամեն ինչ արվել էր հազարավոր կյանքեր փրկելու համար: Իր «Կարմիր խաչի պատմությունը» գրքում նա մեծ երախտագիտությամբ էր արտահայտվում Ամերիկյան կարմիր խաչի իր աշխատակիցների մասին, որոնք հինգ ամիսների ընթացքում չափազանց ծանր և վտանգավոր պայմաններում նվիրումով կատարեցին իրենց պարտքը՝ 1894-96 թթ. հայկական կոտորածներից տուժածներին օգնություն ցուցաբերելու գործում: Կլարա Բարտոնը մեծ ակնածանքով էր արտահայտվում նաև Կոստանդնուպոլսում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցիչ Ալեքսանդր Թերրելի մասին, ով հնարավոր ամեն ինչ արեց՝ Ամերիկյան կարմիր խաչի առաքելությունը հաջողությամբ իրականացնելու համար:

Կլարա Բարտոնը վերադարձավ Լոնդոն սեպտեմբերի 2-ին: Այստեղ նա տեղեկացավ Բանկ Օտոմանի միջադեպի և դրան հետևած Կոստանդնուպոլսի հայ բնակչության նոր ջարդի մասին: Նա հետաձգեց իր հետագա ուղևորությունը դեպի ԱՄՆ, անմիջապես հեռագրեր հղեց Վաշինգտոն և Կոստանդնուպոլիս, առաջարկելով հարկ եղած դեպքում վերադառնալ Թուրքիա և շարունակել Ամերիկյան կարմիր խաչի գործունեությունը: Սակայն այս անգամ նրան խորհուրդ չտրվեց վերադառնալ Կոստանդնուպոլիս:

Վաշինգտոնում նրա պատվին տրվեց շքեղ ընդունելություն «Shorcham» հյուրանոցում, որը կազմակերպել էին այն անհատները, ովքեր նվիրատվություններ էին կատարել Կարմիր Խաչի համար՝ այդ դժվարին առաքելությունն իրագործելու նպատակով:

Կլարա Բարտոնն ամենևին էլ ավարտված չէր համարում Օսմանյան կայսրության հայ բնակչության օգնության գործը: Նա գտնում էր, որ Հիսուս Քրիստոսի դավանանքին պատկանող հայերը թողնված են կիսավայրենի քաղաքակրթության քմահաճույքին, նրանցից 100-200 հազարը կարիք ունեն ապաստանի, սննդի, դեղորայքի և, ընդհանրապես, քաղաքակիրթ աշխարհի կարեկցանքին և բարերարությանը: Ըստ Կլարա Բարտոնի՝ եթե այդ մարդկանց շուտափույթ կերպով օժանդակություն չցուցաբերվի, մինչև մյուս տարվա մայիսը նրանցից շուրջ 50 հազարը կկնքեն իրենց մահկանացուն սովից և զրկանքներից:

Կլարա Բարտոնի և նրա աշխատակիցների Օսմանյան կայսրություն կատարած մարդասիրական առաքելությանը վերաբերող զեկույցները հրատարակվել են մեկ գրքով Վաշինգտոնում՝ 1896 թ. վերջին (America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896): Այդ զեկույցները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ մանրամասն նկարագրում են կոտորածներից տուժած հայ բնակչության վիճակը և ամերիկյան արշավախմբերի կողմից հայերին ցուցաբերած օգնությունը: Գրքի թարգմանությունն ու հրապարակումը Հայաստանում կարևոր է ինչպես հայ ընթերցողին և մասնագետներին այդ օրագրերին ծանոթացնելու, այնպես էլ Կլարա Բարտոնի անունը հավերժացնելու համար:

Արման Կիրակոսյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ավստրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
05.04.2012



Կարմիր խաչի գլխավոր գրասենյակը, Կ. Պոլիս (Է. Մեյսոն)

ՁԵԿՈՒՅՑ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՔՐ ԱՍԻԱ

Վաշինգտոն. 1896

Հրատարակված՝
Դը Ջըրնըլ Փաբլիշինգ Քամփընի, Մերիդեն, Կոնեկտիկուտ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԼԱՐԱ ԲԱՐՏՈՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովրդին՝

1895 թ. նոյեմբերին, երբ ես խիստ զբաղված էի «Կարմիր խաչի պատմությունը» գրքի խմբագրմամբ և պատրաստվում էի հանձնել այն տպագրության, մամուլը սկսեց ահազանգել մեզ, որ հավանական է անհրաժեշտ լինի դիմել հանրությանը հայ ժողովրդի սարսափելի տառապանքները մեղմացնելու կոչով. Հայաստանը քաղաքակիրթ աշխարհի ուշադրության կենտրոնում էր: Հետագայում այս նախազգուշացումներին հաջորդեց աստվածաբանության դոկտոր, Արտաքին առաքելությունների գործերով լիազորվածների ամերիկյան խորհրդի քարտուղար, պատվելի Ջեյդսըն Սմիթի նամակը Բոստոնից: Նամակում նա իր առաջարկություններով դիմում էր աստվածաբանության դոկտոր, Կ. Պոլսում Արտաքին առաքելությունների ամերիկյան խորհրդի աշխատակից պատվելի Հենրի Օ. Դուայթին: Այս պատկառելի գործիչները խնդրանքով դիմեցին Կարմիր խաչին՝ տուժած հայերին օժանդակություն տրամադրելու: Երկրում տիրող անհանգիստ իրավիճակի, օրենքի խստության, ինչպես նաև գոյություն ունեցող ռասայական և կրոնական տարբերությունների պատճառով ներկա պահին գրեթե անհնար էր տրամադրել անհրաժեշտ օգնությունը: Իրենց գործին հավատարիմ, բայց դժվարին կացության մեջ հայտնված մշտաբնակ միսիոներներն իրենք էլ որոշ չափով տուժած էին և անօգնական: Նրանք, փաստորեն, բանտարկյալներ էին դարձել իրենց սեփական տներում: Վերջիններս ոչ միշտ էին պաշտպանում իրենց այն մոլեգնություններից, որոնք տիրեցին նախորդ մի քանի ամիսներին, այլապես ցու-

Ա 99326

ցաբերվող օգնությունը կարելի էր կանոնավոր ձևով բաշխել միսիոներների միջոցով: Դոկտոր Սմիթի սույն գրավոր խնդրանքը շատ նման էր պարոն Թրասքի (Նյու Յորք) խնդրանքին: Նա այլոց հետ պատրաստվում էր ձևավորել Հայ ազգային օգնության կոմիտեն, որը պետք է հիմնադրվեր Նյու Յորքում: Նամակներին հաջորդեց այս երկու պաշտոնյաների՝ դոկտոր Սմիթի և պարոն Թրասքի այցելությունը Վաշինգտոն՝ անձամբ համոզելու մեզ ստանձնել օգնության միջոցների տրամադրման պատասխանատվությունը: Չնայած մենք սովոր էինք գործողությունների տարածքներում իրականացվող օգնության ծանր աշխատանքի փորձություններին, պարտականություններին և դժվարություններին, ավելի շատ հակված էինք մերժել այս առաջարկը և, բնականաբար, երկմտում էինք: Սակայն այս գաղափարը լայն արձագանք գտավ, շարունակվող քննարկումներն, ընդհանուր առմամբ, ձանձրացրել էին ժողովրդի գերակշռող մասին: Անհրաժեշտ էր անհապաղ գործի անցնել, մարդիկ սովի էին մատնված, հարյուրավոր քաղաքների և գյուղերի վերաբերյալ տեղեկություն չկար այն բանից հետո, երբ դրանք հրի ու սրի էին մատնվել: Ժողովուրդը կարծում էր, որ մեզնից բացի ոչ ոք ավելի լավ պատրաստված չէր գործողության տարածքում օգնություն տրամադրելուն: Շատերը պնդում էին, որ մենք ունեինք դաշտային գործակալների վարժեցված ջոկատներ և քանի որ Թուրքիան Ժնևի կոնվենցիան ստորագրող կողմերից մեկն էր և միացել էր դրան 1865 թ. հուլիսին, իսկ կոնվենցիայում անդրադարձ կար Կարմիր խաչի սկզբունքներին, հետևաբար այն պետք է որ ծանոթ լիներ կոնվենցիայի մեթոդներին և մարդասիրական գաղափարներին: Հետևաբար, հույս կար, որ Թուրքիան ավելի պատրաստակամ կլիներ գործելու համաձայն կոնվենցիայի՝ չհամարելով մեր արշավախումբը օտար մարմին: Սրանք ընդամենը պատճառների մի մասն են, որոնք մեզ ստիպեցին ընդունել առաջարկը: Այս ճնշման, նաև կարեկցանքի ուժեղ զգացումի ներքո խնդիրը լուրջ քննարկման դրվեց: Մեր առջև հստակ պայմաններ առաջ քաշվեցին՝ մենք պետք է համոզվեինք, որ խնդիրը համապատասխանում էր հետևյալ երկու կետերին: Առաջին՝ կոմիտեները պետք է համոզվեն, որ մեզ ընտրել է ողջ ժողովուրդը, առարկություններ չպետք է լինեն և կոմիտեները պետք է լիարժեք համաձայնության գան: Ոչ մի հարցում որևէ տարաձայնություն չպետք է լինի, այս խնդրի իրագործումը կապված էր մեծ դժվարությունների հետ՝ անգամ ամենաարդյունավետ հանգամանքների դեպքում:

Երկրորդ՝ պետք է լինեն անհրաժեշտ միջոցներ՝ օգնությունը հատկացնելու: Համոզվելով, որ երկու կետերն էլ գործում են՝ մենք խոստացանք, որ կմեկնենք և կանենք ամեն ինչ՝ Փոքր Ասիայի ներքին շրջաններին անհրաժեշտ օգնությունը տրամադրելու:

Համոզվելով, որ հնարավոր էր ինչ-որ բան ձեռնարկել՝ մարդկանց զուսպ կարեկցանքները պոռթկացին: Իրար հաջորդեցին բաց հանդիպումներ, կոչեր, հայ ժողովրդի իրավիճակի գնահատում, սարսափի դրսևորումներ, լիազորությունների բաշխում, խնդիրների քննարկում և անկեղծ, մարդասիրական և լիովին բնական կարծիքներ արթնացնելու մարդկանց զգացմունքներն ու վրդովմունքը, եթե դա էր միակ կամ հիմնական նպատակը: Սակայն հաշվի առնելով տրամադրվելիք օգնությունը, ոարց էր առաջանում՝ որքանով խոհեմ էր նման հանդիպումներ անցկացնել, եթե նկատի առնենք, որ դեռ պետք է թակեինք այն դուռը, որ մինչև այդ փակ էր աշխարհի առջև, երբ անհրաժեշտ լիներ մտնել այդ երկիր՝ սովյալներին հատկացված օգնությունը տեղ հասցնելու նպատակով: Թվում էր, թե այս փաստը կատարելապես մոռացության էր մատնվել այս խանդավառության պահին: Մոռացության մատնված էր թվում նաև այն փաստը, որ եթե սույն դժվար և նուրբ խնդիրը հանձնարարվեր Կարմիր խաչին և նրա աշխատակիցներին, ապա նրանց ակնառու և խրախուսելի մասնակցությունը նշված ժողովներին, որոնց մշտապես ներկա էին նաև թուրք պաշտոնյաները կամ ներկայացուցիչները, ավելի էր բարդացնում առաքելության իրականացումը, իսկ հաջողության հեռանկարը՝ դարձնում խիստ կասկածելի:

Կարմիր խաչի գործունեության միջազգային և չեզոք բնույթը, այսինքն՝ պատերազմի կամ չափազանց մեծ աղետի դեպքում միջնորդավորված օգնության հատկացումը, կարծես անտեսվում կամ սխալ էր ընկալվում: Մարդիկ չէին գիտակցում, որ միայն հակասական կարծիքներից խուսափելով կարող էին թույլ տալ մեզ կատարել աշխատանքը: Ժենևի կոնվենցիան պարտադրում է անտեսել բոլոր ազգային վեճերը, ռասայական պատկանելությունները, կրոնական տարբերությունները և հաշվի առնել միմիայն մարդասիրական կարիքները: Միայն այս ոգով Կարմիր խաչը կարող էր կատարել իր պարտականությունները՝ գործելով որպես աշխարհի ազգերի և կառավարությունների անունից հանդես եկող ներկայացուցիչ: Սակայն ամերիկացիների խանդավառությունն անհուն է, իսկ դրա արտահայտությունը՝ անսահման: Այն նույն հողմը, որ խորտակեց Օսմանյան

կայսրությունը, քամուն տվեց այն կամ նետեց ամենախոր անդունդները, *ամենից վեր բարձրացրեց Կարմիր խաչն ու իր առաջարկած օգնությունը*: Մեր կողմից արվող նախազգուշական առարկություններն ապարդյուն եղան և միայն այն բանից հետո, երբ մենք հրապարակավ համաձայնություն տվեցինք. նախապատրաստեցինք ամեն ինչ և կազմեցինք օգնության ծրագիրը, բուռն ընդվզումների արդյունքն արտացոլվեց Վաշինգտոնում թուրք լիազոր նախարարի հրամանագրի մեջ, որն արգելում էր Կարմիր խաչին մուտք գործել Թուրքիա:

Բեյի և իր կառավարության այս որոշումը ես համարեցի շատ բնական և քաղաքականորեն արդարացված. մեր իսկ կառավարությունն ու ժողովուրդը, հավանաբար, նույն քայլին կդիմեր կամ գուցե կաներ ավելին նման իրավիճակների առկայության դեպքում: Ես պատրաստվում էի հաշտվել այդ որոշման հետ և տուն վերադառնալ: Սակայն ո՛չ կոմիտեները, ո՛չ էլ ժողովուրդը չէին համակերպվի այդ որոշման հետ: Իհարկե, պետք էր հրաժարվել նաև մեր ընտրած ջոկատներից, որոնց մեջ կային ավելի քան երկու տասնյակ վերապատրաստված և փորձառու դաշտային գործակալներ: Եթե անգամ այժմ որևէ օգնության փորձ էր արվում, ապա այն կարող էր միայն անհատական բնույթ ունենալ, իսկ գլխավոր գրասենյակից որպես օգնականներ պարտադիր ներկա էին լինում երկու-երեք աշխատակիցներ:

Մինչև թուրք նախարարի հայտարարությունը, որն արգելում էր Կարմիր խաչին մտնել Թուրքիա, մենք հունվարի 22-ին համաձայնություն էինք ձեռք բերել «Նյու Յորք» շոգենավով ճանապարհն ընկնել: Չնայած Պետական դեպարտամենտից Կ. Պոլիս ուղարկված հեռագիրը, որով փորձում էին ճշտել արդյոք Թուրքիա մտնելու Կարմիր խաչի արգելքն իսկապես պաշտոնական էր և հրահանգված կառավարության կողմից, թե ոչ պաշտոնական, դեռ տեղ չէր հասել, մենք հավատարիմ մնացինք տված խոստմանը և անորոշությամբ նավարկեցինք դեպի Թուրքիա:

Հիշողությանս մեջ աղոտ է մնացել հետևյալ տեսարանը: Ծովապատնեշների մոտ հավաքվածների բացականչություններ, հրաժեշտի անկեղծ մաղթանքներ, մարդիկ հրճվանքից և սպասումից բաբախող սրտերով ճանապարհում էին հինգ հոգանոց փոքրիկ մի խմբի: Այս հնգյակը, գուրկ երկիր մուտք գործելու իրավունքից, կառավարության կամ այլ մարմինների աջակցությունից, ուղեկցվում էր 5000

մղոն հեռավորության վրա գտնվող նավահանգիստ, որին խուսափում էին մոտենալ անգամ աշխարհի գերտերությունների նավերը: Ի՞նչ անել կամ ինչպե՞ս վարվել: Երբ շրջվեցի, ընկա մտորումների գիրկը. առջևումս նշմարվեց Դոն Քիշոտի և իր հողմաղացի տեսիլքը:

Մի շաբաթ անցկացրինք ծովում: Կեսգիշերին Սաութհեմփթոնում մեզ դիմավորեց Լոնդոնից ժամանած մի սուրհանդակ՝ տեղեկացնելու մեզ, որ արգելքը պահպանվում էր և Կարմիր խաչին արգելվում էր մտնել երկրի տարածք: Սակայն այնպիսի մարդկանց, ինչպիսին էր պարոն Թերըլը, թույլատրվում էր հանդիպում նշանակել և ընդունելության արժանանալ կառավարությունում: Կար մեկ ուրիշ անորոշ խնդիր ևս, որ հնարավոր չէր շտկել օսմանական հեռագրության միջոցով: Պարոն Հաբելը մեկնել էր Կ. Պոլիս՝ (մինչ մենք սպասում էին Լոնդոնում)՝ իմանալու, թե ինչպիսին կլիներ պարոն Թերըլի վերաբերմունքը մեր և մեր առաքելության հանդեպ: Պատասխանը դրական եղավ և մենք շարունակեցինք ճանապարհը և փետրվարի 15-ին հասանք Կ. Պոլիս: Մեր բոլոր պետական պաշտոնյաները մեզ շատ ջերմ ընդունեցին և մեզ ժամանակավորապես տեղավորեցին «Փերա Փելիս» հյուրանոցում: Ստամբուլի ջարդերից շատ քիչ ժամանակ էր անցել. այդուհանդերձ չէր կարելի որևէ հասարակական վայր ապահով համարել:

Հաջորդ օրը մենք ընդունեցինք Կ. Պոլսում Միսիոներների խորհրդի անդամների ամբողջական կազմին, ներառյալ գանձապահ Ու. Ու. Փիթին և «Ռոբերտ» քոլեջի տնօրեն պարոն Ուոշբըրնին: Ծայր առավ մի ընկերական երկխոսություն, որ շարունակվեց առանց ընդմիջման: Առաջիկա վեց ամիսների ընթացքում օր օրի ամրապնդվեցին մեր կապերը, երբ թաց աչքերն ու ջերմ ձեռքսեղմումները բառերից ավելի հստակ էին արտահայտում, թե որքան լի էր այդ երկխոսությունը վստահությամբ: Եթե որևէ մեկը մեր հայրենակիցներից կազմված այս քրիստոնեական խմբում փնտրեր ազնվազարմ մարդկանց, ապա կգտներ նրանց կանանց ազնվական շարքերում: Վերջիններս որպես կանայք, մայրեր և ուսուցիչներ թեթևացնում են միմյանց հոգսերը, օգնում միմյանց հաղթահարել դժվարությունները, զրկանքներն ու վտանգները: Ինձ համար մեծ պատիվ էր թեկուզ մասամբ օժանդակել մեր հայրենակիցներից բաղկացած այս ընտրյալ խմբի աշխատանքներին: Նրանք իրենց արդար և անձնվեր կյանքը ծառայեցրին Աստծուն և իրենց գործընկերներին:

Առաջին հերթին անհրաժեշտ էր ծանոթություններ ձեռք բերել կա-

ռավարությունում, որն ինչ-որ առումով մերժել էր ինձ: Պարոն Թերըլի և իր գլխավոր թարգմանչի, գուցե որպես ամենաերկար աշխատած, Կ. Պոլսի ամենափորձառու դիվանագետներից մեկի՝ Գարգյուլոյի ուղեկցությամբ գնացի Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպման: Թուրքիայի քաղաքական գործիչներին ճանաչող անձանց կարիք չկա բացատրելու, որ Թևֆիկ փաշան, հավանաբար, կառավարությունում ամենաազդեցիկ պաշտոնյան է: Նա առնական, գեղեցկադեմ տղամարդ էր՝ մեղմ և քաղաքավարի գործելակերպով: Կրթությունը ստանալով արտասահմանում և ունենալով առաջադեմ հայացքներ ընդհանուր թեմաների շուրջ՝ նա թողնում էր մի մարդու տպավորություն, ով չի կայացնում ոչ մի սխալ որոշում, որը, սակայն, ի զորու էր կանխել:

Մեզ ընդունեցին արտաքին գործերի նախարարությունում և այնտեղ տեղի ունեցավ հարցազրույց, որ չընդմիջվեց՝ տևելով մի ժամից ավելի: Քանի որ սա կարևոր հարցազրույց էր և մեր ողջ աշխատանքի հիմքն էր կազմում, միգուցե ճիշտ կլիներ այն ավելի մանրամասն ներկայացնել: Պարոն Թերըլի ներածական խոսքը շատ հստակ էր և արտահայտիչ, նա շեշտում էր ջարդերի հետևանքով երկրի ներքին շրջաններում բնակչության ծանր պայմանները և ամերիկյան ժողովրդի մեծ կարեկցանքն ու հայերին օգնելու մեծ ցանկությունը, ինչպես նաև նրանց անկեղծ հետաքրքրությունն ամերիկացի միսիոներների հանդեպ: Վերջիններիս հոգսերն ավելին էին, քան կարելի էր հանդուրժել: Մեծ էր նաև միսիոներներին օգնելու ցանկությունը և, հիմք ընդունելով այս ամենը, մեզ խնդրել էին օգնության հասնել: Նա նշեց նաև, որ մեր նպատակները զուտ մարդասիրական էին և որպես այդպիսին բնավ չունեին քաղաքական, ռասայական կամ կրոնական ուղղվածություն, իսկ ես՝ որպես կազմակերպությունը ներկայացնող անձ, նույնպես *չէի հետապնդում* այլ նպատակներ: Մեզ համար մեծ պատիվ էր՝ կյանքի կոչելու այդ մարդասիրական գաղափարները և ապահովելու առաքելության անվտանգությունը, որ պահանջում էր ամերիկյան ժողովուրդը՝ հանձինս ինձ և պարոն Թերըլի:

Փաշան համակ ուշադրությամբ լսեց պարոն Թերըլի ելույթը, ապա շնորհակալություն հայտնեց նրան և ասաց, որ այդ ամենն ընդունելի էր, նրանք ծանոթ էին Կարմիր խաչին և նրա նախագահի հետ: Նա շրջվեց իմ կողմը և կրկնեց. «Մենք վաղուց ենք ծանոթ ձեզ հետ և Ձեր գործունեությանը, տիկի՛ն Բարտոն: Կցանկանայինք լսել օգնություն հատկացնելու Ձեր ծրագրերի և խնդիրների մասին»:

Շեշտելով այն փաստը, որ վերջին իրադարձությունների հետևանքով Փոքր Ասիայի բնակչությունը հայտնվել էր մի իրավիճակում, որ արժանի էր ողջ ամերիկյան ժողովրդի կարեկցանքին՝ վերջիններիս խնդրանքը հնչում էր գրեթե պահանջի պես. ես շարունակ պնդում էի, որ մեզ պետք է թույլ տային այս օգնությունն ուղղակիորեն տրամադրել տուժածներին, որոնցից հարյուրավորները բարեկամներ և ընկերներ ունեն Ամերիկայում: Սա մի փաստ էր, որ, բնականաբար, մեծացնում էր խնդրի վերաբերյալ թե՛ հետաքրքրությունը, թե՛ պահանջը: Ես բացատրում էի նրան, որ մի քանի օգնականների ուղեկցությամբ այստեղ եմ եկել մեր ողջ ժողովրդի պահանջով և մեր նպատակն էր տրամադրված միջոցները ծառայեցնել կարիքավորներին՝ որտեղ էլ որ նրանք գտնվեին, օգնել նրանց վերականգնելու նախկին աշխատանքը, պաշտոններն ու կոչումները՝ այսպիսով մեղմացնելով նրանց տևական վիշտը, ազատելով պետությանը նրանց օգնություն հատկացնելու ծանր պարտականությունից, իսկ այլ պետություններին և ժողովրդներին՝ կարեկցանքների տարափից, որի հետևանքները վնասակար էին և գրեթե անհանդուրժելի: Ես բերել էի հմուտ աշխատակիցներ, բանիմաց և փորձառու ագարակատերեր, որոնք առաջին հերթին ջանալու էին վերադարձնել մարդկանց իրենց ամայացած արտերը, տրամադրել նրանց գյուղատնտեսական գործիքներ և հումքանյութեր: Սրանց միջոցով տուժածները կկարողանային ցանել ամառային մշակաբույսերը՝ այդպիսով ապահովելով իրենց սննդով: Գործիքներից տրամադրվելու էին գութաններ, թոխրեր, բահեր, սերմնացան, ցորեն, հետագայում նաև մանգաղներ գերանդիներ և հունձքի համար անհրաժեշտ այլ պարագաներ: Դրանցով կարելի էր փրկել այն մեծաքանակ աշնանացանը, որն, ըստ մեր տեղեկությունների, արդեն հասունանում էր ընդարձակ դաշտերում մինչև այս աղետալի զարգացումները: Տրամադրվելու էին նաև անասուններ և այլ կենդանիներ, որպիսիք հնարավոր կլիներ ձեռք բերել կամ հետ գնել: Եթե մինչև հաջորդ ձմեռ մի շարք այդպիսի աշխատանքներ չիրականացվեն և եթե մեր ունեցած տեղեկությունները լիովին սխալ չեն, այս տառապանքները կցնցեն ողջ քաղաքակիրթ աշխարհը: Մեզնից ոչ ոք չէր կարող անհատական դիտումներից ելնելով որոշել անհրաժեշտ օգնության վերջնական չափը, սակայն վստահ էինք, որ այն մեծ էր: Եթե իմ աշխատակիցներին թույլ տային գործի անցնել, նրանց կհանձնարարվեր հոգալ կարիքները, ինչպիսին էլ որ դրանք լինեին: Իսկ եթե նրանք այնտեղ կարիքավորներ

չգտնեին, ապա առավել մեծ ուրախությամբ կիեռանային այդ երկրից: Մենք չենք առաջնորդվի մարդկանց հանդեպ հարգանքով, այլ՝ միայն մարդասիրությամբ: «Մենք, - ավելացրի ես, - եկել ենք միայնակ՝ առանց թղթակցի և չունենք դրա անհրաժեշտությունը: Մենք չենք վերադառնալու տուն՝ գիրք գրելու Թուրքիայի մասին, քանի որ այդ նպատակով չենք եկել այստեղ: Ոչինչ ծածուկ չի արվելու: Այն բոլոր ճեպագրերը, որոնք մենք կուղարկենք, հրապարակավ կանցնեն Ձեր հեռագրամեքենայով, և ես ուրախ կլինեմ, եթե մեր ողջ հեռագրությունը հասանելի լինի կառավարությանը: Իհարկե, չեմ կարող ասել՝ ինչպիսի բովանդակություն կունենան դրանք, սակայն կարող եմ երաշխավորել դրանց ճշմարտացիությունը, ազնվությունն ու անկեղծությունը, ինչպես նաև ուղարկված յուրաքանչյուր առաջատար մասնագետի վարքը: Ես ո՛չ խորհուրդներ կտամ, ո՛չ էլ խարդախ կամ ծածուկ գործողություններ կիրականացնեմ Ձեր կառավարության հանդեպ, բայց ներո՛ղ կլինեք, փաշա՛, եթե ասեմ, որ կակընկալեմ նույն վերաբերմունքը, որին կարժանացնեմ ձեզ»:

Թևֆիկ փաշան գրեթե շնչակտուր պատասխանեց. «Եվ Դուք կարժանանաք դրան: Մենք հարգում ենք Ձեր տեսակետն ու ցանկությունը, մեր հնարավորությունների սահմաններում կտրամադրենք Ձեզ օգնություն և անվտանգություն»:

Այնուհետև ես հարցրի նրան այլ պաշտոնյաների հետ իմ հանդիպումների անհրաժեշտության մասին: «Ո՛չ, - պատասխանեց նա, - ես լիազորված եմ խոսել իմ կառավարության անունից»: Մեր հանդիպումն ավարտվեց ջերմ բարեմաղթանքներով:

Հետագայում այլևս երբեք առիթ չունեցա անձամբ չզրուցելու այդ պաշտոնյայի հետ: Հետագա ողջ պաշտոնական փոխհարաբերությունները իրականացվեցին մեր ներկայացուցչության աշխատակիցների միջոցով: Այնուամենայնիվ, կարող եմ վստահաբար ասել, ինչպես և նշել եմ միսիոներական կազմակերպությունների աշխատակիցների անհամար խմբերի հետ ունեցած իմ առաջին հանդիպման ընթացքում, որ այստեղ ձեռք բերված ծանոթությունն անգնահատելի էր: Այս հանդիպման ժամանակ տրվեցին փոխադարձ հավատարմության խոստումներ և կողմերից ոչ մեկը երբեք չխախտեց կամ անվավեր չճանաչեց դրանք: Այդ խոստումներին ես պարտական եմ ողջ Փոքր Ասիայում կատարված աշխատանքի համար: Պարտական եմ նաև Բարձր դռան կողմից մեր առաքելության աշխատակիցներին հատկացված խիզախ պահակախմբերին, քանի որ

մեր բոլոր աշխատակիցներն էլ վերադարձան իրենց տները՝ ապահով և անվնաս, թեև հոգնած և հյուծված:

Դոկտոր Հաբելը և հինգ արշավախմբերի առաջնորդներն ասացին մեզ, որ իրենք երբեք, անգամ մի օր չեն մնացել առանց պահակախմբի պաշտպանության: Այդ պաշտպանությունը տրամադրվել էր թուրքական կառավարության հաշվին և առանց դրա առաքելությունները չէին կարողանա շարունակել աշխատանքները:

Թևֆիկ փաշայի հետ ունեցած այս հանդիպումը համարժեք էր թույլտվության: Ես և նախարար Թերըլը հեռագրեցինք Ամերիկա: Դոկտոր Հաբելը՝ որպես դաշտային գլխավոր գործակալ, սկսեց պատրաստվել՝ Սև ծովով Սեբաստիա, ապա՝ Խարբերդ հասնելու: Նա վարձեց թարգմանիչ, օգնականներ և պատրաստվում էր հաջորդ օրը նավարկել մեր խմբին որպես արևելագետ և լեզվաբան միացած Էռնեստ Մեյսընի հետ, երբ հյուրասենյակում ինձ պաշտոնապես դիմավորեց մի արքունի կառավարիչ և խորին ափսոսանքով հայտնեց, որ ստիպված են խնդրել ինձ հետաձգել առաքելությունը: Նա պատճառաբանեց, որ իր կառավարությանը ժամանակ է հարկավոր թարգմանելու և կարդալու Ամերիկայում հրապարակվող և իրենց ուղարկվող ահռելի քանակությամբ լրագրական նյութերի որոշ մասը: Դատելով համատեքստից՝ դրանք պաշտոնական բնույթ էին կրում և վկայում էին, որ մեր բոլոր նահանգապետերը ներգրավված էին Թուրքիայի դեմ ուղղված համընդհանուր շարժման մեջ, իսկ Կապիտոլիումն այդ գործողությունների գլխավոր կիզակետն էր: Կառավարիչը փորձեց ձեռքի շարժումներով ցույց տալ թղթակցության ծավալը և հասկացնել, որ անհնարին էր դրանք միանգամից թարգմանել: Եթե հաստատվեր, որ այդ թերթերում տեղ գտած տեղեկատվությունը պաշտոնական է, ինչը կարելի էր ենթադրել դրանցում նշված հայտնի անուններից, ապա կառավարությունը պետք է անպայման քններ այն: Սակայն եթե պարզվեր, որ տեղեկատվությունն ընդամենը լրատվամիջոցներում տարածված «խոսակցություն» էր, ապա այն կմնար անհետևանք: Հետևաբար՝ ինձ խնդրեցին հետաձգել առաքելությունը մինչև քննության ավարտը: Ես անձամբ ստացա հոդվածների մի քանի նմուշներ և զարմացա ոչ այնքան վերոնշյալ խնդրանքից, որքան այն քաղաքավարությունից, որով այն դրսևորվեց: Ես ինձ իրավունք կվերապահեմ տեղադրել լրագրի քաղվածքներից մեկը, որն ինձ ուղարկել էին որպես նմուշ այն տպագիր նյութերից, որոնք թուրքական իշխանությունները պետք է քննության առնեին:

Սա այն բազմաթիվ հոդվածներից մեկն էր, որ ինձ ստիպեց մտածել, թե նմանատիպ դրսևորումներից հետո ինչպես է մեզ երբևէ հաջողվելու մեր գործն առաջ տանել.

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ

Դաշինքն ընդլայնում է իր գործունեությունը Միացյալ Նահանգների հեռավոր շրջաններում: Նահանգապետերը կաջակցեն:

(Հաստուկ ճեպագիր կիրակնօրյա «*Հերալդին*»)

1896 թ., փետրվարի 8, Վաշինգտոն: Ինչպես նշում է «*Իվնինգ Նյուզը*» Համահայկական դաշինքը, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում և որը սերտորեն համագործակցում է տիկին Բարտոնի և Կարմիր խաչի հետ՝ հայերին օգնություն տրամադրելու նպատակով, արագորեն ավարտին է հասցնում նախապատրաստական աշխատանքները՝ ծավալելու իր գործունեությունը Միացյալ Նահանգների հեռավոր շրջաններում: Դաշինքն այստեղ իր մշտական կազմակերպությունը ձևավորեց ավելի քան մի շաբաթ առաջ՝ հետևյալ պաշտոնյաների ընտրությամբ՝ նախագահ Ռ. Ս. Թարին, փոխնախագահներ աստվածաբանության դոկտոր Բ. Սանդերլենդ և Ի. Է. Գիլբերթ, քարտուղար Հ. Լ. Սարջենթ և գանձապահ Ֆ. Ա. Սթայլը:

Մի քանի օրվա ընթացքում կմեկնարկի դաշինքի կողմից կազմակերպված թռուցիկների համատարած բաժանումը:

Գրքի անվանաթերթին կհայտնվեն հետևյալ բացառիկ կարգախոսները՝ «Աստված ընդդեմ Ալլահի, Քրիստոսն ընդդեմ Մուհամեդի, Աստվածաշունչն ընդդեմ Ղուրանի և դժոխքն ընդդեմ դրախտի»:

Առաջարկ կա անմիջապես տեղական դաշինքներ ձևավորել ամբողջ երկրում, որոնց կարող է անդամակցել յուրաքանչյուր անձ, ով առնչություն ունի որևէ քրիստոնեական կազմակերպության կամ միության հետ՝ անկախ կրոնական ուղղվածությունից:

* * * * * * * * * * * *

«*Նեշընալ*» հյուրանոցում գտնվող դաշինքի գլխավոր գրասենյակն աշխատում է ժամը 10-ից մինչև 12-ը:

Նախատեսվում է ուղարկել մոտ 2.000.000 թռուցիկ 200.000 կամ ավելի խմբաքանակով, որոնք կծանոթացնեն մարդկանց դաշինքի նպատակներին: Ազգային համագումարի պատվիրակները կընտրվեն տարբեր տեղական ակումբների կողմից:

Այնուամենայնիվ, քաջ գիտակցելով, որ հետաքննությունը չէր հայտնաբերի կառավարության կամ այլ պաշտոնական մարմինների գործունեության որևէ հետք՝ մենք որոշեցինք ժամանակ չկորցնել

և պատրաստվել աշխատանքներին: Մենք, ստանձնելով առևտրականի դերը, մեկնեցինք Ստամբուլ, խոշոր և մեծածախ ընկերություններից ձեռք բերեցինք ահռելի քանակությամբ նյութեր, որոնք անհրաժեշտ էին և օգտակար: Քարավանները շուտով պետք է դրանք հասցնեին երկրի ներքին շրջաններ:

Այս ընթացքում «Ռոբերտ» քոլեջի նախագահ, դոկտոր Ուոշբրընն ինձ ներկայացրեց Անգլիայի դեսպան պարոն Կյուրիի խնդրանքը: Նա փորձում էր ճշտել, թե արդյոք ես կհամաձայնեի արշավախումբն անցկացնել ոչ թե Սև, այլ Միջերկրական ծովով, որպեսզի հասնեինք Մարաշ և Զեյթուն քաղաքները, ուր տվյալ պահին գտնվում էին օտարերկրյա հյուպատոսները: Վերջիններս հաղորդել էին նրան, որ այս երկու քաղաքներում 10.000 մարդ տառապում էր չորս տարածված համաճարակներից՝ որովայնային տիֆից, բծավոր տիֆի տենդախտից, դիզենտերիայից կամ էլ ծաղիկից: Հիվանդների շրջանում մահացությունը շատ բարձր էր, նրանց մեջ չկար անգամ մի բժիշկ, քանի որ բոլորը կամ հիվանդ էին, կամ մահացել էին. չկար դեղորայք, սննդամթերքը քիչ էր: Տվյալ պարագայում մեզ համոզելու կարիք չկար, փոխարենը մենք պետք է խորին երախտագիտություն հայտնեինք պարոն Կյուրիին, քանի որ այդ մարդը, ում հետ երբեք չէինք հանդիպել, չմոռացավ տեղեկություն տրամադրել մեզ: Սակայն կար մի խոչընդոտ: Կ. Պոլսից Ալեքսանդրետ կարող էինք հասնել միայն տարբեր պետություններին պատկանող առափնյա նավերով, դրանք մեկնում էին երկու շաբաթը մեկ՝ անկանոն ժամանակացույցով: Մեր ապրանքների համար փոխադրամիջոցն ապահովված էր, դրանք պետք է տարվեին առաջին իսկ նավով: Ապրանքները տարան Գալաթայի նավամատույց, իսկ դոկտոր Հաբելի և իր օգնականների արտոնագրերն ստանալու համար վերջին պահին դիմեցինք կառավարություն: Ի զարմանս մեզ, դրանք տրամադրվեցին անմիջապես: Սակայն քանի որ արտոնագրերն առաքող սուրհանդակն ուշացավ, դրանք մեզ հասան փոքր-ինչ ուշ: Նավը շարժվեց սովորականից քիչ ավելի շուտ՝ տանելով օգնության ապրանքները: Նավամատույցում մնացած աշխատակիցները սպասում էին իրենց արտոնագրերին, որոնք իրենց հասան միայն այն պահին, երբ մեկնած նավին հետ կանչելն այլևս հնարավոր չէր: Իրականում ոչ ոք մեղավոր չէր: Դոկտոր Հաբելն առաջին իսկ նավով հնարավորին չափ արագ և ապահով հասավ Իզմիր, իսկ այնտեղից, նստելով մի պատահական նավ, Բեյրութով, Տրիպոլիով և Սիրիայով ուղևորվեց Ալեք-

սանդրետ: Ապրանքներն ապահով տեղ էին հասել, իսկ մյուս երկու օգնականները՝ Էդուարդ Մ. Ուիսթարը և Չարլզ Քինգ Վուդը, որոնց մենք հեռագրել էին Ամերիկայից, նույնպես շարժվել էին այդ ուղղությամբ՝ իրենց հետ տանելով ավելի շատ ապրանքներ: Այնտեղ մեզ տրամադրեցին բարավաններ, որոնք պետք է շարժվեին Այնթափ՝ նրանց համար դեռ անհայտ ճանապարհով: Այնթափն առաքելության առաջին հենակայանն էր: Այդ պահից ի վեր աշխատակիցները ներկայացրել են ինձ իրենց զեկույցները, որոնք, զետեղվելով այս գրքում, կմնան որպես կենդանի վկայություն: Մեր աշխատակիցները կպատմեն ձեզ իրենց անձնական համեստ պատմությունները՝ լի վտանգներով, ինչպես նաև բարդ ճանապարհորդության և հանդիպած դժվարությունների մասին, որոնցից երբեք չեն բողոքել: Նրանք միայն իրենց երախտագիտությունն ու ուրախությունն են հայտնել, որ կարողացել են որևէ կերպ նպաստել այս կարևոր, բայց և սարսափելի խնդրի լուծմանը:

Նշված ոչ էական փոփոխությունները և ուղնորության անակնկալները, որ բացի մեզնից ոչ ոքի համար կարևորություն չէին ներկայացնում, բնականաբար, առանձնացվել և հեռագրվել էին Ամերիկա՝ իբրև «լուրեր»:

Բուն փաստերից, որոնք չէին ուղեկցվում բացատրությամբ կամ համապատասխան հիմնավորումներով, հնարավոր չէր հասկանալ ոչինչ. այս ամենը միայն շփոթեցնում էր ընթերցողներին: Ինչևէ, դրանք պետք է ընդունվեին մեր լրագրողների, սպա շրջանառվեին և քննարկվեին մեր մտահոգ և շփոթված կոմիտեների կողմից:

Մարտի 25-ին Ամերիկայից ստացված նամակից կատարված սույն մեջբերումը, որն այսօր կհիշեցնի ընթերցողին այդ պահին Ամերիկայում իշխող տրամադրությունների մասին.

«Ամերիկայում բավական շատ են կասկածներն ու դժգոհությունները, որոնք առնչվում են Ձեր առաքելության երրորդ փոփոխությանը. ինչո՞ւ եք առաջարկում սկզբից գնալ Սև, այնուհետև՝ Միջերկրական ծով, ավելի լավ կլիներ ընդհանրապես չգնալ այնտեղ: Ինչո՞ւ է հարկավոր գնալ Իզմիր և Ալեքսանդրետ քաղաքները, որոնք օգնության կարիք չունեն: Մարդիկ ենթադրում են, որ Ձեզ հայտնի չէ Ձեր իսկ երթուղին կամ էլ Ձեզ խաբում են: Նրանք կարծում են, որ Դուք երբեք չեք հասնի այդ երկիր: Ասում են, թե Ամերիկայում հստակորեն գիտակցում են այս փաստը»:

Մեր գթասեր երկրում իշխող սաստիկ տրամադրությունները լուսաբանելու նպատակով ներկայացնենք մի քանի նախադասություն՝

մեջբերված այն ժամանակ ստացված այլ նամակներից.

«Ի՞նչ գործ ունեն այս մարդիկ Թուրքիայում: Սկզբից մենք տեղեկացանք, որ նրանք ուղևորվում են Խարբերդ Սև ծովով, այնուհետև՝ նրանք ուղևորվելու են Իզմիր, իսկ հետո՝ Ալեքսանդրետ: Իզմիրն օգնության կարիք չունի, ինչո՞ւ են նրանք ուղևորվում այնտեղ»: «Թվում է, թե նրանք չգիտեն իրենց անելիքը»: «Նրանք երբեք չեն հասնի այդ երկիր, մենք ասել էինք դա դեռ նրանց գնալու ժամանակ, և նրանք պետք է դա ավելի լավ գիտակցեին: Մենք գիտեինք, որ սուլթանը կարգելեր նրանց մտնել Թուրքիա, ինչը և անում է այսօր: Նրանք միայն խաբվում են»:

Չնայած որ այս քննադատությունները տհաճ էին և որոշ չափով անհեթեթ, դրանք, հասան մեզ և ծառայեցին իրենց նպատակին, քանի որ դրանց շնորհիվ մենք կարողացանք ավելի լավ ընկալել հաջորդ հեռագրերը: «Տեղեկացրեք մեզ Ձեր բոլոր անելիքների մասին, անհրաժեշտ է, որ մենք իմանանք դրանք»: Մենք պատասխանեցինք յուրաքանչյուր նամակի՝ տրամադրելով այն ողջ տեղեկությունը, որ հնարավոր էր ուղարկել այդ թանկարժեք մեթոդով:

Ես Ալեքսանդրետից երկու քարավանների համար անհրաժեշտ պահակախումբ ստանալու թույլտվություն խնդրեցի, բայց հետո իմացա, որ արշավախմբերը պետք է միանային և շարժվեին դեպի Այնթափ՝ պատվելի դոկտոր Ֆուլերի ուղեկցությամբ, ով գտնվում էր այդ քաղաքում: Կարիք չկա ներկայացնել նրան միսիոներական կամ կրոնական աշխարհին: Մինչ արշավախմբերը կմիանային, պարոն Գարգյուլոն, որ մեր ներկայացուցչությունից էր, շտապ եկավ ինձ մոտ (նրան ուղարկել էր Բարձր դուռը)՝ տեղեկանալու, թե որտեղ են մեր արշավախմբերը: Նրանք նախատեսել էին երկու արշավախումբ, սակայն տեղյակ էին դրանցից միայն մեկի գտնվելու վայրին: Որտե՞ղ էր մյուս արշավախումբը: Գարգյուլոն խնդրեց ինձ որոշակի տեղեկություն ստանալ և հաղորդել Բարձր դռանը: Լինելով բավականաչափ փորձությունների միջով անցած անձնավորություն ես չէի կարող չհասկանալ, թե ինչ էր այս ամենը նշանակում: Ես հասկացա, որ մեր աշխատակիցներն ինչ-որ տեղ վտանգի մեջ են և ինչ-որ մեկը փորձում է պաշտպանել նրանց: Ես ուղարկեցի ամբողջական պատասխան՝ նշելով, որ միայն մի արշավախումբ էր ճանապարհ ընկել և սպասեցի պատասխանի: Երկու օր հետո լուր ստացա Քիլիսում չերքեզների կողմից իրագործված ջարդերի մասին: Արշավախմբի

անդամները չգիտեին, որ Քիլիսը գտնվում էր ուղիղ իրենց ճանապարհի վրա, թուրքական բանակը հանկարծակի հայտնվել էր այնտեղ նրանց չերքեզներից պաշտպանելու նպատակով: Տեղի ունեցածի և իրավիճակի մասին այսքան ժամանակ անց ավելի ստույգ տեղեկություն, հավանաբար, կարող է տրամադրել միայն մեր բարեկամ Ֆրենսիս Ուիլարդին այն ժամանակ ուղղված նամակիս մեջբերման բովանդակությունը: Մենք այդ պահին զբաղված էինք Զեյթունի և Մարաշի բժշկական առաքելության անվտանգության խնդիրներով:

Հարգելի՝ Ֆրենսիս Ուիլարդ,

Թույլ տվեք Ձեր միջոցով հղել այս նամակը մեր, Ձեր և իմ ժողովրդին: Ի սեր Աստծու, ասացեք նրանց, որ հետ չկանգնեն իրենց սկսած բարի գործից: Միրոս կցավեր և բերանս չէր բացվի, եթե ստիպված լինեի պատմել նրանց այս քրիստոնյա նահատակների դժբախտությունների և կարիքների մասին: Սակայն ի՞նչ կարիք կա պատմելու: Նրանք առանց իմ պատմելու էլ գիտեն, թե ինչպես է այդ ժողովուրդը թափառում ծյունածածկ սարերով և ծխացող դաշտավայրերով՝ միայնակ, զրկված, լքված, հիվանդ ու վշտաբեկ, առանց սննդի, հագուստի կամ ապաստանի, մի կերպ գոյատևում և ապա անէանում: Ուրիշ ի՞նչ կարող եմ ասել մեր մարդկանց, եթե ոչ ցույց տալ իրենց իսկ կատարած գործերի արդյունքը:

Նրանք փրկեցին բազմաթիվ տղամարդկանց և կանանց նվիրական կյանքեր՝ աղոթքները շուրթերին, արտասուքը կոկորդում, օգնության հասան որպես հրեշտակներ՝ աշխատելով որպես ստրուկներ դժբախտության և վշտի բոլոր վայրերում, Տիրոջ պես համբերեցին վտանգը վաստակ, իսկ մահը՝ ոչնչություն: Սակայն մի այլ պատկեր է նշմարվում. սովորական դարձած դժբախտությունը, կարծես, բավարար չէր, հիվանդաբեր հրեշտակը թափահարում է իր՝ սև ծածկոցի նմանվող բևերը, և մի ակնթարթում վարակներն իշխանություն են ստանում ժամանակին աշխույժ Զեյթուն և Մարաշ քաղաքների վրա: Հարյուրավոր մարդիկ մահանում են, չկա օգնություն, դեղորայք, անհրաժեշտ հմտություն, սնունդը քիչ է, իսկ բամբակի վերջին մնացորդները ծախսվում էին՝ հիվանդներին և մահացողների մարմինը ծածկելու: Եվ ո՞ւմ հասավ այս կանչը՝ «Օգնեցեք, այլապես մենք կանէանանք: Ուղարկեք բժիշկներ»: Ամերիկյան ժողովրդի նվիրաբերած օժանդակությունը բաց արեց հնամենի Բեյրութի դռները, և Այրա Հարիսն իր բժիշկների խմբով շտապեց օգնության: Ալեքսանդրետում նրան սպասում էին ննջող քարավանները: Ստացանք հրաման՝ «Վե՛ր կացեք և գնացե՛ք: Այսուհետև Ձեր առջև ճանապարհը բաց է»: Ուղտերի քարավանը բեռնված էր ոչ թե փոռսկրով և զարդեղենով, ոսկու ձուլակտորներով և մետաքսի հակերով, այլ սովյալների, հիվանդների և մահացողների համար նախատեսված սննդա-

մթերքով և դեղորայքով: Առաջ շարժվեցին նրանք դեպի սարսափի քաղաք՝ Քիլիս: Առջևից շաչում էին վայրի գեղերի դանակները, իսկ հետևից մահ-մեղականների զորքերն էին: «Առաջ, մենք պաշտպանում ենք», - լսվեց հրամանը և շտապով հեռավորության վրա նշմարվեցին Այնթափի բրգաձև տանիքները: Հոգնած էին մարդիկ, հոգնած էին և ուղտերը: Հաբել, Ֆուլեր, Վուդ, Մեյսըն՝ անուններ, որոնք պետք է պատմություն դառնան՝ նոր մեկնարկած առաքելության ընթացքում ցուցաբերած սխրանքների շնորհիվ: Քաղաքի բնակիչները, որոնք ամիսներ շարունակ միայն սարսափ, վիշտ ու անտարբերություն էին տեսել, ուրախ ճիչերով անմիջապես ողջունեցին նրանց: Արշավախումբը մի փոքր հանգստացավ և անցավ օգնության հատկացմանը: Այնուհետև կարելի է տեսնել, թե ինչպես էր ձնածածկ սարերով առաջ շարժվում նրանց հոգնաբեկ և հյուծված քարավանը, որ ծանր աշխատանքով էր պայքարում տենդի և մահվան դեմ: Թող նրանք շարունակեն իրենց առաջադրանքը: Սա ամերիկյան ժողովրդի աշխատանքն է արտերկրում: Ահա, Ձեր միջոցով հղում եմ ուղերձս իրենց հայրենիքում գտնվող ոչ թե փոքրաթիվ և աղքատ, այլ ունևոր և հզոր ժողովրդին՝ հիշեք այս պատկերը և մի զլացեք բարեգործությամբ զբաղվել:

Կլարա Բարտոն

Երբ առաջին և երկրորդ առաքելությունները պատրաստվում էին դուրս գալ Ալեքսանդրետից, Զեյթունի և Մարաշի առաջատար միսիոներները հաստատեցին այնտեղ տիրող սարսափելի իրավիճակը և մեզ խնդրեցին հոգալ բժիշկների, դեղագործների, ինչպես նաև դեղորայքի և, առհասարակ, բժշկական օգնության ծախսերը: Մենք ավելի քան պատրաստակամ էինք կատարել այս խնդրանքը: Աշխատակիցներն արդեն սկսել էին բանակցել Բեյրութում գտնվող դոկտոր Ջորջ Ի. Փոսթի հետ: Արդյունքում դոկտոր Այրա Հարիսը, ով բնակվում էր Սիրիայի Տրիպոլի քաղաքում, տեղի բժիշկների իր խմբի հետ ճանապարհ ընկավ, մենք հիանալի արդյունքի հասանք: Ինչ-ինչ պատճառով բժիշկը ժամանում էր Ադանայով, այլ ոչ Ալեքսանդրետով, և այժմ նա վտանգներով լի երկրում էր՝ ոչ բավարար պահակախմբով: Երկու-երեք օր ուշացումով նա մեզ ճեպագիր ուղարկեց Կ. Պոլիս: Ներկայացուցչության միջոցով մենք այն անմիջապես ուղարկեցինք Բարձր դռանը: Վերջինս էլ ուղղակիորեն այն վերադարձրեց ինձ՝ կից գրությամբ՝ հավաստելով, որ անմիջապես համապատասխան քայլեր են ձեռնարկվել: Նույն օրը դոկտոր Հարիսը մեկնեց Ադանայից՝ զինվորական պահակախմբի ուղեկցությամբ, որն առաջնորդեց առաքելությանը և հեռացավ միայն այն Մարաշում թողնելուց հետո:

Մի քանի օր առաջ դոկտոր Հաբելը ժամանել էր Մարաշ: Սակայն դոկտոր Հարիսի ժամանման օրը նա հանձնարարություններ ստացավ և անմիջապես մեկնեց՝ իր ուսումնասիրությունները գյուղերում շարունակելու և ժողովրդի ընդհանուր կարիքները հոգալու նպատակով՝ որտեղ էլ որ գտնվեին նրանք: Իրականում սա չորրորդ առաքելությունն էր, որ այսքան վաղ էր մեկնարկել իր աշխատանքները գործողության տարածքում: Առանձին հանձնարարությունները, որոնք հետագայում բավական արդյունավետորեն հանձն առան պարոն Ուիսթարն ու պարոն Վուդը, հայտնի դարձան որպես երկրորդ և երրորդ առաքելություններ: Նրանք գործողության տարածքում էին մինչև բժշկական առաքելության մեկնարկը:

Հաշվի առնելով այս մի քանի առաքելությունների կազմավորումը, դրանց տրված հանձնարարություններն ու տարբեր ուղղությունները՝ կարելի է եզրակացնել, որ աշխատակիցները շատ քիչ ժամանակ էին ունենում հայրենիքի հետ կապ պահպանելու համար. այդ առաքելություններն աշխատում էին հազարավոր մղոններ միմյանցից հեռու, անձնական ճանապարհորդության դեպքում գործողության տարածք կարելի էր հասնել չորս շաբաթվա ընթացքում, ուղարկել և ստանալ նամակ վեց շաբաթից, իսկ հեռագրի միջոցով նամակներ ստանալը խիստ անկանոն էր և կարող էր տևել երկու օր և ավելի՝ կախված հաղորդալարերի վիճակից: Նամակները ստացվում էին տարբեր լեզուներով՝ թուրքերենով և հունարենով կամ արաբերենով և այս ամենին դեռ գումարվում էր բոլոր այլ պարտականությունները, որոնք հարկավոր էր անմիջապես կատարել: Մինչ մենք մտահոգված էինք այս անհանգիստ վիճակով, մեզ լրացուցիչ շփոթմունքի մեջ գցեց Միացյալ Նահանգների կոմիտեներից ստացված ճեպագրերի բովանդակությունն ու բնույթը. «Նվիրատուները դեմ են, որ թուրքերը մասնակցեն բաշխմանը»: Ի՞նչ էր սա նշանակում: Մենք միայն պատասխանեցինք. «Չենք հասկանում Ձեր ճեպագրի բովանդակությունը: Խնդրում ենք պարզաբանել այն»: Սրանց հաջորդեցին տարբեր աղբյուրներից նույն բովանդակությամբ այլ ճեպագրեր: Վերջապես ստացանք նամակներ, դրանցում խորին ափսոսանքով նշված էր, որ այն միջոցները, որոնց ես ստիպված էի ապավինել իմ առաքելությունն իրականացնելու նպատակով, այլևս չէին կարող հատկացվել: Այս փաստը կարող էր կործանարար ազդեցություն ունենալ միջոցների ընդհանուր հավաքագրման վրա: «Հավանաբար այլ կերպ վարվել հնարավոր չէր, նրանք ակնկալում էին նման զարգա-

ցումը և, փաստորեն, դրա վերաբերյալ շարունակ կանխագուշակումներ էին անում»: Իսկ ի՞նչ էի ես արել: Առեղծվածն ավելի անվերծանելի դարձավ: Վերջապես որոշ ժամանակ անց Կ. Պոլսից մի հեռագիր ստացա: Հեռագիրը բաղկացած էր միայն չորս տողից և ուներ հետևյալ բովանդակությունը.

«Նախարարների խորհուրդը որոշել է, որ Կլարա Բարտոնը կարող է համագործակցել միայն թուրքական հանձնախմբի հետ և օգտվել բացառապես նրա կողմից տրամադրված կարիքավոր հայերի ցուցակներից՝ օգնության հատկացումն իրականացնելու համար: Ակնկալվում է սուլթանի հրամանագիրը»:

Ոչ ոքի մտքով չէր անցել քննության առնել այս հայտարարության *ճշմարտացիությունը* և ճշտել այն ինձ հետ: Ինձ լավ ճանաչելով հանդերձ՝ ոչ ոքի մոտ չպետք է հարց ծագեր արդյոք ես *կարող էի* նման քայլի դիմել: Ողջ Ամերիկայում, Անգլիայում և անգամ Թուրքիայի Միսիոներների խորհուրդներում հավատացած էին, որ ես տվել եմ խոստում և ստորագրել փաստաթղթեր՝ հատկացնելու ինձ վստահված օգնությունը թուրքական հսկողության ներքո՝ նրանց իսկ պաշտոնյաների կողմից պատրաստված ցուցակներով: Պարզվեց, որ ես ու իմ աշխատակիցները միակն էինք, ովքեր չէին լսել այդ մասին: Ապշած և խորապես վիրավորված՝ մենք կտրականապես հերքում էինք այս իրողությունը: Այդ օրերին ամերիկյան լրատվամիջոցները ողողված էին զարմանքով լի մերժումներով: Պարոն Կյուրին և հենց թուրքական կառավարությունը օգնության շտապեցին՝ հայտարարելով, որ նրանք երբեք այդպիսի մտադրություն չեն ունեցել: Քարտուղար Օլնիին հեռագիր ուղարկվեց, որում փորձ էր արվում «հասկացնել ամերիկյան ժողովրդին, որ թուրքական կառավարությունը չէր միջամտում այս օժանդակության տրամադրմանը»: Չնայած այս ամենին, քննարկումները շարունակվեցին և, ժողովուրդն ու կոմիտեները, վերջիվերջո, հուսալքվեցին: Վերջիններս հեռագրեցին՝ ասելով, թե ներկա տրամադրությունների ներքո գրեթե ոչինչ ավելին հնարավոր չէր ակնկալել և բարյացակամորեն առաջարկեցին փոխանցել առձեռն գումարը այլ կազմակերպությունների՝ բաշխելու համար: Ամերիկայում Ազգային կարմիր խաչի իմ աշխատակիցները, վիրավորված և գարշած գործի անարդար ընթացքից, կարեկցանք հայտնեցին և առաջարկեցին թողնել գործողության տարածքը և վերադառնալ հայրենիք:

Սա աննախադեպ իրավիճակ էր: Կարմիր խաչն աշխարհով մեկ իրականացրել էր օգնության մեծածավալ աշխատանք, կազմակերպության յուրաքանչյուր բաժնի գործունեությունը գերազանցում էր բոլոր սպասելիքները, թերացումներ չէին եղել: Յուրաքանչյուր գործողության տարածքից, ուր օգնության աշխատանքներ էին իրականացվում, ստանում էինք շնորհակալական նամակներ և օրհնությունների տարափ: Դրամական միջոցները ծախսվում էին խելամտորեն և լրացուցիչ գումարների կարիք չէր լինում: Մյուս կողմից ողջ պետությունը խուճապի էր մատնվել, նշանավոր կոմիտեներ կազմալուծվում էին, խիզախ, հավատարիմ աշխատակիցների ափսոսանքը վերածվել էր հուսահատության և արհամարհանքի, իսկ ընդհանուր գործն ուր որ է պետք է մոռացության մատնվեր և դադարեցվեր՝ շարունակական վնաս հասցնելով համայն մարդկությանը: Նման անհուսալի իրավիճակը պահանջում էր կտրուկ և հերոսական քայլեր: Ես, գիտակցելով կոմիտեների դիրքորոշումը իրենց իսկ անհույս զեկույցներից, անմիջապես հեռագրեցի և ազատեցի նրանց հետագա օժանդակություն տրամադրելու պատասխանատվությունից՝ *«Մենք կավարտենք օգնության աշխատանքն առանց հետագա օժանդակության»:* Կարմիր խաչի իմ աշխատակիցներին ես թելադրեցի հետևյալ նամակը, որը, ըստ իս, որոշ չափով օգնեց նեղն ընկած կոմիտեներին կրկին ոտքի կանգնելու:

Կ. Պոլիս, Թաքսիմ, Այազ փաշա, 1896 թ., ապրիլի 18
թղթակից-քարտուղար պարոն Դըգրոյին,
Ամերիկյան ազգային կարմիր խաչ, Վաշինգտոն, ԱՄՆ

Հարգելի՝ պարոն Դըգրո,

Ես ստացա Ձեր և Սթիվըն Է. Բարտոնի սրտացավ, նաև սիրալիր նամակները, որոնք ընդունվեցին նույնքան ծանր սրտով: Ես չէի կարող հասկանալ ինչպես կարող էր նման բան պատահել, քանի որ գիտեմ, որ գործի ենք դրել ամեն հնարավոր միջոց, ես համոզված էի, որ մենք լավագույն կերպով կիրականացնեինք հանձնարարությունները առկա պայմաններում: Ես գիտեի, որ մենք պատրաստել էինք հիանալի, լավ կազմակերպված օգնություն, որի պահանջարկը չէր կարելի համեմատել որևիշ ոչինչի հետ: Մեզնից բացի չկար այլ կազմակերպություն, որ կկարողանար գլուխ հանել այս սարսափելի, բայց արդեն նկազող աղետից, չկար մեկը, ով կկարողանար զբաղվել այդ խնդրով: Ես գիտեի, որ ինձ ոչինչ չէր խանգարում, որևէ «սահմանափակումներ» չէին դրվել և անգամ նման առաջարկ չէր եղել: Կառավարությունն ուշադիր էր մեր նկատմամբ, այն հավանություն էր արժանացնում իմ

բոլոր խնդրանքները: Սակայն ի՞նչը խառնաշփոթ առաջացրեց Ամերիկայում և պատճառ դարձավ, որ ամեն ինչ գլխիվայր շուռ գար: Օգնություն հատկացնող կազմակերպությունների սնանկացումը և մեզ ուղղված տխուր հայացքնե՞ր: Մենք չէինք կարողանում հասկանալ: Ես չզարմացա, որ Դուք մտածեցիք՝ «ավելի լավ է վերադառնալ հայրենիք», ես գիտեի, որ դեռ չէինք վերադառնալու և իսկապես չէինք. կարող: Օգնություն տրամադրող մեր գործակալները գործողության տարածքներում էին, սարերում՝ հարյուրավոր մղոններ այն կողմ, և ես չէի կարող հեռանալ վեց շաբաթվա ընթացքում: Եթե անգամ մենք հեռանալու լինեինք, դա կնշանակեր բախտի քմահաճույքին թողնել հազարավոր աղքատների, հիվանդների, տառապյալ և չքավոր ժողովրդի, ինչը կցնցեր ողջ աշխարհը: Մարդիկ հիվանդ էին, առանց սնունդի, դեղորայքի, մերկ, նրանց մեջ չկար անգամ մի բժիշկ: Սա մի պատուհաս էր, որ ամբողջական քաղաքներ թողել էր բախտի քմահաճույքին: Մարդիկ մահանում էին, ոչ ոք նրանց օգնության ձեռք չէր մեկնում, բացառությամբ չորսհինգ վճռական միսիոներների, որոնք, թեև հոգնած էին, ուժասպառ, բայց ծառայում էին Աստծուն մինչև վերջին շունչը: Ողջ քաղաքակիրթ աշխարհը լի է փորձառու բժիշկներով, իսկ այնտեղ չկա գեթ մեկը: Ոչ ոք չի հրավիրում նրանց այնտեղ, պատասխանատվություն չի ստանձնում հոգալու ուղևորության ծախսերը: Եվ մենք, տեսնելով այս ամենը, շաբաթներով պատրաստած և կազմակերպած օգնությունը ձեռքներիս՝ դրանք բաժանելու ակնկալիքով, պետք է հետ վերադառնանք. ազատ արձակենք մեր օգնականներին, հետ ուղարկենք արդեն գործի անցած բժիշկներին, թողնենք ամեն ինչ, որովհետև ինչ-որ մեկը մի բան է ասել, այդ հայտարարությունը շրջանառվել է մամուլում և աշխարհը հավատացել է դրան: Մեր հիասթափված կոմիտեները հուսահատված և բարկացած պայքարում էին՝ իրենց համար լրիվ նոր առաջադրանք կատարելու, իսկ ժողովուրդը վրդովվել և հրաժարվել էր աջակցել նրանց: Մի՞թե սա էր մեր օժանդակության արդյունքը: Իսկ ո՞րն է այդ դեպքում մեր կազմակերպության նպատակը: «Փոփոխական»՝ այսպիսին է ցորենի գինը շուկայում, ձեզ այն դո՞ւր է գալիս: Ի՞նչ Աստծու և համայն մարդկության, այս օգնությունը պետք է իրականացվի, մարդկանց հարկավոր է փրկել, փորձառությունը, խնամքը, դեղորայքն ու սնունդը պետք է հասնեն հիվանդներին: Սիրտս թեթևանում է, երբ մտածում եմ, որ թուրքական զորքերն ուղեկցում են բժիշկների խմբերին դեպի Մարաշ: Նրանք այս պահին թուրքական զորքերի ուղեկցությամբ շարժվում են դեպի իրենց գործողության տարածքները: Մի՞թե նման հանգամանքներում մարդկանց պետք է հետաքրքրի քննադատությունը, հավանություն տալու կամ չտալու հարցը: Մի՛ անհանգստացեք, մենք կարող ենք իրականացնել այս առաքելությունը: Մենք ունենք խիզախ, այլ ոչ շփոթված, արդար դրամագետներ և, Աստվա՜ծ տա, կարող ենք փրկել նաև մեր հիվանդներին:

Մնում է հավելել, որ այս միջոցն արդարացրեց իրեն և խուճապը

վերացավ: Հույս ունեմ՝ այսօր աշխարհում միայն քչերն են, ովքեր չեն հասկանում, որ Ամերիկայի կողմից տրամադրված միջոցները բաշխվում են իր իսկ գործակալների միջոցով՝ առանց թուրքական կամ այլ կառավարության միջնորդության կամ խորհրդի:

Ես ներկայացրի այս դեպքը ոչ թե նրա համար, որ այն օգնության տրամադրման անմիջական մասն էր, կամ էլ կարեկցանք հարուցելու համար, այլ ցույց տալու մեր ժողովրդի բնավորությունն ու այն ժամանակվա սովորությունները, որով ապրում ենք առ այսօր՝ հուսալով, որ դրանց շուրջ մտորումներից կարելի կլինի դասեր քաղել ապագայի համար: Անհնար է չնկատել, թե ինչպես մոլորեցնող խանդավառությունը, սենսացիոն լուրերի հանդեպ ունեցած կիրքը, անխոհեմ, չմտածված, ճակատագրական արարքները տապալեցին իրենց ողջ նպատակը կամ էլ այն ամենը, որ արվել էր մարդկության համար: Նրանք թաղեցին իրենց ծավալուն աշխատանքն ու հույսերը խորտակված և ամոթալի գերեզմանում: Ինչպես իրենք խոստովանեցին, երբեք չէին գիտակցել, որ փորել էին այդ գերեզմանի փոսը իրենց իսկ համար: Այսօր նրանք պարզապես հպարտ են իրենց աշխատանքով և ժողովուրդն էլ՝ իրենցով:

Օգնականների խիստ սահմանափակ թվի պատճառով անհրաժեշտ էր, որ նրանցից յուրաքանչյուրը հնարավորինս շուտ առանձին պատասխանատվություն ստանձներ: Այնթափում գտնվող արշավախումբը և Մարաշից հյուսիս-արևելք գտնվող դոկտոր Հաբեթի գլխավորած առաջին առաքելությունը շտապեցին Ուրֆայով և Դիարբեքիրով ճամփա ընկնել և միանալ պարոն Ուիսթարի և Վուդի առաքելություններին: Նրանց բոլորի նպատակակետը Խարբերդն էր, ուր ծրագրել էին հանդիպել որոշակի ժամի: Ինձ ոչինչ այնքան չուրախացրեց, որքան այն լուրը, որ նրանք հանդիպելու էին ողջ աշխարհում հարգանք վայելող մեր խիզախ հայրենակցի՝ տիկին Շատակի հետ: Նա, միայնակ, շրջապատված կարիքներով և դժբախտությամբ, այլոց բացակայության ժամանակ ողջ պատասխանատվությունն իր ուսերին էր առել: Մենք ինչ-որ կերպ կարող էինք օգնել և քաջալերել նրան, քանի որ ձեռքի տակ ոչինչ չէր մնացել, ամբողջը տվել էր ամեն օր հանդիպող հազարավոր կարիքավորներին: Ուրախությունս կրկնակի կլիներ, եթե նրանք գնային նաև Վան, այնտեղ գտնեին մեր մյուս շնորհալի և կիրթ հերոս-հայրենակցին՝ դոկտոր Գրեյս Քիմբոլին: Սակայն ճանապարհը երկար էր, այն գրեթե ձգվում էր դեպի Արարատ լեռը, իսկ սարերը բարձր էին և ձյունածածկ: Եվ

թվում էր, թե տիկին Շատակի փայլուն աշխատանքի և հիանալի կազմակերպվածության արդյունքում օգնության կարիքն ավելի քիչ էր, քան դժբախտ ճակատագրի արժանացած շատ այլ բնակավայրերում: Ուշագրավ էր, որ երկու արշավախմբերը, որ բաժանվել էին ապրիլի 6-ին Այնթափում, միմյանց մասին չունենալով պետք է հանդիպեին Խարբերդում: Նրանց միջև հեռավորությունը 3 ժամ էր: Իսկ երբ քաղաքի բնակիչները, միսիոներների գլխավորությամբ, միահամուռ հավաքվեցին՝ դիմավորելու դոկտոր Հաբելին և Կարմիր խաչին, հեռվում՝ հակառակ ուղղությամբ, տների տանիքներից մինչև փողոցները լցված մարդկանց շարքերի միջից երևաց Ուրֆայից ժամանած արշավախումբը, որ համեստորեն սպասում էր մյուս առաքելության ժամանմանը:

Այս արշավախումբը, որ առաջվա պես բաղկացած էր երկու խմբավարներից, նորից բաժանվեց, և խմբավարները, ինչպես վկայում են նրանց առանձին զեկույցները, միմյանց միջև բաժանեցին պարտականությունները՝ օգնություն հատկացնելու Խարբերդի, հետագայում նաև Դիարբեքիրի վիլայեթի 200 գյուղերին: Նրանք, արագորեն գյուղացիներին տրամադրեցին գյուղատնտեսական գործիքներ և անասուններ, քաջալերեցին, հույս տվեցին մարդկանց և այսպիսով կարողացան ապահովել բերքահավաքը և փրկել հրաշալի հովիտների հացահատիկի բերքը:

Այս ընթացքում Կ. Պոլսում ճեպագիր ստացա Այնթափում գտնվող դոկտոր Շեփերդից, ով անխոնջ օգնություն էր տրամադրել բազմաթիվ մարդկանց: Ճեպագրի մեջ նա նշում էր, որ Արաբկիրում մոլեգնում են ամենավտանգավոր վարակները՝ որովայնային ու բծավոր տիֆը: Արաբկիրը գտնվում է Խարբերդից դեպի հյուսիս, երկուերեք օրվա ճանապարհ էր: Հնարավո՞ր էր արդյոք բժիշկներ և օգնություն տրամադրել: Ես հաղորդեցի այդ մասին Խարբերդում գտնվող դոկտոր Հաբելին, և նա դիմեց հապճեպ և խիզախ գործողությունների, որոնք կհիշատակի, սակայն երբեք ամբողջությամբ չի ներկայացնի իր զեկույցը: Հարկ է նշել, որ երբ նա իր օգնականների հետ ժամանեց Արաբկիր, այնտեղ օրեցօր աճում էր այտուցային ժանտախտի և մահացության դեպքերի թիվը, իսկ երբ հեռանում էինք, քաղաքը, ըստ վերջին հաշվետվությունների, գտնվում էր բնականոն սանիտարական վիճակում: Նրանց ցուցաբերած խնամքի և բժշկական օգնության արդյունքում մահացությունը կտրուկ նվազել էր:

Այդ ժամանակ Զեյթունի և Մարաշի բժշկական օգնության համար

պատասխանատու էր դոկտոր Հարիսը, ով մարտի 18-ին ժամանեց գործողության տարածք: Ըստ հյուպատոսների զեկույցների՝ չորս վարակիչ հիվանդությունների մահացության օրական թիվը հասել էր հարյուրի: Այս թիվը շատ հավանական էր, եթե հաշվի առնենք, որ 10.000 մարդ մոլեգնող հիվանդությունների զոհ էր դարձել: Ի հավելումն՝ քաղաքները լցված էին հիվանդ մարդկանցով և հազարավոր անտուն գաղթականներով՝ տեղահանված իրենց ամայացած գյուղերից, չկային կենցաղային նվազագույն պայմաններ, ամենուր իշխում էր տևական սովը: Դոկտոր Հարիսից ստացած առաջին զեկույցում նշվում էր, որ նա ստիպված էր եռացնել ապուրով լի թեյնիկները և կերակրեր հիվանդներին մինչև որ հնարավոր կլիներ դեղորայք օգտագործել: Ես պատասխանեցի նրա նամակին 200 դոլարի վճարագրով, որին կցել էի հետևյալ ճեպագիրը. «Շարունակեք կրակը թեժ պահել: Տեղեկացրեք մեզ Ձեր կարիքների մասին»: Հետագա զեկույցները վկայում են, որ այս ժամանակից ի վեր մահացությունը զարմանալիորեն նվազել էր: Մեր բոլոր արշավախմբերն արեցին ամեն բան՝ խուսափելու համաճարակի տարածումից, և Զեյթունում, Մարաշում կամ Արաբկիրում բժշկական օգնության կարիք այլևս չզգացվեց: Եթե չիրականացնեինք այս կանխարգելիչ միջոցառումները, վարակը կարող էր արագորեն տարածվել ողջ Փոքր Ասիայով, մի փաստ, որ մեծապես մտահոգում և անհանգստացնում էր մարդկանց: Մայիսի 24-ին դոկտոր Հարիսը զեկուցեց, որ համաճարակը հաղթահարված է: Այլևս կարիք չկար այնտեղ մնալ և նա վերադարձավ Տրիպոլի՝ իր կարևոր պարտականությանը և իր հետ տանելով ցուցաբերած աննախադեպ և չգերազանցված բժշկական օգնության համբավը: Նրա փրկած կյանքերը բավարար էին, որ նա արժանանար ամենափառավոր երկնային պսակին: Ամերիկան երբևէ այնքան արժանի կերպով հպարտ և երախտապարտ չի լինում, որքան այն ժամանակ, երբ իր զավակներն օտար երկրներում կատարում են նման արժանապատիվ գործեր:

Դոկտոր Հարիսի ժամանման օրը ապշեցնող իրավիճակը Զեյթուն և Մարաշ քաղաքներում ստիպեց նրան ավելի շատ բժիշկներ հրավիրել: Մեծ ջանքեր գործադրվեցին՝ նրանց գտնելու, սակայն իրավիճակը գործողության տարածքում չէր բավարարում բժիշկներին: Դոկտոր Փոսթը Բեյրութից վերջին հավաքագրված բժիշկների խումբն էր ուղարկել և դեռ արիաբար շարունակում էր ջանքեր գործադրել: Իզմիր քաղաքին օգնություն հատկացնելու համար հանգա-

նակություն էր հավաքում հմուտ և ճարպիկ հյուպատոս, գնդապետ Մաղենը: Ես ինձ իրավունք էի վերապահում նրանից զգալի չափով գումարներ խնդրել՝ սիրով հիշելով, թե ինչպես էինք մենք անում դա, երբ Կարմիր խաչի շրջանակներում օգնություն էինք տրամադրում 1884 թ. Օհայոյի ջրհեղեղներից տուժածներին: Այնտեղ հաջողության չհասնելով՝ ես կենտրոնացրի աշխատանքներս Կ. Պոլսում: Մենք, բնականաբար, պետք է գտնեինք այլ ազգության քաղաքացիներ, բացի հայերից: Մեզ հաջողվեց գտնել չորս հույն բժիշկ, որոնց հետ կապվեցինք և նրանք անորոշ ուշացումներով ժամանեցին մայիսի 11-ին՝ իրենց հետ բերելով հիվանդների համար անհրաժեշտ մեծ քանակությամբ դեղորայք և սնունդ: Բժիշկները բերեցին նաև մի քանի մեծ ախտահանիչ սարքեր, որոնք մեզ տրամադրել էր թուրքական կառավարությունը՝ ի դեմ հույն բժիշկ դոկտոր Զավիցիանոյի: Վերջինս բանակցությունների միջոցով սիրով աջակցեց մեզ տարբեր կերպ: Անխուսափելի ուշացումների պատճառով նրանց հաջողվեց հասնել Այեքսանդրետ միայն մայիսի 25-ին: Այս ժամանակից ի վեր տենդը հաղթահարվել էր, և բացարձակապես անհրաժեշտություն չկար, որ նրանք գնային Մարաշ: Դոկտոր Հարիսի հետ խորհրդակցելուց հետո նրանք վերադարձան Կ. Պոլիս՝ դեռ բարյացակամորեն պատրաստ լինելով առանց վարձատրության պահպանել պայմանավորվածությունը և ժամանել մեզնից հրահանգներ ստանալուն պես, անգամ եթե խոլերան հասներ Փոքր Ասիա և անհրաժեշտ լիներ գնալ դրան ընդառաջ: Անհրաժեշտության դեպքում մենք չպետք է երկմտենք օգտվելու այս հարգարժան անձանց ծառայություններից, անգամ նման հեռավորության պարագայում: Այս արշավը հայտնի դարձավ որպես հինգերորդ առաքելություն: Թեև այն ավելի քիչ ծառայություններ մատուցեց և կազմակերպվածության առումով ամենադժվարն էր, բայց բոլորից ամենակայունն ու իրավական տեսանկյունից ամենաճիշտ կազմակերպվածը:

Գործողության տարածքում բժշկական օգնությունն ավարտելուց հետո մեր բոլոր ջոկատները ձեռնամուխ եղան ընդհանուր օգնության հատկացմանը Խարբերդի վիլայեթում: Օգնությանն աջակցող միսիոներները վիլայեթին տվել էին «անհատակ հոր» անվանումը, որ բավական դիպուկ էր: Մենք Բոստոնի և Վուստրի կոմիտեներից ստացված գրեթե բոլոր միջոցները ներդրել էինք Խարբերդի վիլայեթի աշխատանքներին:

Մեր գործակալների կողմից գրված համեստ, մակերեսային զե-

կույցներն անհրաժեշտ է կարդալ տողերի արանքում՝ մոտավորապես պատկերացնելու նրանց կատարած հսկայական աշխատանքը, որ կարող է գործողության մղել նաև ուրիշներին: Ամենևին հեշտ չէր հաղթահարել ժողովրդի անտարբերությունը, որն առաջացել էր բացարձակ ոչնչության զգացումից, խոր վշտի ու վախի մթնոլորտից: Եվ ահա մարդիկ գիտակցեցին բոլորի մոտ մտավախություն առաջացնող շարունակական ողորմածության մեծ վտանգը. ժողովուրդը հանկարծ չհայտնվեր ծայրահեղ աղքատության մեջ և արդյունքում վերջնականապես սովամահ լիներ այլ ազգերից օգնություն չստանալու պատճառով: Այն օտար ժողովուրդը, որ, կտրելով հազարավոր մղոններ, պատրաստակամորեն եկել էր օգնելու հայերին, իր ներկայությամբ հույսի շող արթնացրեց նրանց մեջ և խթանեց, որպեսզի նրանք ևս փրկեն իրենց: Սա առաջին դեպքն էր, երբ օտարերկրացիները *համարձակություն էին ունեցել* օգնության հասնել նրանց: Չնայած նախկին տներից մնացել էին քարակույտեր, հող և ուրիշ ոչինչ, վարելահողը դեռ պիտանի էր, և երբ սերմնացուները, գյուղատնտեսական գործիքներն ու անասունները գործի դրվեցին, ընկճված հոգին վերածնվեց, տկար ու հուսալքված ձեռքերը բացվեցին և գյուղացին կրկին ոտքի կանգնեց: Իսկ երբ քաղաքներն այլևս չէին կարող չմշակված երկաթ և պողպատ տրամադրել՝ բահեր, թռխրեր, գութաններ ու քլունգներ պատրաստելու, մենք տրամադրեցինք նրանց այդ գործիքները, և դարբնոցից նորից սկսեց ծուխ բարձրանալ: Դարբինը, աշխատանքից խոնջացած, փուքսն ուսին գցած, կտրում-անցնում էր մղոններ: Կրկին լսվեց ատաղձագործի մուրճի և սղոցի ձայնը: Փոթորկալի ձմռան ավերակների տակ մնացած կոտրված, ցաքուցրիվ եղած ճախարակները, մանածագործական հաստոցները կրկին գործի դրվեցին, իսկ այրի կնոջ ձեռքին բրդի, բամբակի, վուշի և կանեփի թարմ խուրձերը խոստանում էին վերակենդանացնել արդյունաբերության տարբեր ճյուղերը՝ տալով մարդկանց ոչ միայն հագուստ, այլև սնունդ:

Վերջապես հունիսի սկզբին Դիարբեքիրի, Ֆարկինի և Խարբերդի հովիտները, որ ցանվել էին նախորդ տարի, դարձան ոսկեգույն և ցորենները խոնարհեցին իրենց նիզակաձև պսակազարդ գլխիկները՝ սպասելով հնձող մանգաղին: Սակայն չկար ո՛չ մանգաղ, ո՛չ գերանդի, անգամ դանակ չկար: Ունևոր ամերիկացի ագարակատերերի համար մի անսովոր և խղճուկ տեսարան էր նայել այդ դատարկ, կոշտ ասիական ձեռքերին, որոնք ուժ էին գործադրում՝ ջարդելու

կամ արմատախիլ անելու կոպիտ ծրոտը: Նման իրավիճակը չէր կարող շարունակվել, մարդկանց վիշտը փոխվեց ուրախության. երբ մեր աշխատակիցները կարողացան նրանց համար Դիարբեքիրից և Խարբերդից գյուղատնտեսական գործիքներ տեղափոխել գյուղեր: Գյուղի ողջ դարբինների աշխատանքն ուղղվեց մանգաղների ու գերանդիների, իսկ կայծքար մշակողներինը՝ հասարակ կալսիչների պատրաստմանը: Վերադառնալուց հետո աշխատակիցները պատմել են ինձ իրենց ամենահաճելի հիշողությունները: Դրանք կապված էին ընդարձակ հովիտների ոսկեգույն ցորենների հետ, որոնք խոնարհվում, ընկնում էին հնձվոր կանանց և տղամարդկանց առջև: Նրանցից յուրաքանչյուրն ուներ նոր սուր մանգաղ կամ գերանդի: Պարզունակ կալսիչ տախտակները, հացահատիկը կոխոտող անասունը, իսկ հետևում՝ հասկաքաղի մի տեսարան, ինչպես Աբրահամի և Մովսեսի օրերում: Երանի թե այդ հնձվորների մեջ լիներ բերքահավաքի մի բարեսիրտ արքա, որի հրամանով տրցակները լցվեին հացահատիկի բերքով:

Մինչ օգնության աշխատանքները շարունակվում էին. առաջ եկավ մի այլ, ոչ պակաս հրատապ խնդիր: Այս դաշտերը հարկավոր է կրկին ցանել հաջորդ տարվա համար, այլապես սովն ուղղակի անխուսափելի կլիներ: Միայն հայերի ժամանակին ունեցած եզները կկարողանային փխրեցնել հողի կունձոը և պատրաստել այն աշնանացանին: Սակայն չկար ոչ մի կենդանի՝ եզ, կով, ձի, այծ կամ ոչխար: Բոլորին քշել էին դեպի քրդաբնակ սարերը: Երբ ստացա պարոն Վուդի հեռագիրը, որում նա հայտնում էր, թե հարյուրավոր գյուղերում շուրջ 1000 գլուխ եզի անհրաժեշտություն կար և այդ գյուղերից մի քանիսը բավական մեծ էին, մտածեցի մեր ոչ այնքան արագ աճող բանկային հաշվի, հետո՝ տարբեր բնակավայրերում գոյություն ունեցող յուրաքանչյուր կարիքի մասին և. համապատասխանաբար արձագանքեցի հեռագրին: Սակայն, ի պատասխան իմ արձագանքի, հեռագիր ստացա Խարբերդի քոլեջի տնօրեն պատվելի դոկտոր Գեյթսից, ով կենսուրախ, ակտիվ և գործունյա անձնավորություն էր և նրա դատողությունը չէր կարելի կասկածի տակ առնել: Նամակում նշվում էր, որ եզների խիստ անհրաժեշտություն կար, պետք էր հողը վարել, քանի դեռ այն չէր չորացել և չէր պնդացել, եթե ոչ՝ հաջորդ տարվա բերքը կկորչեր: Նա նշեց նաև. որ «պարոն Վուդի մոտավոր հաշվարկները զուսպ էին»: Այդ ժամանակ ֆինանսների քարտուղարին 5000 լիրայի (22.000 դոլար) վճարագիր ուղարկեցի:

Այն հանձնվելու էր պատվելի պարոն Գեյթսի խնամքին, ով գտնվում էր Խարբերդում, նա էլ պետք է բաժաներ գումարը երեք առաքելությունների միջև՝ անասուններ ձեռք բերելու և 1897 թ. բերքն ապահովելու համար:

Այս փոխանցումից հետո մնաց 3000 դոլարից էլ քիչ գումար և դրանով մենք ավարտեցինք մեր աշխատանքները գործողության բոլոր տարածքներում: Քանի որ ուղարկված գումարն անմիջապես գործի էր դրվելու, աշխատակիցների զգալի ծառայությունների կարիքն այլևս չկար: Փոխանցվող գումարի հետ միասին հրահանգներ ուղարկվեցին աշխատակիցներին՝ ներկայանալու Կ. Պոլիս: Անցնելով աներևակայելի ծանր աշխատանքի, խնդիրների միջով, զօրուգիշեր ձիավարելով և իրենց կյանքը վտանգելով՝ բոլոր աշխատակիցները ձեռնամուխ եղան այդ հրամանի կատարմանը: Անհրաժեշտ էր գտնել, ետ գնել և գյուղացուն վերադարձնել իր անասունը, որ գողացել էին վայրի քրդական ավազակախմբերը: Ճանապարհներն այնքան վտանգավոր էին, որ իրավիճակի լրջությունը գիտակցողներն ավազակապետին էին վստահել մեր աշխատակիցների անվտանգությունն ապահովելու համար: Վտանգի ենթարկվեցինք հատկապես Ֆարկինի գավառակում՝ մինչև Դիարբեքիր հասնելը, ուր մեր կառավարական պահակախումբը չէր սպասում մեզ, և անհավատարիմ ուղեկցորդի բարձրացված հրացանը այլ բան էր վկայում:

Վերջապես հանձնարարությունը կատարված էր: Առաքելությունները մեկ առ մեկ ավարտում էին իրենց աշխատանքները և հեռանում՝ ուղևորվելով Սեբաստիա և Սամսուն, իսկ այնտեղից դուրս գալով Սև ծով: Այդ ժամանակ, հավանաբար, ոչ ոք կասկածի տակ չառավ նրանց երթուղու հարմար լինելու հանգամանքը կամ այլևս երկար չմտորեց, թե ինչու նրանք վերադարձան Իզմիրով, Ալեքսանդրետով, Սեբաստիայով կամ Սամսունով: Մեր մտահոգ կոմիտեների և կարեկից ժողովրդի շփոթահար և մռայլված դեմքերին վաղուց արդեն ժպիտ էր հայտնվել, որը վստահության և հավանության նշան էր: Նրանք ուրախությամբ պարզեցին իրենց ձեռքն ու ջերմորեն ողջունեցին մեզ:

Առաքելությունների վերադառնալուն պես մենք ավարտեցինք մեր աշխատանքները գործողության տարածքում: Սակայն նվիրատուներն ուրախ կլինեն, եթե իմանան, որ դրանք ավարտելուց հետո, մինչ Կ. Պոլսից մեկնելը ստացանք Նյու Յորքի և Բոստոնի կոմիտեների ուղարկած միջոցները՝ մոտ 15.000 դոլար: Մենք ուրախությամբ տրա-

մադրեցինք այն Ստամբուլի Արտաքին առաքելությունների խորհրդի գանձապահին՝ պարոն Փիթին: Այդ միջոցները պետք է օգտագործվեին համաձայն մեր հրահանգների: Այժմ մեր համաձայնությամբ այդ գումարով երկրի ներքին շրջաններում փոքրիկ տներ են կառուցվում: Դրանք կծառայեն որպես ապաստարաններ և պաշտպանիչ շինություններ ձմռան ցրտից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ շրջաններում ոչ մի շենք կանգուն չէր մնացել:

Երբ մեր աշխատակիցները ժամանեցին Կ. Պոլիս, նրանց տեսքը վկայում էր, որ նրանց վաղուց հետ չէին կանչել գործողության տարածքից: Նրանք անցել էին ձյան և սառույցների միջով, առանց փոխելու թրջված հագուստը կամ հանգստանալու և վերադարձել էին ամռան կեսին: Վեց ամիս նրանք ապրել են դժվար, թափառական կյանքով, ուղևորության ժամանակ խնամել են իրենց գրաստները, չի եղել քաղաքակիրթ աշխարհի հետ հաղորդակցվելու որևէ միջոց, նրանց կյանքն ամեն պահի վտանգված էր: Միայն աշխատակիցներն ու դեռ նրանց կարիքն ունեցող մարդիկ էին կարծում, որ նրանք իսկապես հանգստանալու կարիք ունեին:

Թուրքիայի տարածք մտնելուց ոչ մի ընդհանուր անկարգություն տեղի չի ունեցել: Կարելի էր միայն լսել փոթորիկից հետո ամպրոպի ոչ բարձր որոտը: Ամպերը սահում էին դեպի հարավ և շարժվում Կրետե կղզու և Մակեդոնիայի ուղղությամբ: Մենք հասկացանք, որ տուն հասնելու համար ընդամենը մի քանի քայլ էր մնացել: Միայն վերադառնալիս մենք սկսեցինք հստակ գիտակցել, թե որքան խորն էին արմատավորվել բարեկամությունը, ընկերությունը, վստահությունն ու սերը մեր նոր ձեռք բերած ընկերների և հայրենակիցների մեջ: Նրանց բազում աշխատանքներն ու հետաքրքրությունները, կրթական, մարդասիրական, պաշտոնական, դարձել էին մեր առօրյայի մի մասը: Մենք կրկին փոխադարձ վերաբերմունքի դասեր քաղեցինք:

Կ. Պոլիս հասնելուց հետո արշավախմբի անդամներին անհրաժեշտ էր մի քանի օր հանգստանալ մինչ նոր ուղևորությունը սկսելը, որի ընթացքում հազարավոր մղոններ պետք է անցնեին: Նրանք հյուծվել էին ցրտահարությունից, դժվարություններից և անդադար ֆիզիկական ու մտավոր ծանր աշխատանքից: Այնուամենայնիվ, նրանք ժամանակ էին հատկացնում սույն գրքում ներկայացված զեկույցների պատրաստմանը, ուշադրությամբ հետևում տարբեր գործողության տարածքներից ստացված նամակներին: Այդ նամակներում աշխատակիցները հայտնում էին իրենց կարիքները, սակայն,

հիմնականում, դրանք պարունակում էին խորին երախտագիտության և օրհնանքի շռայլված խոսքեր այն ամենի համար, ինչ արվել էր:

Ես և ֆինանսների քարտուղարը քուն ու դադար չունեինք այնքան ժամանակ, մինչ զբաղեցնում էինք ընթերցողին քաջ հայտնի մեր դժվարին պաշտոնները: Եվ իրոք, մենք երբեք հանգիստ չենք ունեցել: Փետրվարին մեր ժամանելու պահից մինչև օգոստոս ամսվա նավարկությունը ունեցել էինք միայն երկու օր, որ ամբողջովին չենք նվիրել աշխատանքին: Այդ օրերը հուլիսի 4-ն ու օգոստոսի 5-ն էին, որոնցից վերջինը մեր ընկերներին հրաժեշտ տալու օրն էր: Մենք պարտական ենք գանձապահին և տիկին Ու. Ու. Փիթին այս երկու առիթներով կազմակերպված ընդունելության համար: Այս բացօթյա միջոցառումները տեղի ունեցան Արքայազների կղզիներից մեկում՝ Փրոթիում, բարձրադիր բլրի վրա, որտեղից ամբողջությամբ երևում էին Մարմարա ծովը, Բոսֆորի նեղուցն ու Ոսկե եղջյուրը, իսկ Կ. Պոլսի և Սկյուտարիի գալարաձև շինություններն ու մինարեթները պատմում էին մեզ գրեթե անհայտ երկրի մասին, որի ժողովուրդն ուներ մեզ համար տարօրինակ և անհասկանալի սովորույթներ: Չնայած այս ամենին՝ դեռ չէր պակասում այն խորհրդանիշը, որ ցանկացած ամերիկացու ստիպում էր զգալ իրեն ինչպես հայրենիքում: Դրա կարմիր, սպիտակ և կապույտ ծալքերը ստվերներ էին գցում համեղ ուտեստներով լի սեղանների վրա, որոնց շուրջ նստած էին Փոքր Ասիայում Ամերիկյան միսիոներական խորհրդի անձնակազմի ճանաչված առաջնորդները: Աստվածաբանության դոկտոր, դիվանագիտական առաջնորդ Հենրի Օ. Դուայթը, ով կիրթ անձնավորություն էր, առաջինն էր դիմել Կարմիր խաչին՝ օգնության առաջարկով, և ես ուրախ եմ, որ նա երբեք չզղջաց այդ որոշման համար: Ներկայացնեմ դոկտոր Դուայթին վերաբերող մի փաստ, որը գուցե և հետաքրքրի հարյուր հազարավոր ամերիկացիների: Նրա հետ ունեցած իմ առաջին հանդիպման ժամանակ միանգամայն համոզված չէի՝ ինչպես դիմել նրան՝ պարոն, թե դոկտոր և համարձակվեցի հարցնել նրան այդ մասին: Նա շատ զարմացած նայեց ինձ, ապա պատասխանեց. «Կոչումն այդքան էլ կարևոր չէ, իմ ամենաբարձր կոչումը կապիտանն է, *կապիտան* Դուայթ»: «Ո՞ր զորամասի», - հարցրի ես: «Օհայոյի 20-րդ կամավորական դիվիզիայի կապիտան՝ վերջին պատերազմի ժամանակ»: Հարցիս հաջորդած պատասխանը լավ կըմբռնեն հատկապես այն գործընկերները, որոնց, հետաքրքրությունից ելնելով, ներկայացրի այս պատմությունը:

Մենք շատ պարտական ենք աստվածաբանության դոկտոր Ջոզեֆ Կ. Գրինին և իր բարեհամբույր կնոջը Կ. Պոլսում միսիոներական աշխատանքը բարեհաջող ավարտելու համար: Ափսոսում եմ, որ չեմ կարող վերաշարադրել վերոնշյալ երկու առիթներով դոկտոր Գրինի արված ճարտար և հայրենասիրական հայտարարությունները, որոնք այնքան ճշգրտորեն էին բնութագրում մեր երկիրը, կառավարությունն ու օրենքները: Ոչ ոք կասկածի տակ չի առնում նախկինում Բիթլիսում աշխատող պատվելի Ջորջ Փ. Նեփի արիությունը: Պարտական ենք նաև տիկին Լիին Մարաշից, «Ռոբերտ» քոլեջի տնօրեն պարոն Ուոշբըրնին և նրա կնոջը, ինչպես նաև այժմ Լեքսինգտոնում (Մասաչուսետս) բնակվող հմուտ և փորձառու միսիոների և «Ռոբերտ» քոլեջի հիմնադրի՝ պատվելի դոկտոր Սայրըս Հեմլինի արժանի և շնորհալի դուստրերին: Երախտապարտ ենք բազմաթիվ ուսուցիչների, որոնց փառահեղ կյանքը մի օր զարդարելու է կրոնի պատմության էջերը: Եվ, վերջապես, պարտական ենք պարոն Փիթին, ով հյուրընկալել էր մեզ, մարդ, որ քիչ էր խոսում, բայց կարևոր գործեր անում: Նա պատասխանատու է Փոքր Ասիայում կարիքավորներին դրամական օժանդակություն հատկացնելու համար:

Մարդիկ շատ բավարարված էին, որ մեր դաշտային գործակալների մեծ մասը կարողացել էր ներկա լինել այս վերջին հիանալի իրադարձություններին և անձամբ հաշիվ տալ իրենց գործունեության վերաբերյալ նրանց, ովքեր հետաքրքրությամբ վերահսկում էին իրենց աշխատանքը: Մենք միշտ վառ կպահենք հանգստյան այս երկու հաճելի օրերի հետ կապված հիշողությունները:

Մեր Կ. Պոլիս ժամանելուց հետո՝ որպես առաքելության առաջին պաշտոնական քայլ իմ պատշաճ, ներկայացումն էր Բարձր դռանը ամերիկյան նախարարը, հարգարժան Ա. Ու. Թերրլի կողմից: Ես, ելնելով դիվանագիտական քաղաքավարությունից, հարմար առիթ պետք է գտնեի թուրքական կառավարությանը տեղյակ պահելու մեր ժամանման մասին և շնորհակալություն հայտնեի օժանդակության համար: Այս ամենը պաշտոնապես տեղի ունեցավ *սելամլըքի* ժամանակ՝ կրոնական արարողություն, որ Թուրքիայում անց էր կացվում կիրակի օրը, վերջինս համապատասխանում է մեր ուրբաթ օրվան: Հաղորդագրությունս արքունի կառավարչի միջոցով հասավ պալատ: Նույն կերպ ստացա պատասխանը և ճանապարհ ընկա՝ ավարտելով աշխատանքս կառավարության հետ, որ սկզբից մինչև վերջ հարգալից վերաբերմունք ցույց տվեց ինձ, աջակցեց աշխա-

տանքներիս և պաշտպանության տակ առավ աշխատակիցներին:

Նպատակ ունենալով շտկել որոշ կարծիքներ, արտահայտություններ, որոնք շատ թե քիչ շրջանառվում էին այս երկրում և հավաստի տեղեկատվություն տրամադրել այն մարդկանց, որոնք նվիրված են եղել մեզ և արժանի են դառնալու՝ հրապարակում եմ Թուրքիայում բնակվելու ընթացքում իմ բոլոր անձնական փոխհարաբերությունները: Ես անձամբ եղել եմ միայն Կ. Պոլսում: Աշխատանքը հարկադրում էր, որ ես և ֆինանսների քարտուղարը մշտապես ներկա գտնվեինք գլխավոր գրասենյակում: Երբևէ չեմ հանդիպել և անձամբ չեմ հաղորդակցվել թուրքական կառավարության ոչ մի անդամի հետ, բացի, ինչպես արդեն նշեցի, Արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշայից: Երբևէ չեմ զրուցել սուլթանի հետ, միայն տեսել եմ նրան իր կառքի մեջ՝ մզկիթ ուղևորվելիս:

Երբ մեր ներկայացուցչության միջոցով տեղեկացա, որ Վաշինգտոնում թուրք նախարար Մավրոյենի բեյին հետ էին կանչել և նորանշանակ պաշտոնյան պատրաստվում էր ժամանել Վաշինգտոն՝ ստանձնելու իր պաշտոնը, զգացի, որ, քաղաքավարությունից ելնելով, պետք է այցելեի նրան: Ես ներկայացուցչության անդամներից մեկի և քարտուղարի հետ անցա Բոսֆորի նեղուցը և ժամանեցի Ասիայի ծովափին գտնվող Մուստաֆա Թահսին բեյի պալատ: Բեյը քաղաքավարի պաշտոնյա էր, ով օգտվելով որոշ իրավասություններից, ապրել էր Նյու Յորքում: Ես վստահ եմ, որ մեր կառավարությունը կընդունի նրան՝ թե պաշտոնապես, թե ոչ պաշտոնապես:

Թուրքական կառավարությունն ինձ երբեք չի շնորհել ոչ մի շքանշան կամ պարգև, չնայած որ դա Թուրքիայում հրապարակայնորեն գոհունակություն արտահայտելու սովորական մեթոդ է: Եթե հետագայում կառավարությունը դրական գնահատի մեր օգնությունը, ես կհայտնեմ այդ մասին՝ ելնելով մեր ժողովրդի մեծահոգությունից, այլ ոչ սեփական շահերից:

Ինչևէ, ես պարգևատրվել եմ այլ շքանշանով, որի մասին պաշտոնապես նշվում էր.

«Ասպետական շքանշանը» մայր Լուսինեի արքայական շքանշանն է, որը 1186 թ. ստեղծել է Երուսաղեմի արքա Գի դը Լուսինյանի կինը՝ Սիբիլ թագուհին: Այդ ժամանակից ի վեր շքանշանը բազմիցս շնորհվել է Լուսինյանների արքայատոհմի Մարիի կողմից: Այն շնորհվում է մարդասիրական, գիտական և այլ հատկանշական, գլխավորապես Լուսինյանների տոհմին և Հայաստանին մատուցված ծառայությունների համար: Մի շարք իշխող

միապետեր պարգևատրվել են այս շքանշանով և այն շատ բարձր է գնահատվում, քանի որ շնորհվում է շատ հազվադեպ և շատ գեղեցիկ է: Այս շքանշանը Ձեզ շնորհվում է Նորին գերազանցություն Գի դը Լուսինյանը՝ Երուսաղեմի, Կիպրոսի և Հայաստանի արքայազնը»:

Առաջին անգամ տեղեկացա այս պարգևի մասին Սմիթսոնյան ինստիտուտի միջոցով, որն ընդգծում էր դրա գիտական բնույթը:

Օգոստոսի 5-ին մենք նստեցինք «Մետեոր» ռումինական շոգենավը, որը նավարկում էր Կ. Պոլսի և Սև ծովի նավահանգիստներով, և ուղևորվեցինք Դանուբի գետաբերանին գտնվող Կոստանցա քաղաք: Սա մեր առաջին երթուղին էր դեպի հայրենիք. հրաժեշտ էինք տալիս այն մարդկանց, որոնց հետ ապրեցինք ավելի քան կես տարի և, ինչպես ողջ քաղաքակիրթ աշխարհը, մտքով ու սրտով նվիրվեցինք նրանց: Մինչև մեկնելը չմտածեցինք անգամ այն մասին, թե որքան մեծ ուշադրության էինք արժանացել:

Շոգենավի լայն տախտակամածին հավաքվել էր Կ. Պոլսի ամերիկյան ողջ ներկայացուցչությունը, որ պատրաստվում էր ուղեկցել մեզ մինչև անցնեինք Բոսֆորի նեղուցը: Նրանց նավակները նախօրոք ուղարկվել էին ծովածոց՝ Սև ծովի մուտքի մոտ, նրանց հետ բերելու համար:

Նորակառույց շքեղ նավամատույցի երկու կողմերում էլ խմբվել էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, բազմաթիվ անսովոր զգեստների երանգներն այնքան էին խառնվել, որ, կարծես, ստեղծել էին արևմտյան մի քաղաք: Մարդիկ համբերատար սպասում էին մինչև նավը պատրաստ կլիներ մեկնելու: Վերջապես հնչեց խռպոտ սուլոցը, նավն անջատվեց իր խարիսխներից և ճոճվեց ջրի վրա՝ տանելով իր հետ մարդկանց հոծ զանգվածը: Բազմաթիվ խուլ ձայները, որոնք հնչում էին տարբեր լեզուներով, միանշանակ երախտագիտության, օրհնանքի և բարեմաղթանքի խոսքեր էին: Մենք ակնածանքով ընդունեցինք այս տոնախմբությունների հրավերները, քանի որ դրանք ոչ միայն երախտագիտության խոսք էին ուղղված մեզ և մեր աշխատանքին, այլև մեծագույն հարգանք ու պատիվ ամերիկյան ժողովրդին: Եվ ոչ միայն Կ. Պոլսի, այլև Բոսֆորի ափերից նկատելի էին երախտապարտության նման դրսևորումներ, իսկ «Ռոբերտ» քոլեջից, Բեբեկից և Հիսարից բերված ծածանվող ամերիկյան դրոշը՝ աստղերով ու զոլերով, ավելի խոսուն էր, քան բառերը՝ որքան նվիրված էին օտար երկրում ազնվորեն աշխատող մարդկանց սիրտն ու հոգին իրենց ազատ երկրին:

Հասանք Բուդապեշտ՝ այցելելու «Հազարամյա ցուցադրությունը», ապա Վիեննա՝ հարգանքի տուրք մատուցելու մեր մեծարգո նախարարին՝ հարգարժան Բարլեթ Թրիփին: Շտապեցինք Կոնստանս լճում գտնվող գեղեցիկ Մայնո կղզին՝ ներկա գտնվելու Բադենի Մեծ դուքսի և դքսուհու արքայական ողջույնի արարողությանը: Մեծ դուքսն այս կղզին քառասուներեք տարի առաջ նվիրել էր իր երիտասարդ և նորահարս արքայադստերը: Մեզ համար շատ հաճելի էր, որ մեր ջանասեր աշխատակիցներն անձնապես հաղորդակցվում էին այս արքայական տոհմի գործունյա անձանց հետ, որոնք, ելնելով իրենց բարեգործական աշխատանքի կենսափորձից, շատ լավ գիտեին գնահատել ուրիշների կողմից կատարված նման աշխատանքը:

Ընթերցողը ներողամիտ թող լինի, եթե որոշ մարդկանց արքայական տոհմի հերթականությունը հիշեցնելու նպատակով նշեմ, որ Բադենի Մեծ դքսուհին տարեց Ուիլյամ կայսեր և Աուգուստա կայսրուհու միակ զավակն է: Նա Գերմանիայի կայսր Ֆրեդերիկ III-ի քույրն է, ներկայիս կայսեր հորաքույրը, Շվեդիայի ապագա արքայադստեր մայրը և սիրված թագուհի Լուիսի թոռնուհին, որին, ասում են, նա շատ նման էր:

Մեկ օր անցկացրինք Ստրասբուրգում, որը գործողության մի այլ տարածք էր դարձել ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ և այնտեղ աշխատանքները ավելի երկար տևեցին, քան Հայաստանում: Օգոստոսի 24-ին ժամանեցինք Լոնդոն:

Սեպտեմբերի 1-ին պատրաստվում էինք նավարկել «Սերվիա» շոգենավով, երբ ստացանք Կ. Պոլսի ջարդերի սարսափելի լուրը: Մենք անասելի կերպով ցնցված և վշտացած էինք: Փողոցները, որով անցել էինք, մարդիկ, ովքեր մեզ ծառայություններ էին մատուցել, Բանկ Օտոմանը, ուր գրեթե ամեն օր գործարքներ էինք կատարել մոտ կես տարի, ամբողջությամբ վտանգված էին, եթե ոչ ոչնչացված: Երկրում գտնվող մեր աշխատակիցները մտավախություն ունեին, որ կարող էր ընդհանուր ապստամբություն սկսվել և այդ դեպքում մեր օգնությունն անհրաժեշտ կլիներ: Մեր պատասխանատվության զգացումը մեզ թույլ չէր տալիս շարունակել ճանապարհը, մինչ որ վերոնշյալ փաստերի մասին ավելի հստակ տեղեկություն չունենայինք: Մենք հետաձգեցինք կամ ավելի ճիշտ փոխեցինք «Սերվիայի» երթուղին, հեռագրեցինք Կ. Պոլիս, ապա՝ Ամերիկա՝ պատրաստակամություն հայտնելով վերադառնալ գործողության տարածք, եթե մեր ծառայությունները որևէ կերպ անհրաժեշտ լինեին: Երկու կող-

մից հնչող բարի խորհուրդները, ինչպես նաև գործերի հանդարտ ընթացքը ստիպեց մեզ շարունակել մեր ճանապարհը: Սեպտեմբերի 5-ին «Ումբրիայով» ճանապարհ ընկանք, իսկ սեպտեմբերի 12-ին հասանք Նյու Յորք: Հունվարի 22-ի՝ Թուրքիա մեկնելու և սեպտեմբերի 5-ի՝ վերադառնալու օրերի միջև յոթ ամսվա և քսան օրվա տարբերություն կար՝ գրեթե ութ ամիս:

Հեռավորություններ և ճանապարհորդության բեռնափոխադրումների հաղորդակցության դժվարություններ

Նրանց համար, ովքեր խիստ զբաղված են և ժամանակ չունեն ուսումնասիրելու իրադարձությունները, ճիշտ համարեցի խտացնել վերոնշյալ տեղեկատվությունը մեկ պարբերությամբ: Այսպիսով, այն կարելի է աչքի անցկացնել՝ դիմելով քարտեզի օգնությանը:

Փոքր Ասիայի ամենամեծ նավահանգիստը Կ. Պոլիսն է: Կա երկու երթուղի այնտեղից հասնելու երկրի կենտրոն, որը հայտնի է նաև Հայաստան կամ Անատոլիա անվանումներով: Առաջին երթուղին՝ Միջերկրական ծովով դեպի Ալեքսանդրետ, որը երկրի հարավային նավահանգիստն է կամ դարպասը: Երկրորդ երթուղին՝ Սև ծովով դեպի Սամսուն և Տրապիզոն հյուսիսային նավահանգիստները, որոնք գտնվում են Սև ծովի հարավային ափերին: Գոյություն չունի ցամաքային երթուղի, ինչպիսին կա Կալիֆորնիայում և որով կարելի է հասնել այնտեղ մի քանի օրվա ընթացքում: Բացառություն են կազմում սուրհանդակները, որոնք փոխադրում են կառավարության կարևոր հեռագրեր կամ գումարներ: Ճանապարհը լի է ավազակախմբերով:

Բացի ռուսական, ավստրիական, ֆրանսիական և հունական սուրհանդակային նավերից, որոնք իրականում առափնյա նավեր էին, չէին գործում մշտական մարդատար նավեր: Այդ նավերից մեկն ուղևորվում է Կ. Պոլսից ամեն շաբաթ՝ չնայած սկզբում մենք պարզեցինք, որ նավարկությունը տևում է առնվազն երկու շաբաթ և մեկնումների միջև ընկած ժամանակահատվածը կանոնավոր չէ:

Կ. Պոլսից Ալեքսանդրետ մեկնելը տևում էր 8-10 օր: Կ. Պոլսից Սամսուն՝ 2 օր: Այս նավահանգիստներից ցամաքով պետք է հասնեինք երկրի ներքին շրջաններ:

Ալեքսանդրետից Խարբերդ տևում է 15 օր,

Ալեքսանդրետից Մարաշ՝ 5 օր,
Ալեքսանդրետից Զեյթուն՝ 7 օր,
Ալեքսանդրետից Ուրֆա՝ 6 օր,
Ալեքսանդրետից Դիարբեքիր՝ 12 օր:
Սամսունից հյուսիս ընկած բնակավայրերից դեպի Խարբերդ տևում է 15 օր:

Նշված երթուղիներն անցանք սարերի, արահետների, ժայռերի և անդունդների միջով՝ ձիերով, ջորիներով կամ ավանակներով: Միայն մի քանի բնակավայրերում կային ճանապարհներ, որոնք թույլ էին տալիս օգտվել ցանկացած անվավոր փոխադրամիջոցից: Ձիով զառիթափ բարձունքներ հաղթահարելն անգամ հաճախ վտանգավոր էր:

Հաղորդակցության միջոցներ

Ինչպես հետագայում կտեսնեք, Կ. Պոլսից երկրի ներքին շրջաններ նամակ ուղարկելու համար պահանջվում էր լավագույն դեպքում վեց շաբաթ կամ 46 օր՝ առանց ուշացման:

Հեռագրային հաղորդակցությունը հասանելի էր միայն առավել մեծ և կարևոր նշանակություն ունեցող քաղաքներում: Հեռագիր ուղարկելու համար պահանջվում էր երկուսից չորս օր կամ մի շաբաթ՝ ըստ հանգամանքների: Բոլոր ուղարկված հեռագրերին անհրաժեշտ էր պատասխանել թուրքերենով: Առավել խոշոր քաղաքներն ունեն փոստային ծառայություններ, փոստատարները սովորաբար մեկնում են շաբաթը մեկ անգամ՝ ձիերով և զինվորական պահակախմբի ուղեկցությամբ: Փոքր Ասիայում օրաթերթեր չեն տպագրվում:

Միսիոներական կայանները, բացառությամբ երկու-երեքի, հեռու են ծովափից, Միջերկրական կամ Սև ծովով այնտեղ հասնելը տևում է 3-15 օր կամ էլ 3-25 օր՝ դեպի Միջերկրական ծովի ամենամոտ նավահանգիստը: Ընթերցողը, հայացք նետելով քարտեզին, կնկատի, որ հետևյալ կայանները գտնվում են ծովափին՝ Տրապիզոնը՝ Սև ծովի ափին, Իզմիրը և Մերսին քաղաքի մոտ գտնվող փոքր կայանը՝ Միջերկրականի ծովափին և Կ. Պոլիսը՝ Բոսֆորի նեղուցում:

Ստորև ներկայացված քաղաքները առափնյա չեն, ձմռան և գարնան մի քանի ամիսների ընթացքում այնտեղ տանող ճանապարհները գրեթե, եթե ոչ ամբողջովին, անանցանելի են: Դրանք են Ադաբազարը, Պարտիզակը, Բրուսան, Կեսարիան, Մարզվանը, Հաճընը, Տարսոնը, Ադանան, Մարդինը, Այնթափը, Մարաշը, Սեբաստիան, Խարբերդը, Ուրֆան, Երզնկան, Էրզրումը, Վանն ու Բիթլիսը:

Ֆինանսական միջոցներ

Նվիրատուները պետք է հստակորեն իմանան, որ մենք չենք ստացել ոչ իրենց նամակները, ոչ էլ անձնական նվիրատվությունները: Դրանք ստացել են Ամերիկայի կոմիտեներն ու գումարը հավաքագրող այլ մարմիններ: Մենք, անկասկած, ազնվությամբ ընդունեցինք նրանց նամակներն ու ընդհանուր հիմնադրամին փոխանցված սակավաթիվ գումարները: Կ. Պոլսում ուղղակիորեն ստացված բոլոր նվիրատվությունները հաստատված են մեր զեկույցում:

Չնայած միջոցների բաշխման մասին հաշվետվությունը ներկայացված է ֆինանսների քարտուղարի զեկույցում, որ ստուգելուց հետո միասին ենք ստորագրել, այնուամենայնիվ, չեմ զլանա կրկնել և ինձ իրավունք կվերապահեմ հավելել հարցին առնչվող հետևյալ մեկնաբանությունները.

Միշտ հարկավոր է նկատի ունենալ, որ տրամադրվող գումարի չափը երբեք մեզ չէր մտահոգում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *«կային տրամադրվող միջոցներ»*: Մեզ հաճախ էին բարեհամբույր կերպով տալիս հետևյալ հարցը՝ «Դուք ունեցե՞լ եք բավականաչափ գումար, թե Ձեր գործունեությունը սահմանափակվել է միջոցների անհրաժեշտության պատճառով»: Ես հստակ պատասխանում էի, որ աշխատանքներն իրականացնելիս մենք միշտ հավելյալ գումար էինք ունենում: Սուղ միջոցները երբեք չեն սահմանափակել մեր գործունեությունը, և մենք միշտ այն կարծիքն ենք ունեցել, որ բարեգործական օգնության ապահովությունն ու արդյունավետությունը երաշխավորելու համար այն պետք է հիմնված լինի նույն սկզբունքների վրա, ինչ գործարարությունը: Իսկ բանիմաց գործարարի միջոցները երբեք սահմանափակ չեն լինում, բացառությամբ, երբ այդ սահմանափակումն ուրիշի գործելակերպի կամ ստեղծված հանգամանքների հետևանք է, քանի որ նա երբեք չի նախաձեռնի մի գործ, որի հաջող ավարտի համար իր միջոցներն անբավարար են: Մեր աշխատանքները երբեք չեն սահմանափակվել միջոցների սղության պատճառով, և մեր կոմիտեները կվկայեն, որ մենք երբևէ նման հայտարարություն չենք արել: Այդպիսի արարքը կլիներ անխոհեմ և անարդար: Համաձայն բարեգործական օգնության համընդհանուր համակարգի՝ արվում էր հնարավոր ամեն ինչ: Սակայն եթե մարդիկ հարցնում էին մեզ՝ արդյոք մեր միջոցները բավարարում էին *մարդկանց կարիքները հոգալու*, Փոքր Ասիայի անու-

շաղրության մատնված բնակիչների ցավը մեղմելու և նրանց կրկին մխիթարելու համար, ապա պետք է ասեմ, որ նրանք շատ նուրբ հարց էին շոշափում: Ամերիկայում ոչ ոք մեզնից ավելի սրտացավ չէր: Նման հարցը կարող էր վերացնել ամենաթանկագին զգացումներն այդ սրտերում: Մեր աշխատակիցներն ապրել են երկրի ներքին շրջաններում և տեսել այն, ինչ ուրիշներն ապարդյուն ձգտում են պատկերացնել: Նրանք ոչ թե խոսում են, այլ գործում, և, Աստվա՛ծ վկա, օգնել են մարդկանց ինչով կարողացել են: Նրանք փորձում են իրենց ծառայությունները մատուցել մեծահոգի, բարյացակամ և շփոթված ժողովրդին, որ հյուծվել է բազմաթիվ հույզերից: Նրանք օգտվում էին հնարավոր բոլոր միջոցներից տարբեր հնարավորություններ հայթայթելու, ամեն օր վճռականորեն փորձում էին տարբեր ուղիներով լուծումներ գտնել այն խնդիրների և հարցերի համար, որոնք դարեր շարունակ մտահոգել են մարդկանց զգալի հատվածին:

Կոմիտեներ

Մենք, որպես Փոքր Ասիայում դժբախտություն և տառապանք տեսած մարդիկ, սրտանց շնորհակալություն ենք հայտնում այն կոմիտեներին, որոնք աշխատեցին անխոնջ եռանդով: Մենք միշտ քաջատեղյակ էինք այն դժվարություններին, որոնց նրանք մշտապես ստիպված էին առերեսվելու և հաղթահարելու: Ձեռքի տակ չունենալով ցանկալի կամ անգամ երաշխավորված միջոցները՝ նրանք պետք է հայթայթեին դրանք հիմնականում այն մարդկանցից, որոնց կարեկցանքը զիջում էր մեծահոգությանը, եթե ոչ նրանց միջոցներին: Բնականաբար, կոմիտեները ներողություն էին խնդրում միջոցներն ուշացնելու համար մինչև գիտակցեցին, որ «որոշակի շոշափելի արդյունքի էին հասնում»: Այնուհետև մարդիկ սկսեցին կասկածել՝ արդյոք «կարելի է հասնել» որևէ արդյունքի, իսկ հետո արդեն համոզվեցին, որ ոչինչ «հնարավոր չէր անել»: Այս և այլ համոզմունքները, բացասական կանխագուշակումների մի ամբողջ շարանն ու հուսահատությունը բավարար էին վիճաբեցնելու ամենահաստատուն մարդուն և դանդաղեցնելու ամենաեռանդուն ջանքերը, որոնք հնարավոր էր գործադրել: Մեր կոմիտեները պետք է որ շատ թե քիչ հաջողությամբ պայքարած լինեին այս անթիվ-անհամար հուսահատությունների դեմ: Մենք կրկին մեր խորին հարգանքն ու երախտագիտությունն ենք հայտնում կոմիտեներին իրենց գործադրած ջանքերի համար այն ժողովրդի անունից, որի տառապանքներին անգամ

նրանք երբեք ականատես չեն եղել: Նրանց կատարածը հերկուլեսյան աշխատանք էր և դրան չէին զիջում նաև խոշընդոտները:

Այդ դժվարությունների պատճառը բարեգործական օգնության մեթոդներն էին, որոնք կոմիտեները ստիպված էին ընդունել և առաջնորդվել դրանցով: Մեր անխոնջ և ազնիվ կոմիտեները չեն հաղթահարի դժվարություններն այնքան ժամանակ, մինչև մարդիկ կգիտակցեն, որ բարեգործությունը մուրացկանություն չէ, այն չպետք է կատարվի կախվածություն առաջացնելու նպատակով և որ օրինական եղանակով ստացված միջոցները գործարքներն հեշտացնելու և արժեվորելու համար նույնքան անհրաժեշտ են, որքան այլ հասարակական շարժումներում:

Այս նկատառումներով է, որ Կարմիր խաչը երբեք չի խնդրել միջոցներ հատկացնել տարվող աշխատանքներին օժանդակելու համար: Այսուհանդերձ մարդիկ Կարմիր խաչի գործողության բոլոր տարածքներին միջոցներ էին հատկացրել կամայական սկզբունքով: Կարծում ենք՝ ակնհայտ է, որ Կարմիր խաչի անվան օգտագործումը դրամահավաքի ընթացքում՝ հայերին վերջերս ցուցաբերված օգնության նպատակով, պարզապես պատահականություն էր: Սա այն ընդունված մեթոդներից մեկն է, որին դիմում են նպատակին հասնելու համար: Ինչպես մանրամասն բացատրեցինք նախորդ էջերում, այդ գործողությունները կատարվել էին առանց մեզ հետ համաձայնեցնելու:

Միացյալ Նահանգների լրագրությանը

Ամեն կողմից վրա հասած հուսահատ, ապարդյուն աշխատանքի ու տառապանքի այդ ծանր ժամանակներում Միացյալ Նահանգների լրագրությունն էր, որ մեզ համար դարձավ ամուր և հաստատուն հենարան: Երբ լրագրերը բնականաբար ստիպված էին լինում տպել չհաստատված զեկույցներ այլ աղբյուրներից, ակնհայտ էր, որ դա անում էին ափսոսանքով: Ապա դրա հետ մեկտեղ շտապում էին տպագրել ազդեցիկ և համոզիչ առաջնորդող հոդվածներ՝ ընթերցողների առջև շտկելու որևէ անճշտություն, որը կարող էր թափանցած լինել այդ տեղեկությունների մեջ: Ամերիկյան լրագրությունը միշտ էլ հավատարիմ է եղել Կարմիր խաչին ու նրա աշխատանքին, և մեկ անգամ ևս օգտվելով առիթից, նրան ենք ուղղում մեր խորին երախտագիտության ու դրվատանքի խոսքը:

Միացյալ Նահանգների նվիրատուներին

Ինչ կարող ենք անել կամ ասել, եթե ոչ խոնարհել մեր գլուխները մեզ գրեթե հեղեղած անսպասելի գովասանքի և երախտագիտության գիտակցմամբ այն մարդկանց առջև, ում կարեկցանքը, աստվածային գութն ու ողորմածությունն մղել էին օգնության փառահեղ աշխատանքին՝ փրկելու կես միլիոն տառապյալ և մահացող մարդկանց մի օտար երկրում, ուր երբեք ոտք չէին դրել, այն մարդկանց առջև, ովքեր առատաձեռն էին և ովքեր զսպել էին իրենց ցանկությունները, կատարել իրենց նվիրատվությունը՝ ունենալով ոչ թե բավարար, այլ սակավ միջոցներ, նրանց առջև, ովքեր վստահեցին մեզ և դարձան մեր նվիրատուները և ում սրտագին վստահությունը գոտեպնդեց մեզ, նրանց առջև, ովքեր հոգով-սրտով մեզ հետ են եղել և սիրով իրենց ձեռքն են մեկնել որպես ողջույնի նշան: Աղոթում ենք գթասիրտ Աստծուն, որ ըստ արժանվույն օրհնի մեր աշխատանքը:

Մեր կառավարությանը Վաշինգտոնում

Մեր խորին հարգանքն ու երախտագիտությունն ենք հայտնում կառավարությանը՝ իր սրտագին կարեկցանքի համար, որը նա ցուցաբերեց պետական և ռազմածովային ուժերի պատվավոր քարտուղարների միջոցով, ում օգնելու պատրաստակամության շնորհիվ կարողացանք ձեռք մեկնել հանրությանը: Մենք խնդրում ենք մեծահոգի ժողովրդին հիշել, որ մեր գործիչներն էլ իրենց պես մարդիկ են, ժողովրդի մի մասը, և կառավարության ապահովությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ պատասխանատվությունը ստիպում է նրանց լինել ավելի պահպանողական: Սա չի նշանակում, որ նրանք ավելի քիչ կարեկցող են, պարզապես ավելի կաշկանդված են, ավելի պատասխանատու և հոգատար:

Մեր ներկայացուցչությանը Կ. Պոլսում

Երախտագիտություն ենք հայտնում մեր ազնվասիրտ նախարարին՝ հարգարժան Ա. Ու. Թերըլին, իր շնորհաշատ քարտուղարին և գործերի ժամանակավոր հավատարմատարին՝ Ջ. Ու. Ռիդլին, նրա թարգմանչին՝ Գարգյուլոյին, մեր գլխավոր հյուպատոսին՝ պարոն Լութեր Շորթին, հյուպատոսության թարգմանչին՝ Դիմեթրիեյդսին որոնք բոլորն էլ մշտապես պահել են մեզ իրենց խնամքի և ուշադրության ներքո այն բոլոր ամիսների ընթացքում, որ ապրում էինք Կ.

Պոլսում: Առանց այդ օգնության մեր աշխատանքներն ապարդյուն կլինեին: Չի եղել անգամ պահ, որ օգնություն խնդրեինք և չստանայինք նրանց անվարձահատույց ծառայությունը: Նրանց միջոցով իրագործվեցին ողջ կառավարական գործարքները: Նրանք զօրուգիշեր պատրաստ էին օգնություն տրամադրել մեզ: Միայն հուսով եմ, որ մեր դիվանագիտական ծառայությունն արքունի բոլոր օղակներում մատուցվում է նույնքան ազնվությամբ և խանդավառությամբ, որքան Կ. Պոլսում: Այս առումով ցանկանում են հատկապես նշել Սեբաստիայում ԱՄՆ հյուպատոսի, դոկտոր Միլո Ա. Ջյուիթի և Ալեքսանդրետում հյուպատոսության գործակալի Դենիել Ուոքերի օգնության մասին:

Անձնապես և ի պաշտոնե հավատացած եմ, որ նախարար Թերըլի կատարած աշխատանքն ինքնին վկայություն է իր մասին: Լինելով հաստատակամ և ուղղախոս՝ նա միևնույն ժամանակ անսովոր կերպով քաղաքավարի է, ինչը մեծապես պահպանվել է իր հայրենի նահանգի՝ Վիրջինիայի հին ժամանակներից եկած հյուրընկալության մեջ: Եվ եթե նա իր պաշտոնավարման ավարտին կարողանա զեկուցել, որ իր նշանակման երկրում այս բոլոր ամիսների, ոչ, տարիների ընթացքում հանդիպած չլսված նեղությունների, վտանգների ու մահվան միջով անցած իր մի քանի հարյուրի հասնող համերկրացիները, որոնք մշտապես և առանձնահատուկ կերպով իրենց գործի բնույթով ենթարկվել են այդ վտանգներին, դժվարություններին ու զրկանքներին, առանց կառավարության կողմից ուղղակի օգնության կամ ազդեցության, առանց նավահանգստում իր երկրից անգամ մի նավ ունենալու, որ իր պատասխանատվության տակ գտնվողներից և ոչ մեկը կյանքից չի զրկվել, ապա, վստահ եմ, մենք հանգիստ կնայենք նրա աշխատանքի այդ պտուղներին և կմտածենք, որ եթե այս ամենը դիվանագիտություն չի եղել, ապա շատ լավ փոխարինել է դրան:

Կ. Պոլսում այլազգի դեսպաններին

Մեր երախտագիտությունն ենք հայտնում պատվարժան գործիչներին՝ Անգլիայի դեսպան պարոն Կյուրիին, ով, կարծես, նույն զգացմունքն էր տածում իր և այլ ժողովուրդների հանդեպ: Նա հուսալի գործընկեր էր դժվար պահերին: Գերմանիան և Ռուսաստանը, ինչպես նաև Խարբերդում Անգլիայի հյուպատոսը՝ Ռ. Ա. Ֆոնտանան և Դիարբեքիրի հյուպատոսության աշխատակից Ս. Մ. Հո-

լուարդը նույնպես սիրալիր և պատրաստակամ էին մեզ օգնություն տրամադրելու գործում: Այնուհետև ցանկանում եմ նաև հիշատակել Կ. Պոլսի և Լոնդոնի «Ռոյթըր Էքսփրես» և «Յունայթիդ ընդ Ըսոշիեյթիդ» լրատվամիջոցների պատրաստակամ օգնությունը:

Գովասանքի խոսք

Այս բաժնում նկարագրվում է մեր աշխատանքի կողմերից մեկը, որը հնարավոր չէ ամբողջովին անուշադրության մատնել, բայց և նույնիսկ մասնակիորեն մատուցանելու դեպքում այն կգրավեր մեր ամբողջ զեկույցը: Միայն մեկ-երկու մեջբերումը բավարար կլինի ցույց տալու մնացածների բովանդակությունը:

Բազմաթիվ շռայլված կարծիքներից մեկը պատկանում է պատվելի դոկտոր Հ. Օ. Դուայթին:

«Տիկին Բարտոնը կատարել է հիանալի, խելամտորեն և շահութապես լավ կազմակերպված աշխատանք: Միսիոներները մեծապես հավանության էին արժանացնում գործակալների կիրառած աշխատանքային մեթոդներն ու արդյունավետությունը, որտեղ էլ որ նրանք լինեին: Կատարված աշխատանքը մշտապես մեծ կարևորություն է ունեցել»:

Աստվածաբանության դոկտոր, պատվելի Ջոզեֆ Կ. Գրին.

«Մոտ վեց ամիս ծառայությունից հետո Կլարա Բարտոնն ու իր շնորհալի օգնականները Կ. Պոլսից վերադարձան Ամերիկա: Միայն միսիոներների, Ամերիկյան խորհրդի աշխատակիցների և տառապյալ հայերի շատ այլ բարեկամների լուրջ միջնորդությամբ Կլարա Բարտոնը կարողացավ օգնության աշխատանքներ իրականացնել այս երկրում: Աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները, որոնք առաջացել էին թուրքական իշխանությունների կասկածների հետևանքով, մայրաքաղաքից դեպի գործողությունների տարածք ընկած հեռավորությունը, վտանգներն ու միմյանց հետ հաղորդակցվելու անհարմարությունները, ինչպես նաև այդ երկրի լեզվին և սովորույթներին հետ անծանոթ լինելու հանգամանքը պետք է որ վախ գցեին անհամարձակների սրտերում: Հարկավոր էր ամերիկյան հասարակությանն իրազեկել Կարմիր խաչի առաքելության նշանակալի հաջողության մասին: Նման հանգամանքներում սա կլիներ միանշանակ ազնիվ և արդար քայլ:

Առաջին հերթին Կլարա Բարտոնը դրսևորեց բոլորի հետ ընդհանուր լեզու գտնելու հազվագյուտ ունակություն: Իրենց գործը հեշտացնելու նպատակով նա և իր օգնականները, որոնց սիրով անվանում էր «իմ տղամարդիկ», մի կողմ թողեցին Կարմիր խաչի բոլոր տարբերանշանները և սկսեցին հայտնվել ամեն տեղ՝ ուղղակի որպես անհատներ: Բարտոնը շատ լավ գիտակցում

էր, որ իր առաքելությունը կարող է ավարտին հասցնել միայն իշխանությունների բարյացակամ վերաբերմունքն ու վստահությունը ձեռք բերելու միջոցով: Նա հասավ դրան իր համբերատարության, շարունակ բացատրությունների և ամերիկյան ներկայացուցչության օգնության շնորհիվ: Երբ *խուդեն* կամ սուլթանի հրամանագիրը, որով թույլատրվելու էր իրականացնել առաքելությունը, հետաձգվեց, նա ուղարկեց իր օգնականներին, նրանց անցագրեր տվեց, որոնք ապահովում էին միայն ճանապարհի կեսը: Նա չսխալվեց՝ վստահ լինելով, որ գլխավոր գրասենյակի աշխատակիցները կհրահանգեին տեղական իշխանություններին, որպեսզի վերջիններս հեշտացնեին նրանց ուղևորությունը: Փաստորեն մինչ Կլարա Բարտոնը պարոն Փուլմընի, իր քարտուղարի ու գանձապահի հետ մնացին Կ. Պոլսում, օգնությունը հատկացնող իր գործակալները, այսինքն՝ պարոն Հաբելը և Մեյսընը, Ուիսթարն ու Վուդը՝ միասին կամ երկու խմբերի բաժանվելով, Ալեքսանդրետից ցամաքով ուղևորվեցին դեպի Քիլիս, Այնթափ, Մարաշ, Զեյթուն, Բիրեջիք, Ուրֆա, Դիարբեքիր, Ֆարկին, Խարբերդ, Բալու, Մալաթիա, Արաբկիր, Երզնկա, Սեբաստիա, Թոքատ, Սամսուն, ապա վերադարձան Կ. Պոլիս՝ առանց դաղարների կամ միջադեպերի: Նրանց մշտապես և պատրաստակամորեն պահակախմբեր էին տրամադրվում, այլապես առանց ապահովության չէին կարողանա կատարել վտանգներով լի այդ չորսամսյա ուղևորությունը: Ասում են՝ պահանջներ են եղել, որ օգնության տրամադրումն իրականանա կառավարական պաշտոնյաների վերահսկողության տակ, սակայն Կլարա Բարտոնի գործակալները, փաստորեն, գիտեին՝ ինչպես էր հարկավոր կատարել բաշխումները ցանկացած քաղաքում, նրանք նախապես խորհրդակցել և քննել էին այդ ամենը՝ առանց իշխանությունների կողմից որևէ միջամտության:

Ընդհանուր առմամբ տիկին Բարտոնը ստացավ 116.000 դոլար, որից չծախսված 15.400 դոլար գումարը տրամադրվեց Թուրքիայում Ամերիկյան կարմիր խաչի գանձապահին՝ պարոն Փիթին: Այն պետք է պահվեր ծայրահեղ անհրաժեշտության համար և օգտագործվեր տիկին Բարտոնի հրահանգների համաձայն: Այդ գումարից ոչ մի միջոց չի տրամադրվել տիկին Բարտոնին կամ իր գործակալներին, բացառությամբ ճանապարհածախսերի և թարգմանիչների աշխատավարձերի: Այս բացառություններով հանդերձ, ողջ ծախսված գումարը հատկացվել է տուժածներին՝ փաստացի օգնություն ցուցաբերելու նպատակով: Մինչ միսիոներները ծախսում էին Անգլո-ամերիկյան կոմիտեին (պարոն Փիթն այդ կոմիտեի անդամ էր) տրամադրված միջոցները, որոնք տիկին Բարտոնին հատկացված գումարից փոքր էին 4-5 անգամ, Կարմիր խաչի գործակալները խելամտորեն օգտագործում էին գումարները՝ հիմնականում տուժածներին կրկին ուռքի կանգնեցնելու նպատակով, որպեսզի վերջիններս կարողանային հոգալ իրենց կարիքները: Մոտ 500 լիրա (1 լիրան հավասար է 4.40 դոլարի, որն այդ ժամանակ *զգալի* գումար էր) տրամադրվեց Մարաշի, Զեյթունի և այլ

քաղաքների հիվանդների խնամքին և բուժման համար, մոտ 2000 լիրա արժողությամբ հագուստ, թել ու ասեղ ուղարկվեցին երկրի ներքին շրջաններ: Սակայն շատ անգամ այս գումարը ծախսվել է այրի կանանց՝ հումքանյութեր, գյուղացիներին՝ սերմնացու, գյուղատնտեսական գործիքներ ու եզներ, դարբիններին և ատաղձագործներին՝ գործիքներ, իսկ ջուլհակներին՝ մանածագործական հաստոցներ տրամադրելու համար: Տիկին Բարտոնի գործակալները հաճույք էին ստանում՝ տեսնելով, թե ինչպես էին Կարմիր խաչի կողմից տրամադրած սերմնացուներից բանջարանոցներ ծլարձակում և ինչպես էին գյուղացիներն իրենց հատկացված մանգաղներով հնձում հացահատիկը: Այժմ շատ անհրաժեշտ էր, որ մենք օգնություն հատկացնենք աղքատ գյուղացիներին՝ վերականգնելու իրենց այրված և ավերված տները՝ այսպիսով տրամադրելով նրանց ապաստարան, որպեսզի պատսպարվեին գալիք խստաշունչ ձմռան ընթացքում: Սակայն Կարմիր խաչի գործակալների միջոցները թույլ չէին տալիս իրականացնել նման խոշոր ծրագիր: Կարմիր խաչի գործակալները, այնուամենայնիվ, հսկայաձավալ տեղեկատվություն հավաքեցին, և նրանք, ովքեր տեսել են ջարդերի սարսափը, աղջիկների և կանանց սարսափելի նվաստացումները, որպես վստահելի ականատեսներ կարող են վկայություն տալ այդ ժողովրդի սարսափելի տառապանքների և կարիքների մասին: Մենք ամենայն անկեղծությամբ հավատում ենք, որ տիկին Բարտոնը, Կարմիր խաչի իր գործակալներն ու գործընկերները չեն համարի Թուրքիայում իրենց աշխատանքն ավարտված, փոխարենը նրանք այժմ շատ լավ գիտեն՝ ինչ պետք է արվի և ինչ կարող է արվել և կանեն ամեն հնարավոր բան՝ ապահովելու հետագա օգնությունը նրանց, ովքեր ավելի քան 60.000 (հիմնականում 18-50 տարեկան) տղամարդկանց սպանդի հետևանքով որբացել և այրիացել էին: Այդ սպանվածներին ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց:

Մինչ մենք երախտագիտությամբ կվկայենք տիկին Բարտոնի գործակալների խոհեմ և անխոնջ աշխատանքի մասին, թող ընթերցողը թույլ տա մեզ հավելել, որ Կ. Պոլսում գտնվելու ավելի քան վեց ամսվա ընթացքում տիկին Բարտոնն անմնացորդ իրեն նվիրել է առաքելության աշխատանքներին: Նա, կարծես, տեսարժան վայրեր այցելելու ժամանակ չուներ, արդյունքում իր ընկերներից շատերն են բողոքում, որ նա ժամանակ չուներ ընդունելու այն մարդկանց հրավերները, ովքեր ուրախ կլինեին հյուրընկալել նրան: Նա միայն երկու առիթ է ունեցել հանգստանալու. առաջինը հուլիսի 4-ին Արքայադստերի կղզիներից մեկում կազմակերպված բացօթյա խնջույքն էր՝ ամերիկացի ընկերների հետ, իսկ երկրորդը օգոստոսի 5-ին՝ չորեքշաբթի օրը նույն կղզում կազմակերպված մեկ այլ խնջույք, որի ժամանակ նա իր «տղաների» հետ հանդիպեց մոտ 20 ամերիկացի ուսուցիչների և միսիոներների՝ նրանց ըստ արժանվույն բարի ճանապարհ մաղթելու համար: Բարտոնը հստակորեն հայտարարեց, որ հուլիսի 4-ն իր երբևէ անցկացրած ամենաերջանիկ օրն էր: Այս առիթից ոգեշնչված՝ թղթին

Պատվելի Ջոզեֆ Ք. Գրին, Կ. Պոլիս



Սելամլիքի արարողություն

Արտաքին կամ Բերա կամուրջ: Այն ձգվում է Ոսկե Եղջյուր նավահանգստի վրայով և Ստամբուլը միացնում Գալաթային

հանձնեց մի քանի տող, որ, հաջորդ հավաքույթի ժամանակ սիրով ընթերցեց իր ընկերներին: Մենք շատ կցանկանայինք, որ նա թույլատրեր *«Դը Ինդիփենդընթ»*-ի խմբագրին հրատարակել այն: Երկրորդ հավաքույթի ընթացքում տիկին Բարտոնի խնդրանքով պարոն Փուլմընն ընթերցեց իր ֆինանսական հաշվետվությունը, իսկ պարոն Հաբելն ու Վուդը ներկայացրին օգնության տրամադրման վերաբերյալ իրենց զեկույցները: Մենք երախտագիտությամբ ենք ընդունում մեզ ընձեռված հնարավորությունը՝ լսելու այս զեկույցները: Հիշելով, թե ինչպես էինք 6 ամիս առաջ պատրաստվում օգնության տրամադրման աշխատանքներին և մտապահում այն մտահոգությունները, որ մեզ հայտնել էր տիկին Բարտոնը՝ այժմ ուրախությամբ մեր հրճվանքն ու շնորհավորանքներն արտահայտեցինք նրա ազնիվ և ունակ գործակալներին վերադարձի կապակցությամբ: Շատ տեղին կլինի, եթե ասենք, որ նրանք «եկան, տեսան և հաղթեցին»: Մեզ ուրախություն էր պատճառել այն հանգամանքը, որ մեր նոր ընկերներն այդքան լավ էին ճանաչում Թուրքիայում ամերիկյան միսիոներներին և անկեղծորեն շնորհակալ էին փոխադարձ և հաճելի ծանոթության համար: Երբ տիկին Բարտոնն իր «տղամարդկանց» հետ ժամանեց Կ. Պոլիս, մենք սրտանց և ջերմորեն դիմավորեցինք նրանց, իսկ այժմ, երբ նրանք վերադառնում են հայրենիք, սրտանց մաղթում ենք նրանց բարի ճանապարհ»:

Կ. Պոլիս, Թուրքիա

Այն մի քանի տողերը, որոնց անդրադարձավ դոկտոր Գրինը, նույնիսկ դժվար է գրվածք համարել: Դրանք պարզապես նման են մտքի թռիչքի, որոնց ռիթմիկ ձև հաղորդեցի, երբ հուլիսի 4-ին անցնում էինք Մարմարա ծովով դեպի կղզի՝ խնջույքին մասնակցելու: Հետագայում ես ժամանակ գտա, բանաստեղծությունս թղթին հանձնեցի և այն ընթերցեցի հյուրերին, որոնք ներկա էին մեր հրաժեշտի հանդիպմանը, նաև պարոն Փիթին, ով հյուրընկալել էր մեզ: Անհնար էր պատկերացնել, թե ինչպիսի մեծ հավանության արժանացան այս տողերը: Բազմաթիվ ընկերների խնդրանքով դրանց համար տեղ եմ հատկացրել զեկույցում՝ որպես «պատմության մի մաս»:

Մարմարա

Նվիրում եմ պարոն Ու.Ու. Փիքին

Երկու հազար տարի արդեն, ծո՛վ, կապուտակ ու ծփուն,
Ու բյուր տարի՝ հեգ մարդկության ազատության պայքարում,
Քո փայլփլուն ծոցում քամին առագաստ է ծածանում,
Հզոր ալյակը Ատլանտյանի՝ աշխարհին են ցարդ դիմում:

Որոտում ես, ցնցում ժայռոտ ափ ու տուն, ձայնդ թնդում,
Միշտ լսելի՝ հողի մարդու և շրջվորի ականջում:
Գոմեշ, վարազ՝ դաշտ ու բնում՝ ականջալուր փոթորկին,
Արծիվն առած կանչը սրտիդ՝ հասցնում է երկնքին:

Ազատեցե՛ք, - մռնչում ես, - ազատեցե՛ք ճնշյալին,
Արձակեցե՛ք, ձեռքերը ձեր՝ մի տիրացեք այս հողին:
Աշխա՛րհ դու հին, հերիք ճզմես ու հատցնես այդ հոգին,
Վերադարձրո՛ւ հողը ազատ, թող տեր դառնա յուր երկրին:

Մայրը՝ դեռ քնած հեռու տնակում, մանուկը լսեց ձայնը փոթորկի,
Արևը մտավ մեջ արևմուտքի՝ ձայն տալով, սակայն, ի լուր բոլորի՝
«Անգլիո լուծն ընկավ» ու ազատ դարձան գաղութքը երսուն,
Միայն թե բազում որդիքը, ահա, կնքեցին անժամ յուր մահկանացուն:

Խեր հայացքներ, անխոս բառեր, քայլեր արագ ու համարձակ,
Սեղմված շուրթեր, խրոխտ հոգիք՝ ազատությունն ամբարած,
Զուսպ աղոթքով՝ աչքերը ջինջ դեպի երկինք նայեցան
Բազում կանայք՝ մեջ գիշերվան, լաց զսպեցին, զինվորցան:

Փողն է հնչում, սուրն է ճոճվում ու բանակն է առաջ շարժվում,
Աշխարհը հին արդ զարմանքով Լույսն է տեսնում արևմուտքում,
Եվ շանթարձակ փայլակի հետ՝ թիկնած հողմի խրոխտ թևին,
Աստեղնազարդ այդ կերպասը հույս է բերում մարդկային:

Ահա փայլ եկավ աչքերին հոգնած, դալուկ սրտերը իսկույն ամրացան,
Հույսը դարձավ կանչ. «Էլ որքա՞ն դեռ, Տե՛ր, ասա, դեռ որքա՞ն»:
Բյուր հազար մարդիկ լույսն անթեղած՝ գնացին առաջ համառ պայքարի...
Ու դրոշն ազատ առաջնորդեց արդ նրանց կռիվը ընդդեմ խավարի:

Իսկ սպառնալի ալիքները դեռ բախվում են ժայռեզրին,
Ու արծիվը դեռ ձայնում է՝ թևը մեկնած բարձրերին,

Սակայն հուսա, որ դու մի օր, անգամ փարված անհայտին,
Ա՜խ, կապուտակ ծով գալարուն, կուղղես այս կոչն աշխարհին:

Կլարա Բարտոն *Կ. Պոլիս, հուլիսի 4. 1896 թ.*

Զեկույցներ ընթերցելը միշտ էլ ձանձրալի է: Եթե գտնվեն ընթերցողներ, ովքեր կարդացած կլինեն զեկույցը մինչև այստեղ, ապա նրանք փոքր-ինչ վրդովված կնշեն, որ «այս զեկույցը չի տալիս ակնկալվող տեղեկությունը, այնտեղ առաջարկված չեն հստակ գործողություններ, որոնք կարելի կլիներ ձեռնարկել: Արդյո՞ք անհրաժեշտ է հայերին հնարավորություն տալ արտագաղթել երկրից, և եթե այո, ապա ո՞ւր և ինչպե՞ս, եթե անհրաժեշտ է ինքնավարություն տալ հայերին, ապա ինչպե՞ս այն ապահովել կամ երաշխավորել: Եթե կարիք կա ավելի շատ նավեր ուղարկել, ապա դրանք ինչպե՞ս պետք է գործեն այնտեղ, արդյո՞ք անհրաժեշտ է, որ մենք գերտերություններից ավելի մեծ ճնշում պահանջենք, և մենք՝ որպես պետություն, ինչպիսի՞ քայլեր պետք է ձեռնարկենք: Մենք ակնկալում էինք, որ այս հարցերը կլուսաբանվեին զեկույցում»:

Հաշվի առնելով այս հանգամանքը և ափսոսանք հայտնելով պատճառած վրդովմունքի առնչությամբ պետք է հիշեցնենք մեր մտահոգ ընթերցողներին, որ մեզնից երբեք չեն պահանջում նման տեղեկություն տրամադրել. բոլոր նմանատիպ եզրակացությունները պարզապես հետևությունների, իսկ բոլոր նման սպասելիքները մտահոգության արդյունք են:

Մեզ վերաբերող և մեր պարտականություններին անմիջականորեն *առնչվող* փաստն այն է, որ չնայած այն ամենին, որ իրականացվել է բոլոր հնարավոր միջոցներով, անհամեմատ շատ անելիքներ դեռ կան: Մարդիկ մտորում էին ազգերի բարոյական պարտականությունների, կառավարությունների ճիշտ կամ սխալ քայլերի և այն խնդրի շուրջ, թե արդյոք այս կամ այն պաշտոնյան կզբաղեցնի իր պաշտոնը հաջորդ վեց ամսվա ընթացքում, ինչպիսի անհատական սկզբունքներ են անհրաժեշտ դրսևորել որոշակի գործողությունների նկատմամբ: Մտորում էին այն ճիշտ դիրքորոշման մասին, որ ժողովուրդը պետք է ընդուներ՝ պահպանելու իր բարձր բարոյականությունը, նաև այլ կրոնական հարցերի շուրջ: Այդ հարցերից յուրաքանչյուրը, որ ոչ ոք այնքան շատ չի գնահատում, որքան ես, բնորոշում է մարդկային մտքի և մշակույթի զարգացման ամենա-

բարձր փուլի առաջադիմական ոգին և արտահայտիչ ոճը, ինչն անանախադեպ է: Թվում էր, թե դրանցից յուրաքանչյուրը, որքան էլ որ հրատապ և կարևոր լիներ, որոշակի ժամանակ էր պահանջում գոնե մտորելու և եթե անգամ մարդիկ չկարողանային ժամանակ տրամադրել մտորելու դրանց շուրջ, դրանք, հավանաբար, մտորելու առիթ կտային:

Սակայն փաստ է, որ Էգեյան, Կասպից, Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած տարածքում այսօր ապրում են մեկուկես միլիոն քրիստոնյա հայեր, որոնք գոյատևում են հազիվ թե կիսաքաղաքակիրթ մի պետության հրամանների ներքո: Համաձայն մոտավոր հաշվարկների, տրամադրված տարբեր երկրների, ինչպես նաև մեր գործակալների հետ համագործակցող բանիմաց և անկողմնակալ դիտորդների կողմից, որոնց դիտարկումները չեն սահմանափակվել՝ 100.000-200.000 մարդ՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ ընչազուրկ են՝ առանց հագուստի, սննդի, դեղորայքի, սառած, զրկված այն հարմարություններից, որոնք մարդու կյանքը դարձնում են տանելի: Նրանք զրկված էին այս ամենը ձեռք բերելու հնարավորությունից, բացառություն էին կազմում բարեգործական նվիրատվությունները:

Նույն մոտավոր հաշվարկները հանդիպում ենք հաղորդագրության մեջ, ըստ որի մինչև 1897 թ. մայիսի 1-ն առանց արտերկրից տրամադրվող օգնության այդ մարդկանցից առնվազն 50.000-ն այժմ մահացած կլինեին սովից կամ վրա հասած նեղություններից:

Անգամ հիմա դեռ նրանց սարերի ծերպերում ցուրտ է, սառնամանիքից ապիտակել են ժայռերի կատարները, ուր ոտք են դրել այդ ընչազուրկ մարդիկ, և մինչև Սուրբ Ծնունդը ճերմակ ձյունն արդեն կծածկեր նրանց շիրիմները:

Այս բացահայտ և սարսափելի փաստերն են, որ պետք է ներկայացնեմ ամերիկյան ժողովրդին: Եթե դրանցից որևէ կերպ օգտվելու առաջարկ լինի, ապա պետք է շտապել: Մենք անգամ մի օր չենք կորցրել՝ հստակորեն և ճշգրտորեն ներկայացնելու այդ փաստերը հասարակությանը, քանի որ նյութն առանձնակիորեն է վերաբերում հանրությանը:

Կցանկանայի հավելել, որ այս մեծ մարդասիրական օգնությունը ոչ մի դեպքում չպետք է ամբողջապես ընկնի մեր հայրենակիցների ուսերին, անգամ այն պարագայում, եթե մեր երկրում չլինեին չքավորներ: Ամենաքաղաքակիրթ երկրների ժողովուրդները պետք է միավորվեն օգնություն ցուցաբերելու գաղափարի շուրջ, և ես, համա-

պատասխան քննարկումներ ունենալուց հետո, հավատացած եմ, որ դա տեղի կունենա:

Մեզնից ոչ ոք չգտավ մարդասիրական օգնությունը հատկացնելու ավելի լավ միջոց, քան հավատարիմ միսիոներները, որոնք արդեն գտնվում էին գործողությունների տարածքում, և մեր կառավարության աշխատակիցները, որոնց գործելակերպը վկայում է իրենց ցուցաբերած գործուն հետաքրքրության մասին:

Կլարա Բարտոն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՋՈՐՋ Հ. ՓՈՒԼՄԸՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ

Սույն պարտադիր ֆինանսական զեկույցն առնչվում է հինգ տարբեր երկրների՝ Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի և Թուրքիայի արտարժույթներին: Սակայն գրեթե բոլոր ծախսերը, բացի ճանապարհորդական և պահպանման ծախսերից, արվել են թուրքական արտարժույթով: Եվ քանի որ ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և այլ արտարժույթով ստացված գումարը, բնականաբար, փոխանակվում էր օսմանական մետաղադրամի, մենք հարկադրված էինք համապատասխանեցնել մեր հաշիվները: Քանի որ զեկույցը որպես հիմք ընդունում է ռակին (100 պիաստրը հավասար է մեկ լիրայի), մեր գործընկերները հեշտությամբ կարող են այն վերածել ամերիկյան դոլարի արժեքին՝ բազմապատկելով պիաստրի միավորը 4.4-ի. մեկ ռակե լիրան (100 պիաստր) արժե մոտավորապես չորս ամբողջ չորս տասնորդական դոլար:

Ռակե և արծաթե մետաղադրամների միջև տարբերության, տարբեր քաղաքներում միևնույն մետաղադրամի տարբեր արժեքների առկայության, ինչպես նաև միևնույն քաղաքում տարբեր ապրանքների համար գնողունակության անհավասանալի տարբերության պատճառով մենք մշտապես կանգ էինք առնում բարդ և տարօրինակ մաթեմատիկական խնդիրների առջև: Մեր ատույգ և ճշգրիտ զեկույցի համար պարտական ենք Արտաքին առաքելությունների ամերիկյան խորհրդի գանձապահին՝ Ռ. Ռ. Փիթին, Բանկ Օտոմանի և Կրեդիտ Լիոնէ բանկի աշխատակիցներին, ինչպես նաև «Աղմինիստրեյշն դը լա Դետ Պուբլիկ Օտոման» կազմակերպության հմուտ հաշվապահին՝ Ջորջ Քյունգելին: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նաև Կ. Պոլսում Միսիոներների խորհրդի գործադիր տնո-

րենին՝ պատվելի դոկտոր Հ. Դուայթին և «Ռոբերտ» քոլեջի տնօրենին՝ պատվելի դոկտոր Ջորջ Ուոշբըրնին բազմաթիվ արժեքավոր առաջարկությունների համար:

Պիաստրի ճկունությունն ըմբռնելու համար հմուտ գիտելիքների անհրաժեշտության, մեջիդիեի (հավասար է 20 պիաստրի) շփոթեցնող հատկությունների և լիրայի խաբուսիկ միտումի եզակի նկարագրությունը ցույց տալու նպատակով կներկայացնենք առաջին բժշկական առաքելությանը վերաբերող մի գործարք: Այդ առաքելությունը գլխավորում էր դոկտոր Այրա Հարիսը, ով բնակվում էր Սիրիայի Տրիպոլի քաղաքում: Մենք ուղարկել էինք 400 լիրա դոկտոր Ջորջ Է. Փոսթին, ով գտնվում էր Բեյրութում և զբաղվում էր առաքելության պատրաստման աշխատանքներով՝ ակնկալելով ստանալ ստացական ուղարկված գումարի չափով, որը համարժեք էր 40.000 պիաստրի: Երբ այն ստացանք, փոքր-ինչ շփոթվեցինք՝ նկատելով, որ ստացված գումարը շատ անգամ գերազանցում է այդ չափը: Մենք նամակ ուղարկեցինք՝ գումարի չափը ճշտելու նպատակով, քանի որ ենթադրեցինք, որ հարգարժան դոկտորը սխալվել էր: Ներկայացնում ենք մեկ-երկու մեջբերում նրա պատասխան նամակից՝ «Չեմ զարմանում, որ Դուք այդքան էլ լավ չեք ըմբռնում Թուրքիայի ֆինանսական ոլորտում գոյություն ունեցող շփոթությունները: Երեսուներեք տարի ապրելով այդ երկրում՝ ես դեռ փորձում եմ հասկանալ՝ ինչ է իրենից ներկայացնում պիաստրը --- Բեյրութում մեկ լիրան արժե մեկ պիաստր և հինգ փարա, դրա արժեքը տարբերվում է: Մեջիդիեն կարող է արժենալ 19 պիաստր կամ ավելի շատ: Յուրաքանչյուր քաղաք ունի իր փոխարժեքը --- Գումարի անվանական արժեքը փոփոխվում է ամեն օր: Այսպես, եթե ես ձեզ այսօր լիրայով վճարեմ 123.20 պիաստր, հնարավոր է, որ հաջորդ շաբաթ մնամ առանց գումարի կամ հակառակը ... Երկրի ներսում գրեթե անհնար էր հաշիվներ վարել --- Կա հաշվապահական մատյաններ վարելու միայն մի եղանակ, որ մենք օգտագործում ենք քոլեջում՝ հաշիվը մուտքագրելու պահին գրանցել ներկա պահի փոխարժեքը, ինչպիսին որ այն ներկայացված է բոլոր ստացականներում և այլ վկայագրերում»:

Այս հավաստիացումը բավական համոզիչ էր, քանի որ եթե քոլեջի տնօրենը երեսուներեք տարվա ուսումնասիրությունից հետո չէր կարողացել հասկանալ պիաստրի շփոթության պատճառները, ապա մեզ համար սխալվելը ներելի էր: Հարյուրավոր հաշիվներ և մուրհակներ էինք ստանում, որոնք ստուգվելուց հետո վճարվում էին և դրան-

ցից հագիվ թե լինեին երկուսը, որոնց գումարը ներկայացված լիներ համարժեք պիաստրով: Այնուհանդերձ, չնայած որ փողի միավորը ոսկե պիաստրն է, իսկ փողի ստանդարտը՝ ոսկե լիրան, արժեքի հաճախակի փոփոխությունները բավականաչափ շփոթեցնող են օտարերկրացիների համար, ուստի անհրաժեշտություն է առաջանում հաճախակի խորհրդակցել այն մարդկանց հետ, ովքեր, երկար տարիներ բնակվելով այդ երկրում, գտել են այն ոսկե միջինը, որի շնորհիվ կարողանում են որոշել փողի համարժեքությունները:

Նայելով ստացականների սյունակին՝ կտեսնեք, որ դրանց փոխարժեքները և բրիտանական ոսկու վաճառքի գինը զգալիորեն տարբերվում են (մեր վճարագրերում ու փոխանցվող գումարներում հիմնականում օգտագործվում է անգլիական սովրինը): Մենք վաճառել ենք ոսկու մեծ մասը 110-ից բարձր փոխարժեքով: Այս թիվը բիզնես գործարքներում համարվում է շուկայական փոխարժեք: Իհարկե, ստացված բոլոր փոխանցումների արժեքները հաշվված են վաճառքի օրվա փոխարժեքով:

Մեր հաշիվներից, ստացականներից և վկայագրերից շատերն անհասկանալի են, քանի որ գրված են տարբեր լեզուներով՝ արաբերեն, քրդերեն, թուրքերեն, հայերեն, հունարեն, իտալերեն և այլն: Դրանք հետաքրքրական են, սակայն միևնույն ժամանակ չափազանց շփոթեցնող, չնայած որ ոչ մի դժվարություն չէին ներկայացնում մեր փորձառու հաշվապահի համար: Այդուհանդերձ, ցանկանում ենք հատուկ երախտագիտություն հայտնել պարոն Քյունզելին իր հիանալի և անվարձահատույց ծառայությունների համար:

Մեր ծախսերի աղյուսակում կարելի է հանդիպել մի ծախսատեսակի, որ բավական հազվադեպ էր Կարմիր խաչի համար. դա աշխատավարձերի հաշիվն է: Բոլոր տեղաբնակ բժիշկներին և դեղագործներին բացառության կարգով անհրաժեշտ էր վճարել, ինչպես իրենք էին կոչում, «վարակիչ հիվանդությունների վճար»: Այն միայն չէինք վճարում դոկտոր Այրա Հարիսին, ով բնակվում էր Սիրիայի Տրիպոլի քաղաքում՝ այդ համարձակ և անձնազոհ ամերիկացուն, ով իր հիանալի բժշկական ունակությունն ու արտակարգ վիրաբուժական հմտություններն այնքան անխնա կերպով ներդրեց Մարաշում և Զեյթունում, ինչպես նաև բազմաթիվ հարակից գյուղերում հիվանդների բժշկության համար: Ուրախ ենք, որ կարող ենք հրապարակայնորեն մեր երախտագիտությունը հայտնել նրան և հիանալ իր հերոսական ծառայություններով: Բացի բժիշկներից աշխա-

Աստվածաբանության դոկտոր, պատվելի Հենրի Օ. Դուայթ

Ու. Ու. Փիթ

տավարձ էին ստանում նաև թարգմանիչները, որոնք ընդգրկված էին գործողության տարածք ուղևորվող բազմաթիվ առաքելություններում: Այս փաստը որևէ բացասական ազդեցություն չի պարունակում, քանի որ գործողության տարածքում կյանքի և աշխատանքի բարդ պայմանների պատճառով նման վարձատրությունը պարզապես արդարացված անհրաժեշտություն էր:

Կարծում ենք՝ հասկանալի փաստ է, որ Կարմիր խաչի աշխատակիցները երբեք ո՛չ ստացել, ո՛չ էլ պահանջել են փոխհատուցում իրենց ծառայությունների դիմաց: Մենք, հեռու գտնվելով հայրենիքից, չկարողացանք ստանալ այն հրաշալի կամավորական աջակցությունը, որը ստացել էինք մեր նախկին գործողությունների տարածքներում: Այնուամենայնիվ, գտնվեցին մի քանի հոգի, ովքեր մեզ հետ եղան և՛ Կ. Պոլսում, և՛ Փոքր Ասիայում, նրանց օգնությունը բավական արդյունավետ էր մեզ համար: Սրտանց շնորհակալություն ենք հայտնում այդ կամավորներին:

Երբ առաքելությունները մտել էին գործողության տարածք և սկսել իրենց աշխատանքները, առաջին փոխանցված գումարն այնքան դանդաղ և, կարծես, անապահով եղանակով հասավ մեր գլխավոր աշխատակիցներին, որ յուրաքանչյուր ամերիկացի գործարար կապշեր՝ տեսնելով այս ամենը: Փոխանցումը կատարվում էր *հետևյալ եղանակով՝* անհրաժեշտ գումարի վճարագիրը տարվում էր բանկ, մոտ կես ժամից ոսկին կշռվում և հանձնվում էր աշխատակիցներին: Ամերիկայում բանկի աշխատակիցները կմատուցեին նույն ծառայությունը երկու րոպեում: Այնուհետև մետաղադրամները տեղադրվում էին մի ամուր քսաքանե կտորի մեջ, փաթաթվում, փաթեթին գնդաձև տեսք էր տրվում, ապա այն ապահով կապվում և տարվում էր Բանկ Օտոմանի փոստային բաժանմունք: Այնտեղ փաթեթը տեղադրվում էր մի կտոր մագաղաթի մեջ, որի բոլոր ծայրերը հավասարապես կապվում էին, դրանց տրվում էր քառակուսի կտրվածք, որն էլ կնքվում էր կնքամոմով: Ծանրոցի հաստուկ եղանակով պիրկ ամրացված պարանները կարված էին այնպես, որ դրանց եզրերն անցնում էին փոքրիկ փայտյա տուփի միջով: Վերջինս նման է դեղատուփի: Այդ տուփը լցնում էր զմուռսով: Երբ ծանրոցը կնքված էր Իմփերյալ Փոսթի և մեր կնիքներով, մաղարիչը՝ տրված, իսկ ծանրոցը՝ ապահովագրված անգլիական ընկերության կողմից, 3-4 ժամ աշխատանքից և ուշացումից հետո մնում էր միայն գնալ տուն և ահ ու սարսափը սրտում սպասել 25-30 օր, մինչև որ սուրհանդակը

Բարձր Դուռ, Ստամբուլ

Տեսարան Կարմիր խաչի գլխավոր գրասենյակից. հետնամասում՝ Ոսկե Եղջյուրը, Բոսֆորի նեղուցն ու Մարմարա ծովը

կհասներ իր վերջնակետին և հեռագրի միջոցով ստացված ստացականը կհանգստացներ *այդ* ծանրոցի պատճառով պրկված նյարդերը: Այս տաժանակիր գործարքը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև երկրի ներքին շրջաններում հնարավորություն ունեցանք օգտվել վճարագրերից: Մենք ուրախությամբ հայտնում ենք, որ չնայած գումարը պետք է փոխադրվեր գողերով ու ավազակախմբերով լի մի երկրով, մենք չկորցրինք անգամ մեկ լիրա:

Մաղարիչն այդ երկրում մեկ այլ սովորություն է, որ, հավանաբար, ավելի վրդովեցնող է, քան մեր «թեյավճարային» համակարգը, որ ինքնին շատ վատ երևույթ է: Այն վրդովեցնում է մարդկանց մեծ մասին, բայց զայրացնում ֆինանսների քարտուղարին: Մաղարիչը դրամական պարգև է, որն Արևելքի բնակիչներն ակնկալում են ամենաչնչին ծառայության դիմաց: «Մուրացկանները», կարծես, բնազդաբար ճանաչում են ֆինանսների քարտուղարին և խմբվում են նրա շուրջ ամենասարսափելի կերպով: Ամբոխից դուրս գալու համար առաջին օրվանից անհրաժեշտ է իմանալ երկու թուրքերեն բառ՝ *Yok* – ոչ, *Hildé-git* – Կորե՛ք այստեղից: Այս արտահայտությունները հաճախ օգնում են ազատվել «մուրացկաններից», սակայն մաղարիչի մոլագարությամբ տառապողներին անհրաժեշտ է որևէ գումար վճարել:

Մենք հնարավորինս սեղմ ենք ներկայացնում մեր զեկույցը, քանի որ գումարների երկար այունակները հետաքրքրություն չեն ներկայացնում ընթերցողների մեծ մասին, ստացականների և ծախսերի վերաբերյալ մանրակրկիտ հաշվետվությունները երբեք չեն ընթերցվում. կարևոր չէ, թե ինչ գումար է ստացվել կամ ինչպիսի ապրանքներ են գնվել օգնության համար այս կամ այն օրը, կամ արդյոք գումարը ոսկով, թե վճարագրով է փոխանցվել երկրի ներքին շրջաններ: Կոմիտեներն արդեն ստացել են իրենց համապատասխան զեկույցները՝ բոլոր ստացականների և այլ մանրամասնությունների հետ միասին:

Մենք հավատում ենք, որ մեր հայրենակիցները հավանության կարժանացնեն մեր մատուցած ծառայություններին վերաբերող հաշվետվությունը: Մենք գիտենք, որ մարդիկ, ում օգնություն ենք տրամադրում, երախտապարտ են մեզ և շատ բարձր են գնահատում մեր օգնությունը: Ասվածի ապացույց են ստացված անթիվ շնորհակալագրերը, երախտագիտության խոսքերն ու անձնական բնույթի հայտարարությունները:

Կարմիր խաչին հատկացված 116.326.01 դոլար գումարին անհրաժեշտ է ավելացնել առավելագույնը մեկ երրորդ կամ կրկնակի չափով, քանի որ բոլոր գնված ապրանքներից մենք կրկնակի գումար ենք շահել: Օրինակ, մենք գնեցինք երկաթ և պողպատ, տրամադրեցինք դրանք դարբիններին՝ գործիքներ պատրաստելու համար: Այդ գործիքները մենք տրամադրեցինք այլ արհեստավորների, որպեսզի նրանք ևս սկսեն զբաղվեն իրենց առևտրով: Նմանապես մարդիկ սկսեցին զբաղվել մանածագործական, ջուլհակագործական արհեստներով և հագուստի պատրաստմամբ: Ինչ վերաբերում է արժեքներին, ապա երկրի ներքին շրջաններում գտնվող մեր հայրենակիցները համամիտ են, որ եթե գնահատենք մեր աշխատանքը, ապա Անատոլիայի ժողովուրդն ընդհանուր ծախսված գումարից շահել էր կրկնակի կամ եռակի, իսկ տրամադրված բարոյական օգնությունն անգնահատելի էր (նման գումարային փոփոխության դեպքում տրամադրած օգնության ընդհանուր արժեքը կկազմի մոտ 350.000 դոլար):

Մի քանի բառով բացատրենք ծախսերի սյունակի բովանդակությունը: «Երկրի ներքին շրջաններ ուղարկված գումարը» ներառում է սուրհանդակով կամ վճարագրերով ուղարկված բոլոր գումարները. Դրանցից ավելի քան մոտ 7000 լիրա գտնվում էր Ու. Ու. Փիթի, Խարբերդից Ք. Ֆ. Գեյթսի, Դիարբեքիրում Բրիտանիայի հյուպատոս Ս. Մ. Հոլուարդի, Սեբաստիայից Է. Հ. Փերիի և այլոց ձեռքում: Այս ներկայացուցիչները հավասարաչափ պատասխանատու էին գումարի համար: Վերջինս պահվում էր որպես արտակարգ դեպքերի համար նախատեսված գումար և օգտագործվում անհրաժեշտության դեպքում՝ ըստ հրահանգի:

«Օգնության առաքելություններ՝ ընդհանուր և բժշկական» վերնագրով սյունակում հիմնականում ներկայացված են այն ապրանքները, որոնք օգնության նպատակով գնվել և չորս առաքելությունների հետ միասին առաքվել են Կ. Պոլսից և Բեյրութից: Ապրանքների մի մասը դեռ պահվում է տարբեր կայարաններում, դրանք անհրաժեշտ է բաժանել ճիշտ ժամանակին՝ լավ արդյունքի հասնելու համար:

«Ընդհանուր ծախսերի հաշվի» սյունակում ներկայացված են փոխադրավարձերը, հեռագրային ծառայության ծախսերը, մաղարիչների համար վճարված գումարները, ինչպես նաև բանվորների, փոխադրամիջոցների, առաքման վճարները և այլն: «Նվիրատվություններ որբ երեխաների օգնության համար» սյունակում ներ-

կայացված են հայկական և գերմանական հիվանդանոցներին տրամադրված գումարները՝ գաղթական մանուկներին օգնելու նպատակով: Կարծում ենք՝ մնացած այունակների բովանդակությունը պարզ է:

Ընթերցողը հետագայում կնկատի, որ մուտքերի և ելքերի աղյուսակում հիշատակված Կարմիր խաչի հատուկ միջոցներն ավելի քան բավարար էին հոգալու «Կարմիր խաչի գլխավոր գրասենյակի կողմից գործողության տարածքում կազմակերպված օգնության», «Ճանապարհորդական և պահպանման», «Ընդհանուր և աշխատավարձի հաշիվների», «Ընդհանուր և բժշկական օգնության առաքելությունների հաշիվների» ծախսերը: Այդ ծախսերից յուրաքանչյուրն ուղղակիորեն նպաստում էր գործողության տարածքում աշխատանքների իրականացմանը, քանի որ դրանք բոլորն էլ անհրաժեշտ էին մեր աշխատանքը հաջող իրականացնելու համար: Սա նշում ենք միայն ցույց տալու համար, որ բացի մեր աշխատանքը հաջողությամբ կատարելուց, Կարմիր խաչը, փաստորեն, նաև ֆինանսապես է աջակցել իրականացվող աշխատանքներին: Անտեղի չի լինի, եթե նշենք, որ ծախսված ընդհանուր գումարից (116.326.01 դոլար) որոշակի գումար (7.526.37 դոլար) առանձնացված էր վարչական ծախսերի համար: Դրանք ներառել են՝ «Հեռագրերի և ճեպագրերի ծախսերը», «Աշխատավարձերի հաշիվները», «Ընդհանուր ծախսերը», «Գործողության տարածքների ծախսերը», «Գրենական պիտույքների և տպագրական ծախսերը», «Ճանապարհորդական և պահպանման ծախսերը»: Այս ծախսն ընդհանուր գումարի վեց տոկոսից փոքր-ինչ ավելին էր: Եթե ենթադրենք, որ ծախսված գումարի արժեքը երեք անգամ գերազանցում է հումքանյութերի, սննդի և այլնի ձեռքբերման նպատակով արված ծախսերին, ապա կստացվի, որ վարչական ծախսերը կազմում են միայն այդ գումարի մոտ երկու տոկոսը: Գնահատման երկու դեպքում էլ արդյունքները գոհացնող են, սակայն ոչ զարմանալի Կարմիր խաչի աշխատակիցների համար, քանի որ կիրառած մեթոդներն արդյունք են երկարատև փորձի, որի ընթացքում նրանք չեն խուսափել ոչ մի պատասխանատվությունից և միայն սովորել են խելամտորեն ծախսել գումարները՝ ընդունելով իրենց վրա դրված վստահությանը: Բավարար է իմանալ, որ այդ ծախսվող գումարներն ուղղակիորեն գալիս են հենց Կարմիր խաչի «Հատուկ ֆոնդից»: Այս զեկույցին կցված հաշվեկշիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծախսված գումարից Կարմիր խաչի ելքերը կազմել են 24.641.93 դոլար, արդյունքում օգնութ-

յան գումարը գերազանցել է վարչական ծախսերը 17.115.56 դոլարով:

Միգուցե այս համառոտ ֆինանսական զեկույցը, որն առնչվում է մեր իրականացրած աշխատանքին, կարելի է հավուր պատշաճի եզրափակել՝ անդրադառնալով այն անկեղծ խանդավառությանն ու աչալրջությանը, որ Միացյալ Նահանգներում սկիզբ դրեցին հանգանակության աշխատանքներին: Այս զեկույցում ներկայացված նախադեպերը կարող են նաև ցույց տալ, որ նախորդ փորձառությունից բխող իմաստությունը որդեգրում է հավասարակշռված մոտեցում միաժամանակ սառնասրտորեն անտեսելով չափից ավելի լավատեսական հաշվարկները, որն անում են եռանդուն մարդիկ: Կարող է թվալ, թե բավական դյուրին է հանգանակություն իրականացնել փրկելու քրիստոնյա ժողովրդին սովի վտանգից և դանակի կամ փամփուշտի հարվածներից, օգնելու մի պատմական ցեղի, որն այժմ ջարդի հետևանքով հայտնվել էր ոչնչացման եզրին և կարող էր անէանալ ձմռան փոթորկից և սովից: Մեր աշխատակիցներից շատերը, ովքեր սովոր չէին լայնամասշտաբ օգնության աշխատանքին, մեծ դժվարություններ ունեցան անհրաժեշտ միջոցները հայթայթելիս: Մի օրինակը բավարար կլինի ցույց տալու, թե որքան խաբուսիկ է այս կարծիքը: Պետք է միշտ նկատի ունենալ, որ Կարմիր խաչը երբեք միջոցներ չի խնդրում ոչ որից: Այն աշխատակիցներ է ուղարկում գործողության տարածք, ուր օգնության կարիք կա, ամբողջովին ուսումնասիրում կարիքները, ապա մամուլի և հանրային իրազեկման այլ միջոցներով տեղեկացնում ամերիկյան ժողովրդին դրանց մասին՝ պատասխանն ուղղակիորեն թողնելով մարդկանց դատողությանն ու մեծահոգությանը: Երբ նվիրատուները մեզ միջոցներ են հատկացնում և խնդրում ընդունել դրանք այնպիսի գործողության տարածքների պարագայում, ինչպիսին Փոքր Ասիան է, մենք, անկասկած, վստահություն ենք հայտնում, սակայն Կարմիր խաչն ուրիշներից միջոցներ կամ գումար չի խնդրում: Այլ կազմակերպություններ դիմում են այդ քայլին՝ հայտարարելով, որ աշխատանքն իրականացվելու է իրենց պատասխանատվության ներքո: Երբ այդ որոշումը կայացված է, այլևս հետդարձի ճանապարհ չկա, որքան էլ որ ջանքեր չգործադրվեն ցանկալի արդյունքի հասնելու համար:

Անցած տարվա նոյեմբերին (1895 թ.), երբ բազմաթիվ գրավոր խնդրանքներ ներկայացվեցին և մանրամասնորեն քննվեցին, հայտնի Հայ օգնության կոմիտեների ներկայացուցիչները ժամանեցին Վաշինգտոն՝ իրենց անձնական կոչն այդ ջերմեռանդ խնդրանքներին

միացնելու նպատակով: Երբ պայմանական համաձայնություն ձեռք բերվեց, քննարկման դրվեց միջոցներին վերաբերող խնդիրը, որն ուղեկցվեց հետևյալ հարցով.

«Տիկի՛ն Բարտոն, ի՞նչ եք կարծում, որքա՞ն գումար անհրաժեշտ կլինի հայերին օգնություն տրամադրելու համար»:

Հարցին պատասխանեց մեկ ուրիշը. «Պարոնա՛յք, Դուք կապ եք պահպանում մի շարք միսիոներական խորհուրդների, բանկերի և այլ խոշոր կառույցների և ընկերությունների հետ: Ըստ ձեզ՝ որքա՞ն գումար է անհրաժեշտ օգնության համար»:



Ամերիկյան Աստվածաշնչյան ընկերության շենքը Սամսունում

Խորհրդակցելուց հետո պատշաճ գումար առաջարկվեց 5.000.000 դոլար: Կլարա Բարտոնին հարցրին՝ արդյոք Կարմիր խաչը դրան համաձայն է: Նա, մեղմորեն ժպտալով, պատասխանեց, որ կարծում է 5.000.000 դոլարը կբավականացնի: Քանի որ կոմիտեներն ակնհայտորեն առերեսվեցին գումարը հայթայթելու դժվարությունների հետ, բազմաթիվ հանդիպումներ տեղի ունեցան և այլ գումարների վերաբերյալ առաջարկներ հնչեցին: Տիկին Բարտոնը հավանության էր արժանացնում դրանցից յուրաքանչյուրը: Այդ գումարը 5.000.000-ից հասցվեց 500.000 դոլարի՝ երաշխավորված գումարի հետ միասին, այնուհետև 100.000 դոլարի՝ 400.000 երաշխավորված գումարով և այսպես շարունակ, մինչև որ կանգ առան 50.000 դոլարի վրա աշխատանքները սկսելու համար: Այդ փողը պետք է պատրաստ լիներ Կարմիր խաչի Կ. Պոլիս ժամանելուն պես: Կարմիր խաչի նախագահը և մի քանի աշխատակիցներ ժամանեցին Կ. Պոլիս 1896 թ. փետրվարի 15-ին, սակայն 50.000 դոլարը փոխանցվեց միայն այդ տարվա ապրիլի վերջին: Վերոնշյալ փաստերը ներկայացվում են լոկ ցույց տալու համար այն դժվարությունները, որ կոմիտեները հաղթահարել էին՝ այդ գումարը հայթայթելու նպատակով:

Որպես ընդհանուր ծանոթություն, միգուցե, անտեղի չէր լինի նկատել, որ օգնության ամբողջ աշխատանքը կառավարվում և վարվում է զինվորական կարգապահությամբ՝ բացառելու շփոթության որևէ հնարավորություն, քանի որ Կարմիր խաչն աղետի գոտում միակ կազմակերպված մարմինն է: Ուստի, որտեղ որ կազմակերպությունն ունի հսկողություն, տիկին Բարտոնը անձնական վերահսկողության տակ է պահում բոլոր բաժինները. ֆինանսական բաժնում ստանում է և փոխանցում է ամբողջ դրամագլուխը, թղթակցության բաժնում բացում է բոլոր նամակներն ու ուղղություն տալիս պատասխանները գրելիս, օգնության աշխատանքների վայրերում նա հանձնարարում է աշխատողներին ստանձնել այնպիսի պարտականություններ, որոնք առավել համապատասխանում են նրանց տարբեր ունակություններին, պահանջում է ամեն օր զեկուցել՝ հնարավորության դեպքում, տալիս է հետագա հրահանգներ, պաշարների բաժնում պահանջում է բոլոր նյութերի վերաբերյալ ճշգրիտ զեկույցներ և տալիս դրանք տնօրինելու հրահանգներ:

Ջորջ Հ. Փուլմընը Կ. Պոլիս, օգոստոսի 1, 1896 թ.

Ֆինանսական հաշվեկշիռը 1896 թ. Փոքր Ասիայում տրամադրած ծառայությունների և օգնության վերաբերյալ

Փոքր Ասիայում օգնության աշխատանքներին վերաբերող Ամերիկյան ազգային կարմիր խաչի հաշվետվությունը

Մուտքեր	Գումարը՝ թուրքական լիրայով
Օգնության ազգային կոմիտե	14.784 51
«Դը Նյու Ինգլենդ» օգնության կոմիտե	5.667 25
«Դը Վուսթըր» օգնության կոմիտե	402 18
Կանանց օգնության կոմիտե, Չիկագո	922 50
«Ֆիլադելֆիայի բարեկամները»՝ Ասա Ս. Ուինգի միջոցով	481 69
Նյուարքի բնակիչ՝ Չ. Հ. Սթաութի միջոցով	674 65
Միլթընի բնակիչ, հյուսիսային Դակոտա	4 66
Սբ. Գեորգ եկեղեցի՝ Չ. Հ. Ստաութի միջոցով	40 06
Ռենսըմ Փոսթ, Գ. Ա. Ռ., Ուելս, Մինեսոտա	2 95
«Դը Դեյվընփորթ», Այովա, օգնության կոմիտե	54 78
Ժենի ամերիկացի կանայք, Շվեյցարիա	5 85
Տիկին Ֆիլիփս, միսիոներական դպրոց, Բալիսորի, Հնդկաստան	13 20
Պարոն և տիկին Գալբրայթ, Թերենքըմ, Փենսիլվանիա	3 30
«Սեյլըրս Ռեսթ», Ջենովա, Իտալիա	2 33
Չեսթըրի բնակիչ, Նյու Ջերսի	02
Տիկին Մեյհեմ Ուինթըր, Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա	1 14
Ամերիկյան ազգային կարմիր խաչ (հատուկ)	3.376 66

Ընդամենը՝ 26.437 73

Ելքեր	Գումարը՝ թուրքական լիրայով
Հեռագրեր	245 12
Երկրի ներքին շրջաններ ուղարկված գումար	18.965 70
Ընդհանուր օգնության առաքելություններ	2.917 81
Բժշկական օգնության առաքելություններ	543 68
Աշխատավարձերի հաշիվ	421 20
Ընդհանուր ծախսերի հաշիվ	138 02
Կարմիր խաչի գլխավոր գրասենյակի կողմից գործողության տարածքում իրականացված աշխատանքներ	235 05
Գրենական պիտույքներ և տպագրություն	128 79
Ճանապարհային և պահպանման ծախսերի հաշիվ	542 36
Որբ երեխաներին հատկացված նվիրատվություններ	100 00
Ու. Ու. Փիթի կողմից պահվող արտակարգ կարիքների համար նախատեսված միջոցներ	2.200 00

Ընդամենը՝ 26.437 73

Կլարա Բարտոն, գանձապահ
Ջորջ Հ. Փուլմընն, ֆինանսների քարտուղար
Ջեռ Քյունզել, խորհրդատու-հաշվապահ

Ուշադիր ուսումնասիրելով Փոքր Ասիայում օգնության աշխատանքներին առնչվող Ամերիկյան ազգային կարմիր խաչի հաշվեմատյանները, հաշիվներն ու ստացականները՝ հաստատում եմ, որ դրանք բոլորը ճիշտ և անթերի են:

Կ. Պոլիս, օգոստոսի 1, 1896 թ. Ջորջ Քյունզել, հաշվապահ.
Ադմինիստրեյշն Օտոման Փաբլիք Դեբ



Յորենի կապոց



Անպետք իրերը բեռնելու ձև

Քուրդ կինը խնոցի հարելիս

Հացահատիկի բերքահավաք

Թոնիր



Սղոցարան



Փայտամշակում

Եփելու եղանակ

Բեռնափոխադրման ձևեր և աշխատանքային մեթոդներ (Ջ. Բ. Հաթելի գծանկարներից)



ԿԼԱՐԱ ԲԱՐՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՍՍԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆՊԱՍՏԱՍՏՈՒՅՑ
ԱՌՍԲԵԼՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԵԼՈՂ ՔԱՐՏԵԶ, 1896 Թ.

ԱՆԱՏՈԼԻԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԱՇՏԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

Զ. Բ. Հաբել, բ. գ. դ., դաշտային ընդհանուր գործակալ
Է. Մ. Ուիսքար, հատուկ դաշտային գործակալ
Չ. Ք. Վուդ, դաշտային հատուկ գործակալ
Այրա Հարիս, բ. գ. դ., Զեյթունում և Մարաշում
բժշկական օգնության պատասխանատու բժիշկ

ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ԴԱՇՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ Ջ. Բ. ՀԱԲԵԼԻ (Բ. Գ. Դ.) ՁԵԿՈՒՅՑԸ

Նախագահ Կլարա Բարտոնին

Խոսելով Փոքր Ասիայում իրականացվող օգնության աշխատանքների մասին՝ թույլ տվեք սկզբից անդրադառնալ Կ. Պոլսին: Մենք այնտեղ զբաղված էինք օգնության համար անհրաժեշտ ապրանքների, վրանային, խոհանոցային պարագաների ընտրությամբ և ձեռքբերմամբ, ուղևորության նախապատրաստական աշխատանքներով, ինչպես նաև բանիմաց թարգմանիչների վարձակալությամբ: Այդ ընթացքում մենք սպասում էինք անհրաժեշտ պաշտոնական փաստաթղթերի հաստատմանը շարունակելու մեր աշխատանքները: Չնայած դեռ չէինք ստացել սուլթանի՝ Փոքր Ասիա մուտք գործել թույլատրող *հրամանագիրը*, ես, բնականաբար, սկսեցի առաքել գնված ապրանքների առաջին մասը: Դրանք բարձվեցին շոգենավի վրա և ամենաապահով երթուղիով հասցվեցին Ալեքսանդրետի նավահանգիստ: Այստեղից ապրանքները պետք է բարձվեին ուղտերի վրա և պահակախմբի ուղեկցությամբ առաքվեին երկրի այլ շրջաններ, իսկ մեր աշխատակիցները հետևելու էին նրանց և ներկա էին լինելու օգնության տրամադրման աշխատանքներին: Ուստի ես թարգմանիչ Մեյսընի ուղեկցությամբ մարտի 10-ին մեկնեցի Կ. Պոլսից՝ հասնելով Իզմիր, Լաթաքիա, Մերսին և Տրիպոլի, ապա մարտի 18-ին՝ Ալեքսանդրետ: Մեր հյուպատոսության գործա-

կալ Դենիել Ուոքերի և Ջոն Ֆալանգայի օգնությամբ սկսեցի քարավաններ պատրաստել՝ առաքելու ապրանքներն Այնթափ. այդ քաղաքը հարավային գործողության տարածքի կենտրոնականն էր: Մինչ քարավանները պատրաստ կլինեին, իսկ ուղևորության համար համապատասխան ձիերը՝ առանձնացված, պարոն Ուիսթարն ու Վուդը թարգմանիչների ուղեկցությամբ շոգենավով ժամանեցին Կ. Պոլսից: Այնթափի (ամերիկյան) քոլեջի նախագահը՝ պատվելի դոկտոր Ֆուլերը, նույնպես ժամանել էր իր ընկերների հետ Այնթափից, նա պետք է անմիջապես վերադառնար շոգենավով: Հաջորդ առավոտ մենք միասին ճանապարհ ընկանք՝ պահակախմբի ուղեկցությամբ: Երբ Ալեքսանդրետում էինք, այնտեղ խուճապ կար, չնայած այն փաստին, որ անգլիական, ֆրանսիական, թուրքական և ամերիկյան ռազմանավերը հանգրվանում էին նավահանգստում: Մեր ժամանելու նախորդ գիշերը Քըրք-Խանում, որ ցամաքային ճանապարհորդության առաջին կանգառն էր, հնչում էին գյուղը թալանելու և բնաջնջելու ապառնալիքներ: Քիլիսում մարդիկ սարսափած էին վերջին ջարդերից: Մենք դոկտոր Ֆուլերի հետ այցելեցինք այս քաղաքի վիրավորներին, որոնք գտնվում էին Այնթափի քոլեջի բժշկի հուսալի խնամքի տակ: Սակայն վերջինս չուներ դեղորայք, վիրահատական հագուստ և հարմարանքներ: Մենք նրան ուղարկեցինք արդեն առաքված ապրանքներից բոլոր անհրաժեշտ պաշարները:

Այնթափը, ուր ամերիկյան դպրոցի, քոլեջի, ճեմարանի և հիվանդանոցի շինությունները առանձնանում էին քաղաքային այլ շենքերից, մեզ հիշեցրեց հայրենիքի մասին: Հարյուրավոր աշակերտներ, ովքեր արագորեն դուրս էին եկել փողոցներ՝ ողջունելու սիրելի նախագահին, դիմավորեցին Կարմիր խաչի արշավախմբին: Դոկտոր Ֆուլերն ամենայն անկեղծությամբ առաջարկեց մեզ հյուրընկալել իր տանը, սակայն քանի որ մենք դեռ օտարազգիներ էինք մի օտար երկրում, նախընտրեցինք ապաստանել իջևանատանը: Այնտեղ ավելի շատ հնարավորություն կունենայինք մարդկանց հետ ծանոթանալու, զա-նազան անհրաժեշտ տեղեկություն ստանալու՝ օգնություն հատկացնելիս լավագույն արդյունքների հասնելու հարցում: Մենք բավական երկար մնացինք այս քաղաքում՝ տեղի և հարևանի բնակավայրերի բնակիչների կարիքներին ծանոթանալու և ստույգ ցուցակներ ստանալու նպատակով: Դրանցում նշված էին այն արհեստավորների անունները, որոնք գյուղատնտեսական գործիքների և սարքավորումների կարիք ունեին իրենց առևտուրն ու գործունեությունը

շարունակելու համար: Մենք տրամադրեցինք նրանց մթերք, հագուստ, նոր գործվածքներ՝ դրանցից հագուստ պատրաստելու համար, թել ու ասեղ, մատնոցներ, դեղորայք և վիրահատական պարագաներ: Այնթափը հայտնի է իր միսիոներական հիվանդանոցով, ուր իրենց ծառայություններն են մատուցում վիրաբույժ դոկտոր Շեփլը-ը և բժիշկ դոկտոր Հեմիլթընը: Այն հայտնի է նաև միսիոներ-ուսուցիչների ամերիկյան հզոր համայնքով, բացառությամբ ֆրանցիսկյան եղբայրների, ովքեր առանձնակի հրաշալի աշխատանք են կատարում: Վանահորը սպանել էին Զեյթունի մոտ: Մթերքն առանձնացվեց և ուղարկվեց Ուրֆա, Այնթափ, Մարաշ և այլ ուղղություններով, իսկ որոշ քանակությամբ մթերք դոկտոր Ֆուլերի մեծահոգության շնորհիվ պահվեց քոլեջի շենքում, որպեսզի առաջվեր սնհրաժեշտության դեպքում: Մենք Ուրֆա ուղարկեցինք հումքանյութ և գործիքներ հողը մշակելու համար, ինչպես նաև ասեղ և թել, մատնոցներ, բամբակյա և բրդյա ապրանքներ՝ հագուստ գործելու համար: Այդ քաղաքում տիկին Շատակը բավական հաջող արդյունաբերական աշխատանքներ էր իրականացրել: Ի հավելումն նոր ապրանքների՝ Մարաշ և Զեյթուն ուղարկեցինք պատրաստի ապրանքներ, վիրահատական պարագաներ և դեղորայք:

Պարոն Վուդը և Ուիսթարն Այնթափից ուղղություն վերցրին դեպի արևելք, ուր գտնվում էին ամենակարիքավոր բնակավայրերը, այնուհետև՝ Խարբերդից դեպի հյուսիս: Ձեր հեռագիրը, որում զեկուցում էիք Մարաշում և Զեյթունում տիֆի և դիզենտերիայի դեպքերի մասին, պատճառ եղավ, որ մենք շարժվեինք դեպի այդ քաղաքները՝ պատվելի Լ. Օ. Լիի հետ միասին, ով վերադառնում էր հայրենիք: Երեք օր շարունակ անձրևի, ձյան և ցեխաջրի արգելքները հաղթահարելով՝ հասանք Մարաշ: Այստեղ սպասեցինք այնքան, մինչև ապրանքներով բարձված քարավանները մոտեցան մեզ: Տիֆի, դիզենտերիայի և ծաղիկի տարածման պատճառը քաղաքում խռնված բազմությունն էր: Նոյեմբերի ջարդերից հետո Մարաշը լի էր գաղթականներով, չնայած որ քաղաքի բնակելի տների մեծ մասն այրվել կամ կողոպտվել էր: Շրջակա բնակավայրերը նույնպես թալանվել էին, մարդիկ՝ սպանվել, գյուղերն՝ ավերվել, իսկ սարսափի մատնված փրկվածները խմբվել էին քաղաքում պաշտպանվելու համար և մինչ այժմ վախենում են վերադառնալ:

Ջուրը քիչ էր, եղանակը տաքանում էր, բանտերում արդեն կային տիֆի, դիզենտերիայի ու ծաղիկի դեպքերը: Համաճարակն ընդհա-

նուր տարածում էր գտնում: Ճիշտ է, քահանաները *պահանջում էին մայրերից ծաղիկով հիվանդ երեխաներին* եկեղեցի *չբերել*, սակայն տիֆն ու ծաղիկը շարունակվում էին տարածվել, իսկ բժշկական վերահսկողության կարիքը մեծանում էր: Մարաշի կայանում գտնվող միսիոներների կանանց՝ տիկին Լիի և Մակքալլմի ջանքերով հիմնվեց հիվանդանոց, որն ուներ անթիվ հաճախորդներ, սակայն զուրկ էր միջոցներից, որոնք անհրաժեշտ էին բժիշկներին վճարելու կամ դեղորայք գնելու համար: Դեղամիջոցների խնդիրը մի կողմ դրվեց և միջոցներ հատկացվեցին Ամերիկայում կրթություն ստացած տեղաբնակ մի բժշկի (ով նոր էր ապաքինվել տիֆից)՝ պատասխանատվություն ստանձնելու հիվանդանոցի խնամքի և արտահիվանդանոցային բուժօգնության համար: Նա արդյունավետ աշխատանք էր իրականացնում, երբ մենք Մարաշում էինք: Պայմանավորվածություն ձեռք բերվեց պարոն Մակքալլմի հետ, նա պետք է պատվիրեր դարբիններին գործիքներ պատրաստել, այնուհետև տրամադրեր դրանք արհեստավորներին և գյուղացիներին: Մենք նրա հետ ճանապարհ ընկանք, որպեսզի սկսեինք այդ գործը՝ տրամադրության տակ ունենալով այն 500 լիրա գումարը, որ Դուք ուղարկել էիք մեզ՝ հոգալու սեփական ծախսերը: Այդ ժամանակ դոկտոր Այրա Հարիսը, ում հրավիրել էիք Սիրիայի Տրիպոլի քաղաքից, իր օգնականների հետ միասին ժամանեց Զեյթունի գործողության տարածք: Դոկտոր Հարիսն իր լեփ-լեցուն բժշկական արկղերն ու վիրահատական պարագաները տանում էր իր հետ՝ բարձած քարավանի ջորիների վրա, և քանի որ այլ վայրերում մեր կարիքն ավելի շատ էր զգացվում, մենք անմիջապես Բեսնի քաղաքով մեկնեցինք Ադիյաման՝ անցնելով Բազարջիկ և Քումաքլեջերքլե քաղաքները: Անցանք երեք օրվա լեռնային ճանապարհ: Երբ կանգ առանք՝ գիշերելու մի քրդաբնակ գյուղում, մեր աշխատակիցը բարյացակամորեն տեղեկացրեց մեզ, որ «կարող ենք անվարձահատույց պատվիրել այն ամենը, ինչ ցանկանում ենք»: Սակայն մենք նրան հասկացրինք, որ *մենք* վճարում ենք այն ամենի համար, որ ստանում ենք, քանի որ կարիքները չափից դուրս շատ չեն: Այս երկրի գյուղերում զինվորներին անվճար հյուրընկալելու սովորություն կա: Երբ մենք Բազարջիկում հետաքրքրվեցինք տարածքի սանիտարական վիճակով, մի պաշտոնյա ասաց, որ քաղաքում հիվանդության դեպքեր չեն գրանցվել, *բացի մի քանի երեխաներից, ովքեր հիվանդ էին ծաղիկով*: Դրանց թվում էր իր երեխան, ում ներկայացրին որպես ապացույց:

Բեսնին փրկվել էր թալանից և կոտորածից Յուչաբ փաշայի, Օսման Զաղեի, Մահունդ բեյի և մի քանի այլ թուրք բեյերի ջանքերով, սակայն մերձակա գյուղերը հարձակման էին ենթարկվել և որոշակիորեն տուժել: Որոշ կանայք փախուստի էին դիմել և ապաստանել Բեսնիում, ուր դեռ բնակվում էին: Մենք որոշակի բժշկական օգնություն ցույց տվեցինք այս քաղաքում և թողեցինք ծայրահեղ անհրաժեշտության համար նախատեսված չափավոր գումարը ապահով ձեռքերում: Ինչպես մեր այցելած բոլոր մեծ ու փոքր բնակավայրերում, այնպես էլ Բեսնիում արժանացանք պաշտոնյաների ջերմ և բարյացակամ ընդունելությանը: Այս քաղաքում մարդիկ բուժօգնության կարիք չունեին, բացառությամբ երկու դեպքի: Մինչև քաղաք հասնելը մենք իմացանք, որ մոտակայքում ֆեոդալական պատերազմ էր ընթանում, և երբ զինվորական հրամանատարն իմացավ, որ մենք ուղևորվում էինք Ադիյաման, նա միջամտեց՝ ասելով, թե չի կարող պատասխանատվություն կրել մեզ այնտեղ ուղարկելու համար: Նա ասաց, որ անմիջապես հարյուրավոր զինվորներ է ուղարկել այդ ճանապարհի ուղղությամբ՝ ճնշելու ապստամբությունը: Ճանապարհը վտանգավոր էր, սակայն նա առաջարկեց տրամադրել մեզ փորձառու սպաներ, ովքեր ուղեկցելու էին մեզ Մալաթիա տանող մեկ այլ երթուղով: Մենք ընդունեցինք այս առաջարկությունը և կտրեցինք ավելի քան չորս օրվա լեռնային ճանապարհ, որն անցնում էր Փերվարի, Մյուրգու և Գյոզանա գյուղերով: Հասանք պտղատու այգիների քաղաք Մալաթիա, որ նախկինում ունեցել է 45.000 բնակչություն: Հաղորդում էին, որ մոտ 1500 տուն կողոպտվել էր և 375-ը այրվել, հարյուրավոր մարդիկ սպանվել: Բոլոր դասերին պատկանող մարդիկ դեռ սարսափած էին: Միսիոներներն ամերիկացի ընկերներից գումար էին ստացել, սակայն հատկացումն ուշացել էր մի քանի շաբաթով փոստային բաժանմունքում ինչ-որ փաստաթղթային խնդիրների պատճառով և երբ մենք ժամանեցինք, գումարը նոր էր փոխանցվում: Մենք այս քաղաքում գումար թողեցինք հատուկ կարիքների, տիֆից տառապող հիվանդների համար և, խոստանալով վերադառնալ, շարունակեցինք մեր ճանապարհը դեպի մեր նպատակակետը: Եվս երկու օրվա ճանապարհ անցանք, Իզոլիում հատեցինք Եփրատ գետը, հասանք Խարբերդ և մեր ժամանակը հազիվ կհերիքեր հանդիպելու երկրորդ առաքելությանը, որ ժամանել էր մեզնից ընդամենը երկու ժամ առաջ: Մալաթիայի բնակիչները ոտքի ելան՝ ողջունելու Կարմիր խաչին: Ճանապարհները լի էին մարդ-

կանց խմբերով, փողոցներում, պատուհանների մոտ, տանիքների վրա, ամեն տեղ մարդկանց բազմություն էր և բոլորի շուրթերին՝ ողջույնի խոսքեր: Միսիոներական կազմակերպության և Կենտրոնական Թուրքիայում ամերիկյան քոլեջի հիմնադիր պատվելի դոկտոր Ուիլերն ասաց, որ մենք ոչ միսիոներ ամերիկացիների երկրորդ խումբն էինք, որ տեսել էինք Խարբերդում քառասուն տարվա ընթացքում: Միսիոներները մեզ շատ ջերմորեն դիմավորեցին: Չնայած նրանց ևս թալանել էին, տների մեծ մասը հրի էր մատնվել, նրանք մեզ բարյացակամորեն առաջարկեցին ապաստանել իրենց դեռ կանգուն տանիքների տակ, օգտվել իրենց սեղանից այնքան երկար, որքան դրանք կծառայեին: Մենք կրկին զգացինք մեզ ինչպես տանը, բայց և ապշում էինք՝ գիտակցելով, որ հայրենիքից գտնվում էինք 8000 մղոն հեռավորության վրա, իսկ մոտակա շոգենավին կարելի էր հասնել ձիով՝ 15 օրում, այդ շոգենավը կարող էր կա՛մ տանել մեզ տուն, կա՛մ էլ մեր նամակը հղել արտաքին աշխարհին: Մեզ սկզբից զգուշացրել էին, որ Խարբերդը երկրի ներքին շրջաններից ամենաշատն էր տուժել, և մենք պատրաստվեցինք համակարգված աշխատանք սկսել: Պարոն Ուիսթարը պատասխանատու էր Չարսանջակի գավառի (Բերրի քաղաքը՝ առաքելության կենտրոնական), Խարբերդի հարթավայրի, հետագայում Աղին քաղաքի մերձակա գյուղերի համար: Պարոն Վուդը պատասխանատու էր Բալուի գավառի և 200 գյուղերի, Դիարբեքիրի նահանգում գտնվող Սիլվանի գավառակի համար, որի մեջ մտնում էր 160 գյուղ: Բալուն և Ֆարկինը առաքելության կենտրոնակայաններն էին: Մինչ մենք զբաղված էինք այս համակարգման աշխատանքներով, ստացանք Ձեր՝ մարտի 1-ին ուղարկված հեռագիրը. «Տիֆն ու դիզենտերիան մոլեգնում են Արաբկիրում: Կարո՞ղ եք բժիշկների հետ դեղորայք ուղարկել Խարբերդ: Խնդրում եմ ուսումնասիրեք խնդիրը»: Մեր հարցման արդյունքում պարզվեց, որ Արաբկիրում կային 1000 հիվանդ և բազմաթիվ տուժածներ: Ըստ էության, ինձ բաժին էր ընկել այս գործողությունների տարածքը:

Լրացուցիչ բուժօգնություն ստանալու նպատակով հեռագրեցինք բազմաթիվ կենտրոններ, սակայն ապարդյուն: Մենք գտանք Ամերիկայում կրթություն ստացած տեղաբնակ մի բժշկի: Դոկտոր Հինտլյանն էր Խարբերդից, ով պատրաստ էր մեկնել: Տիկին Քերըլին Բուշը և Միսիոներական կազմակերպության ներկայացուցիչ Սեյմուրը իսկական խիզախություն ցուցաբերեցին՝ պատրաստակամություն

Մարաշ (Է. Մեյսոն)

Թուրքական գյուղ (Է. Մեյսոն)

Մինամոտ. Խարբերդի բաղերից մեկը

Ոստիկան (Է. Մեյսոն)

Ճանապարհային պատահար (Է. Մեյսոն)

Իջևանատուն (Է. Մեյսոն)

Դոկտոր Հաբելն ու պահակախումբը (Է. Մեյսոն)

հայտնելով ուղեկցել առաքելությանը: Քանի որ նրանցից միայն մեկը կարող էր ուղեկցել, ընտրեցինք տիկին Բուշին: Երբ մտածում ես, որ այս կինը փոքրամարմին էր ու թուլակազմ, հազիվ հարյուր ֆունտ քաշով, զգայուն բնավորությամբ, նրբակազմ կառուցվածքով, կրթված և երիտասարդ տարիներին բարեկեցիկ պայմաններում ապրած, լուրջ մտավախություն էր առաջանում, թե ինչ ծանր բեռ է նա պատրաստվում վերցնել իր ուսերին: Սակայն ամենօրյա շփումներից համոզվեցինք, որ այս կինը պողպատյա ամրություն ուներ, պողպատ, որ հղկվել էր փորձառության կիզիչ կրակներում, ինչն էլ մեզ ուսուցանում է, թե ինչքանով գիտակցությունը կարող է գերիշխել հողեղեն մարմնին:

Առաջին գիշերը, ինչպես հաճախ թելադրում է այդ երկրի սովորությունը, մենք քնեցինք ախոռում, ուր կային երկու ձի և ուրիշ ավելի փոքրիկ կենդանիներ: Երկրորդ օրը, երբ հատում էինք Եփրատը Կապան Մադենում, մեծ փայտյա լայնաբերան լաստանավը դեմ առավ մի քարի՝ արագընթաց հոսանքի մեջտեղում: Մարդկանց, ձիերի և ուղեբեռների ծանրությունից այն գրեթե շրջվել էր: Նավավարները հնարավորություն չունեին հասնելու հանդիպակաց ափը, և մենք գտնվում էին արագընթաց հոսանքի մեջ, որը մեզ սրընթաց կերպով տանում էր դեպի կիրճը և ներքևում գտնվող հորձանուտները: Ես հնարավորին չափ անհոգ նայեցի տիկին Բուշին, սակայն նկատեցի, որ նա այնքան հանգիստ էր, կարծես սա ամենօրյա պատահար լիներ, կամ էլ նա մանկությունից սովոր է եղել նման դեպքերին: Մենք գիտեինք, որ սովոր չէր, պարզապես նա ապրել էր երկրում բավական երկար և չէր վախենում այն ամենից, որ կարող էր տեղի ունենալ: Սակայն քարափի մոտ մենք մոտեցանք մեկ այլ ժայռի և բեռնաթափեցինք լաստանավը: Մենք բարձրացանք անդունդի եզրին՝ շարժվող քարերի, սայթաքուն գետնի և խորդուբորդ ժայռերի վրա: Յուրաքանչյուրը քայլում էր ձիու առջևից, որին հետևում էին բեռնակիր գրաստները: Այսպես վերադարձանք այնտեղ, ուր պետք է բեռնաթափեինք մեր ապրանքները, եթե ոչինչ չպատահեր: Երկրորդ օրը սառը, հորդառատ անձրևի տակ ճանապարհ ընկանք ավերված Արաբկիր քաղաքը, սակայն, չնայած անձրևին, հարյուրավոր մարդիկ կանգնած էին փողոցներում և մեզ խաղաղություն էին մաղթում, ողջունում նրանց, ովքեր եկել էին օտար երկրից՝ տառապյալ ժողովրդին, հիվանդներին և կարիքավորներին օգնելու նպատակով: Անձրևում էր, երբ հասանք մի տեղաբնակ հովվի տուն, որը թուրք

զինվորական սպայի շնորհիվ չէր ավերվել, դատարկվել էր այնտեղ հանգրվանող գաղթականներից և տիֆով հիվանդներից: Տունը տրամադրվելու էր մեզ որպես ապաստարան:

Գրեթե ողջ Արաբկիրն ավերված էր, միայն երևում էին այն քարակույտերը, որտեղ ժամանակին կանգուն տներ կային: 1800 տներից միայն մի քանիսն էին կանգուն մնացել: Շուկան, ինչպես նաև կացարաններն ավերված էին, և մարդիկ, կողոպտված, անտուն, խռնվել էին այդ մի քանի տներում: Նրանք հիվանդ էին տիֆով: Մեզ ասացին, որ արդեն 600 հոգի մահացել էր այս հիվանդությունից, իսկ երկրում այդ շրջանի միակ բժշկին ձերբակալել էին: Հետագայում տեղեկացանք, որ երբ օգնությունը տեղ էր հասել, հիվանդության դրական միտում էր նկատվել՝ սկսած այն պահից, երբ մարդիկ իմացել էին մեր ժամանման մասին: Տիկին Բուշը մեզ հետ ուղիղ այցելեց հիվանդասենյակներ. կնոջ ներկայությունն ուրախացրեց և գոտեպնդեց հիվանդներին: Այցելում էինք օրական հարյուրավոր հիվանդների: Տիֆով հիվանդների առաջնահերթ կարիքները բավարարելուց հետո հոգացինք նրանց երկար ժամանակ անտեսված վիրահատական կարիքները և բազմաթիվ կյանքեր փրկեցինք: Գործի դրված բժշկական և վիրահատական ջանքերը բավարար արդյունքներ տվեցին, որոնք դոկտոր Հինդլյանը կներկայացնի առանձին զեկույցում՝ կազմված իր ամենօրյա գրառումների հիման վրա:

Մեր ժամանելուն պես առաքելական եկեղեցու և դպրոցների շինությունները, որոնք անվնաս էին մնացել, մեր տրամադրության տակ էին՝ որպես հիվանդանոցներ: Այս սենյակները հիանալիորեն հարմարեցված էին այդ նպատակին, սակայն մենք, ընտրելով և վարձատրելով կարիքավոր մարդկանց՝ որպես օգնականների և խնամակալների, հասկացանք, որ այդ եղանակով ավելի լավ կարող էինք խնամել հիվանդներին, քան փորձեինք տանել հիվանդանոց, ուր հիվանդներին խմբելու հետևանքով հիվանդությունների թիվը կաճեր: Լավ արդյունքի հասնելու միակ միջոցը վարձատրությունն էր, այդուհանդերձ, մենք ոչ թե հիվանդանոցներ էինք պատրաստում, այլ վարձում էինք ունակ, առողջ և կարիքավոր կանանց, նրանց տալիս անհրաժեշտ հրահանգներ և հանձնարարում խնամել հիվանդ ընտանիքներին, նաև տրամադրում էինք այլ տեսակի օգնություն: Մեկ պիտանը, որ կինը վաստակում էր օրական աշխատանքի դիմաց, բավարար էր՝ գոյատևելու, իր ընտանիքը կերակրելու և ցուցաբերվող անհրաժեշտ ծառայությունների միջոցով ընտանիքի հիվանդ ան-

դամների կյանքը փրկելու համար: Անհրաժեշտության դեպքում հիվանդներին տրամադրվում էին անկողնային պարագաներ:

Անապահով ընտանիքներին տրամադրվել էր ոչխար կամ այծ, որոնք համարվում էին նրանց սեփականությունը, իսկ հետագայում նրանց թիվը կկրկնապատկվեր: Որպես լրացուցիչ նվիրատվություն կբաժանվեին քիչ քանակությամբ հավեր, իսկ որպես սնունդ օգտագործվող ձուն կգերազանցեր իրենց արժեքը: Սա մի փոքրիկ ներդրում էր, որ տեսակային և արժեքային առումով պետք է բազմապատկվեր, երբ հավերը թուխս նստեին՝ ճտեր հանելու: Բժշկական օգնության տրամադրմանը զուգընթաց իրականացվում էր նաև այլ տեսակի օգնություն: Մեր ժամանելուն պես Խարբերդի դարբիններին, ատաղձագործներին, պղնձագործներին, քարտաշներին, քարագործներին և այլ վարպետներին պատվիրել էինք գործիքներ պատրաստել: Դարբինները սկսել էին պատրաստել մանգաղներ խոտ կտրելու և բերք հնձելու համար, բահեր, գութաններ և այլ գյուղատնտեսական գործիքներ: Մնացած արհեստավորներին հանձնարարվել էր պատրաստել ճախարակներ ընչազուրկ կանանց համար, ովքեր դրանց միջոցով կարող էին վաստակել իրենց ապրուստը: Մյուս արհեստավորները պատրաստում էին մանածագործական հաստոցներ: Ասում էին, թե նախկինում յուրաքանչյուր բնակչի հաշվարկով քաղաքում կար 1200 մանածագործական հաստոց, բացառությամբ 40 հոգու: Արաբկիրը բամբակի տեղական արդյունաբերության գլխավոր կենտրոնն էր, և եթե բնակիչն ուներ մանածագործական հաստոց, որ արժեր 3 մեջիդիե (մոտ 2.50 դոլար), ապա նա կարող էր վաստակել իր սեփական ապրուստը: Առաքվեցին և գյուղացիներին տրամադրվեցին որոշակի քանակությամբ դաշտային և բանջարանոցային մշակաբույսերի սերմնացուներ: Այն գյուղերին, որոնք չունեին անասուն, հատկացրինք եզ՝ դաշտերը վարելու համար: Եզների հետ հաճախ տրամադրում էինք կովեր՝ հրահանգելով գյուղացուն կովերին և եզներին բանեցնել միայն խիստ անհրաժեշտության դեպքում, անգամ այն պարագայում, երբ կովերը կաթ էին տալիս ընտանիքին: Այսպիսով, գյուղացին, ծախսելով մեկ անգամ, կապահովեր կրկնակի արդյունք: Դեղագործ Մելքոն Միրանշահյանը բարյացակամորեն առաջարկեց մեզ իր ծառայությունները, և մենք որոշեցինք նրա հետ ուսումնասիրել հիվանդությունների հատուկ դեպքերը և շարունակել զբաղվել հիվանդներով, երբ մեր անհրաժեշտությունն այլևս չզգացվեր գործողության տա-

ուածքում: Այնուհետև զգալով, որ կարող ենք վստահել այս գործը դոկտոր Հինտլյանին՝ մենք տիկին Բուշի ուղեկցությամբ գնացինք Ակռ՝ կազմակերպելու Աղին քաղաքի և հարակից բնակավայրերի օգնության հատկացումը:

Բնականաբար, ընթերցողը կհարցնի, թե ինչպես տրամադրվեց օգնությունը: Մարդկանց երախտապարտությունը հաճախ անսահման է լինում: Եթե Դուք միայն լսեիք այն օրհնանքները, որ շռայլվում էին Ձեր, Կարմիր խաչի և այն մարդկանց հասցեին, ովքեր ամեն տեղ օգնություն էին ցուցաբերել, ապա կգիտակցեիք՝ որքան խորն էին այդ ջերմ և անկեղծ շնորհակալությունն ու օրհնությունները, որոնք ջարդերի դժբախտ վերապրածները կարող էին միայն փոխանցել իրենց օգնություն ցուցաբերած բոլոր մարդկանց: Այդ երախտագիտության խոսքերը հատկապես վերաբերում էին Ձեզ և Ձեր անվանը: Այս ամենից բացի կավելացնեմ, որ հաճախ մարդիկ իրենց երախտագիտությունը հայտնել են մեզ ամայի ճանապարհներին, փուլ եկած տներում, նաև շատ աղբյուրներից ստացված անձնական նամակների միջոցով:

Երբ մոտ վեց մղոն էինք անցել և գտնվում էինք Ակռի ճանապարհին, հանդիպեցինք Ծեփիկ գյուղի առաջնորդներին, որ գալիս էին քաղաք: Իմանալով, որ մենք շուտով հեռանալու էինք՝ գյուղացիներն ուղարկել էին այս կոմիտեին Արաբկիր՝ իրենց շնորհակալությունը հայտնելու հատկացված բոլոր ապրանքների և տրամադրված օգնության համար: Այս հանդիպումը տեղի էր ունեցել սերմնացուները բաժանելուց վեց շաբաթ անց, և երբ մենք մոտեցանք այդ գյուղին, տեսանք, որ մեր տրամադրած սերմնացուները դարձել էին սոխի, կարտոֆիլի, լոբու, վարունգի, սեխի, մեղրադդմի, կարկաժի և այլ մշակաբույսերի կանաչ բանջարանոցներ: Տեսանք նաև կանանց, ովքեր խոտն ու հացահատիկը քաղհան էին անում դաշտում այն մանգաղներով, որ դարբինները պատրաստել էին երկաթից և պողպատից, իսկ մենք տրամադրել էինք դրանք գյուղացիներին: Տղամարդիկ վարում էին՝ օգտվելով մեր տրամադրած գութաններից և եզներից և, չնայած որ նրանց թալանել էին, զրկել ցանկացած շարժական գույքից, տները՝ այրել կամ ավերել, դաշտերում մի տեսակ բարեկեցության շունչ կար, որ վանում էր կարիքի կամ տառապանքի մոբե-ը: Մենք անցանք նախկինում այն փոքր սենյակի կողքով, ուր դպրոցն էր գտնվում: Յուրաքանչյուր երեխա ոտքի կանգնեց և խորը, եռանդաբար խոնարհվեց մեր անցնող խմբի առջև:

Ակնը հին, զարմանալիորեն գեղեցիկ քաղաք է՝ բնակեցված Մոսուլի (Նինվե) ազնվատոհմ ընտանիքների ժառանգներով: Այդ ընտանիքները, որոնք դեռ պահպանում են իրենց արքայական և ազնվատոհմ ծագումը, պարսկական արշավանքի ժամանակ պատսպարվել էին Եփրատի վրա տեղակայված ամրոցում: Ակնի պաշտոնյաներն ասացին, որ ապահով չէ գնալ մեր առաջարկած գյուղերը: Ուստի մենք տեղի շուկայից գնումներ կատարեցինք և ապրանքներն ուղարկեցինք կարիքավոր բնակավայրեր: Ակնի բնակիչները կաշառել էին քրդերին 1500 լիրայով և, հետևաբար, այն մինչև մեր ժամանելու օրն անվնաս էր մնացել, մինչդեռ Ակնի մոտակա բոլոր բնակավայրերն ավերված էին: Մենք նաև պատասխանատու կոմիտեին հատկացրինք գումար ողորմելի վիճակում գտնվող ութ գյուղերի համար, իսկ երբ կարճ ժամանակով գտնվում էինք Ակնում, բժշկական օգնություն տրամադրեցինք մարդկանց՝ որքան որ կարող էինք: Այնուհետև վերադարձանք Խարբերդ:

Մեր վերադարձի ճանապարհին տիկին Բուշն իր հետ Խարբերդ էր տանում մի աղջկա՝ փրկելու նրա կյանքը (մենք հաճախ էինք ունենում նման հանձնարարություններ): Նա ցանկանում էր, որ ես կանգ առնեի իր սիրելի, գեղեցիկ Բելվերեն գյուղի մոտ, որպեսզի գյուղի հաճելի պատկերն իր հետ մտովի տաներ Ամերիկա: Մենք մի ամբողջ օր երկար ուղևորությունից հետո հասանք մեր գյուղը՝ ուշացումներով. առավոտյան չորս ժամ սպասել էին զափթիեին: Դեռ մոտ 12 մղոն կար՝ հասնելու գյուղ և մեր ջորեպանը իջեցրեց մեզ գրաստների մոտ, որպեսզի գիշերեր իր գյուղում: Երկրորդ զափթիեն ուշացել էր երկու ժամով: Այժմ ճանապարհը պետք է շարունակեինք լեռնային կիրճով: Երեկոյան ժամը տասն էր, երբ հասանք գյուղ: Զափթիեն ուղեկցեց մեզ այն գյուղացու տուն, ում պարտականությունն էր ապաստան տալ ճամփորդներին (յուրաքանչյուր գյուղում կար այդպիսի պաշտոնյա): Մենք միասին առաջ շարժվեցինք և զափթիեն թակեց դուռը: Կատաղած շունը հաչաց կտուրից, իսկ հետո ձայնակցեցին գյուղի բոլոր շները: Առաջին կտուրից քիչ ավելի բարձր գտնվող տանիքից մի կին դուրս եկավ և սկսեց խոսել, հետո ծխնելոյզից ձայն տվեց (տաք եղանակին տանիքը ծառայում է որպես հանգստի վայր): Որոշ ժամանակ անց կինը մատնացույց արեց և զափթիեն գնաց ցույց տված ուղղությամբ: Լուսինն ամպերի հետևն էր անցել, շատ մութ էր և ոչինչ հնարավոր չէր հստակորեն տեսնել: Զափթիեն մոտեցավ մի փոքրիկ մարդակերպար կույտի, խփեց

ոտքով, ապա՝ հրացանի կոթով: Որոշ ժամանակ անց կույտի մի մասը բարձրացավ՝ զարմացած, ապշած, շփոթված, անորոշ և անհասկանալի կեցվածքով և հավանաբար, փնտրում էր հարվածողին: Կույտը կոպիտ արտահայտվեց, իսկ զափթիեն՝ էլ ավելի կոպիտ, այնուհետև նրանք սկսեցին հերթով ավելի ու ավելի բարձր խոսել՝ զերծ չմնալով անհրաժեշտ և ոչ անհրաժեշտ ձեռքի շարժումներից: Այնուհետև մարդակերպար կույտը հրամայեց ծառաներին բեռնակիր ջորիներն ու գրաստները տանել տանիք: Երբ ծառաները գործի անցան և դուրս եկան տնից, նա ցանկացավ իմանալ, թե, այնուամենայնիվ, ինչու էինք գյուղ եկել գիշերվա այդ ժամին և արթնացրել իրեն այն պարագայում, երբ կարելի էր գնալ այլ մոտակա վեց գյուղերը: Նա հարցրեց՝ ինչու մենք չէինք գնացել դրանցից որևէ մեկը: Այնուհետև զափթիեն փոխեց իր ձայներանգը և վերաբերմունքը, շատ սիրալիր, համոզիչ և աղերսական ձայնով և վարվելակերպով փորձեց բացատրել, որ ինքը մեղավոր չէր այդ նեղության համար, նա հանձնարարականներ էր ստացել և պետք է ուղեկցեր այդ մարդկանց, չէր կարող չկատարել իր պարտականությունը: Սակայն նրա խոսքը որևէ ազդեցություն չգործեց, և մեզ ասացին, որ այդ գյուղում տեղ չկար մեզ համար: Հնարավոր չէր կացարան գտնել այդ ուշ ժամին, բացի այդ՝ ձիերին կերակրելու համար գյուղում գարի չկար: Մեզ մնում էր միայն գնալ այլ գյուղ և այնտեղ փնտրել ապաստան: Թվում էր, թե մեզ ուղեկցող զափթիեն ուժասպառ էր եղել, նա այլևս ոչինչ չասաց: Ուրիշ գյուղացիներ էլ էին եկել և կանգնած էին այդ պաշտոնյայի կողքին, ով դեռ շարունակում էր պնդել, թե ոչինչ հնարավոր չէր անել: Տիկին Բուշը կամաց հուշեց. «Ոսկի»: Մենք իջանք ձիերից, անփութորեն քայլեցինք դեպի պաշտոնյան և նրա ափի մեջ դրեցինք մի չերեկ (հինգ պիաստրի մետաղադրամ): Նա վերցրեց և շոշափեց դրանք, ապա անխոս հեռացավ: Մոտ տաս բոպեից նա վերադարձավ՝ լույսը ձեռքին: Մեր առջևի փակ դուռը բացվեց, մենք բեռնաթափեցինք մեր գրաստները, փռեցինք մեր սավանները, հեռացրինք գյուղացիների ամբոխը, փակեցինք ախոռի դուռը, միմյանց տեղեկացրինք, որ «կեսգիշերից մեկ ժամ էր անցել», ապա գնացինք քնելու: Սա հաճախակի հանդիպող և սովորական դարձած այն միջադեպերից մեկն էր, որ տեղի էր ունեցել երկրի ներքին շրջաններ ուղևորվելիս:

Խարբերդից մեզ հաջողվեց գործիքներ և անասուն մատակարարել մնացած այն գյուղերին, որոնց չկարողացանք մոտենալ Ակնից:

Այստեղ հանդիպեցինք նաև պարոն Ուիսթարին, ով զբաղված էր Խարբերդի հարթավայրին և մոտակա գյուղերին հնձելու և կալսելու գործիքների տրամադրման աշխատանքներով: Խարբերդի վիլայեթում ավելի քան 200 գյուղ կամ թալանվել, կամ ամբողջությամբ ոչնչացվել էր: Այդ գյուղերից բոլոր դասերին պատկանող բազմաթիվ մարդիկ էին գալիս՝ բժշկական կամ վիրահատական օգնություն ստանալու:

Մենք պատրաստվել էինք աշխատանք իրականացնել նաև Մալաթիայում: Այդ քաղաքում մի քանի շաբաթ առաջ պատվիրել էինք, որ ուղարկված մթերքներն ու դեղորայքը պատրաստ լինեին մեր ժամանելուն պես, սակայն անմարդաբնակ լինելու պատճառով այնտեղ հնարավոր չէր արդյունավետորեն աշխատել: Մոտենում էր Կ. Պոլիս վերադառնալու ժամանակը և հունիսի 27-ին պատրաստ էինք Սև ծովով ճանապարհ ընկնել: Մենք հարգանք ցուցաբերեցինք Խարբերդի կառավարչին, և նա, ինչպես միշտ, մեզ ջերմորեն ընդունեց: Հարցադրումներ արեցինք և բացատրություններ ներկայացրինք, որպեսզի նրան ավելի հասկանալի լիներ Կարմիր Խաչի բնույթն ու նպատակը: Նորին գերազանցությունը նշեց, որ աշխատանքներում ներգրավված մարդիկ հնարավորություն ունեին ծանոթանալու տարբեր երկրների բարքերին, և դրանց շարքում Թուրքիան պետք է որ լիներ այն երկիրը, ուր ամենադժվարն էր աշխատել: Նա ափսոսանք հայտնեց, որ անձամբ շատ քիչ է կարողացել օժանդակել մեր աշխատանքներին և այլն, սակայն մենք հաճույքով նշեցինք, որ նա միշտ կատարել էր մեր խնդրանքը և հաճախ՝ ավելին: Խոսելով մեր աշխատանքներում ներգրավված մարդկանց մասին՝ վստահորեն կարող եմ ասել, որ մենք միշտ հաճույքով կհիշենք Խարբերդի վալիի հետ ունեցած մեր անձնական հարաբերությունները:

Երկրի ներքին շրջաններում հիմնական ուտելիքը և բերքը ցորենն է: Մեզ ասացին, որ այս տարվա բերքը սովորականից շատ է: Եթե հնարավոր լինի բաժանել ցորենը այն բնակավայրերում, ուր գալիք ձմռանը կարիք կլինեն, բազմաթիվ կյանքեր կփրկվեին, իսկ եթե ոչ՝ շատերն անխուսափելիորեն կմահանային սովից: Երբ մենք հեռանում էինք Խարբերդի հովտից, բերքահավաքը հաջողությամբ սկսվել էր և երբ հասանք Եփրատի շրջակայքը, տեսանք, որ այնտեղ բերքահավաքն անգամ ավելի աշխույժ կերպով էր ընթանում: Հունիսի 29-ին վերջին անգամ անցանք Եփրատը՝ Իզոլիում: Եփրատի սովորական լաստանավն ունի 24-30 ոտնաչափ երկարություն, 8 ոտնա-

չափ լայնություն, բարձրությունը մի ծայրում 2 ոտնաչափ է, իսկ մյուս ծայրում, ուր տեղադրված է ղեկը կամ 30 ոտնաչափ երկարություն ունեցող թիակները, կազմում է 8 ոտնաչափ: *Առաջին* անգամ ուղևորություն կատարելիս ամերիկացիները հաճախ են հայտնաբերում աշխատանքային և կառավարման մեթոդներ, որոնք երբեմն առաջարկում են կիրառել: Երբ բազմիցս տեսանք, թե ինչպես էին լաստավարները բեռնում սայլերը նավի վրա, ուժ գործադրում և, դրանք երեք ոտնաչափ բարձրացնելով, վտանգավոր կերպով տեղադրում նավի եզրին, որոշեցինք առաջարկել, որ երկու տախտակ տեղադրեն նավի և ափի միջև, այդպես գլորելով փոխադրեին սայլերը նավ կամ նավից դուրս: Այդ եղանակով նրանց աշխատանքն ավելի ապահով կլիներ, իսկ ժամանակի կորուստը, լրացուցիչ օգնության և աշխատուժի կարիքը՝ ավելի քիչ: Մենք ստացանք հետևյալ հարցադրումը, որի պատասխանը չկարողացանք գտնել՝ «Իսկ ո՞վ կվճարի տախտակների համար»:

Մալաթիայում մենք փոխանցեցինք մարդկանց այն գումարը, որ իրենց բարեկամներն էին ուղարկել Ամերիկայից. այն վստահել էին դոկտոր Բարնըմին, ով գտնվում էր Խարբերդում: Մենք պատասխանատու կոմիտեին տրամադրեցինք նաև միջոցներ՝ արհեստավորների գործիքների և ավելի փոքր գումար սննդի և մթերքների համար: Վերջինս պետք է օգտագործվեր հատուկ կարիքների դեպքում: Մալաթիայում գրեթե չկար այն բարեկեցությունն ու անվտանգության զգացումը, որ ունեցանք Խարբերդում: Այս քաղաքում մենք հանդիպեցինք շատ քիչ մարդկանց, չէինք կարող երկար մնալ այստեղ և օգնության աշխատանքներ իրականացնել. դրանց կարիքը, հավանաբար, ավելի շատ էր զգացվում այլ շրջաններում: Ամերիկայի Միացյալ Նահանգներ վերադառնալուց ի վեր Խարբերդի ամերիկյան քոլեջի նախագահ պատվելի դոկտոր Գեյթսից ստացված ուղեկցող նամակում, ինչպես ընթերցելիս կնկատեք, կա բավականին հետաքրքիր հաշվետվություն՝ կատարված աշխատանքի և գումարների վերաբերյալ, որը հատկացվել էր մեր մեկնելուց հետո՝ իր և տիկին Բուշի կողմից.

Թուրքիա, Խարբերդ, օգոստոսի 19, 1896 թ.

Տիկին Բարտոնին

Հարգելի՛ գործընկեր, օրերս ստանալով դոկտոր Հաբելից մի հեռագիր, ուր նշվում էր, որ իմ տրամադրության տակ գտնվող միջոցները

կարող են օգտագործվել այնպես, ինչպես որ առաջարկել էի նրան ուղղված նամակում, այսինքն՝ Չմշկածագի և Մալաթիայի գավառակների համար՝ ես, տիկին Բուշն ու պրոֆեսոր Թեյքեջյանը տիկին Հարիսի ուղեկցությամբ հուլիսի 31-ին ժամանեցինք Մալաթիա: Մենք այնտեղ մնացինք երկու շաբաթ: Շատ հարմար պահի էինք եկել Մալաթիա: Բարեփոխումների հարցերով հանձնակատար, մարշալ Շաքիր փաշան նոր էր ժամանել Մալաթիա և Անգլիայի փոխհյուպատոս պարոն Ֆոնտանան գնացել էր հանդիպելու նրա հետ: Մենք կարող էինք օգտվել նրանց ներկայությունից, սկսել օգնության տրամադրումը և, այսպիսով, ժողովրդին ոտքի կանգնեցնել:

Մալաթիան մեծապես կախված է քրդական գյուղերի առևտրից: Այն առևտրի կենտրոն է մոտ 250 քրդերի համար: Քրիստոնյա բնակչությունը գնում է նրանց մոտ առևտուր անելու: Ոմանք հացահատիկ են ցանում, ուրիշները զբաղվում են ատաղձագործությամբ, կոշկակարությամբ և այլ արհեստներով: Քրիստոնյա բնակչության զգալի մասը գյուղերում զբաղվում է գործարարությամբ: Անցած նոյեմբերից ի վեր բոլոր շփումները դադարեցվել են՝ քրիստոնյաների հանդեպ այդ գյուղացիների թշնամական վերաբերմունքի պատճառով: Հետևաբար, արհեստավորներն ու առևտրականները գործազուրկ էին, իսկ իրենց աշխատանքում ներդրած ողջ միջոցները՝ վտանգված:

Մի անգամ ես փորձեցի հարկադրել կառավարությանն ապահովել քրիստոնյաների անվտանգ վերադարձն իրենց գյուղեր և հնարավորություն տալ նրանց առևտրի միջոցով վաստակել իրենց դրամը: Հյուպատոսը հրաշալի աշխատանք կատարեց այս և այլ հարցերի առնչությամբ: Կառավարությունը խիստ հայտարարությամբ դիմեց քուրդ աղաներին, նահանգապետը կանչեց և պարտադրեց նրանց պահպանել խաղաղությունը: Մեր մեկնելուց առաջ արհեստավորները սկսել էին գյուղեր գնալ:

Այնուհետև մենք կազմեցինք մարդկանց ստույգ ցուցակներ՝ ըստ առևտրի տեսակի և զբաղմունքների, և տրամադրեցինք նրանց միջոցներ, որպեսզի օգտագործեին դրանք գործիքներ գնելու և գործը սկսելու համար, այդպիսով, վաստակելով իրենց ապրուստը:

Մենք տեղեկացանք, որ քաղաքում 1883 որբ և 630 այրիացած կանայք կային: Վերջիններիս տրամադրվում էին ճախարակներ, որոնց միջոցով կարող էին ինչ-որ գումար վաստակել, չնայած այն չէր բավարարի ընտանիքը պահելու համար: Տիկին Հարիսը վերցրել է գործվածքների նմուշներ և հուսով է, որ դրանք պահանջված կլինեն

եվրոպական շուկայում: Եթե նա հաջողության հասնի, ապա մեծապես օգնած կլինի կանանց:

Քաղաքի տներից 567-ն այրվել էր, և մարդիկ այժմ ապրում են այգիներում: Սակայն Կ. Պոլսում գտնվող Հայ օգնության կոմիտեն միջոցներ է տրամադրել՝ վերանորոգելու տները և շուտով դրանք կրկին վեր կհառնեն:

Արհեստավորներին տրամադրվել են գործիքներ, որոնք կարող են օգտագործել գյուղերում: Մի գյուղի տրամադրեցինք 23 գլուխ եզ, որի օգնությամբ գյուղացիները կարող էին հավաքել բերքը և ցանք անել հաջորդ տարվա համար:

Թուրքերի և քրիստոնյաների միջև հարաբերությունները բարելավվել էին: Տասնմեկ բանտարկյալներ ազատ արձակվեցին, մարդիկ ուրախությամբ և երախտագիտությամբ նշում էին իրենց բարելավված պայմանների մասին: Մենք նրանցից ստացանք բազմաթիվ սրտահույզ նամակներ, որոնցում իրենց երախտագիտությունն էին հայտնում մեզ:

Ես հույս և հավատ եմ տածում, որ այս այցը մեծապես կմեղմացնի կարիքները այդ քաղաքում, չնայած որոշ մարդիկ եկող ձմռանն օգնության կարիք կզգան: Երբ եղանակը ցրտի, անկողնային պարագաների և հագուստի մեծ կարիք կզգացվի ոչ միայն Մալաթիայում, այլև շատ այլ բնակավայրերում: Սրտանց շնորհակալություն եմ հայտնում ձեզ օգնության համար:

Հարգանքով՝ Ք. Ֆ. Գեյթս

Ամառը շատ շոգ է լինում երկրի ներքին շրջաններում, ուստի մենք ուղևորվում էինք գիշերով՝ լուսնի լույսի ներքո, երբ երկինքն անամպ էր: Ծժույգներին որոշ ժամանակ թողնում էինք արաբաներում (փոքր, անզսպան, փակ վագոն, որ տեղադրվում է ճանապարհներին)՝ հանգստանալու, մինչ մենք կավարտեինք այդ օրվա աշխատանքը: Ճանապարհին մենք միջոցներ էինք հատկացնում հատուկ կարիքների համար, սակայն տուժածներն առանց այդ օգնության հաճախ ավելի ապահով էին զգում իրենց և հրաժարվում դրանից: Սեբաստիայում մենք միջոցներ հատկացրինք գյուղատնտեսական գործիքների համար: Այստեղ հացահատիկի բերքն ավելի ուշ էր հասունանում, քան հյուսիսային հովիտներում: Մենք ձի տրամադրեցինք նաև պատվելի Փերիին և Հաբըրդին, որպեսզի նրանց համար հեշտ լիներ օգնության տրամադրումը: Մալաթիայից բազմաթիվ բնակիչ-

ներ և ընտանիքներ դիմեցին Կարմիր խաչի պաշտպանությանը, որպեսզի ապահով հասնեին ծովեզր: Այնտեղ տանող ճանապարհի մի հատվածը լի էր ավազակախմբերով և լավ պահակախմբի կարիք կար: Իրականում, դրա անհրաժեշտությունը կար ողջ շրջանում: Կառավարությունն առանձնակի հոգաց մեր անվտանգությունը՝ որպես հատուկ պահակախումբ մեզ տրամադրելով մի ավազակախումբ հսկելու ճանապարհի վտանգավոր հատվածը և նշելով, որ դրանով մենք ավելի ապահով կլինեինք, քան թե կանոնավոր զինվորական պահակախմբով: Մի քանի շաբաթ առաջ մի հարուստ քարավան էր թալանվել ճանապարհին: Մինչ մենք անցնում էինք ճանապարհի այդ հատվածը, միաժամանակ մեծ հաճույքով թեյում էինք ավազակախմբերի առաջնորդների հետ, ովքեր երկու օր առաջ էին զորակոչվել պետական ծառայության: Մենք միշտ եղել ենք կառավարության բավարար պաշտպանության ներքո և մեզ հազվադեպ էր մտահոգում անձնական ապահովության խնդիրը, չնայած մեր այցելած բոլոր վայրերում մարդիկ հաճախ բավական անհանգստացած և վախեցած էին իրենց, ընկերների կամ եթե ունեին գույք, ապա նաև դրա ապահովության համար:

Թոքատն ու Ամասիան գտնվում էին տունդարձի ճանապարհին: Ամասիայում էր գտնվում Պոնտոսի թագավոր Միհրդատի հինավուրց ամրոցը:

Սամսունում մեզ անհրաժեշտ էին երկու թամբած ձիեր: Հյուպատոսության մեր գործակալը պարոն Սթեֆըփոփեյլն ախոռ ուներ և սիրով առաջարկեց վաճառել մեզ նժույգները հարմար գնով: Նա ցանկանում էր նաև համոզվել, որ գումարի մնացորդը տրամադրվելու էր ծովեզրին հավաքված գաղթականներին, ովքեր հույս ունեին շարունակել իրենց ճամփան, սակայն չէին կարող վերադառնալ: Նրանք ընկել էին դժվարին կացության մեջ՝ հայտնվելով իսկապես տուժածի կարգավիճակում:

Հուլիսի 16-ին մենք հասանք Բոսֆորի նեղուց, չորս ամիս և վեց օր էր անցել այն պահից, երբ Կ. Պոլսից մեկնեցինք երկրի ներքին շրջաններ. Մենք ուրախ ենք մեզ տրված արտոնության և լիազորության համար՝ ծառայելու որպես սուրհանդակ և առաքելու աշխարհի տարբեր ծայրերից ձեզ վստահված օգնությունը, որ տրամադրվեց Անատոլիայի անմեղ և դժբախտ աղետյալներին:

Ամեն տեղ, ուր հանդիպեցինք միսիոներների, բողոքականների կամ կաթոլիկների, նրանք բոլորն էլ, անկախ իրենց դավանանքից

կամ ազգությունից, տրամադրում էին իրենց ժամանակի մեծ մասը, եթե ոչ ամբողջ ժամանակը՝ մեղմացնելու տուժածների տառապանքները: Սակայն նրանց ուժն ու միջոցները բավարար չէին՝ գործողության տարածքում աշխատանքներ իրականացնելու համար: Մենք միշտ նրանց հետ աշխատել ենք հավասարապես՝ չառանձնացնելով մարդկանց ըստ իրենց ազգության կամ դավանանքի: Մենք պարտական ենք նրանց և շատ ուրիշների իրենց բարեկիրթ վերաբերմունքի և հյուրընկալության համար, որ միշտ կհիշենք երախտագիտության զգացումով:

Մենք կապ էին հաստատել եվրոպացի և ամերիկացի բնակչների հետ, որոնց յուրաքանչյուրի անկեղծ համագործակցությունը մեծապես նպաստեց առաքելության հիմնական աշխատանքներին: Նրանցից ամեն մեկը գործի էր դնում մեզ օգնելու բոլոր հնարավոր ջանքերը: Ցուցաբերած յուրաքանչյուր քաղաքավարի վերաբերմունքի և օգնության համար պարտական ենք Ալեքսանդրետում ԱՄՆ հյուպատոսության գործակալ Դենիել Ուոքերին, նաև իր առևտրական գործակալ Ջոն Ֆալանգային: Նրանք քարավաններով առաքեցին մեր գնած ապրանքները երկրի ներքին շրջաններ:

Երախտապարտ ենք Կենտրոնական Թուրքիայի հայկական քոլեջի նախագահ պատվելի դոկտոր Ֆուլերին և իր խիզախ, գործունյա և կիրթ տիկնոջը: Նրանք մեզ զգալի տեղեկություն տրամադրեցին, քոլեջի շենքերում տարածք հատկացրին, որը ծառայելու էր որպես պահեստ և առաքման կայան՝ ապրանքներն ու մթերքները պահեստավորելու համար: Պարտական ենք ֆրանցիսկյան եղբայրներին, հատկապես նրանց, ովքեր գործում էին Այնթափում, մեզ ցուցաբերած օժանդակության և բարեկիրթ վերաբերմունքի համար: Այնթափում մեզ բախտ վիճակվեց հանդիպել նաև Անգլիայի փոխդեսպան Ֆիցմորիսին, ով վերջերս էր տեղեկացել երկրի և այնտեղ տիրող իրավիճակի մասին՝ պաշտոնական այցելություններ կատարելով դեպի տուժած շրջանները: Նա սիրով մեզ տեղեկություն տրամադրեց և մենք խորին երախտագիտությամբ ընդունեցինք այն:

Երկար ենք երախտագիտությամբ հիշելու Մարաշում ամերիկյան և եվրոպական միսիոներական կազմակերպությունների քաջասիրտ աշխատակիցներին, որոնցից գրեթե բոլորը կորցրին իրենց ունեցվածքն ու ընկերներին ընդհանուր խռովության (ջարդի) ժամանակ: Մասնավորապես հիշում ենք պատվելի պարոն և տիկին Մակքալլմին ու Լ. Օ. Լիին, տիկին Հեսին և Բլեքլիին: Պարտական ենք հատ-

կապես Իտալիայի հյուպատոսին, ով նոր էր ժամանել Զեյթունից և ժամանակավորապես կանգ առել Մարաշում, իր քաղաքավարի վերաբերմունքի և տրամադրած տեղեկության համար: Պարտական ենք նաև կաթոլիկ եկեղեցու գերաշնորհ արքեպիսկոպոս Ավադյան-Քուրկյանին, նաև Մարաշի ֆրանցիսկյան եղբայրներին աշխատանքում ցուցաբերած բարեկիրթ վերաբերմունքի համար: Երախտագիտությամբ ենք հիշում նաև այն բազմաթիվ մարդկանց, որոնց անուններն ամբողջությամբ չենք կարող նշել զեկույցի սահմանափակ լինելու պատճառով: Պարտական ենք Բազարջիքից Ահմետ Զաղե Մահամետ բեյին և Մալաթիայից Ազիզ Զաղա Մուստաֆա աղային ցուցաբերած քաղաքակիրթ վերաբերմունքի և հյուրընկալության համար:

Կենտրոնական Թուրքիայում եղած ժամանակ Խարբերդի միսիոներական կազմակերպությունը դարձավ մեր տունը բառիս բուն իմաստով, չնայած այն փաստին, որ թալանի և հրկիզման հետևանքով գրեթե ողջ գույքն ու շինությունները կործանվել էին:

Աստվածաբանության դոկտոր, Ամերիկյան միսիոներական քոլեջի նախագահ, պատվելի Ք. Ֆ. Գեյթսը, ով հանճարեղ գիտնական, իսկական գործարար, երկրի, մարդկանց և սովորույթների վերաբերյալ լայն գիտելիքներ ունեցող անձնավորություն էր, մեծ ծառայություն մատուցեց մեզ իր խորհրդատվություններով, քանի որ մեր աշխատանքների մեծ մասն իրականացվում էր այս հատվածում: Պարոն Գեյթսը խորհրդատու էր և տնօրինում էր մեր հաշիվները:

Պարոն և տիկին Բարնըմի տունը մեր տրամադրության տակ էր ամեն օր և մենք ապրում էինք այնտեղ:

Տիկին Բուշին՝ արդար, փորձառու, բազմակողմանի զարգացած և նրբաճաշակ կնոջ, ով միացավ մեր առաքելությանը և մնաց մեր կողքին Արաբկիրի տիֆի համաճարակի ժամանակ, իսկ հետագայում մեզ հետ ուղևորվեց Ակն, կհիշենք երախտագիտությամբ իր տրամադրած օգնության, անամոք հիվանդներին և տուժածներին սիրտ տալու համար:

Պարզվեց, որ Անգլիայի փոխհյուպատոսը՝ Ռ. Ա. Ֆոնտանան, անխոնջ, հանճարեղ և պատրաստակամ ընկեր էր ցանկացած պահի պատրաստ օգնել մեզ՝ թե պաշտոնապես և թե անձնապես:

Պարտական ենք ֆրանցիսկյան եղբայրներին ցուցաբերած հյուրընկալության համար: Շնորհակալ ենք դոկտոր Հ. Հինտլյանից, ում զգալի աշխատանքը թե Արաբկիրի, թե Խարբերդի հիվանդների հետ

հաջողությամբ պսակվեց:

Պարտական ենք պատվելի Պետրոսին Արաբկիրից, ում տան դրոները բաց էին մեր առջև այն ժամանակ, երբ աշխատանք էինք տանում քաղաքում: Պակաս պարտական չենք ցանկացած արտակարգ իրավիճակում կամ նրբանկատ նախաձեռնություններում իր ցուցաբերած մշտական, սրտագին և պատրաստակամ օգնության համար: Մեր բոլոր քրիստոնյա և մահմեդական ընկերներին, որոնք բավական շատ են և նրանց բոլորի անունները հնարավոր չէ նշել, հիշում ենք երախտագիտությամբ և ընկերական զգացումով իրենց բազմաթիվ բարի գործերի համար:



Կարմիր խաչի արշավախումբը Խարբերդի դաշտով անցնելիս
(Չ.Ջ. Վաղի ուրվանկարներից)

Երբեք չենք մոռանա Ակնում մեզ ցուցաբերած առատաձեռն հյուրասիրությունը այն կարճ ժամանակահատվածում, երբ հյուրընկալվել էինք Նիկողոս աղա Ժամկոչյանի և Ալեքսանդր էֆենդի Քասաբյանի ընտանիքում, ազնվականներ, որոնք իրենց եռանդով և մեծահոգությամբ փրկեցին Ակնը և ակնեցիներին կործանումից, մինչ մոտակա գյուղերը թալանվում և այրվում էին: Նրանք մեծ օգնություն ցուցաբերեցին մեզ՝ հասցնելով գյուղատնտեսական գործիքներն ու սարքերը երկրի այս հատվածը:

Երախտագիտությամբ ենք հիշում պատվելի տեր և տիկին Փե-

Կարոլին Ի. Բուշ

Առաջին առաքելությունը Եփրատ գետի վրա լաստանավ նստելիս (Է. Մեյսոն)

րիին, պատվելի տեր և տիկին Ա. Բ. Հաբբրդին և պարոն Բրյուերին՝ Սեբաստիայից: Նրանք հյուրընկալեցին մեզ ըստ արժանվույն և սիրով ընդունեցին իրենց առջև դրված առաջադրանքը՝ առաքել լուսացուցիչ գյուղատնտեսական գործիքներ և սարքավորումներ այս տարածք:

Պարտական ենք մեր հյուպատոսին՝ դոկտոր Սիլը Ա. Ջյուիքին և Անգլիայի հյուպատոս Սեյջը Բուլմընին ցուցաբերած բաղաքակիրթ վերաբերմունքի և հյուրընկալության համար, Սամսունում գտնվող հյուպատոսության գործակալին, ով սիրով իր ծառայությունները մատուցեց՝ նպաստելով մեր հետագա աշխատանքներին:

Շնորհակալ ենք բոլոր թուրք պաշտոնյաներից մեր անձնական անվտանգությունը հոգատարությամբ ապահովելու և աշխատանքի ընթացքում մեզ ընդհանուր անձնական ազատություն շնորհելու համար: Շնորհակալ ենք այն սպաներից և պահակախմբերից, որոնք միշտ ուղեկցել են մեզ ճանապարհին՝ ցուրտ և տաք եղանակին, գիշեր թե ցերեկ, ամայի հարթավայրերով կամ լեռնային արահետներով և մեզ ծովերով ապահով տեղ են հասցրել՝ առանց որևէ պատահարի կամ վնասի: Մենք հաճախ ենք հիշում նրանց սիրալիր և աչալրջորեն մատուցած ծառայությունները, հատուկ վերաբերմունքը մեր հանդեպ, որին կարող էր դրդել միայն ամենաընկերական զգացումն ու հարգանքը:

Սակայն չենք մոռանում, հարգելի՛ տիկին Բարտոն, որ այս առաքելությունը հաջողվեց Ձեր աչալուրջ և մշտարթուն հսկողության, բոլոր քայլերի վերահսկման շնորհիվ՝ սկսած Կ. Պոլսում կառավարության հետ տարվող աշխատանքներից մինչև ամենավերջին քայլը: Այս հաջողությանը նպաստեց Ձեր համոզմունքը, որ արտահայտեցիք Բարձր դռանը՝ Ձեր և Ձեր աշխատակիցների ազնվության, կառուցողականության և եզակի նպատակի վերաբերյալ: Ուստի մենք հղում ենք Ձեզ մեր ջերմագին երախտագիտության խոսքը՝ պետական և կառավարման գործերում հմտություն ցուցաբերելու և աշխատանքները վերահսկելու համար:

Երախտապարտ ենք այն մարդկանց, ովքեր շնորհակալ վերաբերմունք ցուցաբերեցին, փորձեցին օգնություն տրամադրել: Դա, իսկապես, համատարած էր և անկեղծ: Շնորհակալ ենք նաև ցուցաբերած ջերմ հյուրընկալության և օգնության համար, որ սիրով մեզ տրամադրեցին բոլոր մեծահոգի կանայք ու տղամարդիկ, ում հետ ինձ բախտ է վիճակվել անձնապես ծանոթանալ: Այդ մարդկանց,



Աստվածաբանության դոկտոր. պատվելի Հ. Ն. Բարնամ

Աստվածաբանության դոկտոր. պատվելի Կ. Ֆ. Գեյթս

որոնք շրջապատված էին խոր վշտով, վտանգներով և թշվառությամբ, միշտ կհիշեն իրենց պարտականության հանդեպ ցուցաբերած արժանիքներով և նվիրվածությամբ:

Կ. Պոլիս, օգոստոսի 1, 1896 Ջ. Բ. Հաբել

Դոկտոր Հինտլյանի ենթազեկույցը

Բժշկական գիտությունների դոկտոր, դաշտային ընդհանուր գործակալ Ջ. Բ. Հաբելին

Ի պատասխան զեկուցելու Ձեր խնդրանքի՝ Արաբկիրում և Խարբերդում տրամադրված բժշկական օգնության աշխատանքների առնչությամբ Ձեզ եմ ներկայացնում ապաքինված հիվանդների ցուցակը և հետևյալ ամփոփագիրը.

Տիֆ Արաբկիրում	966
Տիֆ Ամպրկայում (ծայրամաս)	29
Մալարիայի տենդախտի դեպքեր	41
Ընդհանուր հիվանդություններ	205
Աչքի հիվանդության դեպքեր	178
Վիրահատական դեպքեր	25
Մաշկային հիվանդություններ	65
Տիֆի հիվանդության դեպքեր Դատեմում	50
Տիֆի հիվանդության դեպքեր և ընդհանուր հիվանդություններ Խարբերդում	63
Մասնակի կաթվածահարություն	8
Ընդամենը՝	1.611
Մահացության դեպքեր տիֆից	9
Մահացության դեպքեր խրոնիկ պլևրիտից	1
Ընդամենը՝	10

Արաբկիրում մեր խնամքի տակ կա տիֆով հիվանդ 900 մարդ, որից 9-ը մահացել է: տիֆով հիվանդների շրջանում Մահացության թիվը մեկ տոկոս չի կազմում: Արաբկիրում այն կազմում էր 26 տոկոս՝ նախքան բուժման աշխատանքների սկսելը:

Տիֆի բուժման մեր եղանակները, ինչպես գիտեք, պարզունակ էին: Առաջին՝ օդափոխել սենյակը, երկրորդ՝ անհրաժեշտության դեպքում մահճակալ(ներ) տրամադրել: Երրորդ՝ մինչև հիվանդի ապաքինվելը նրան խնամող գտնել, եթե ողջ ընտանիքը պառկած է կամ խնամող չունի: Եվ չորրորդ՝ ճիշտ սնունդ օգտագործել: Մեր դեղատոմսերում հաճախ կարելի էր կարդալ հետևյալը. «Անկողնային ռեժիմ, օգտագործել մի բուշել ցորեն կամ ... պիաստր գնելու արգանակ, ... կաթիլ քլորաջրածնային թթու»:

Մայիսի 13-ից հունիսի 23-ը Արաբկիրում իրականացված բժշկական աշխատանքների ընթացքում մենք արձանագրել ենք բուժված հիվանդությունները ու գրի առել բուժման նպատակով կիրառված եղանակները: Այս ժամանակահատվածում մենք բուժեցինք կամ բուժում առաջարկեցինք 1561 հիվանդների, որոնցից 966-ը տառապում էին տիֆից: Նրանցից 9 մահացավ: Վստահելի աղբյուրի համաձայն՝ մոտ 500 հոգի մահացել էր այս հիվանդությունից մինչև մեր ժամանելը: Մնացած 586-ն ընդհանուր հիվանդությունների դեպքեր էին՝ վիրահատական, խրոնիկ, սովորական տենդախտ և այլն: Թվարկված հիվանդությունների հետևանքով գրանցվեց մեկ մահ: Բժշկական աշխատանքների ընթացքում Արաբկիրում և այլ վայրերում հանդիպեցինք մասնակի կաթվածահարության դեպքերի, որոնք ահ ու սարսափի պատճառ էին դարձել: Այս դեպքերը սկսեցին նվազել չափավոր բուժման արդյունքում, և հույս կար, որ մինչև մեր հեռանալը հնարավոր կլիներ կարճ ժամանակահատվածում ամբողջապես բուժել:

Վիրահատական դեպքերի մեծ մասը հրազենային վնասվածքների կամ այլ վերքերի հետևանք էին, որոնք չէին բուժվել անցած նոյեմբերից ի վեր: Հիվանդների վիճակը հաճախ ողբալի էր, սակայն նրանք հիացմունքով էին արձագանքում բուժմանը:

Հաճախակի էր հանդիպում մաշկային յուրահատուկ հիվանդությունը: Նախանշանը սաստիկ նյարդային քորն է, որը հաճախ ուղեկցվում էր պոռթկումներով, ինչը, հավանաբար, սարսափի հետևանք էր: Այս դեպքերում, բացի նման մաշկային հիվանդությունների բուժման եղանակից, սովորաբար բավարար արդյունքի հասնելու համար

անհրաժեշտ էր կիրառել որոշակի քանակությամբ նյարդերը հանգըստացնող դեղանյութ:

Տիֆն այս երկրում, հիմնականում, տարածվում էր տիզերի միջոցով՝ հիգիենայի բացակայության պայմաններում, ինչպիսիք են չօդափոխվող լեփ-լեցուն սենյակներում բնակվելն ու ցածրորակ ջրի օգտագործումը: Այն տարածվում է վարակի միջոցով և ուշադրություն չդարձնելու դեպքում կարող էր ճակատագրական հետևանք ունենալ: Մենք նկատեցինք, թե ինչպես է այն արագ նահանջում տարրական բուժման, լավ խնամքի և մաքուր օդի արդյունքում: Ես գործածել էի թթվային դեղանյութ՝ սովորականից մի փոքր շատ:

Ես չեմ փորձել մանրամասնել զեկույցը, չեմ հաշվել ամենածանր դեպքերը, այլ միայն ներկայացրել եմ աշխատանքիս արդյունքները:

Մինչև Արաբկիրից հեռանալը դեղագործ Մելքոն Միրանշահյանը, ով առաջինը պատրաստակամություն հայտնեց օգնել, վերջին երկու օրվա ընթացքում միացավ մեր աշխատանքներին: Նա ծանոթացավ վիրահատական և այլ միջոցներին, ինչպես նաև մեր կիրառած բուժման եղանակներին, քանի որ նպատակ ուներ շարունակել օգնություն ցուցաբերելու աշխատանքները որպես Կարմիր խաչի աշխատակից այնքան ժամանակ, որքան իր ծառայություններն անհրաժեշտ կլինեին մեր հեռանալուց հետո:

Դուք ավելի լավ գիտեք և կրկնելու կարիք չկա, թե որքան արդյունավետ աշխատանք է իրականացվել այս քաղաքում և գյուղերում, օգնություն է տրամադրվել յուրաքանչյուր մարդու՝ անկախ իր ազգությունից և դավանանքից: Առողջների հետ նույնպես պակաս աշխատանք չի տարվել, քան հիվանդների հետ: Սակայն ես պատիվ ունեմ Ձեզնից ավելի լավ ծանոթ լինելու այս ժողովրդի անսահման երախտապարտությանը, օտար լեզուներով հնչող նրանց օրհնանքներին՝ ուղղված տիկին Բարտոնին, Կարմիր խաչին և ամերիկյան ժողովրդին: Ես իմ հերթին խորապես շնորհակալ եմ, որ պատիվ ունեցա աշխատել Կարմիր խաչի հետ:

Հարգանքով՝ *Խարբերդ, օգոստոսի 20, 1896 թ.*

Հակոբ Հինտլյան

ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱԿԱԼ ԷԴՈՒԱՐԴ Մ. ՈՒԻՍԹԱՐԻ (ՖԻԼԱԴԵԼՖԻԱ) ԶԵԿՈՒՅՑԸ

Նախագահ Կլարա Բարտոնին

Երբ վերադարձա Փոքր Ասիայի գործողության տարածքից, ուր ակտիվ աշխատանքներ էին ընթանում, Դուք խնդրեցիք ինձ ժամանակ առ ժամանակ ներկայացնել զեկույցիս համառոտագրությունը: Այն ներկայացնում եմ ստորև:

Հավանաբար դեկտեմբերի 9-ին էր, երբ վերջին անգամ ստուգում էի գրասենյակային փոստարկղս, աչքս ընկավ Ձեր և պարոն Փուլմընի նամակը: Նախորդ մի քանի շաբաթը խորհում էի Թուրքիայում տիրող ողբալի իրավիճակի շուրջ և մինչ կբացեի ծրարը, մտքովս անցավ «Իսկ եթե հաստատվի, որ սա Հայաստանում ծառայություններ իրականացնելու հրաման է»: Սիրով տրամադրած Ձեր նախնական տվյալներին հետևեց սույն հարցաղրումը. «Եթե հնարավոր լինի մեկնել Հայաստան, Դուք հնարավորություն կունենա՞ք միանալ մեզ»: Մի փոքր մտորելուց հետո հեռագրեցի Ձեզ, որ Ձեր տրամադրության տակ կլինեմ, և անմիջապես պատրաստվեցի մեկնելուն: Հետագա նամակագրությունը և Վաշինգտոնում Ձեր տված հարցազրույցն ինձ պատրաստակամ էին դարձրել: Ավելի ուշ (որոշվել էր, որ Ամերիկայից մեկնելու էինք հունվարի 22-ին) պատրաստվում էի ուղեկցել Ձեզ, երբ հունվարի 21-ին ստացված հեռագրում ինչ-ինչ հարգելի պատճառներով նշվում էր. «Վաղը մի մեկնեք. սպասեք հետագա տեղեկության»: Այդ տեղեկությունը, վերջապես, ստացա փետրվարի 19-ին Կ. Պոլսից՝ հեռագրի միջոցով՝ «Եկեք շաբաթ օրը

(փետրվարի 22-ին) և Ձեզ հետ բերե՛ք ևս մի հոգու»: Ես և Չարլզ Քինգ Վուդը նավարկեցինք հաջորդ օրը՝ փետրվարի 22-ին: Մենք մի շաբաթից Լոնդոնում էինք և Դուք դիմավորեցիք մեզ մարտի 7-ին Ձեր հարազատ Կ. Պոլսում:

Թարգմանիչ ընտրելու, նրա հետ պայմանագիր կնքելու, ինչպես նաև նախնական այլ պայմանավորվածությունների պատճառով մենք մի քանի օր ևս մնացինք Կ. Պոլսում: Սակայն երբ ամեն ինչ պատրաստ էր, իսկ իշխանությունները տրամադրել էին մեզ ճանապարհորդական արտոնագրեր, մենք ուղղություն վերցրինք դեպի Ալեքսանդրետ, որը գտնվում էր Սիրիայում՝ Միջերկրականի հյուսիսային մասում: Երթուղին շրջանցիկ էր և բեռների պատճառով ընդմիջվում էր երկար կանգառներով, արդյունքում 8 օր հատկացրինք ուղևորությանը: Մենք ուրախացանք, երբ Ալեքսանդրետ ժամանելուց հետո այնտեղ հանդիպեցինք դոկտոր Հաբելին: Կեսօրից հետո մեր բոլորի անձնագրերում արտոնագրեր կային: Սկզբում ուղևորվեցինք Այնթափ, իսկ հաջորդ օրը՝ արևածագին, սկսեցինք ուղևորությունը դեպի երկրի ներքին շրջաններ: Անցնելով Անտիոքի ընդարձակ հարթավայրերն ու Հայմում Խանը՝ երեք օրից հասանք Քիլիս՝ ջարդերից անմիջապես հետո: Երբ քաղաք մտանք, ամբոխն անմիջապես հետապնդեց և ծաղրեց մեզ, սակայն ուղղակի վնաս չհասցրեց: Կարելի է ասել, որ Քիլիսում եղած ողջ ընթացքում մեզ ուղեկցող զափթիեները կամ պահակախմբերը մշտապես հարգալից էին մեր հանդեպ և աչալրջորեն հսկում էին մեզ: Հիշում եմ, թե ինչպես մի տեղ սպան հրահանգեց պահակախմբին՝ եթե որևէ մեկը փորձի միջամտել ամերիկացիների գործերին, ապա հատակ պատասխան կստանա:

Քիլիսում մենք սկզբից այցելեցինք կայմակամին՝ տեղի կառավարչին, ով մեզ ջերմորեն ընդունեց: Եվ, իրոք, իշխանությունների հետ ունեցած բոլոր հետագա այցելությունների ընթացքում մենք միշտ քաղաքավարի վերաբերմունքի ենք արժանացել: Երկու օր ուսումնասիրություններ կատարելուց հետո որոշեցինք, որ այստեղ օգնության ճամբար բացելն ամենալավ տարբերակը չէր, քանի որ ապրանքներն առաքող քարավանն արդեն ուղևորվել էր Այնթափ, ուր ժամանելու համար բոլորս ունեինք մեր արտոնագրերը:

Հասնելով Այնթափ՝ մենք ձեռնամուխ եղանք ապրանքների և Կ. Պոլսի «Ֆրենդսիզ Միշըն» կազմակերպության կողմից տրամադրված որոշակի քանակության հագուստի և այլնի հատկացման աշ-

խատանքներին: Ավարտելով աշխատանքներն Այնթափում և գիտակցելով, որ դեռ տարբեր բնակավայրերում կային ավելի շատ կարիքավորներ՝ որոշեցինք բաժանվել և գնալ տարբեր ուղղություններով, որպեսզի այցելեինք հնարավորին չափ շատ կարիքավոր բնակավայրեր: Մենք պետք է կրկին հանդիպեինք Խարբերդում, եթե հնարավոր լիներ: Ապրիլի 6-ին, թողնելով դոկտոր Հաբելին, ես պարոն Վուդի ուղեկցությամբ ուղևորվեցի Ուրֆա, ապա, անցնելով Նիզիբի և այլ ավելի փոքր ցեխաածեփ տնակներով գյուղերի միջով, կտրելով Եփրատը, երկու օրում հասա Բիրեջիք, ապա՝ ավելի քան երկու օրից՝ Ուրֆա: Աշխարհը ծանոթ է Քորինա Շատակի հերոսական աշխատանքին, մարդիկ գիտեն՝ որքան միայնակ էր նա Ուրֆայում դեկտեմբերի 28-29-ի մութ օրերին, ինչպես էր իր սեփական տանը պատսպարում բազմաթիվ սարսափահար գաղթականների և դեռ որքան ջանք է գործադրում՝ լռակյաց և համեստաբար ձգտելով հոգալ չորսբոլորը խմբված կարիքավորներին: Այնքանը միայն բավարար է նրա անունը հավերժ հիշելու ու նրան քրիստոնյա հերոս կանանց շարքերին դասելու համար: Ինձ համար մեծ պատիվ էր, որ հնարավորություն ունեի համակրել ու քաջալերել նրան:

Մոտ 900 դոլար կամ ավելի ստույգ՝ 200 թուրքական լիրա (1 լիրան հավասար է 4.40 դոլարի) ծախսեցինք և 12 օր Ուրֆայում տիկին Շատակի հետ միասին աշխատանքներ ձեռնարկեցինք զգալի քանակությամբ կենցաղային իրեր ձեռք բերելու ուղղությամբ: Այս աշխատանքը սկսվեց ինքնաբերաբար, երբ մենք աշխատանքի վերցրինք զգալի թվով ունակ և ընչազուրկ կանանց, քանի որ արդյունքում բազմաթիվ չքավորներ ստացան օգնություն, որը պետք է մշտական բնույթ ունենար:

Ապրիլի 21-ի լուսաբացին մենք կրկին ձիավարում էինք Դիարբեքիրի ուղղությամբ: Անցանք Սեերեկով, որ երկու օրվա ճանապարհ էր Ուրֆայից: Վերջինս սանջակ էր՝ նույնանուն կենտրոնով, իսպառ թալանված, որը, սակայն, օգնություն ստացավ կենտրոնից, իսկ հետագայում այնտեղ ավելի շատ միջոցներ ուղարկվեցին: Ապրիլի 24-ի առավոտյան մենք հասանք հնադարյան պարսպապատ քաղաքը:

Դիարբեքիրում մեզ ջերմորեն հյուրընկալեց Բրիտանիայի հյուպատոս պարոն Հոլուսրդը, ով շաբաթ և կիրակի օրերն անց էր կացնում այնտեղ՝ մեր ձիերի անհրաժեշտ հանգիստն ապահովելու, տեղեկություն հավաքելու և, ինչպես հիշում եք, ձեզ զեկուցելու նպատակով: Այնուհետև նա պետք է հասներ Խարբերդ Տավրոսի լեռ-

նաշղթայով: Պատվելի դոկտոր, փորձառու միսիոներ Հ. Ն. Բարնըմը և Միսիոներական քոլեջի նախագահ դոկտոր Ք. Ֆ. Գեյթսը, այլ միսիոներներ և բնակիչների մի բազմություն դիմավորեցին մեզ քաղաքի մուտքի մոտ: Մեզ հարմարավետ բնակարաններ տրամադրեցին միսիոներական կազմակերպության շենքերից մեկում: Մեզ՝ ճանապարհից հոգնած օտարականների համար իսկական իրադարձություն էր տեսնել դոկտոր Հաբելին և իր առաքելությանը Մալաթիայից ժամանելիս նույն օրը երեկոյան, այն դեպքում, երբ նախկինում ոչ մի այլ պայմանավորվածություն չէր եղել, բացի նրանից, որ Այնթափից բաժանվելուց հետո առաջարկվել էր կրկին հանդիպել Խարբերդում, և մենք ավելի քան երեք շաբաթ չէինք հաղորդակցվել: Մեկ-երկու օր ծախսեցինք՝ հանգամանքները պարզելու համար: Այնուհետև, Ձեզնից նոր խորհուրդ ստացանք և աշխատանքի անցանք, որպեսզի քննարկեինք Խարբերդի դաշտի տարբեր հատվածներում անհատական, ակտիվ ծառայությունների մատուցման մանրամասները և առկա կարիքների ու իրավիճակի վերաբերյալ որքան հնարավոր է շատ տեղեկություն հավաքեինք: Մենք ուղղակի նպատակով այցելեցինք մի շարք պատահական ընտրված գյուղեր և հարցազրույց ունեցանք այն մարդկանց հետ, որոնց համար երաշխավորել էին: Նրանք տարբեր բնակավայրերից էին: Պարոն Վուդն ու Հաբելը միասին քննարկեցին գումարային հարցերը և այժմ աշխատում են ինձնից զատ: Ինձ առաջին անգամ կանչեցին Չարսանջակի գավառակ, որի կենտրոնը Բերրի քաղաքն էր, մինչև Խարբերդի ընդարձակ հարթավայրում աշխատանքների մեկնարկը: Չարսանջակի գավառակը գտնվում էր Խարբերդից դեպի հյուսիս-արևելք, այնտեղից դեպի Չարսանջակ կարելի էր հասնել երկու օրում՝ խորդուբորդ, լեռնոտ ճանապարհներով՝ կտրելով Եփրատի երկու ճյուղավորումները: Չարսանջակի բնակչությունը կազմում էր մոտ 8.500 մարդ, կային 74 բնակեցված գյուղեր, որոնցից բոլորը, բացառությամբ չորսի, ամբողջությամբ կամ մասնակիորեն թալանվել էին նախորդ աշնան անկարգությունների հետևանքով: Այստեղ և այցելած այլ բնակավայրերում հագուստի, սննդի, անկողնային պարագաների, գյուղատնտեսական գործիքների, սերմնացուների խիստ անհրաժեշտություն կար, հարկավոր էր նաև որոշակի գումար՝ վերակենդանացնելու արդյունաբերության տարբեր ճյուղերը: Իմ թարգմանչի հետ աշխատեցի այս տարածքում երեք շաբաթ՝ առավոտից մինչև երեկո. արդյունքը գոհացուցիչ էր: Մենք տեղի բնակիչնե-

րից սահմանված արժեքով գնեցինք տեղական գործվածքներ՝ պատրաստված ձեռքի մանածագործական հաստոցներով: Գործվածքն անմիջապես բաժանեցինք կտորների և տրամադրեցինք կանանց՝ տանը հագուստ կարելու և հաջորդ օրը վերադարձնելու պայմանով: Գործվածքներն այդ օրերին հաճախ ծածկում էին մարդկանց մերկությունը: Այսպիսով, մեկանգամյա ծախսը ծառայեցրինք երեք տարբեր նպատակների ստեղծեցինք շուկա ջուլհակների համար, հարյուրավոր աշխատատեղեր կանանց համար, իսկ ամենակարիքավորներին հագուստ բաժանեցինք: Գործիքների և միջոցների կարիք ունեցող մոտ 150 արհեստավոր վերականգնեց իր գործունեությունը: Գնվեցին և բաժանվեցին 200 գլուխ եզ, 500 գյուղատնտեսական գործիքներ, այդ թվում նաև մեծ քանակությամբ գութաններ: Սննդի չափաբաժինը տրամադրվում էր ամեն օր:

Երեք շաբաթ հետո Բերրիի շուկաներում քայլելով կարելի էր նկատել, որ խանութներում ակտիվության մեծ աճ էր արձանագրվել, հատկապես, դարբինների, պղնձագործների և կոշկակարների խանութներում, բարելավվել էր առևտրի ընդհանուր վիճակը:

Տարվող աշխատանքները վստահեցինք տեղի հուսալի կոմիտեներին՝ տրամադրելով նրանց որոշ ապրանքներ: Հետագայում, երբ ես կրկին այցելեցի Չարսանջակ, այդ ապրանքների թիվը բավականաչափ աճել էր: Այնուհետև վերադարձա Խարբերդ և ներգրավվեցի հետագա օգնության աշխատանքներին՝ պատրաստվելով բանող կենդանիների, գյուղատնտեսական գործիքների տրամադրման և տնտեսությունների վերահաստատման աշխատանքներին: Մենք առանձնակի ջանքեր գործադրեցինք՝ Խարբերդի հարթավայրի հացահատիկի առատ բերքը փրկելու համար, որն անցած շաբաթների ընթացքում հասունանում էր մեր աչքի առջև, իսկ այժմ կանաչ հարթավայրը ոսկեգույն էր դարձել: Հացահատիկի բերքը, ըստ երևույթի, միակ միջոցն էր սպասվող երաշտի դեմ: Բազմաթիվ մտահոգող խնդիրների մշտական առկայության դեպքում անհրաժեշտ էր հաստատուն քայլերով շարժվել դեպի այս նպատակը, քանի որ եթե հացահատիկային բերքը չհավաքվեր և չամբարվեր, չքավորների և սովյալների թիվը սարսափելի կաճեր և ժողովուրդը հաջորդ ձմեռ կրկին կմնար գթասիրտ մարդկանց ողորմածությանը:

Այս ամիսների ընթացքում անհրաժեշտ էր, որ աշխատանքներն ընթանային հնարավորին չափ արագ և շարունակական լինեին: Մեր հենակետերն ըստ հերթականության տեղակայվեցին Խարբերդում,

Բերրիի ճանապարհին, ապա նորից Խարբերդում: Պահանջվում էր մարդկանց նախկինում ունեցած ողջ փորձը: Գտնվեցին և ձևավորվեցին հեռազոտող կոմիտեներ, քաղաքներից, գյուղերից, բազմաթիվ անհատներից ամեն օր ստացվում էին զեկույցներ և գրավոր խնդրանքներ: Սակարկվում էին հացահատիկի, անասունի, հագուստի, մի շարք գյուղատնտեսական գործիքների և այլ ապրանքների գները, կազմվում զեկույցներ, գրանցվում մարդկանց կարիքներն ու ձեռք բերվում համաձայնություններ:

Քանի որ իմ գանձապահի պարտականությունն ընդլայնվել էր, նա կատարում էր մեծ և համեմատաբար փոքր գործարքներ: Վերջիններս պահում էինք գրպաններում և թամբերից կախված պայուսակներում: Խարբերդի «Եփրատ» քոլեջի նախագահ Գեյթսը զբաղվում էր մեր հաշիվների կառավարմամբ: Նրա հավասարակշիռ դատողությունն ու հեռատեսությունն այս և այլ հարցերում բավական օգտակար եղան: Անձնամբ եմ կատարել բոլոր վճարումները և վարել այս նամակին կցված ամբողջական կանխիկ հաշիվները:

Օգնություն ստացողները խմբվեցին հարյուրներով, իսկ հետո՝ հազարներով, նրանց մեծ մասը ոտքով էր եկել: Ինչպես արդեն նշեցինք, շատերը ստիպված եղան հուսահատությամբ հեռանալ:

Գրեթե ողջ հացահատիկը բաժանվեց իմ վերահսկողությամբ՝ տեղացիներից բաղկացած փոքր կոմիտեի կողմից: Այն բնակավայրերում, որ օգնության բաժանման նշված եղանակն անհնար էր, ես կարգադրություններ տվեցի ընտանիքի ղեկավարներին՝ նախապես ապահովելով սահմանված գնով ապրանքների մատակարարումը:

Գյուղատնտեսական գործիքները ձեռք էին բերվում պայմանագրով՝ ըստ նմուշի և սահմանված գնի: Հաճախ տեղեկացնում էի Խարբերդի կամ այլ բնակավայրերի դարբիններին, որ որոշակի օրերի ընթացքում բոլոր առաքված գործիքների դիմաց վճարումը կկատարվի առկա կարգով՝ համաձայն սահմանված գործակցի, եթե դրանք կնքված լինեն ապրանքանիշով: Ի սկզբանե հաստատուն գործելով այս պաշտոնում՝ ես կարողացա խուսափել խաբվելու փորձերից և այն մոլորությունից, որի մեջ փորձում էին գցել նրանց, ում համար կատարվում էր աշխատանքը:

Այս ապրանքները մեծամասամբ բաժանվում էին գյուղ առ գյուղ, և մենք կարողացանք ուղղակիորեն կամ գյուղացիների կողմից նշանակված գյուղական կոմիտեի միջոցով մարդկանց անհրաժեշտ օգնություն տրամադրել: Այն արվում էր գործողության այլ տա-

ռածքներում կուտակված աշխատանքային փորձից ելնելով, ինչպես նաև հիմնվելով Ձեր հստակ կարգադրությունների և բազմիցս փորձարկված քաղաքականության վրա: Այդ կոմիտեները, համաձայն Ձեր ցուցումների, գտնվում էին մշտական հսկողության տակ: Ժողովուրդը գալիս էր սանջակի բոլոր կողմերից: Մենք կատարեցինք Ձեր հանձնարարությունը՝ կազմավորելով ընդհանուր կամ տարածքային խորհրդատվական, ինչպես նաև վերահսկող կոմիտե: Այն կազմված էր սակավաթիվ տեղաբնակ և առաջատար առևտրականներից, քահանաներից և այլ անձանցից: Նրանք քաջատեղյակ են տեղի կարիքներին և տեղաբնակների յուրահատկություններին և օգնության դիմումները ստանալով՝ ներկայացնում էին կոմիտեի անդամներին: Կոմիտեների պահանջով գրվում էին զեկույցներ, որի արդյունքները ներկայացվում էին ինձ, իսկ ես գործում էի՝ վստահելով իմ բանականությանն ու գիտելիքներին: Հագուստն ու անկողնային պարագաները վստահելի մարդկանց միջոցով տրամադրվեցին իմ բնակարանից: Օգնության համար դիմած մարդկանց հետ զրուցում էինք, մանրամասն տեղեկանում նրանց վիճակին, դրանից հետո միայն օգնություն տրամադրում: Երբեմն կարիքավորներն ավելի շատ բան կարող էին անել իրենց համար, քան ես՝ նրանց մի փոքր գումար հատկացնելով: Անասունի և գրաստի մեծ մասը գնեցին կամ հենց իրենք՝ բնակիչները, կամ փոքր կոմիտեն՝ տվյալ գյուղի որոշ բնակիչների համար: Նման դեպքերում զգուշորեն օգտվում էի գործարարության հասարակ նախազգուշական միջոցներից՝ արդյունքների հուսալիությունն ապահովելու համար: Ես պահանջում էի զեկույցներ ներկայացնել: Ձեր հրահանգի համաձայն կենդանիներն ու գյուղատնտեսական գործիքները կնքվեցին ապրանքանիշերով: Այս փաստը որոշակի դժվարություններ առաջացրեց, երբ գործ ունեցանք նոր մարդկանց հետ, սակայն նրանք էլ պիտակավորումը օգտակար միջոց դիտարկեցին, որը ձեռնարկվել էր ապահովությունից ելնելով, և անհրաժեշտության դեպքում օգնություն ցուցաբերեցին:

Մեր նպատակն էր դուրս բերել մարդկանց ողբալի վիճակից, վստահեցնել նրանց, որ կրկին բարեկեցիկ պայմաններ կունենան՝ օգտագործելով ամեն հնարավոր միջոց:

Խարբերդ քաղաքում և 85 գյուղից բաղկացած համանուն սանջակում կատարած աշխատանքի մոտավոր արդյունքը հետևյալն է վերականգնվել է 4.575 արհեստավորների աշխատանքը, գյուղա-

ցիներին տրամադրվել է 700 գլուխ եզ, կով, ավանակ և ձի, պատրաստվել և առաքվել մոտ 3.000 գյուղատնտեսական և այլ գործիքներ, ինչպես նաև տրամադրվել է 3.500 կտոր հագուստ, 500 անկողնային պարագա և 1470 բուշել հացահատիկ: Դեղորայք է բաժանվել նաև տենդախտով հիվանդներին:

Խարբերդում զբաղվեցի այս աշխատանքներով մինչև հուլիսի 3-ը:



Ուրֆայի առաքելական եկեղեցու ներքին տեսքը (Չ. Ք. Վուդի գծանկարներից)

Երբ ստացա Ձեր կարգադրությունը՝ պարոն Վուդին հետ կանչեցի Ֆարկինից, և մենք միասին հուլիսի 20-ին Սեբաստիայով, Սամսունով, ապա Սև ծովով վերադարձանք Կ. Պոլիս:

Ձեր աննկատ ուղղորդումն ու աջակցությունը բոլորիս պաշտպանել են վտանգներից, պահպանել մեր եռանդն ու առողջությունը, տվել գործելու և մշտապես հաստատուն լինելու կամք: Առանց դրանց գործերի կառավարումն անզոր կլիներ, և մենք կպարտվեինք այս պայքարում: Մենք մեր երախտագիտության խոսքն ենք հայտնում Ձեր

Աստվածաբանության դոկտոր, պատվելի Ջորջ Ռուշբրն,
Ռոբերտ քոլեջի նախագահ

Ռոբերտ քոլեջի շենքը

«Հազար ու մի սյուների» ջրամբարը Ստամբուլում

Պարապի աշտարակ, Դիարբեքիր

աջ ձեռքին՝ ֆինանսների քարտուղար պարոն Փուլմընին: Ես անտարբեր չէի Ձեր ամենօրյա այն մտավոր շարչարանքների, Ձեր դժվարին պատասխանատվության նկատմամբ: Սակայն Ձեզ հաջողվեց ոգեշնչել, գոտեպնդել և խրախուսել մեզ դժվարին օրերին: Հուսալքության պահերին, որոնք պետք է խոստովանեմ, որ եղել են, ես միշտ զգացել եմ երկու էակների հոգատարությունն իմ հանդեպ: Դրանցից առաջինն ինձնով հետաքրքրվող էակն է, ով գտնվում է իմ հեռավոր տանը, իսկ երկրորդը Դուք, որ սրտանց աղոթում էիք անձիս համար. «Տեր, շնորհի՛ր նրան Քո իմաստությունը, տոկունությունն ու համբերատարությունը»:

Զեկուցելով Ձեզ՝ հաճույքով եմ հիշում այն հյուրընկալությունը, որին այդքան առատաձեռն արժանացանք քրիստոնյա հայերի, հույների, մահմեդականների և այն բազմաթիվ մարդկանց կողմից, որոնք ի վիճակի էին օգնել մեզ: Մենք խորապես երախտապարտ ենք տարբեր կայաններում գտնվող մեր ամերիկյան միսիոներական կազմակերպություններին, նրանք մեզ հետ վարվեցին այնպես, ինչպես կվարվեին իրենց եղբայրների հետ: Նրանցից յուրաքանչյուրն հնարավոր ամեն բան արեց մեզ հարմարություններով ապահովելու և մեր աշխատանքներին աջակցելու համար: Միշտ բարձր կգնահատեմ այն ընկերությունն ու բարոյական աջակցությունը, որին ես արժանացա Խարբերդում անցկացրած բազում շաբաթների ընթացքում: Ճանապարհին գտնվող Անգլիայի, Ֆրանսիայի, այդ թվում նաև հայրենի երկրի հյուպատոսություններում մեզ դիմավորեցին ջերմագին հյուրընկալությամբ և օգնեցին անհրաժեշտության դեպքում: Վերջապես, այս առնչությամբ ցանկանում եմ ամենահաճելի զգացումով հիշել այն ընդունելությունն ու անկեղծ հետաքրքրությունը, որ մեր առաքելության հանդեպ ցուցաբերեցին մեր հայրենակիցները Իզմիրում գտնվող ամերիկյան «Սան Ֆրանցիսկո» նավի ծովակալն ու նավապետերը և Մերսինում գտնվող ամերիկյան «Շիփ Մարբըլհեդ» նավի նավավարները:

Հարգանքով՝ Է. Մ. Ուիսթար

Կ. Պոլիս, հուլիսի 22, 1896 թ.



Գյուղատնտեսական և այլ գործիքներ, զենքեր (Ջ.Ռ. Հաբեղի ուրվանկարներից)

ԵՐԵՐԴ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱԿԱԼ ՉԱՐԼԶ ՔԻՆԳ ՎՈՒԴԻ (ՖԻԼԱԴԵԼՖԻԱ) ԶԵԿՈՒՅՑԸ

Նախագահ Կլարա Բարտոնին

Մարտի 19-ին երկրորդ առաքելությունն իմ, Էդուարդ Մ. Ուիսթարի և թարգմանիչների գլխավորությամբ, ապրանքներով և միջոցներով հանդերձ Կ. Պոլսից մեկնեց Ալեքսանդրետ: Այն անմիջապես հետևեց դոկտոր Հաբելի գլխավորած առաջին առաքելությանը: Չնայած մեզ թուրքական անձնագրեր էին տրամադրել, սակայն մեր երթուղին դեպի երկրի ներքին շրջաններ լիովին հստակ չէր: Այնուամենայնիվ, հասնելով Նավահանգիստ՝ ամերիկյան հյուպատոսության գործակալ պարոն Ուոքերի ջանքերով և մայրաքաղաքից ստացած Ձեր ազդեցիկ և հմուտ օգնության շնորհիվ կարողացանք արտոնագրեր ստանալ Այնթափ ուղևորվելու համար: Այսպիսով քայլ առ քայլ շարժվում էինք տուժած շրջաններով: Սկզբում դժվար էր կռահել, թե մի օրում կհասնեինք այն վայրը, որտեղից պետք է առաջ շարժվեինք: Ուղևորությունը ծանր էր, թեպետ չուղեկցվեց դժվարություններով և վտանգներով: Այժմ, երբ ամեն բան հետևում է, կարող ենք միայն հիշել, թե որքան ուրախացանք, երբ մեզ թույլատրեցին որոշակի համեստ ծառայություններ մատուցել մեր հայրենակիցներին, ինչպես նաև այն կնոջը, ով իր ողջ կյանքում օգնության ձեռք է մեկնել տառապող և ընչազուրկ մարդկանց՝ անկախ նրանց ազգությունից կամ դավանանքից. նա երբեք դատարկաձեռն չի եղել: Այս ուրախության պահին մենք մոռանում ենք փորձությունները և հետադարձ հայացք գցելով, նկատում, որ դրանք ավելի և ավելի են քչանում:

Դոկտոր Հաբելը հենց նոր էր հագուստով, գործիքներով և այլ ապրանքներով բեռնավորված մի քանի մեծ քարավաններ առաքել դեպի Մարաշ, Այնթափ և գործողության այլ տարածքներ: Մենք առանց ժամանակի կորստի Ալեքսանդրետ հասնելու հաջորդ օրը ուղևորվեցինք Այնթափ՝ թուրք զինվորների պահակախմբի ուղեկցությամբ: Օգտվելով առիթից՝ նշեմ, որ թուրքական իշխանությունները բոլոր առումներով մեզ ամենահուսալի պաշտպանություն էին ապահովել: Երկրի ներքին շրջաններում անցկացրած ողջ չորս ամիսների ընթացքում մենք երբեք չմնացինք առանց պահակախմբի: Նրանց ներկայությունը հաճախ անհարմար դրության մեջ էր դնում մեզ: Մարդու կյանքը մեծ մասամբ վտանգված է և նա չի կարող անգամ գնալ լողանալու առանց զափիթիեի ուղեկցության: Սակայն չեմ կասկածում, որ մեր անձի և ունեցվածքի ապահովությունն այս նախազգուշական միջոցների շնորհիվ էր: Երկիրը լի է քրդական, արաբական ցեղերով, ինչպես նաև թափառող չերքեզների ավազակախմբերով, այնպես որ առանց զինված պահակախմբի ուղեկցության ճամփորդի համար անհնար է մուտք գործել երկրի ներքին շրջաններ: Պահակախմբի տարբերանշանից կարելի էր պաշտոնապես գլխի ընկնել նրա ներկայություն մասին: Անգամ ամենախիզախ ավազակները սարսափում էին իշխանությունից:

Երբ մենք ուղևորվեցինք Այնթափ, այնտեղ տեսանք բազմաթիվ սարսափահար գաղթականների, որոնք ինչ-որ նավով հեռանալու հույսով ծովափ էին փախչում: Քաղաքում տագնապի և անհանգստության մթնոլորտ էր, լարվածությունը զգացնել էր տալիս: Մեր պահակները մեզ խմբված էին պահում, մանրամասն ուսումնասիրում յուրաքանչյուր մոտեցող քարավան ու ճամփորդների խումբ. նրանք մտահոգ էին: Մենք իմացանք, որ նախորդ գիշեր չերքեզների մի խումբ ծրագրել էր հարձակվել Քըրք-Խանի վրա, որը փոքր գյուղ էր, ուր կանգ առանք կեսօրին՝ ձիերին մի օրով հանգիստ տալու, և թալանել բնակիչներին, սակայն իշխանությունները կռահել էին նրանց մտադրությունը և կանխել այն՝ արագորեն ուղարկելով մի թուրքական հետևակային ջոկատ, որ պաշտպաներ գյուղը:

Երբ մոտենում էինք Քիլիսին, լուրեր ստացանք այնտեղ տիրող անհանգստությունների մասին: Երբ քաղաք հասանք, ականատես եղանք, որ այն ամբոխի կողմից ուղղակիորեն գտնվում էր սպառնալիքի տակ, ուստի հասկացանք, որ այդ զուժկան լուրերը բացարձակ ճշմարտություն էին: Քաղաքում ապստամբություն էր տեղի

ունեցել, բազմաթիվ մարդկանց սրի էին քաշել, իսկ խանութներն ու տները՝ թալանել: Ոչ իջևանատանը, ոչ էլ անգամ անասունների և ուղտերի ախոռում ազատ տեղ չկար մեզ համար, մենք ստիպված եղանք ապաստան փնտրել այլ վայրերում: Երբ անցնում էինք ոլորմոլոր փողոցներով, տեսանք, որ յուրաքանչյուր խանութ դատարկ էր և յուրաքանչյուր դուռ փակ: Քաղաքի առևտրական կյանքը կանգ էր առել և ամեն մարդու դեմքին դաջված էր անհանգստության զգացումը: Այնուամենայնիվ, մենք, վերջապես, գտանք այլ իջևանատուն, որ դժվար հասանելի էր և կեղտոտ, և շենք մտանք մի ոլորապտույտ ճանապարհով, որը գրեթե *փակուղի* էր: Սակայն այն միակ ապաս-

Կարմիր խաչի գլխավոր գրասենյակ, Ֆարկին: Վուդի արշավախումբը և բուրդ բեյին պատկանող ամրոց (Չ.Ջ. Վուդի ուրվանկարներից)

տարանն էր և մենք պետք է համակերպվեինք: Երկու օր մնացինք Քիլիսում՝ գնելով տարբեր ապրանքներ և, չնայած մեր շուրջը տիրող ապստամբությանը, մենք ամբողջովին պաշտպանված էինք և անվնաս:

Քաղաքապետն ուղարկեց մեզ իր ողջույնի խոսքը և ցանկացավ տեղեկանալ, թե ովքեր ենք և ինչ նպատակով ենք եկել: Մենք քաղաքավարությամբ պատասխանեցինք նրա հարցերին՝ ցանկալի տեղեկությունը տրամադրելով, ինչպես նաև այս անհանգիստ ժամանակներում մեզ տրամադրված պաշտպանության համար շնորհա-

կալություն հայտնեցինք: Իմացանք, որ Նորին գերազանցությունը մի քանի օր առաջ էր տեղեկացել մեր ժամանման մասին և հանձնարարել է ուշադիր լինել մեր նկատմամբ:

Վաղ առավոտյան թողնելով Քիլիսը՝ մեր երկար քարավանը ձգվեց դեպի լեռների ստորոտները, որտեղից մի հիանալի տեսարան էր բացվում: Համոզված եմ՝ այդ տեսարանը հիացմունք կպատճառեր գթասիրտ ամերիկացիներին, եթե տեսնեին, որ իրենց նվիրատվությունները այսպիսի պայմաններում էին հասնում Անատոլիայի ընչազուրկներին: Ոլոր-մոլոր արահետը (ճանապարհ չկար) փոշոտ էր և հիմնականում անցնում էր քարքարուտներով: Սարերի կատարները և ներքևում փռված անմարդաբնակ, գրեթե անբնակելի և ծառազուրկ արահետները վերից վար ծածկված էին քարակույտերով: Միակներ շարունակ մարդկային կյանքի միակ նշանը քրդերի կամ թափառական գնչուների ավազակախմբերն էին, անասունների, ոչխարների, այծերի նախիրները և վայրի տեսք ունեցող, այծենակաճը հագներին հովիվները, որ տանում էին հոտը՝ գարնանը ցաքուցրիվ եղած քարերի մեջ աճող աղքատիկ խոտածածկեր փնտրելով: Տարօրինակ, միապաղաղ, ամայի երկիր և ավերածության տեսարան: Գողության կամ ավելի վատ երևույթների մասին մտացածին պատմությունները կարող են իրականության վերածվել այս ամայի լեռնալանջերում: Զարմանանում ես, երբ տեսնում, թե ինչպես են կարողանում երկար ոտքեր ունեցող, ծանրաշարժ ուղտերը քայլել նման խորդուբորդ արահետով՝ իրենց ծանր բեռները քոշ տալով: Նրանք լուռ, դանդաղ, առաջ են շարժվում՝ կարծես անցյալի ուրվականներ: Ինչևէ, այս կենդանին ապրանք փոխադրելու ամենահարմար միջոցն է պարզունակ հարմարություններից օգտվող երկրում:

Մենք մի շաբաթ մնացինք Այնթափում և մարդկանց կարիքներին վերաբերող տեղեկություններ հավաքեցինք: Այդ մասին ժամանակ առ ժամանակ զեկուցել ենք Ձեզ: Այստեղ մենք զբաղվել ենք նաև բեռների բաժանման աշխատանքներով: Այնուհետև հեռանալով դոկտոր Հաբելի արշավախմբից՝ մի քանի օր շարժվեցինք դեպի արևելք՝ Եփրատի վրա գտնվող Բիրեջիքի ուղղությամբ: Քաղաքը բավականին տուժել էր ավերածություններից, ուր, սակայն, հենակայան հիմնադրելն իրատեսական չէր:

Ուրֆայում, որ մեր հաջորդ կարևոր նպատակակետն էր, հանդիպեցինք տիկին Շատակին՝ օգնության աշխատանքների պատասխանատուին և նրա օգնականին՝ պարոն Սոնդերսին: Տիկին Շա-

տակը դեկտեմբերի 28-29-ը լրիվ միայնակ էր եղել Ուրֆայում: Կարիք չկա հիշատակել նրա դրսևորած դերակատարությունը բազմաթիվ կյանքեր փրկելու գործում: Սակայն ես չեմ կարող չարտահայտել նրա քրիստոնեական բնավորության և ազնվածին հերոսության հանդեպ տածած իմ անկեղծ հիացմունքը ջերմորեն հիշելով բազմաթիվ բարի գործերը, որոնք նա կատարեց որպես քույր, և այն անկեղծ հյուրընկալությունը, որ նա այդքան մեծահոգաբար ցուցաբերեց մեզ իր տանը: Այն պարագայում, երբ օգնության աշխատանքը շատ լավ համակարգված էր, նա հայացքն ուղղում էր դեպի ապագան՝ գիտակցելով, որ ամերիկացիների և անգլիացիների կողմից հատկացվող միջոցների հոսքը ոչ միշտ է շարունակվելու: Տիկին Շատակն տղամարդկանցից և կանանցից բաղկացած մի ջոկատ ուներ, որի անդամներն ամեն օր վարձատրվում էին արդյունաբերական բաժնում: Նրանք հագուստ և անկողնային պարագաներ էին պատրաստում, ապա տրամադրում դրանք կարիքավորներին: Ծայրահեղ դեպքերում տիկին Շատակը նաև շաբաթական չափաբաժին էր տրամադրում:

Ուրֆայի մեր գործունեությունը նախատեսված էր լրացնելու այնտեղ արդեն իսկ կատարված արդյունավետ աշխատանքները: Մենք որոշակի միջոցներ թողեցինք խոհանոցային սպասքի արտադրության և տրամադրման, քաղաքում բազմաթիվ արհեստների վերականգնման համար: Վերջնիս իրականացման համար անհրաժեշտ էին գործիքներ կամ փոքր գումար: Այնուհետև մենք երկու օր շարունակ ճանապարհորդեցինք դեպի Սերեկ, որն ավելի փոքր քաղաք էր, քան Ուրֆան, բայց օգնության խիստ կարիք ուներ: Հարցումներ արվեցին և, ինչպես գիտենք, անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեցին: Գրեթե երեք երկար օր ձիերի վրա անցկացնելուց հետո հասանք պարսպապատ և հինավուրց Դիարբեքիր կամ Ամիդ քաղաքը, որը քիչ անհանգստություն չէր պատճառել հին հռոմեացիներին: Հարևան բնակավայրերի բոլոր գաղթականները փախել եկել էին այդ քաղաք, ինչի հետևանքով այն գերբնակեցված էր և ծայրաստիճան անհանգիստ: Երբ մենք մոտենում էինք քաղաքին, անցանք մի քանի այրված և ամայի գյուղերով, ուր յուրաքանչյուր տուն թալանված էր: Չնայած որ Դիարբեքիրում 2000 մարդ էր սպանվել, շուկաների ողջ թաղամասն ավերակների մեջ էր ու թալանված, քաղաքում կորուստը համեմատաբար ավելի քիչ էր, քան շրջակա գյուղերում, ուր թալանվել էր ողջ շարժական գույքը, անգամ դռները,

պատուհաններն ու տանիքի գերանները:

Մեզ ջերմորեն հյուրընկալեց Դիարբեքիրում Բրիտանիայի հյուպատոս պարոն Հոլուարդը: Հարմարավետ հյուպատոսության շենքը ծառայեց մեզ որպես տուն քաղաքում եղած երկու օրվա ընթացքում: Հյուպատոսն անում էր ամեն հնարավոր բան՝ օգնելու կարիքավորներին, սակայն 60 հազարանոց կարիքավորների և միջոցների խիստ անբավարարության պայմաններում նա ամեն քայլափոխի դժվարության առջև էր կանգնում: Այդ ժամանակ գործողության ողջ տարածքներում իրականացվելիք աշխատանքների համար բոլոր աղբյուրներից ստացել էինք ընդամենը 1575 լիրա (8000 դոլար): Ինչևէ, Դիարբեքիր կատարած իմ այցի ժամանակ այս գումարն աճել էր և (այցից ավելի ուշ) դարձել մոտ 5000 լիրա (22.000 դոլար), որը խիստ անբավարար էր և այլ սանջակներին հատկացված գումարից շատ ավելի քիչ: Այդուհանդերձ Դիարբեքիրը, առողջ դատողությամբ, մեր ուսումնասիրած բոլոր քաղաքներից ամենակարիքավորն էր: Օրինակ, Սիլվանի գավառակին, ուր կար 12.000 չքավոր և աղքատության թիվն անցնում է երեսակայության սահմանը, տրամադրվել էր ընդամենը 200 լիրա: Ավելի քան 220 մարդ մահացել էր սովից և այնտեղ իսկական աղետ էր: Քառասունութ գյուղ ամբողջովին ավերված էր, անասունը՝ քշված, իսկ գյուղատնտեսական գործիքները՝ գողացված: Եթե անգամ մարդիկ վերադառնային իրենց ավերված տները, նրանք անկարող կլինեին գոյատևել առանվազն առանց այն գումարի, որով կկարողանային գնել հումքանյութեր և գործիքներ՝ վերսկսելու իրենց աշխատանքը: Նրանք պետք է գոյատևեին մինչև կկարողանային գիտակցել այդ աշխատանքի ծանրությունը: Երեք հարյուր յոթանասուն խանութ, միայն հազարը Դիարբեքիրում այրվել կամ այլ կերպ ոչնչացվել էր: Առանց սեփական աչքերով այս ամենը տեսնելու հազիվ թե կարելի էր պատկերացնել սանջակում տիրող սարսափելի չքավորությունը: Նիսիբինում, Հազրոյում, Մարդինի ավերված ողջ գավառում և դեռ չայցելած այլ բնակավայրերում չկար մեկը, ով օգներ մարդկանց: Այս բոլոր տվյալները հավաստի են: Հետագայում՝ Ձեր հրահանգների համաձայն գնացինք հանդիպելու դոկտոր Հաբելի հետ: Տավրոսի դժվարանցանելի և ձյունածածկ լեռերով մենք ուղևորվեցինք դեպի Խարբերդ, ուր հասանք երեք օրից: Խարբերդում մենք կրկին բաժանվեցինք և ինձ բախտ վիճակվեց գնալ Բալուի գավառակ, որը գտնվում

Խարբերդի ավերակները (Է. Մեյսոն)

Կարմիր խաչի քարավանի մի մասը

Գալաթայի կամ Քրիստոսի:
Այժմ ծառայում է որպես հրշեջ կայան

էր Եփրատի կիրճի բերանին: Լեռնային ուղևորության դեպքում Խարբերդից այնտեղ երկու օրվա ճանապարհ էր: Գավառակով ձգվում էր մի դաշտ, որը բացի Բալու քաղաքից ընդգրկում էր 58 գյուղ, որոնց բնակչությունը կազմում էր մոտ 50.000 մարդ: Դրանցից առնվազն 15.000-ը չքավոր էր: Բալուի դաշտում կա ավելի քան 200 գյուղ, որոնցից մեծ մասը բնակեցված է թուրքերով կամ քրդերով: Այս ժողովուրդը վայրի է և դեռ մասամբ կառավարվում է ֆեոդալ առաջնորդների կողմից, ովքեր բռնությամբ իշխում էին նրանց կյանքին, պատվին և ունեցվածքին: Բալուն մեծապես տուժել է ջարդերի ժամանակ, և միսիոներների կողմից նշանակված տեղական կոմիտեն, մտավախությունից ելնելով, չկարողացավ օգնություն տրամադրել մարդկանց: Կար մի այլ բնակավայր, որն օգնության խիստ կարիք ուներ,

Հինավուրց աշտարակ Ուրֆայում

և միայն Կարմիր խաչին հաջողվեց հասնել այնտեղ: Ուստի, մենք ժամանակ չկորցրինք և Խարբերդի միսիոներական քոլեջի պրոֆեսոր, ամենաընդունակ օգնական և թարգմանիչ պրոֆեսոր Թենեկեգյանի հետ ճանապարհ ընկանք դեպի գործողության տարածք: Մարդկանց գունատ, հյուծված դեմքերը և մաշված հագուստը բավարար ապացույց էին, որ ուշ էինք ժամանել: Մենք միանգամից խրվեցինք գործի մեջ՝ սկզբից պատրաստելով կարիքավոր ընտանիքների ստույգ ցուցակը՝ արդար և հավուր պատշաճի օգնություն տրամադրելու համար: Ցուցակից դուրս թողեցինք այն ընտանիքներին, որոնք ինչ-որ կերպ կարող էին խնամել իրենց կամ ընկերներ ունեին Ամերիկայում, Կ. Պոլսում կամ այլ վայրերում, որոնք կարող էին օգնել

իրենց: Կրճատելով ընտանիքների թիվն՝ ըստ ամենակարիքավորների և հասցնելով այն նվազագույնի՝ մեզ հաջողվեց հնարավոր օգնություն տրամադրել առավելագույն թվով կարիքավորների: Բնակավայրի ամենաազնիվ տղամարդկանցից կազմվեց մի կոմիտե, որը պետք է հանդիպեր մեզ հետ և այցելեր ցուցակում նշված ընտանիքներին՝ տվյալները ստուգելու և ուղղելու նպատակով, մինչև մենք մթերք կբաժանեինք: Այսպիսով, երբ օգնության տրամադրումը սկսվեր, մենք վստահ կլինեինք, որ այն արդար էր, հավասար և ոչ մի պակաս կարիքավոր ցուցակից դուրս չէր մնացել: Քաղաքի գլխավոր գրասենյակից տրամադրվեց 3000 կտոր հագուստ և անկողնային պարագաներ: Հատկացվեց նաև 1000 կտոր գործվածք՝ մեծ չափսերի, որը կարող էր որպես հագուստ կամ անկողնային պարագա ծառայել: Դարբիններն անցան գործի, նրանց երկաթ էր հատկացվում, որի համար նրանք վճարում էին մեզ ըստ դրա շուկայական գնի՝ իրենց պատրաստած գյուղատնտեսական գործիքների արժեքից: Պատրաստվեցին և մեր ցուցակի համաձայն 58 գյուղերին և Բալու քաղաքին հատկացվեցին ավելի քան 3.000 գութաններ, գերանդիներ, բահեր, սղոցներ, քլունգներ և այլ գյուղատնտեսական գործիքներ: Նաև օգնություն հատկացվեց մոտ 600 գլուխ բանող անասուն գնելու և մի քանի հազարավոր ավերված տներ վերականգնելու համար: Բուրդ ու բամբակ, ինչպես նաև ճախարակներ տրամադրվեցին 150 որբևայրի կանանց, որով այս նրանք կարող էին գումար վաստակել՝ իրենց և իրենցից կախյալ որբերի ապրուստն ապահովելու համար: Բազմաթիվ այլ կանայք աշխատում էին գլխավոր գրասենյակներում և դրա դիմաց օրավարձ էին ստանում: Նրանք ձևում էին հագուստներ, անկողնային պարագաներ կամ թել էին մանում, որոնք մենք հետագայում այլ իրերի հետ միասին տրամադրում էին մարդկանց: Երեք հարյուր արհեստավորներ կրկին անցան իրենց առօրյա աշխատանքին: Խիստ անհրաժեշտ էր նորոգել քաղաքի ավերված թաղամասի ջրուղին, այլապես եկող ամռանը մարդկանց լուրջ փորձություն, նաև հնարավոր հիվանդություն էր սպառնում: Սակայն դրա վերանորոգման համար մեր միջոցները զգալիորեն անբավարար էին: Մենք սկսեցին այն վերանորոգել՝ կարիքավոր մարդկանց աշխատանք տրամադրելով: Աշխատանքներն սկսվեցին գործողության տարածք մտնելուն պես, և վերանորոգման լուրն ընդունվեց ամենայն ուրախությամբ, քանի որ մահմեդականներն ու քրիստոնյաները, Արևելքի բնակիչների նման, մարդկանց ջուր պարգևող-

ներին հրեշտակներից մի փոքր ցածր են դասում: Այսպիսով մեր առաջին քայլը բարենպաստ էր, շուտով իմացանք, որ բոլոր մարդիկ իրենց աղոթքներում օրհնում էին մեր գործը: Երբ վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին, բնակիչներն ասացին, որ ջրատարի կառուցումից ի վեր երբեք այդքան առատ ջրի պաշար չեն ունեցել:

Գործողության տարածքներում տարվող օգնության աշխատանքների շրջանակում ներգրավված էր յուրաքանչյուր կարիքավոր ընտանիք: Չկար մեկը, ում ոչինչ տված չլինեինք և այդ օգնությունը, լիներ դա հագուստ, անկողնային պարագա, գութան, սղոց, բահ, օժանդակություն՝ գործարարությունը վերսկսելու համար, տրամադրել էինք միայն տեղեկանալուց հետո, թե նրանցից յուրաքանչյուրն ամենաշատը ինչի կարիք ուներ: Իշխանությունները բարյացակամ էին մեր հանդեպ և հաճախ էին այցելում մեզ, սակայն ոչ մի անգամ չեն միջամտել մեր աշխատանքներին կամ էլ չեն փորձել հսկողություն սահմանել մեր կիրառած մեթոդների նկատմամբ: Իսկ ցուցակները, որոնցով առաջնորդվում էինք օգնությունը տրամադրելիս, պատրաստվել էին մեր, այլ ոչ թուրքական կառավարության կողմից: Մեր անձնական ապահովությունից ելնելով գործը սկսելուց առաջ մենք անմիջականորեն խնդրեցինք կառավարությանը թուրք պաշտոնյաներից բաղկացած մի կոմիտե նշանակել, որ պետք է ներկա գտնվեր մեր բոլոր հատկացումներին: Սակայն այդ կոմիտեն միայն կարճ ժամանակ ներկա գտնվեց մեր երկար հավաքներին, իսկ վերջում մենք պարբերաբար զեկուցում էին կառավարությանը կատարվածի մասին:

Ի հավելումն այլ աշխատանքների, մենք միսիոներական օգնության ֆոնդից 97.056 պիաստր հատկացրինք գավառի գյուղերին և Բալու քաղաքին սննդամթերք բաժանելու համար: Հինգ դժվարին և տքնաջան աշխատանքով լի շաբաթ անցկացրինք Բալուում, սակայն, երբ, վերջապես, ձի թամբեցինք և պատրաստվում էինք հեռանալ, հաճույքով նկատեցինք, որ շուկաներում ակտիվության աճ էր նկատվում, իսկ մարդկանց դեմքերից գրեթե անհետացել էր տանջահար և տառապալի արտահայտությունը, փոխարենը մարդիկ նոր հույսով և վճռականությամբ էին լցվել: Տեղյակ լինելով, որ ինչ-որ մի օտար մարդ եկել էր իրենց երկիր և հասկանում, գիտակցում էր իրենց վիճակը, նրանք քաջություն հավաքեցին դուրս եկան սարսափելի անզգա վիճակից և, օգտվելով Կարմիր խաչի կողմից առաջարկված հնարավորությունից, նորից ոտքի կանգնեցին: Մենք կրկին և կրկին

համոզվեցինք, որ եթե անգամ Կարմիր խաչը եկած լիներ այդ երկիր առանց որևէ օգնության, միայն նրա ներկայության բարոյական ազդեցությունն անգնահատելի կլիներ: Երբ մենք ավարտել էինք մեր աշխատանքները և հետ էինք վերադառնում Բալուի հարթավայրերով, տեսանք մեր տրամադրած եզներով ու գութաններով դաշտերում աշխատող գյուղացիների: Ոմանք օգտագործում էին իրենց տրամադրված քլունգներն ու բահերը՝ ավերակ դարձած տների մնացորդները մաքրելու համար, ոմանք էլ վերանորոգում էին իրենց տները՝ գործածելով Կարմիր խաչի կողմից տրամադրած գերանները: Հիշում եմ, ճանապարհին հանդիպեցինք փուքսը ձեռքին մի մարդու: Այն դարբիններն էին պատրաստել մեր տրամադրած միջոցներով: Մենք բավարարված զգացինք, երբ տեսանք մեր տքնաջան աշխատանքի պտուղները և ստացանք յուրաքանչյուր բնակչի սրտագին օրհնությունը: Նրանցից ոմանք, զգացմունքներից խեղդված, փորձում էին անգամ համբուրել մեր ձեռքերն ու ոտքերը: Բերքը հասել էր, մանգաղը շուտով գործի էր դրվելու, իսկ մենք ուրախ էինք, որ մեր օգնությունն ու գործիքները ժամանակին էին տրամադրվել:

Կրկին հասնելով Խարբերդ՝ մենք միայն մեկ օր նախապատրաստվեցինք, ապա տեղաբնակ երիտասարդ ուսուցիչ պարոն Վարդանի հետ, ով մեզ հետ եկել էր որպես թարգմանիչ և օգնական (մենք մեկնում էինք գործողության նոր տարածք, այնտեղ խոսում էին միայն քրդերեն, հետևաբար նոր թարգմանիչ վարձելու կարիք կար), ուղևորվեցինք դեպի Դիարբեքիրի վիլայեթ և Սիլվանի ավերակ դարձած գավառակ: Անընդհատ մտածում էի Դիարբեքիրի վիլայեթի մասին, որի սարսափելի վիճակը ծանրացել էր սրտիս, սակայն հույս չէի կորցնում: Միգուցե Դուք էլ չպատկերացնեք, թե որքան ուրախացա, երբ ստացա Ձեր կարճ հրամանը՝ «Վերցրե՛ք 1000 լիրա և ուղևորվե՛ք Դիարբեքիր»: Մենք գիտեինք, որ ոչ վաղ անցյալում որոշակի ժամանակ Կ. Պոլիս զեկուցելու ընդհանուր կարգ կար: Ինչպես պատկերացնում եք, մենք զօրուգիշեր աշխատում էինք՝ առանց մի րոպե կորցնելու: Ճանապարհ էինք ընկնում կեսօրից հետո, ճամփորդում էինք ողջ հաջորդ օրը և հաջորդ գիշերը՝ 48 ժամ հետո հասնում Դիարբեքիր: Այս ուղևորությունը սովորաբար պահանջում էր 3-4 օր: Միայն մի գիշեր կանգ առանք քաղաքում և դարբիններին պատվիրեցինք 1400 արհեստավորի, գյուղատնտեսական և այլ գործիքներ պատրաստել, ապա շտապեցինք Ֆարկին՝ Սիլվանի գավառակի գլխավոր քաղաքը՝ այնտեղ օգնության կայան հիմնելու նպա-

տակով: Անցնելով Տիգրիս գետի ծանծաղուտներով երկու օր շարժվեցինք դեպի արևելք՝ երկրի գրեթե ամայացած, լեռնոտ և ոլոր ճանապարհներով, միայն տեղ-տեղ հանդիպում էին ցեխածեփ տներով փոքրիկ քրդաբնակ գյուղեր: Գյուղը նման էր ավերված պատերի մի կույտի: Միայն արագիլներն էին իրենց բներում մնացել: Այս գյուղերից մոտ տասներկուսում տեսանք ընդամենը մեկ տուն, որը տանիք ուներ: Սակայն ամենից շատ ինձ վշտացրեց մոլոններով ծգվող խոպանի տեսարանը: Ուղևորության ընթացքում շատ հազվադեպ էինք տեսնում վարած արտերի, բացի քրդական բնակավայրերը շրջապատող դաշտերից: Ինչպիսի՞ սով: Ինչպիսի՞ աղքատություն: Այս ամենը տեսնելով անգամ կարելի էր ավելի վատ կանխատեսում անել հաջորդ տարվա համար: Ի նչ դարձավ ժամանակի հարուստ, ծաղկող և բնակեցված երկիրը: Այն մարդկության ցեղի բնօրրանն է, բայց նայեք այժմ այդ ավերված երկրին: Մենք ճիշտ ժամանակին հասցրինք հունձի գործիքները բնակիչներին. տեսանք մարդկանց, որոնք դաշտերում փորձում էին փրկել հացահատիկի բերքը սեփական ձեռքերով: Պատկերացրեք, եթե կարող եք, ստեղծված ծայրահեղ աղքատ վիճակը, որը ծայրաստիճան անհավանական էր և ողորմություն հայցող: Պատկերացրեք, եթե կարող եք, թե մարդկանց որքան ուրախություն պատճառեց Կարմիր խաչի ժամանումն այդ երկիր:

Հասնելով Ֆարկին՝ հարյուրապետը կամ մեր պահակախմբի առաջնորդն անմիջապես ուղեկցեց մեզ կառավարական շենք, որպեսզի ողջունեինք նահանգապետին ներկայացնեինք մեր ծրագրերը: Նորին գերազանցությունը, հավանաբար տեղյակ լինելով մեր ժամանման մասին, ջերմորեն ընդունեց և առաջարկեց մեզ վիլայեթի բեյերից մեկի՝ քուրդ առաջնորդի հյուրընկալությունը: Հաջի Ռաշիդ աղան միանգամից անձամբ հաստատեց այս առաջարկությունը: Կարճ ժամանակ անց մենք մեր բնակարանում էինք քարաշեն մի շինության մեջ, որը կառուցված էր հինավուրց Մենաֆարկին քաղաքի հսկայական ներքնապատերի վրա: Բեյն ուներ գեղեցկադեմ երիտասարդ ծառաներ՝ գոտուց կախ ընկած երկարավուն սրերով: Նրա ողջ տունը՝ ախոռներով և ծառաներով հանդերձ, մեր տրամադրության տակ էր. նա մեզ հանձնեց բանալիները: Բոլորս քնեցինք տանիքին բաց և անամպ, արևելյան գիշերային երկնքի տակ: Մենք այնքան հարմարավետ էինք զգում, որքան թույլատրում էին քաղաքավարության սահմանները: Մեր պատվին անգամ ճաշկերույթ կազ-

մակերևույթից, որին ներկա էին մի շարք բարձրաստիճան թուրք պաշտոնյաներ:

Քանի որ կարճ ժամանակով էինք մնալու Ֆարկինում, մենք անմիջապես աշխատանքի անցանք՝ կոմիտե նշանակելով և դրան հանձնարարականներ տալով: Կոմիտեն բաղկացած էր առաքելական, հռոմեական կաթոլիկ, սիրիական և բողոքական եկեղեցիների մեկական անդամներից, ովքեր պետք է ստանային և բաժանեին գործիքները, երբ մենք հեռացած լինեինք տարածքից: Մենք նրանց ասացինք, որ եթե որևէ մեկը միջամտեր իրենց աշխատանքին կամ քրդերը գործիքները թալանեին, անհրաժեշտ էր այդ մասին անհապաղ հաղորդել Դիարբեքիրում գտնվող հյուպատոս Հոլուարդին: Վերջինս վստահեցրել էր ինձ, որ պատրաստ էր նման դեպքերում միջոցներ ձեռնարկել՝ փոխհատուցում պահանջելու և այդ խնդրին առնչվող հետագա դժվարությունները կանխելու ուղղությամբ: Մենք, համոզվեցինք, որ գործիքների մի մասը կոմիտեի ձեռքում էր, իսկ մյուս մասը՝ ճամփին: Այնուհետև վերադարձանք Դիարբեքիր և Անգլիայի հյուպատոսին հանձնեցինք այն գումարը, որը ժամանակի սղության պատճառով չէինք հասցրել անձամբ բաժանել Ֆարկին և Հրեղան քաղաքներին՝ այնտեղ օգնություն ցուցաբերելու համար: Դրանք շատ այլ կարիքավոր բնակավայրեր էին, որոնք գտնվում էին հարևան Արդանա գավառում:

Այնուհետև կրկին սկսեցինք ձանձրալի և երկար, շաբաթներ տևող ուղևորությունը՝ արևից շիկնած հարթավայրերով և Միջագետքի լեռնային, խորդուբորդ արահետներով կրկին վերադարձանք Խարբերդ: Այնտեղ հանդիպեցինք մեր լավ ընկերոջն ու աշխատակցին՝ Էդուարդ Մ. Ուիսթարին: Նա ավարտել էր իր փառահեղ արշավը գործողության տարածքում և պատրաստվում էր Ձեր հրամանի համաձայն մեկնել Կ. Պոլիս՝ խորհրդակցությանը մասնակցելու և հանգստի համար:

Մենք ուրախ էինք, որ կատարել և ավարտել էինք մեր պարտականությունը և թեթև սրտով սկսեցինք երկու շաբաթ տևող ուղևորությունը դեպի Սամսունի ափ: Այնուհետև երկու օր շոգենավով անցանք Սև ծովով դեպի Բոսֆորի նեղուց և ապա՝ հասանք Կ. Պոլիս՝ Ձեր, պարոն Փուլմընի, անխոնջ, հավատարիմ քարտուղարի և մեր եղբայր-աշխատակիցների մոտ, որոնց այնքա՜ն պարտական ենք իրենց ցուցաբերած եռանդի և կարողությունների համար:

Իսկ այժմ, ինչպես հեքիաթների գրքերում է ասվում, իմ փոքր զեկույցն ավարտվեց, և ես Ձեր թույլտվությամբ եզրափակում եմ խիստ պաշտոնական զեկույցս՝ ամենայն անկեղծությամբ շնորհակալություն հայտնելով Ձեզ ինձ ընծեռած պատվի՝ Ամերիկյան ազգային կարմիր խաչի պատվավոր շարքերում համեստորեն ծառայելու համար:

Չարլզ Քինգ Վուդ *Կ. Պոլիս, օգոստոսի 1, 1896 թ.*



Տեսարան Բալու քաղաքից (Չ.Ք. Վուդի ուղևանկարներից)

ՄԱՐԱՇ ԵՎ ԶԵՅԹՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՕԺԱՆԴԱԿ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԺԻՇԿ, ԴՈԿՏՈՐ ԱՅՐԱ ՀԱՐԻՍԻ (ՏՐԻՊՈԼԻ, ՍԻՐԻԱ) ԶԵԿՈՒՅՑԸ

Դոկտոր Այրա Հարիսն ամերիկյան քաղաքացիություն ունեցող բժիշկ է Սիրիայի Տրիպոլի քաղաքում: Նա լավ կրթված, հոգով քրիստոնյա, գիտությամբ զբաղվող և մարդկանց ծառայելու պատրաստ անձնավորություն է, ով ղեկավարում է մի մեծ մասնավոր հիվանդանոց և ունի նաև իր մասնավոր գործը: Դոկտոր Հարիսը պատվաբեր ծառայություններ էր մատուցել Կարմիր խաչին և իր բարերարությամբ մեծապես օժանդակել ամերիկացիներին՝ փրկելու և ոտքի կանգնեցնելու Փոքր Ասիայի ժողովրդին: Նա պատասխանատվություն ստանձնեց գլխավորելու մի առաքելություն, որը պետք է օգներ տենդախտից տառապող հազարավոր մարդկանց, քաղաքացիների, գաղթականների, ովքեր ապաստանել էին Մարաշ և Զեյթուն քաղաքներում: Հյուպատոսներից և միսիոներներից ստացված զեկույցները ներկայացնում էին այն սարսափելի իրավիճակը, ժանտախտն ու սովը, որ ավելի շատ էին վտանգում հազարավոր մարդկանց կյանքը, քան չերքեզների դանակը կամ քրդերի նիզակն ու փամփուշտը: Մեր բոլոր հաստուկ գործակալներն իրենց պարտականություններն էին կատարում դժվարին և գործողության հեռավոր տարածքներում, և նրանցից ոչ ոքի հնարավոր չէր գործուղել Մարաշ և Զեյթուն: Բազմաթիվ վրդովմունքներից հետո Կարմիր խաչի աշխատակիցները Բեյրութում պատվելի դոկտոր Փոսթի օգնությամբ գտան դոկտոր Այրա Հարիսին և նրանից օգնություն խնդրեցին՝ անմիջապես առա-

քելություն կազմավորել: Բացի բժշկից՝ դոկտոր Հարիսից, անհրաժեշտ էր նաև վեց այլ բժիշկ և երկու դեղագործ: Չնայած դոկտոր Հարիսի հիվանդանոցը ծանրաբեռնված էր հիվանդներով, որոնց խոստացել էր վիրահատել, նա վերջնականորեն վճռեց մեկնել Բեյրութ, հանդիպել դոկտոր Փոսթին՝ իր սեփական օգնականի և դեղագործի ուղեկցությամբ: Դոկտոր Հարիսն արդեն հյուրընկալել էր դոկտոր Հաբելին և այս փաստը նպաստեց նրա համաձայնությանը: Բեյրութում ժամանակը ծախսվեց դիմորդ բժիշկների հետ հարցազրույցներ անցկացնելու վրա: Նրանց մեծ մասը, սակայն, հրաժարվեց իր դիմումից՝ տեղեկանալով ապագա վտանգների մասին: Երկրորդ օրը բողոքական եկեղեցուն պատկանող երկու բժիշկ գտան: Այսպիսով, նրանք, ձեռքի տակ ունենալով անհրաժեշտ բժշկական անձնակազմի մի մասը, անմիջապես գնեցին մթերքներն ու պաշարները և փաթեթավորեցին դրանք՝ ճանապարհ ընկնելու համար: Այնուհետև կարգավորվեց Տրիպոլիում դոկտոր Հարիսի խնամքին վստահված հիվանդների խնդիրը, և ապրիլի 3-ին չորրորդ առաքելությունը ճանապարհին էր: Ընտրված էր Մերսին-Ադանա երթուղին: Նրանք Ադանա հասան որոշակի ուշացումով. ասում էին, թե շրջակա քաղաքներում և գյուղերում կային ավազակային խմբեր, իսկ առկա զինվորական պահակախումբը բավարար չէր: Երկու-երեք օր փորձեցին պահակախումբ գտնել, բայց ապարդյուն: Տեղական իշխանությունների վրա ազդեցություն գործելու նպատակով դոկտոր Հարիսը հեռագրեց Կարմիր խաչի գլխավոր գրասենյակ՝ օգնություն ստանալու նպատակով: ԱՄՆ ներկայացուցչության միջոցով խնդիրն անմիջապես արժանացավ Բարձր դռան ուշադրությանը և մի ժամից արքունի հրամանը հասավ Ադանայի նահանգապետին: Կառավարությունն անմիջապես տրամադրեց թուրք զինվորական պահակախմբից այն նույն ընտիր հեծյալը, որը միշտ ուղեկցել էր նրանց, և դոկտոր Հարիսն իր օգնականների ջոկատի հետ շտապեց դեպի Մարաշ: Նա այնտեղ հասավ ապրիլի 3-ին՝ հինգ օր դժվարին ճանապարհ անցնելուց հետո: Նրան դիմավորեց դոկտոր Հաբելը, ով ղեկավարում էր առաջին առաքելությունը: Դոկտոր Հարիսի զեկույցը գրված էր նամակով: Թվարկելով Ադանայում հանդիպած փորձությունները՝ նշեց, որ դրանցից բավական արագորեն ձերբազատվել է Բարձր Դռան հրամանի միջոցով: Բժիշկը շարունակում է իր զեկույցը

Մենք պարզեցինք, որ բժշկական աշխատանքն իրականացնում էին տեղաբնակ բժիշկները: Իսկ միսիոներներն ու իրենց կանայք զբաղվում էին նպաստամատույց այլ աշխատանքներով, որոնցից մեկը, իրոք, անգնահատելի էր. ընչազուրկ կանայք պատրաստում էին հագուստ այն գործվածքից, որ կամ Դուք էիք ուղարկել Կ. Պոլսից, կամ էլ դոկտոր Հաբելն էր գնել Մարաշից: Երանի, թե այն հարգարժան ամերիկացիները, որոնք նվիրատվություն են կատարել իրենց միջոցներից, սեփական աչքերով տեսնեին միայն այս սանջակում հագարավոր գաղթականների վիճակը, տեսնեին այն հազարավոր կանանց, ովքեր զրկված էին իրենց մերկությունը ծածկելու մի կտոր լաթից: Նման պահերին երկար մտածելու անհրաժեշտություն չկա լավ հագուստի արժեքը գիտակցելու համար:

Այնուհետև խորհրդակցություն հրավիրվեց, և մեր խումբը հոգնած մարմնին հանգստություն տալուց անմիջապես հետո որոշեց շարունակել ճանապարհը դեպի Զեյթուն: Ցավոք, մեր ժամանելու հաջորդ օրը ես սաստիկ դող և ջերմություն ունեի, ինչի պատճառով մի քանի օր անցկացրի անկողնում: Քանի որ ախտանշանները նման էին տիֆի տենդախտի, բժիշկները մնացին կողքիս, մինչև հստակորեն ախտորոշեցին հիվանդությունս: Հինգշաբթի նրանք հեռացան: Հաջորդ օրը պարոն Մակլալմի գլխավորությամբ խումբը շարժվեց դեպի Զեյթուն: Ես միացա խմբին երեք օր անց:

Թե Սիացյալ Նահանգներում, թե՛ Արևելքում ես ականատես եմ եղել տառապանքի տեսարանների, սակայն մինչև մահվանս օրը երբեք չեմ կարողանա մտքիցս հանել այն սարսափը, որ ապրեցի՝ տեսնելով առաջին օրն ինձ շրջապատած կերպարանքների բազմաչարչար և հյուծված դեմքերը: Մինչ մենք կհեռանայինք վրանից, բժիշկն ասաց. «Այժմ մենք կտեսնենք մի բնակավայր, որ լի է քայլող կմախքներով»: Այս արտահայտությունն ամբողջովին բնութագրում էր ժողովրդի իրավիճակը: Պատկերացրեք մի բնակավայր, որ ունի 12.500 հոգանոց կանոնավոր բնակչություն, որ բնակվում է, ասենք, 1.403 տներում: Հավանաբար հասկանալի է, որ քաղաքում բնակություն հաստատելու համար ազատ տարածք չկա: Այնուհետև պատկերացրեք՝ 7000-ից ավելի գաղթականներ, որոնց նույնպես հարկավոր է ապահովել կացարանով այդ նույն քաղաքում: Որոշ զեյթունցիներ կացարան էին տրամադրում փոքր թվով գաղթականների, սակայն նրանց մեծ մասը բնակվում էր փողոցներում, տների նկուղներում, որ

շատ դեպքերում պայմանները գարշելի էին և տան տերերը չէին օգտագործում դրանք, ախոռներում՝ կովերի և ավանակների հետ, պետքարաններին կից տարածքներում: Ի դեպ, չկար անգամ կացարան ենթադրող մի տեղ, որ զբաղեցված չլիներ: Մարդու արտաթորանքի հոտը, որ տիրում էր ամենուր, գումարվելով այլ տարբեր գարշահոտերի, նպաստում էր, որ վարակիչ մանրէները բազմանային օդում: Այսքանը բնակավայրի հիգիենիկ վիճակի մասին:

Հիվանդություններ: Ցավում եմ, որ չեմ կարող տրամադրել յուրաքանչյուր հիվանդությունից տառապողների հստակ թիվը, այս տվյալների ճշգրտումը բավական ժամանակ կպահանջեր: Մեզ համար դժվար էր անգամ հաշվարկել սուր հիվանդություններից տառապող մարդկանց ճշգրիտ թվի միայն կեսը: Ներկայացնում ենք ձեզ ուղարկված առաջին նախնական գնահատականը՝ դիզենտերիայի և փորլուծության դեպքեր՝ 1400, տիֆային տենդախտի դեպքեր՝ 600, դրանք գրեթե ճշգրիտ էին այնքանով, որ տիֆային տենդախտի ցուցանիշից 300-ը բաժին էր ընկնում դիզենտերիային և փորլուծության դեպքերին: Սրանք սուր հիվանդություններ էին: Աքսորյալների 98 տոկոսը գանգատվում էր, նրանք սովորաբար բուժվում էին այնպիսի հիվանդություններից, ինչպիսիք էին խրոնիկ դիզենտերիան, փորլուծությունը, ջրգողությունը (սովորաբար հանդիպում էր նրանց մոտ, ովքեր նոր էին ապաքինվել տիֆից), հոդացավը, բրոնխիտը, դիզենտերիան ու մալարիան: Նրանք բոլորը տառապում էին սակավարյունությունից և ֆիզիկական տկարությունից:

Պատճառներ: Քաղաքները լեփ-լեցուն էին մարդկանցով, իսկ օդը՝ աղտոտված: Սակայն բոլոր հիվանդությունների հիմնական պատճառը սովին մոտ իրավիճակն էր: Պետք է հավելեմ, որ փորլուծության դեպքերի մեծ մասի պատճառը խոտից, մոլախոտից, մացառուտների և ծառերի ծիլերից ու տերևներից պատրաստվող ապուրն էր: Փաստորեն, մարդիկ դաշտերից հավաքում էին ցանկացած բույս և եռացնում այն ջրում՝ դրա մեջ ավելացնելով փոքր քանակությամբ ալյուր: Այս կերակրատեսակը վտանգավոր է հատկապես երեխաների համար:

Բուժում: Շուտով մենք համոզվեցինք, որ բոլոր հիվանդությունները հաղթահարելու և անգամ գաղթականների կյանքը փրկելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին կերակրել նրանց և երբ նրանց վիճակը բարելավվեր, հնարավորություն տալ նրանց ապա-

քինվելու՝ կիրառելով նախկին բոլոր եղանակները և խուսափելով ինքնազգացողության վատթարացումից: Երկրորդ հերթին, անհրաժեշտ էր ամեն հնարավոր միջոց կիրառել, որպեսզի գաղթականները վերադառնային իրենց տները կամ ծայրահեղ դեպքում ժամանակավորապես օթևանեին դաշտերում: Առաջին օրը մենք հյուպատոս Բարնրմի կողմից բացված հիվանդանոցի շենքը լցրինք փողոցից բերված տուփերով: Այդ ժամանակվանից ի վեր մենք ավելացրինք բժշկական պարագաների քանակը՝ հնարավորին չափ արագ: Մենք ներգրավեցինք երկու տղամարդկանց և մի կնոջ՝ խնամելու հիվանդանոցը, դեղագործի համար վարձեցինք նաև չորս բարգմանիչ և մի օգնական: Այնուհետև բաժանեցինք քաղաքը շրջանների, որպեսզի աշխատանքը լիներ համակարգված և կարողանայինք յուրաքանչյուր հիվանդի օգնություն ցուցաբերել: Վարձեցինք (հնարավոր չէր ոչինչ ստանալ առանց գնի սակարկման համակարգից օգտվելու) երկու մեծ պղնձե թեյնիկ, որոնք օգտագործեցինք խաղողից դոշաբ պատրաստելու համար, գնեցինք 200 ֆունտ տավարի միս և պատրաստեցինք սննդարար ապուր: Այնուհետև լարեցինք մեր ողջ ուժերը՝ յուրաքանչյուր հիվանդին տրամադրելու ապուրի կտրոնը: Մենք ժամանակ չկորցրինք՝ խաբեբաներին ապուրից զրկելու համար: Ի դեպ, նման դասի մարդիկ շատ քիչ կային, բոլոր գաղթականներն աղքատ էին և տկված: Երկրորդ օրը մենք ավելացրինք ևս երեք թեյնիկ և մարդկանց թիվը բազմապատկելու նպատակով ժամը 10-ին մատուցում էինք մսի արգանակ, իսկ ժամը 4-ին՝ տավարի մսով և բրնձով թանձր ապուր: Մինչև երրորդ օրվա վերջը յուրաքանչյուր բնակիչ ստացել էր սնունդ: Այս ամենից հետո դեղորայքի հետևանքով առաջացած փախումների հետ կապված բոլոր գանգատները նվազեցին:

Անհրաժեշտ էր լուծել մեկ այլ խնդիր՝ ինչպես տանել մարդկանց քաղաքից դուրս: Մենք առաջարկեցինք տեղադրել ապուրի թեյնիկները բաց դաշտերի հարավային, հյուսիսային արևմտյան և արևելյան կողմերում և ապուրից բացի տրամադրել նրանց պլյուր, եթե հնարավոր լինի դուրս գալ քաղաքից: Այս առաջարկությունը շատ վճռորոշ եղավ, քանի որ առաջին օրը 1000 հոգի գնաց դաշտ: Այս շարժը շարունակվեց մինչև որ յուրաքանչյուր մարդ, ով ապրում էր փողոցներում և ախոռներում՝ կովերի կողքին, ծածկ շինեց ոստերից և տերևներից: Այժմ մսագործները հնարավորություն ստացան իրականացնել իրենց ծրագիրը՝ բարձրացնել մսի գինը 7-ից մինչև 14

պիաստր յուրաքանչյուր օխայի համար (մեկ օխան՝ 2.34 ֆունտ): Սակայն մենք նախատեսել էին դեպքերի նման զարգացում և մարդիկ ուղարկեցինք բարեկամ մահմեդականների գյուղ՝ անասուն գնելու համար: Այսպիսով մսագործների ծրագիրը տապալվեց: Երկրորդ շաբաթվա վերջին Զեյթունում սոված մարդ չկար:

Արդյունքներ: Տիֆի հիվանդության դեպքերը սկսեցին նվազել, հիվանդության նոր դեպքերն ավելի մեղմ դրսևորումներ ստացան: Նույնը կարելի էր ասել դիզենտերիայի մասին: Երկու հիվանդությունների դեպքերն էլ սկսեցին ավելի ու ավելի նվազել, մինչև որ գրեթե վերացան: Երեք գերեզմանոցում օրական հաշվարկով թաղումների հաճախականությունը նվազել էր: Ես հետաքրքրությամբ էի հետևում այս գերեզմանոցներին, քանի որ դրանք, կարծես, ջերմաչափ լինեին, որով չափում էի մեր կատարած աշխատանքի հաջողության աստիճանը: Մենք փառք տվեցինք Աստծուն, երբ տեսանք, որ թաղումների թիվը օրական կտրվածքով նվազել էր՝ 15-ից հասնելով 0-ի: Այսքանը սուր հիվանդությունների մասին: Առաջին շաբաթվա ընթացքում խրոնիկ հիվանդության դեպքերը խլում էին բժիշկի ողջ ժամանակը, և նրանցից յուրաքանչյուրն աշխատում էր կանոնավոր հերթափոխով: Դեղանյութերով բուժումն ու սնունդն այնքան նվազեցրին հիվանդությունների թիվը, որ երկրորդ շաբաթվա վերջին օրական միջին հաշվով 60 հիվանդ կար: Երրորդ շաբաթվա վերջին այս թիվը նվազեց՝ հասնելով տասի: Մեր դեղագործը՝ Շիքրի Ֆախուրին, ինչպես միշտ, իրենց փայլուն դրսևորեց: Նա ամբողջությամբ զբաղված էր դեղատոմսերի պատրաստմամբ՝ երեք բժիշկների համար: Սկզբից անհրաժեշտ էր, որ մեզնից մեկն օգներ նրան՝ օրական մոտ մի ժամով: Մայիսի 20-ին համոզվեցինք, որ կարող էինք հեռանալ քաղաքից, այստեղ այժմ չկային տիֆի և դիզենտերիայի սուր դեպքեր: Պարոն Մակքալմի կողմից ընտրված կոմիտեին տրամադրեցինք բավարար միջոցներ մի շաբաթ ապուր պատրաստելու և 200 լիրային (880 դոլար) հանձնարարեք ալյուր, որ կբավարարեր նվազագույնը վեց շաբաթ: Հույս ունեինք, որ այդ ժամանակահատվածում բոլոր գաղթականները վերադարձած կլինեին իրենց տները:

Մենք վերադարձանք Մարաշ և մնացինք այնտեղ չորս օր վերահսկելով տեղաբնակ բժիշկների օգնության և վիրահատական աշխատանքները: Այնուհետև շարժվեցինք ծովափի ուղղությամբ: Ընտրեցինք այն ճանապարհը, որով եկել էինք. այն ավելի կարճ էր

և մատչելի: Կարողացանք ճանապարհին հանդիպող տարբեր բնակավայրերում անհրաժեշտ օգնություն ցուցաբերել՝ թեև սահմանափակ քանակությամբ: Մենք այս փորձից բազմաթիվ դասեր քաղեցինք. առաջին՝ հետևել մարդկանց բարեկեցությանը, քանի որ, հաջողությունը բացահայտորեն կախված է հենց այս հանգամանքից: Ակնհայտ է, որ կար վարակի վտանգը նվազագույնի հասցնելու մի եղանակ, որ բժիշկները կարող էին կիրառել՝ սնվել և գիշերել վարակված քաղաքից դուրս: Այս ծրագիրը կարող է դժվարություններ առաջացնել, սակայն հնարավորության դեպքում այն լավագույն եղանակն է: Հայտնի է, որ մահացության դեպքերը բժիշկների և խնամակալների շրջանում սարսափելի թվերի են հասնում տիֆային տենդախտի վարակի ժամանակ: Հարցը հետևյալն է՝ հնարավոր չէ՞ արդյոք նվազեցնել մահացության թիվը՝ օգտվելով առաջարկված ծրագրից: Մեզ որոշ չափով հաջողվեց նվազեցնել այն: Երկրորդ՝ սննդի տրամադրումը առաջնահերթային է, հատկապես դրա պակասի հետևանքով առաջացած համաճարակների դեպքում: Երրորդ՝ սննդի բացակայության դեպքում դեղորայքը բացարձակապես անօգուտ են: Չորրորդ՝ մաքուր օդ: Ավելի լավ է մարդիկ ռիսկի դիմեն և լինեն ցրտից չպաշտպանված՝ գտնվելով բաց երկնքի տակ, քան թե գտնվեն մարդաշատ քաղաքում, ուր իրենց տան վատ և անառողջ միջավայրը մեծացնում է վարակվելու հավանականությունը: Վերջապես, ես առավել քան երբևէ վստահ եմ, որ տիֆի և դիզենտերիայի դեպքում դեղորայքի փոքր քանակությունը և դրա հաճախակի օգտագործումն ավելի արդյունավետ է, քան գրքերում սովորաբար ներկայացված դեղաբանակները: Ես այս մեթոդը փորձելու հնարավորություն ունեցա և համոզվեցի, որ այն արդյունավետ է:

Որպես եզրակացություն ցանկանում եմ ամենայն անկեղծությամբ հավանության արժանացնել Ձեր և Ձեր աշխատակիցների կողմից կիրառված մեթոդները, հատկապես այն մեթոդները, որոնք օգտագործեցիք ժողովրդին օգնություն հատկացնելիս: Դուք հիանալի կերպով հիր բաժանել աշխատուժը: Այն փաստը, որ նրանք արագորեն ընկալեցին իրավիճակը և ծանոթացան մարդկանց կարիքներին՝ յուրաքանչյուր առանձին բնակավայրում, պետք է արժանանա բոլոր այն մարդկանց հիացմունքին, ովքեր կարեկցաբար տրամադրեցին այս օժանդակությունը տուժածներին: Գումարն այս ու այն կողմ աննպատակ վատնելու փոխարեն մենք համակարգված կերպով

տուժածներին հատկացրինք սնունդ, դեղորայք և վիրահատական պարագաներ, հագուստ, սերմնացուներ, անասուն, գյուղատնտեսական գործիքներ, հիմնական խոհանոցային սպասք, այսպիսով, տրամադրելով ամեն ինչ, որպեսզի հետագայում նրանք կարողանային ոտքի կանգնել և կրկին անկախ լինել: Շատ հեշտ է Արևելքի ժողովրդին ընչազուրկ դարձնել, սակայն Ձեր կիրառած մեթոդները կանխեցին այդ հնարավորությունը:

Մեկ անգամ ևս նշեմ, որ կրոնական բնույթ չունեցող Ձեր աշխատանքը դրական տպավորություն գործեց մարդկանց վրա: Այն վերջ դրեց բոլոր, հատկապես հոգևոր առաջնորդների կրոնական կանխակալ կարծիքներին: Այդուհանդերձ, չհնչեց որևէ անքաղաքավարի հայտարարություն, որ կենթադրեր Ձեր օգնության գաղտնի շարժառիթները: Փոխարենը մենք լսեցինք միայն գովասանքի խոսքեր:

Բացի Ձեզանից, Ձեր գործընկերներից և նրանցից, ովքեր մի քանի տարի ապրել են Թուրքիայում, ոչ ոք չի կարող գնահատել այն դժվարությունները և խոչընդոտները, որոնց առկայության պայմաններում աշխատել եք ամենասկզբից:

Ցավում եմ, որ այս զեկույցով ավարտում եմ Ձեզ հետ ունեցած իմ պաշտոնական հարաբերությունները, սակայն հավատացե՛ք ինձ, հարգելի՛ տիկին Բարտոն, ես և իմ կինը միշտ համակրանքով կհիշենք Ձեզ և Ձեր աշխատակիցներին:

Ձեզ հավատարիմ՝ *Տուլա, Լեռնալիքանան, օգոստոսի 15, 1896 թ.*
Այրա Հարիս

Մարաշ (Է. Մելյոնի)

Ուլաշ հայաբնակ գյուղ, գտնվում է Սեբաստիայի մերձակայքում (Է. Մեյսոն)



Ակն. թրենիներով ծածկված բլուր (Է. Մեյսոն)

Քրդական լեռնային գյուղ (Է. Մեյսոն)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ

Թուրքական հեռագիր. բնօրինակ (օսմաներեն) և թարգմանություն (անգլերեն)

Arabker May 17 1896

Miss Barton

Since three days we are attending with our doctors and their attendants to one hundred sick per day. The contagious fever. Typhus is diminishing. Miss Bush and all the party are distributing clothing and bedding. Sanemi is giving implements and seed to the farmers. The needs here are extreme. Writer's party are at Pyri Wood with his party are working in the district of Palou.

Hubbell

Թուրքական բոլոր հեռագրերի վրա օգտագործվող վերնագիր

ՀԵՌԱԳՐԵՐ

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում գործողության տարածքում գտնվելու ժամանակ մեր առաքելությունների կողմից ուղարկված և ստացված հեռագրերի պատճենները, որպեսզի ընթերցողն ավելի լավ պատկերացում կազմի այն մեթոդների մասին, որոնք կիրառեցինք Փոքր Ասիայում մեր աշխատանքն իրականացնելիս:

Քանի որ բոլոր կամ գրեթե բոլոր հեռագրերը գրված են թուրքերենով կամ արաբերենով, դրանց թարգմանությունները, երբեմն, զգալիորեն տարբերվում են բնօրինակից:

Նախորդ էջում ներկայացված է սովորական հաղորդագրության հեռապատճենը իր թարգմանությամբ: Քանի որ հաճախ դժվար էր

լինում թարգմանիչներ գտնել, հեշտությամբ կարելի է պատկերացնել այն անհարմարությունը, որ առաջանում էր օտար լեզվով հաղորդակցվող այլազգիների հետ աշխատելիս:
Սույն զեկույցում ներկայացված չեն աշխատանքին վերաբերող այն հարյուրավոր, եթե ոչ ավելի, հեռագրերը, որ ուղարկվել և ստացվել են Ամերիկայից:

Ս. Ե. Բարտոնին, Նյու Յորք Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 8

Երեկ մեծ քանակությամբ ապրանքներ, քարավաններին բարձած, Ալեքսանդրետ քաղաքով առաքվեցին երկրի ներքին շրջաններ: Միջոցներն ուղարկել եմ Խարբերդ, Սեբաստիա, Մարաշ: Կենսական կարիքներն ավելանում են, հեռագրե՛ք այս մասին բոլոր կողմերին:

Կ. Բարտոն

(Սույն հեռագիրը ներկայացված է՝ առաքելությունների մեկնարկը ցույց տալու համար: Այս և մարտի 20-ին Ալեքսանդրետից դոկտոր Հաբելի կողմից ուղարկված հաջորդ հեռագրի միջև ընկած ժամանակահատվածում երկու առաքումներ կատարվեցին, իսկ երկրորդ առաքելությունը կազմավորվեց և ճանապարհ ընկավ):

Կ. Բարտոնին՝ Ամերիկյան
ներկայացուցչության համար,
Կ. Պոլիս Ալեքսանդրետ, 1896 թ., մարտի 20

Ապահով տեղ հասանք: Պատրաստվում ենք ապրանքներով առաջ շարժվել:

Ջ. Հաբել

Ջ. Հաբելին, Ալեքսանդրետ, Սիրիա Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 20

Ողջույն: Ուիսքարի խումբը ճանապարհ ընկավ երեկ: Բոլորը լավ են, բացի տիկին Մեյսընից: Հեռագրե՛ք Ձեր կարիքների մասին:

Կ. Բարտոն

Տիկին Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., մարտի 20

Քանի որ Մարաշում և Զեյթունում մոլեգնում են մահացու վարակները՝ դիզենտերիան և ---, մեզ անհրաժեշտ է վեց բժիշկ և երկու դեղագործ Բեյրութից, ինչպես նաև դեղորայք և այլ անհրաժեշտ պարագաներ: Կարո՞ղ եք հոգալ ծախսերը:

Լի, Մակքալըմ, Շեփըրդ

(Ստացվել է մարտի 23-ին: Քանի որ հեռագիրը գրված էր թուրքերենով, նշված այլ հիվանդությունների անվանումները հնարավոր չի եղել թարգմանել):

Լ. Լիին, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 24

Ուրախությամբ կհոգամ ծախսերը, եթե միջոցները բավարարեն: Անհրաժեշտ է նշել նվազագույն մոտավոր գումարը:

Կ. Բարտոն

Դոկտոր Ջ. Բ. Հաբելին, Ալեքսանդրետ, Սիրիա
Դենիել Ուոքերի համար
(հյուպատոսության գործակալ) Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 25

Տիկին Սեյսընը հոգին ավանդեց այս առավոտ ժամը երեքին: Հնարավորության դեպքում կկատարենք Էռնեստի ցանկությունները: Հեռագրե՛ք առաջարկությունները կամ խորհուրդները: Հեռագրել եմ Սաթոլիին:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Ամերիկյան
ներկայացուցչություն, Կ. Պոլիս Ալեքսանդրետ, 1896 թ., մարտի 28

Ուիսթարի խումբն այստեղ է: Մենք բոլորս դոկտոր Ֆուլերի ուղեկցությամբ, վաղը ճանապարհ ենք ընկնելու դեպի Այնթափ: Ապրանքներն ուղարկվել են երկուշաբթի:

Ջ. Հաբել

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., մարտի 30

Անհրաժեշտ են բժիշկներ՝ չորս հարյուր թուրքական լիրայի դիմաց:

Լ. Լի

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բեյրութ, 1896 թ., մարտի 30

Ամեն ինչ պատրաստ է, սակայն չեմ կարող ուղարկել առաքելությունը, մինչև որ չստանամ 200 ֆունտ գումար:

Ջ. Փոսթ

Դոկտոր Ջորջ Ի. Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 30

Հենց նոր հեռագրեցի ձեզ երկու հարյուր լիրայի վճարագիրը՝ գումարը Բանկ Օտոմանից ստանալու համար: Հեռագրե՛ք, երբ բժիշկները ճանապարհ ընկնեն: Խնդրում եմ տրամադրե՛ք մանրամասները:

Կ. Բարտոն

Լ. Լիին, ամերիկացի, Մարաշ Կ.Պոլիս, 1896 թ., մարտի 30

Ստացա Ձեր հեռագիրը: Անհրաժեշտության դեպքում կվճարեմ 400 լիրա: Դոկտոր Փոսթին հեռագրել եմ 200 լիրայի վճարագիր: Քաջալերվե՛ք, բժիշկներն անմիջապես ճանապարհ են ընկնում Մարաշ:

Կ. Բարտոն

(Հաղորդագրությունների փոխանցումն առավել ապահով դարձնելու նպատակով հասցեատիրոջ անունից հետո գրվում էր «ամերիկացի» բառը)

Ջ. Հաբելին՝ դոկտոր
Ֆոլերի համար, Այնթափ Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 30

Վեց բժիշկ, երկու դեղագործ, պաշարներով հանդերձ, Բեյրութից ճանապարհ կընկնեն դեպի Մարաշ հավանաբար այսօր, մենք կհոգանք ծախսերը: Մարաշում տիֆի, ծաղիկի, դիզենտերիայի համաճարակ է: Ձեզ և տղամարդկանց արգելվում է մտնել վարակված տարածք: Դուք պետք է օգնություն տրամադրեք քաղաքից դուրս գտնվողներին: Պատասխանե՛ք անմիջապես:

Կ. Բարտոն

Ջ. Հաբելին, ամերիկացի, Այնթափ Կ. Պոլիս, 1896 թ., մարտի 31

Անմիջապես ուղարկե՛ք քարավանների երկու երրորդ մասը Մարաշ՝ Լ. Լիին: Խորհրդակցե՛ք Շեփըրդի հետ Մարաշի խնդրի կապակցությամբ, եթե նա Այնթափում է: Շարժվե՛ք դեպի Խարբերդ: Կարգադրություններ են տրվել, որպեսզի տրամադրվի ցանկացած ծառայություն՝ օգնությունը հատկացնելու համար: Հաջողությունը կախված է արագ գործելուց: Մենք ավելի շատ ապրանքներ կառաքենք հաջորդ շոգենավով:

Կ. Բարտոն

Դոկտոր Ֆուլերին, Այնթափ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 3

Որտե՞ղ են մեր տղամարդիկ: Ինչո՞ւ նրանք չեն զեկուցում: Վճարել եմ պատասխանի համար:

Կ. Բարտոն

Դենիել Ուոքերին, Ալեքսանդրետ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 3

Որտե՞ղ են մեր տղամարդիկ:Նրանք գնացել են Ֆուլերի՞ հետ: Ե՞րբ: Պատասխանե՛ք:

Կ. Բարտոն

(Հենց այդ օրերին՝ Ալեքսանդրետ և Այնթափ ուղարկած այս հեռագրերի

միջև ընկած ժամանակահատվածում էր, որ տեղի ունեցավ Քիլիսի ջարդը: Այդ նորությունները, ինչպես նաև կառավարութ-յունից ճշտվող երթուղիների ընտրության հարցը, մեզ մեծ անհանգստություն էր պատճառում):

Դոկտոր Շեփերդին, Այնթափ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 3

Վճարել և հրամայել եմ ութ բժիշկներին ուղևորվել Մարաշ: Նրանք զեկուցե՞լ են ձեզ: Որտե՞ղ են մեր տղամարդիկ: Եթե նրանք Այնթափում են, խնդրում եմ նրանցից մի քանիսին մթերքներով անմիջապես ուղարկեք Մարաշ: Վճարել եմ պատասխանի համար:

Կ. Բարտոն

Լ. Լիին, ամերիկացի, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 4

Ո՞ր ապրանքների կարիքն առավել շատ ունեք և ի՞նչ քանակությամբ: Հնարավորության դեպքում կառաքենք դրանք:

Կ. Բարտոն

(Այս հեռագրի պատասխանն ուղարկվել է նամակով, իսկ ապրանքները՝ առաքվել):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Այնթափ, 1896 թ., ապրիլի 4

Մենք ժամանեցինք չորեքշաբթի: Իշխանությունները մեզ համար հիանալի ընդունելություն էին կազմակերպել: Ստացանք Ձեր հեռագիրը: Ապրանքներն առաքում ենք Մարաշ: Ամսի 23-ին կլինենք Խարբերդում, կանցնեք Ուրֆայով, Դիարբեքիրով և Մարաշով: Կուղևորվենք Մալաթիա:

Ջ. Հաբել

(Հաճախ անհնար էր լինում ընթռնելի թարգմանություն կատարել: Վերոնշյալ հեռագիրը կարող է ծառայել որպես ասվածի օրինակ):

Ճախարակների բաշխում Արաբկիրում (Է. Մեյսոն)

Այնթապ

Շներ. Կ. Պոլիս



Արտաքին պարսպի մի հատված

Տիկին Բարտոնին՝ Ամերիկյան
աստվածաշնչյան
ընկերության միջոցով Ալեքսանդրետ, 1896 թ., ապրիլի 6

Ձեր տղամարդիկ ճանապարհ են ընկել ամսի 28-ին դոկտոր Ֆուլերի հետ:

Դ. Ուոքեր

Կ. Բարտոնին՝ Ամերիկյան
դեսպանության միջոցով Բեյրութ, 1896 թ., ապրիլի 6

Բժիշկները մեկնել են ուրբաթ օրը:

Ջ. Փոսթ

Լ. Լիին, ամերիկացի, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 8

Բժիշկները ճանապարհ են ընկել ուրբաթ օրը: Ինչպիսի՞ն է համաճարակի ներկայիս իրավիճակը:

Կ. Բարտոն

Ջ. Հաբելին՝ դոկտոր
Ֆուլերի համար, Այնթափ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 8

Ստացա Ձեր հեռագիրը: Շատ լավ է, ուրախ եմ ձեզ համար: Ավելի շատ ապրանքներ կառաքեմ հաջորդ շոգենավով: Բժիշկները մեկնել են Մարաշ: Ինձ հեռագրով տեղյակ պահեք յուրաքանչյուր հնարավորության մասին՝ երկու քարավանների առնչությամբ: Տեղյակ պահեք մեզ ամեն ինչի մասին, մենք դրա կարիքն ունենք: Հայտնեք մեզ Ձեր կարիքները: (Խնդրեք դոկտոր Ֆուլերին պատասխանել հեռագրին):

Կ. Բարտոն

Դոկտոր Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 9

Մենք հեռագրել ենք գումարը մարտի 30-ին: Կուղարկեմ մյուս 200 դոլարը, երբ ձեզ հարմար լինի: Ուրախ եմ, որ բժիշկները մեկնել են: Խնդրում եմ հեռագրեք, երբ ժամանեն: Շատ շնորհակալ եմ:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 10

Հիվանդությունների թիվը շարունակաբար աճում է:

Լ. Լի

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բեյրութ, 1896 թ., ապրիլի 10

Եվս երկու բժիշկ մեկնելու պատրաստակամություն են հայտնել: Ուղարկե՞մ նրանց:

Ջ. Փոսթ

Ջ. Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 11

Անպայման ուղարկեք բժիշկներին: Այսօր փոստով կուղարկեմ 220 թուրքական լիրա:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ուրֆա, 1896 թ., ապրիլի 11

Հաջողությամբ ժամանեցի Ուրֆա: Որքա՞ն գումար կարող եք ուղարկել:

Դ. Ուոքեր

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ադանա, 1896 թ., ապրիլի 11

Բեյրութից ժամանող մեր բժիշկների խումբը մնացել է այստեղ. չենք կարող պահակախումբ գտնել:

Ա. Հարիս

Ա. Հարիսին, Ադանա Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 11

Թուրքիայի արտաքին գործերի նախարարը հենց նոր հրամայեց պահակախումբ տրամադրել ձեզ: Տեղյակ պահեք ինձ, եթե չկարողանաք անմիջապես շարունակել ճանապարհը:

Կ. Բարտոն

Լ. Լիին, ամերիկացի, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 11

Շնորհակալություն հեռագրելու համար: Եվս երկու բժիշկ ենք վարձել Բեյրութից: Պարբերաբար տրամադրեք ամբողջական տեղեկություն իրավիճակի մասին: Կհոգամ բոլոր ծախսերը:

Կ. Բարտոն

Է. Ուիսթարին, ամերիկացի, Ուրֆա Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 11

Ստացա Ձեր հեռագիրը: Շատ ուրախ եմ: Ամբողջական տեղեկություն տրամադրեք իրավիճակի մասին հեռագրով: Հաջորդ շաբաթ 200 լիրա կուղարկեմ Ուրֆա: Պատասխանեք: Վճարել եմ 15 բառի համար:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 12

Երբ կարող ենք ակնկալել բժիշկների այցը Մարաշ և գյուղեր: Ձեյթունին օգնություն է հարկավոր: Կա երեք հազար հիվանդ և ըն-

դամենը մի բժիշկ: Անգլիայի հյուպատոսը հիվանդ է տիֆով: Մենք կարող ենք այստեղից բժիշկ վարձել: Ամեն ինչ լավ է:

Ջ. Հաբել

(Ամսի 5-ին Այնթափից հեռանալիս դոկտոր Հաբելը նշում է. «Երեք օր շարունակ անձրևի և ձյան արգելքները հաղթահարելով՝ հասանք Մարաշ»: Նա այնտեղ սպասեց դոկտոր Հարիսի ժամանելուն):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բեյրութ, 1896 թ., ապրիլի 12

Խնդրում եմ հեռագրեք հաջորդ 200 ֆունտը. 70-ն արդեն բաժանել եմ: Մնացած գումարը կբաժանվի շուտով:

Ջ. Փոսթ

Դոկտոր Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 14

«Ֆրեյզեր» ամերիկյան մամուլը կհատկացնի ձեզ 200 ստեռլինգ: Հուսով եմ՝ բժիշկները անմիջապես ճանապարհ կընկնեն: Զեյթունում օգնության կարիքը մեծ է:

Կ. Բարտոն

Է. Ուիսթարին, ամերիկացի, Ուրֆա Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 13

Գումարն Ուրֆա ուղարկելը կտևի 24 օր: Ուղարկենք այն Ուրֆա՞, թե՞ Խարբերդ: Պատասխանեք անմիջապես:

Կ. Բարտոն

Ջ. Հաբելին, ամերիկացի, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 14

Ստացա Ձեր հեռագիրը: Գումարն ուղարկել եմ Խարբերդ: Գումար ուղարկելը Մարաշ կտևի 20 օր: Ուղարկե՞նք: Բժիշկները՝ դեղորայքով հանդերձ, պետք է այժմ այնտեղ լինեն: Ձեր խումբը չպետք

է մնա վարակված տեղանքում: Մեկնեք շուտով, երբ բժիշկները ժամանեն: Զգո՛ւյշ եղեք: Ամեն ինչ լավ է:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 14

Այստեղ խանութները բաց են, կարող ենք գումարն օգտագործել գյուղատնտեսական գործիքներ և այլ ապրանքներ գնելու նպատակով: Զեյթունում հիվանդների թիվն աճում է: Օրական 40-50 մարդ է մահանում: Լավ կլիներ, եթե կարողանայիք արագ ուղարկել դեղորայքը: Ընդհանուր իրավիճակը Մարաշում գրեթե նույնն է: Ինձ գումար է հարկավոր Խարբերդի համար:

Ջ. Հաբել

Ջ. Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 15

Կարո՞ղ եք գնել մեծ քանակությամբ բժշկական պարագաներ և բժիշկների հետ ուղարկել դրանք Զեյթուն: Հենց նոր մեր տղամարդիկ տեղեկացրին մեզ վարակից տուժած բնակիչների սարսափելի իրավիճակի մասին: Հնարավորության դեպքում ուղարկեք բոլոր բժիշկներին: Անհրաժեշտ գումար դուրս գրելու համար դիմեք մեզ:

Կ. Բարտոն

Դոկտոր Ուոշբըրնին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 15

Խնդրում եմ օգնեք դոկտոր Փոսթին դեղորայքը բժիշկների հետ ուղարկել Մարաշ և Զեյթուն: Մենք սիրով կհոգանք բոլոր ծախսերը: Մեր տղամարդիկ այնտեղ են:

Կ. Բարտոն

(«Ռոբերտ» քոլեջի նախագահը՝ դոկտոր Ուոշբըրնը, այդ ժամանակ գործի բերումով գտնվում էր Բեյրութում):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ուրֆա, 1896 թ., ապրիլի 15

Չնայած որ ուշացանք՝ մեզ ամեն տեղ սիրով ընդունեցին: Հատկացումներն Այնթափում և Ուրֆայում շարունակվում են: Գումարը բավարար է: Մենք կմեկնենք Դիարբեքիր:

Է. Ուիսթար

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ուրֆա, 1896 թ., ապրիլի 16

Մենք Ուրֆայում ենք մնացել, քանի որ մուտքի արտոնագրեր չենք ստացել Այնթափում: Չորս օր է, ինչ սպասում ենք հյուպատոսի պատասխանին: Որո՞նք են Ձեր հրահանգները:

Է. Ուիսթար

(Թարգմանիչը տեղյակ չէր, որ ստացված անձնագրերը մշտական չէին):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 16

Հարիսը մեկնել է Ադանա: Նամակները հասել են: Ապրանքները ճանապարհին են: Ինձ հաջողվեց բժիշկ վարձել Մարաշի համար, գրել եմ նրան:

Ջ. Հաբել

Ջ. Հաբելին, ամերիկացի, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 17

Ձեզ ուղարկված 1000 լիրան ճանապարհին է, շուտով կհասնի Խարբերդ: Այդ գումարից 500 լիրան հատկացված է Մարաշում գտնվող Մակքալլմին, ձեզ կամ հետագայում օգնության կոմիտեին՝ այն դեպքում, եթե մեկնած լինեք Մարաշից: Անհրաժեշտության դեպքում պարտք վերցրեք Մակքալլմից Ձեր ուղեորության համար: Խորհուրդ եմ տալիս մինչև Մալաթիա գնալն այցելել Խարբերդ, քանի դեռ ձեռքի տակ ունեք գումար և մթերք: Մեկնեք Մարաշից, երբ բժիշկները ժամանեն: Զգո՛ւյշ եղեք: Բոլորը լավ են, բայց շատ զբաղված: Շարունակե՞նք ապրանքների առաքումը: Եթե այո, ապա ի՞նչ ապրանք:

Կ. Բարտոն

Է. Ուիսքարին, ամերիկացի, Ուրֆա Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 17

Երեկ Շատակին ուղարկեցի 200 լիրա ձեզ համար, սակայն մի՛ սպասեք գումարի փոխանցմանը: Նա նույնպես կարող է օգտվել այդ գումարից: Եվս 500 լիրա այսօր ուղարկեցի Բարնըմին՝ ձեզ համար, նա գտնվում է Խարբերդում: Շատ շնորհակալ եմ, որ նման հիանալի աշխատանք եք իրականացնում: Ամո՛ւր պահեք ձեզ և զգույշ եղեք: Մեզ մոտ ամեն ինչ լավ է: Ձեր նամակներն ուղարկվել են Խարբերդ:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ուրֆա, 1896 թ., ապրիլի 19

Ընդունում եմ երեկվա Ձեր հեռագրում թելադրված հրահանգները: Նախորդ օրվա Ձեր հեռագիրը դեռ թարգմանված չէ:

Է. Ուիսքար

(Որոշ ուղարկված և ստացված հեռագրերի վերծանումը օրեր էր տևում):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 19

Ստացա Ձեր հեռագիրն ու 500 լիրան: Կառաջարկեի ավելի շատ գումար հատկացնել գործիքներին: Հարիսի խումբը ժամանեց երեկ: Մենք այսօր առավոտյան ուղևորվում ենք Մալաթիա: Այստեղ տիֆով հիվանդների թիվն աճում է: Մեզ մոտ ամեն ինչ լավ է:

Ջ. Հաբել

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ուրֆա, 1896 թ., ապրիլի 20

Մեր անձնագրերն արտոնագրված են: Կլինենք Խարբերդում ապրիլի 30-ին:

Է. Ուիսքար

Դոկտոր Ջ. Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 21

Ստացա Ձեր նամակը, շատ շնորհակալ եմ: Համաձայն եմ ձեզ հետ, որ «մեր իրականացրած աշխատանքն անհամեմատելի է և այն հասանելի է տուժած ժողովուրդներին՝ անկախ իրենց կրոնական նախապատվությունից»: Ձեզ այսօր 200 լիրայի վճարագիր են ուղարկել: Կարո՞ղ եք զբաղվել բժշկական պարագաների ձեռքբերմամբ և գտնել ավելի շատ բժիշկներ: Արդյո՞ք երկու բժիշկները ճանապարհին են: Հարիսին գումար ուղարկելու կարիք կա՞: Անհրաժեշտություն կա՞ ավելի լավ դեղորայք գնել այստեղից: Եթե այո, ապա ինչպիսի՞ դեղորայք:

Կ. Բարտոն

Դոկտոր Հարիսին, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 21

Ուրախացա՝ տեղեկանալով Ձեր ժամանման մասին: Իմացեք, որ Դուք և Ձեր խումբը պետք է ուշադրություն դարձնեք յուրաքանչյուր մանրուքին, ոչ ոքի չպետք է զրկեք օգնությունից՝ անկախ մարդու դավանանքից և ազգային պատկանելությունից: Ինչպե՞ս կարող ենք առավել շատ օժանդակել Ձեր ազնիվ աշխատանքին: Խնդրում եմ առավել հաճախ զեկուցեք, եթե հնարավոր է՝ ամեն օր: Որքա՞ն հիվանդ կա քաղաքում: Ինչպիսի՞ հիվանդություններ են տարածված: Որքա՞ն է հիվանդ կանանց թիվը: Ինչ վերաբերում է Զեյթունին՝ կարո՞ղ եք այցելել այդ քաղաքը: Որտեղի՞ց կարող ենք ավելի շատ բժիշկներ գտնել Ձեզ համար: Զեկույցներ հեռագրելուց բացի խնդրում եմ գրեք Ձեր ստացված բոլոր տվյալները՝ աշխատանքի մեկնարկից ի վեր: Դասակարգեք հիվանդություններն ու հիվանդներին: Տեղյակ պահեք ինձ Ձեր կարիքների մասին:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 22

Տառապում էի տենդախտի սուր նոպայից: Բոլոր բժիշկները մեկնել են Զեյթուն: Կան շատ հիվանդներ: Կփորձեմ վաղը միանալ խմբ-

Սրճարան Բերայում

Բեռնակիրների խումբ՝ ծանր ապրանք տեղափոխելիս

Սկյուտարի թուրքական գերեզմանոցի մի մասը

Բեռնակիր

Ենիչերիների սոսին, Ստամբուլ

բին: Հնարավոր չէ ավելի շատ բժիշկներ գտնել: Այսօր նամակ կուղարկեմ:

Ա. Հարիս

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բեյրութ, 1896 թ., ապրիլի 24

Հեռագիրն ստացա, գումարը՝ ոչ: Գումարի կարիք ունեմ: Կուղարկեմ մթերքները: Անում եմ այն ամենը, ինչ հնարավոր է:

Ջ. Փոսթ

(Գումարն ուղարկվել էր ամսի 21-ին, սակայն բանկը սովորականի պես չէր տեղեկացրել նրան):

Ջ. Փոսթին, Բեյրութ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 24

Դիմե՛ք Բանկ Օտոման՝ ստանալու ամսի 21-ին ուղարկված 200 ստեռլինգը:

Ջ. Փուլմըն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., ապրիլի 24

Խումբն այսօր մեկնում է Զեյթուն:

Ա. Հարիս

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Դիարբեքիր, 1896 թ., ապրիլի 25

Ամեն ինչ լավ է: Քաղաքապետը ջերմ է մեր հանդեպ: Խարբերդ ենք մեկնում չորեքշաբթի:

Է. Ուիսթար

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մալաթիա, 1896 թ., ապրիլի 27

Վաղը ճանապարհ կընկնենք Խարբերդ: Ամեն ինչ լավ է:

Ջ. Հաբել

Դոկտոր Հարիսին, Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., ապրիլի 28

Կարող եմ այստեղից երեք-չորս հույն բժիշկ ուղարկել, շատ ցանկալի կլիներ, որ ընդունեիք այս խորհուրդը: Ուղարկե՞նք նրանց: Շատ շնորհակալ եմ հեռագրի համար: Ինչպե՞ս է իրավիճակը Զեյթունում: Ամերիկացիները չափազանց հետաքրքրված են Ձեր աշխատանքով: Ինչպե՞ս կարող ենք հետագայում օգնել ձեզ:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ուրֆա, 1896 թ., ապրիլի 29

Հենց նոր ստացանք փոխանցումը սուրհանդակի միջոցով: Շատ շնորհակալ ենք:

Ռ. Շատակ

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Այնթափ, 1896 թ., ապրիլի 29

Արաբկիրում մոլեգնում են տիֆն ու դիզենտերիան: Մարդիկ ծայրահեղ աղքատության մեջ են, կան բազմաթիվ մահվան դեպքերը: Կարո՞ղ եք ուղարկել բժիշկներ և դեղորայք:

Դոկտոր Շեփլրդ

Դոկտոր Շեփլրդին,
ամերիկացի, Այնթափ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 1

Փորձում ենք գտնել բժիշկներ և դեղորայք Արաբկիրի համար:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Զեյթուն, 1896 թ., մայիսի 1

Մեզ հարկավոր են ավելի շատ բժիշկներ:

Ա. Հարիս

Ջ. Հաբելին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 1

Տիֆն ու դիզենտերիան մոլեգնում են Արաբկիրում: Կարո՞ղ եք բժիշկներ և դեղորայք ուղարկել Խարբերդ, այնտեղ ուսումնասիրել մարդկանց վիճակը՝ չենթարկվելով վարակի վտանգին: Ինչպիսի սերմնացուի կարիք որ ունենաք, դիմեք թուրք կառավարչին: Եթե վերջինս չկարողանա այն տրամադրել ձեզ, ինձ տեղյակ պահեք: Եթե գտնեք այնպիսի բնակավայրեր, ուր մարդիկ վախենում են դաշտ գնալ՝ դրանք մշակելու, զեկուցեք ինձ դրանց մասին և կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

Կ. Բարտոն

(Վերոնշյալ ցուցումները հենց նոր էի ստացել Բ. Դոնից, դրանք ամբողջությամբ իրականացվեցին հետագա աշխատանքի ընթացքում):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., մայիսի 3

Ստացանք 500 ֆունտ սուրհանդակի միջոցով: Շատ շնորհակալ ենք:

Ֆ. Մակքալլում

(Պատվելի դոկտոր Բարնըմը ստացավ առաջին 500 ֆունտը, որ ուղարկվել էր Խարբերդ սուրհանդակով, ինչը և հաստատեց նամակով):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., մայիսի 4

Բոլորը ժամանել են այստեղ չորեքշաբթի: Խարբերդի գավառում կա օգնության խիստ կարիք ունեցող 300 քաղաք և գյուղ: Շատ ենք ցանկանում այստեղ մի քանի շաբաթ մնալ և զբաղվել գործիքների, կենդանիների, սերմնացուների, ապաստարանի և բժշկական օգնության առանձին աշխատանքներով: Գործընկերներն այստեղ են մեզ օգնելու նպատակով: Խորհուրդ տվեք՝ ինչպես վարվել: Բոլորը լավ են:

Ջ. Հաբել

Ջ. Հաբելին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 5

Ստացա Ձեր հեռագիրը: Շատ ուրախ եմ: Մնացե՛ք Խարբերդում այնքան, որքան անհրաժեշտ է: Մայիսի 1-ին ձեզ հեռագիր եմ ուղարկել Խարբերդ՝ Արաբկիրում հիվանդությունների առնչությամբ: Խնդրում եմ գտնել հեռագիրն ու պատասխանել: Այս պահին Դուք կամ Ուիսթարը գումարի կարիք ունե՞ք: Հաճախակի՛ զեկուցեք, եթե հնարավոր է՝ ամեն օր: Շատ բավարարված եմ Ձեր աշխատանքից: Ուղարկել եմ Ձեր հեռագիրն Ամերիկա:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Զեյթուն, 1896 թ., մայիսի 6

Երեկ հասանք Զեյթուն: Փախստականների թիվը 7000 է, կեսից ավելին՝ կանայք: Նրանցից 14.000-ը տառապում է ---ից և դիզենտերիայից, 600-ը՝ տիֆից: Կան շատ օտարերկրացիներ: Ինձ անմիջապես 100 լիրա է հարկավոր (°): Բուժօգնության ծավալը կավելանա: Մենք որոշ ժամանակ կմնանք այստեղ:

Ա. Հարիս

(Այս հեռագիրը գրված է եղել արաբերենով, երկու օր պահանջվեց գեթ բավարար թարգմանություն ստանալու համար):

Ա. Հարիսին, ամերիկացի, Զեյթուն Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 8

Ստացա Ձեր հեռագիրը: Խնդրում եմ չօգտվել արաբական գրանիշերից, դրանք շատ դժվար է թարգմանել: Պայմանավորվել եմ Փիթի հետ, որ Մակքալլումը ձեզ համար անմիջապես 200 լիրա դուրս գրի: Հաջորդ երկուշաբթի հինգ բժիշկ Մարաշ կմեկնի: Կտեղեկացնեմ Ձեզ պարտականությունների մասին: Նրանց հետ անհրաժե՞շտ է բժշկական պարագաներ ուղարկել: Եթե այո, հեռագրե՛ք ինչպիսի պարագաներ և ինչ քանակությամբ: Հենց նոր մի հիանալի նամակ ստացա Ձեր կնոջից: Մեր ուղարկած 5 բժիշկները կբավարարե՞ն Ձեզ: Շնորհակալ ենք Ձեր գործադրած հերոսական ջանքերի համար:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., մայիսի 7

Վուղն օգնականների հետ մեկնում է Բալուի, Ուիսթարը Մայքլի հետ՝ Չարսանջակի գավառակ, իսկ ես, տիկին Բուշը, Մեյսընը թարգմանչի և բժիշկների հետ՝ դեղորայքով հանդերձ՝ Արաբկիր: Մեզ ավելի շատ միջոցներ են հարկավոր: Հեռագրե՛ք, թե որքան կարող եք տրամադրել: Մենք գնում ենք սերմնացուներ, բանող անասուններ, գործիքներ, նաև ապաստարանի համար գերաններ: Դաշտերում աշխատելու պայմանները բարելավվում են:

Ջ. Հաբել

(Հրահանգներն անպատասխան չմնացին)

Ջ. Հաբելին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 7

Ստացա Ձեր հեռագիրը: Հրաշալի՛ է, գերազա՛նց ձեռնարկում: Շատ շնորհակալ եմ ձեզնից յուրաքանչյուրին: Պայմանավորվել եմ Փիթի հետ: Բարնըմի հաշվից դո՛ւրս գրեք 1500 լիրա: Ապրիլի 20-ին մենք ուղարկել ենք 1000 լիրա երկու խմբերին՝ Բարնըմին՝ Ձեզ համար և Ուիսթարին: Դուք ստացե՞լ եք այն: Եթե այո, հաստատե՛ք հեռագրով. մտահոգ եմ: Հինգ բժիշկներ մեկնել են Հարիսի մոտ: Ստացել ենք Ձեր նամակները:

Կ. Բարտոն

(Այս անգամ մեզ հաջողվեց գումարը ստանալ երկրի ներքին շրջաններում՝ վճարագրերի միջոցով, որոնք մենք վաճառեցինք առևտրականներին: Ոչ մի բանկ չկար երկրի ներքին շրջաններում, բոլորն ավերվել էին):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ձեյթուն, 1896 թ., մայիսի 12

Շատ շնորհակալ ենք Ձեզնից՝ ուղարկված գումարի համար: Սովյալ հիվանդներին կերակրելը նպաստեց, որ դրանց թիվը նվազի:

Ա. Հարիս

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., մայիսի 13

Երեք առաքելությունները ճանապարհ ընկան, ինչպես ծրագրել էինք: Հաբելի խումբն այսօր մեկնեց Արաբկիր: Այսօր սուրհանդակի միջոցով ստացա 1500 լիրա: Ամեն ինչ լավ է:

Ք. Գեյթս

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բալու, 1896 թ., մայիսի 13

Մենք ժամանել ենք Բալու, կայմակամը մեզ լավ ընդունեց:

Չ. Վուդ

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Չարսանջակ, 1896 թ., մայիսի 15

Իշխանությունները մեզ շատ լավ դիմավորեցին: Դժվարություններ առաջացան կապված գյուղատնտեսական գործիքների հետ (*): Դրանք պետք է ուսումնասիրվեն Խարբերդում: Սթերքի պաշարները շատ են, սակայն երկիրը բավական ընդարձակ:

Է. Ուիսթար

(Այս հեռագիրը ստանալիս մեզ հետ զավեշտալի դեպք պատահեց: Գյուղեր տեղափոխվող մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքները, պատրաստված երկաթից, գյուղական իշխանությունների կողմից բյուրիմացաբար ընկալվել էին որպես զինամթերք, որը մենք, իբր, տրամադրում էինք հայերին: Այսպիսով, անհրաժեշտ էր դրանք կասեցնել և զգուշություն ցուցաբերել: Այս շինծու մտադրությունը ռումբի պես պայթեց կառավարությունում, իսկ պաշտոնյաները հայտարարեցին, որ կառավարությունը կարող է վստահել մեր տրամադրած ապրանքներին: Սրանից հետո խոչընդոտներ չառաջացան):

Ա. Հարիսին, ամերիկացի, Զեյթուն Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 16

Չորս բժիշկները ճանապարհ են ընկել, իրենց հետ բերում են դեղորայք, առողջարար սնունդ և ախտահանող սարքեր: Նրանց հրամայել են գնալ անհրաժեշտ ուղղություններով: Ինչպես տեղեկացա,

հիվանդությունների թիվը մեծ է Զեյթունից դեպի հարավ գտնվող բնակավայրերում:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Չարսանջակ, 1896 թ., մայիսի 17

Մենք բաժանում ենք 2000 կտոր հագուստ, 800 բուշել սերմնացու, նաև գործիքներ և եզներ:

Է. Ուիսթար

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բալու, 1896 թ., մայիսի 18

Քառասուն գյուղերում 1000 գլուխ եզան կարիք կա, այս ամենը կարժենա 250 լիրա:

Չ. Վուդ

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Արաբկիր, 1896 թ., մայիսի 18

Երեք օր է, ինչ մեր բժիշկների և նրանց օգնականների հետ օրական այցելում ենք 100 հիվանդ: Վարակիչ տենդախտով ու տիֆով հիվանդների թիվը նվազում է: Տիկին Բուշն ու ողջ խումբը մարդկանց հագուստ և անկողնային պարագաներ են բաժանում: Մեր թարգմանիչը բաժանում է գործիքներ ու սերմնացուներ գյուղացիներին: Այս քաղաքի բնակիչները ծայրաստիճան կարիքավոր են: Ուիսթարի խումբը Բերրիում է, իսկ Վուդն իր մարդկանց հետ՝ Բալուի գավառակում:

Ջ. Հաբել

Չ. Վուդին, ամերիկացի, Բալու Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 20

Ուսումնասիրեք և գտեք ողջ անհրաժեշտ տեղեկությունը: Չկատարեք մեծ քանակությամբ գնումներ, մինչև որ հետագայում ինձնից չստանաք հրահանգներ: Շնորհակալություն այսպիսի հրաշալի աշ-

խատանքի համար: Ցանկացած գնում կատարելիս վերցրեք անդորրագրերը:

Կ. Բարտոն

Ա. Հարիսին, Զեյթուն Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 20

Հենց նոր ստացա Ձեր հեռագիրը: Մակքալըմը դուրս գրեց 200 լիրա հիվանդների համար: Խնդրում եմ շարունակեք կրակը թեժ պահել:

Կ. Բարտոն

Դ. Ուոքերին, Ալեքսանդրետ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 20

Այսօր ձեզ 50 լիրա եմ ուղարկել Հալեպ: Խնդրում եմ գումար տրամադրեք մեր բժիշկներին, նրանք կժամանեն մի քանի օրից:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բալու, 1896 թ., մայիսի 21

Տաս կանայք և տասներկու տղամարդիկ ամեն օր աշխատում են կենտրոնական գրասենյակում: Բաժանում են 900 կտոր հագուստ, 200 հատ ներքնակի ծածկոց: Մետաքսից գործում են մեծ քանակությամբ հագուստ: Դարբինները գործիքներ են պատրաստում գյուղացիների համար: Մեր աշխատանքն արագորեն առաջ է ընթանում: Յուրաքանչյուր բնակավայրում գյուղացիները եզների կարիք ունեն:

Չ. Վուդ

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բալու, 1896 թ., մայիսի 24

Ժամանեցի այսօր: Հաբելը հեռագրեց Ձեզ Արաբկիրից: Ամսի 16. օգնության աշխատանքների ընթացքը բավարար է: Ամսի 17. հեռագրեցի խոչընդոտների վերաբերյալ, պատասխան չստացա: Արաբկիրի կայմակամը (կառավարիչ) արգելում է հիվանդների հետ

ցանկացած շփումը, այսպիսով, մենք ոչինչ չենք կարող անել նրանց համար: Կայմակամը հայտարարում է, որ Արաբկիրը կամ դրա շրջակա բնակավայրերն օգնություն կարիք չունեն:

Է. Մեյսընն

(Այս խնդիրն անմիջապես ներկայացվեց Բ. Դռան ուշադրությանը և վերջինս նույն օրը հրաման ուղարկեց Արաբկիրի կառավարչին: Հրամանն անմիջապես ցանկալի ազդեցություն ունեցավ):

Ջ. Հաբելին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 24

Վուդը ցանկանում է անասուն գնել: Ի՞նչ ցուցումներ կտայիք նրան գնման առնչությամբ: Մեր միջոցները թույլատրում են գնել երկու գլուխ եզ՝ յուրաքանչյուր գյուղի համար, ուր անհրաժեշտություն կա: Բոլոր անասուններն ու գործիքները հարկավոր է պիտակավորել կամ կնքել՝ հաստատելու, որ դրանք մեզ են պատկանում: Այնքան ուրախ եմ Ձեր կատարած հիանալի աշխատանքի համար: Մեյսընի հեռագիրն ինձ մոտ է: Բ. Դուռը հրամայել է վերացնել բոլոր խոչընդոտներն Արաբկիրում: Վաղը Բ. դռան հետ կքննարկեմ Բալու գա-վառի խնդիրը:

Կ. Բարտոն

Ջ. Վուդին, ամերիկացի, Բալու Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 24

Կարո՞ղ եք խորհրդակցել Հաբելի հետ: Մեր միջոցները թույլատրում են յուրաքանչյուր գյուղի համար, ուր անհրաժեշտություն կա, երկու գլուխ եզ գնել: Յուրաքանչյուր կենդանի պետք է պիտակավորված լինի Բ. կամ Կ. Բ. սկզբնատառերով: Բոլոր գործիքները պետք է կնքված լինեն պողպատե կնիքով: Մենք պետք է անձնավորենք այս ապրանքները, որպեսզի չկորցնենք դրանք: Վերցրեք բոլոր անդորրագրերը: Ձեր դարբինները կարո՞ղ են պատրաստել պողպատյա կնիքներ և երկաթյա պիտակներ: Շատ ուրախ եմ Ձեր կատարած հրաշալի աշխատանքի համար:

Կ. Բարտոն

(Քանի որ մենք չէինք կարող պիտակավորել կամ կնքել ապրանքները խաչով կամ Միացյալ Նահանգների դրոշմով, որոշեցինք օգտագործել Կ. կամ Կ. Բ. սկզբնատառերը, որպեսզի գողության կամ կողոպուտի դեպքում կարողանայինք հաստատել. օգնության նպատակով առաքված ապրանքները մեր սեփականությունն են):

Է. Ուիսքարին, ամերիկացի,
Չարսանջակ Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 24

Շնորհակալ եմ հրաշալի նամակի համար: Հիանալի աշխատանք եք կատարել: Մեզ տեղյակ պահեք կարիքների մասին: Մեր միջոցները թույլատրում են յուրաքանչյուր գյուղի համար, ուր անհրաժեշտություն կա, երկու գլուխ եզ գնել: Բոլոր անասուններն ու գործիքները հարկավոր է պիտակավորել կամ կնքել Բ. կամ Կ. Բ. սկզբնատառերով: Ձեր դարբինները կարո՞ղ են պատրաստել պողպատյա կնիքներ և երկաթյա պիտակներ:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին. Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., մայիսի 25

Երկուշաբթի ուղևորվեք Ալեքսանդրետ: Ես այստեղ խորհրդակցում եմ տեղաբնակ բժիշկների հետ: Հիվանդներին և չքավորներին կերակրելու արդյունքում տիֆի և դիզենտերիայի դեպքերը շուտով կվերանան: Վարակն անցել է:

Ա. Հարիս

Ջ. Հաբելին, ամերիկացի, Արաբկիր Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 26

Երեկ ձեզ հեռագիր ուղարկեցի Խարբերդ: Բ. Դուռը հրամայել է տրամադրել ձեզ ամենն հարմարանք՝ աշխատանքներին օժանդակելու: Հեռագրեք, եթե ինչ-որ տեղ որևէ խոչընդոտի կհանդիպեք: Շնորհակալ եմ, որ կատարեցիք այս հրաշալի աշխատանքը՝ միաժամանակ պահպանելով Ձեր առողջությունը:

Կ. Բարտոն

Չ. Վուդին, Բալու Կ. Պոլիս, 1896 թ., մայիսի 27

Կարո՞ղ եք առավել ձեռնտու տարբերակով 80 գլուխ եզ բաժանել: Կարո՞ղ եք դրանք գնել Բալուի գավառակում: Ի՞նչ գնով:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., մայիսի 29

Եզների խիստ կարիք կա. գյուղացիները չեն կարող ոտքի կանգնել առանց դրանց: Հարկավոր է վարել հողը աշնան սերմնացանի համար՝ 20 օրվա ընթացքում, քանի դեռ այն չի պնդացել: Երկու գլուխ եզը հազիվ թե բավարարի երկու գյուղացու: Վուդի խնդրանքը համեստ է:

Ք. Գեյթս

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Չարսանջակ, 1896 թ., հունիսի 1

Այսօր Բալուով մեկնեք Խարբերդ:

Է. Ուիսթար

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Արաբկիր, 1896 թ., մայիսի 30

Մեր բժիշկներն այցելել են 1000 հիվանդի, որոնցից մեկը մահացավ: Դոկտոր Հինտլյանը կմնա այստեղ, իսկ մենք հաջորդ շաբաթ կմեկնենք Ակն և Աղին գյուղերը: Տեղական իշխանություններն օգնում են մեզ ամեն առիթով: Մենք լավ ենք:

Ջ. Հաբել

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Ալեքսանդրետ, 1896 թ., հունիսի 1

Մեկնում եմ Տրիպոլի: Բժիշկները վերադառնում են: Ինչպես հրամայել էիք, 75 ֆունտը հանձնել եմ կաթոլիկ քահանային Այնթափի

արհեստավորների համար: Շնորհակալություն լավ նորության համար:

Ա. Հարիս

Ջ. Հաբելին, ամերիկացի, Արաբկիր Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 2

Շատ ուրախ եմ, որ իշխանություններն այդքան մեծ օգնություն են ցուցաբերում: Հենց նոր Գեյթսին հեռագրեցի 500 լիրա բոլոր առաքելությունների համար: Գեյթսը հեռագրով հաղորդում է, որ հարկավոր է անասուններն անմիջապես գործի դնել: Կարծում եմ՝ այսօր Ուիսթարը Վուդի հետ է՝ Բալուում: Նա շուտով կվերադառնա գործողության տարածքից: Այսօր հանդիպեցի Ուիլերի և Էլիսի հետ: Ձեր աշխատանքի վերաբերյալ զեկույցը հիանալի է:

Կ. Բարտոն

(Դոկտոր Ուիլերին ամենուրեք ճանաչում են որպես Խարբերդի քոլեջի հիմնադիր և առաջին նախագահ: Նա իր կենդանության օրոք տեսավ, թե ինչպես քոլեջի տասներկու շենքերից ութը հրի մատնվեցին, և կաթվածահար, անուշադրության մատնված հաշմանդամը, Կ. Պոլսով վերադառնալով հայրենիք, մահացավ իր տանը՝ Օքրրնդելում (Մասաչուսետս) օգոստոսին):

Ծով գիտելիք շնորհեցիր մեզ,
Հմայք բարությամբ անսահման,
Կյանքի դասեր տվեցիր մեզ,
Իսկ մենք քեզ՝ լոկ մի գերեզմա՞ն:

Ք. Գեյթսին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 3

Ես ու Փիթը պահել ենք 5000 լիրա, որպեսզի դուրս գրենք այն մեր տղամարդկանց համար: Այս գումարը կազմում է ավելի քան 43.000 դոլար, ուղարկել ենք այն Խարբերդ: Մնացած գործողության տարածքների համար մնացել է ընդամենը մի փոքրիկ գումար: Շատ շնորհակալ ենք Ձեր կատարած բոլոր բարի գործերի համար:

Կ. Բարտոն

Չ. Վուդին, ամերիկացի, Բալու Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 2

Հենց նոր հեռագրեցի Գեյթսին 5000 լիրա՝ հոգալու բոլոր ծախսերը: Այս գումարը կազմում է ավելի քան 43.000 դոլար, ուղարկել ենք այն Խարբերդ: Ողջ գումարը պետք է օգտագործվի՝ առավելագույն արդյունքի հասնելու նպատակով: Եթե հնարավոր է, օգտագործեք գումարի մի մասը Դիարբեքիրի սանջակում: Պիտակավորե՛ք անասունը և կնքե՛ք գործիքները: Ուիսթարը հեռագրել է, որ Բալուով մեկնում է Խարբերդ: Խորհրդակցե՛ք նրա հետ և ինձ հստակորեն տեղեկացրե՛ք Ձեր ծրագրերի մասին: Այն դեպքում, եթե Ուիսթարը մեկնի Լոնդոն, Դուք չե՞ք կարողանա մնալ: Ներկա պահին մեզ դժվար կլինի առանց ձեր երկուսի ներկայության: Հաբելը մեկնում է Ակն այս շաբաթ:

Կ. Բարտոն

Բրիտանիայի դեսպան
Ռ. Ֆոնտանային, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 2

Իմ խնդրանքով, մի քանի օր առաջ Բ. Դուռը հրամայեց Արաբկիրի և Բալուի տեղական իշխանություններին անմիջապես վերացնել մեր աշխատանքը կասեցնող բոլոր խոչընդոտները: Մեր տղամարդիկ այս պահին ինչ-որ տեղ հանդիպե՞լ են խոչընդոտների: Եթե այո, ես կրկին կդիմեմ Բ. Դռանը: Խնդրում եմ խորհրդակցե՛ք Գեյթսի հետ: Շատ շնորհակալ եմ մեր առաքելություններից՝ ցուցաբերած արդյունավետ օգնության համար:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., հունիսի 6

Ներկայումս Ձեր աշխատակիցներից ոչ ոք խոչընդոտների չի հանդիպում: Շատ երջանիկ եմ, որ օժանդակում եմ Ձեր՝ մեծապես հաջողված աշխատանքին:

Ռ. Ֆոնտանա

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Բալու, 1896 թ., հունիսի 6

Նախքան Ձեր հեռագիրն ստանալը՝ Ուիսթարը մեկնել էր: Ես կվերադառնամ: Կարիքավոր մարդկանց ցուցակները բավական ստույգ են կազմված: Ներկայացնում եմ ընչազուրկներին վերջերս տրամադրված օգնությունը. 1200 կտոր հագուստ, 65000 պիաստր գումար, 1000 կտոր անկողնային պարագաներ, 700 գյուղատնտեսական գործիքներ՝ պատրաստված դարբինների կողմից և գավառակի 15.000 բնակչի ցուցաբերած օգնությունը: Մենք դեռ տաս օր կմնանք այստեղ: Անհրաժեշտ է 1000 լիրա փոխանցել Սիլվանի գավառակ. ընչազուրկների թիվն այնտեղ անհամեմատ մեծ է:

Չ. Վուդ

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Մարաշ, 1896 թ., հունիսի 6

Ձեր վերջին փոխանցումը՝ 200 լիրան, գործի դրվեց, և հիվանդներն ապաքինվեցին: Նրանց թիվն այժմ փոքր է: Ծախսել եմ գրեթե ողջ գումարը գործիքների ձեռքբերման վրա: Մարդիկ աղոթքներով իրենց երախտապարտությունն են հնչեցնում առ Ձեզ: Սննդի, գործիքների և կենդանիների կարիքը հրատապ է: Չորս հազար լիրան մեզ հնարավորություն կտա որոշ չափով օգնել յուրաքանչյուր ընտանիքի: Այն գյուղացիները, որոնք գործիքներ ունեն, մշակում են իրենց դաշտերը առանց բանող կենդանիների՝ որքան կարող են: Մանրամասները գրել եմ նամակում:

Ֆ. Մակքալլում

Ք. Գեյթսին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 7

Հինգ հազար լիրան, որ ուղարկեցի ձեզ՝ տղամարդկանց փոխանցելու համար, պետք է ծախսվի բանող կենդանիների, գործիքների և սերմնացուների ձեռքբերման վրա՝ ինչպես խնդրել էիք: Այն չպետք է ծառայի ոչ մի այլ նպատակի: Խնդրում եմ տեղեկացրեք այս մասին մնացածին: Ուիսթարն այժմ վերադառնո՞ւմ է: Խնդրում եմ ուղարկեք հետևյալ հեռագիրը Հաբելին. ես չգիտեմ իր հասցեն.

Ջ. Հաբել, ամերիկացի, ---

Գեյթսին ուղարկված 5000 լիրան այն ողջ գումարն է, որով պետք է ավարտենք աշխատանքները գործողության տարածքներում: Այն պետք է ծախսվի բանող կենդանիների, գործիքների և սերմնացուների ձեռքբերման, ոչ թե ընդհանուր օգնության հատկացման վրա: Ավարտե՛ք Ձեր աշխատանքը և փորձե՛ք վերադառնալ Կ. Պոլիս հուլիսի մեկին՝ որքան հնարավոր է շուտ: Վուդը պետք է դուրս գրի 1000 լիրա Դիարբեքիրի վիլայեթի համար: Խնդրում եմ գնացե՛ք Խարբերդ և պատասխանատվությունն ստանձնեք կենդանիների տրամադրման աշխատանքների համար, սա Ձեր մասնագիտությունն է: Այսպիսով, Վուդն անմիջապես կկարողանա մեկնել Ֆարկին և դուք կավարտեք աշխատանքը միասին: Պատասխանե՛ք հեռագիրը ստանալուն պես:

Կ. Բարտոն

Ջ. Վուդին, ամերիկացի, Բալու Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 8

Ստացա Ձեր հեռագիրը: Ուղարկեցի եզների, գործիքների և սերմնացուների համար անհրաժեշտ գումարը: Մարդկանց գումար բաժանելը դեմ է կանոններին և վտանգավոր է: Գեյթսին ուղարկված 5000 լիրան, նախատեսված բոլոր առաքելությունների համար, հարկավոր է կիսել՝ Բալուում աշխատանքն ավարտելու նպատակով: Մենք այլևս միջոցներ չունենք ուղարկելու: Ստացված 5000 լիրայից դո՛ւրս գրեք 1000-ը՝ Դիարբեքիրում աշխատանքներն ավարտելու համար: Ծախսե՛ք այն բոլոր առաքելությունների հետ միասին և հուլիսի 1-ի մոտ որքան հնարավոր է շուտ զեկուցե՛ք Կ. Պոլիս:

Կ. Բարտոն

(Մենք կարգադրել էինք ոչ մի գումար չբաժանել Կարմիր խաչի միջոցներից: Վուդը միսիոներական ֆոնդից մի փոքր գումար էր բաժանել դոկտոր Գեյթսի հատուկ հրամանով, այդ ժամանակ տեղյակ չէինք հրամանին: Մենք սրտանց ողջունեցինք նրա արարքը, երբ ծանոթացանք հանգամանքներին):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Արաբկիր, 1896 թ., հունիսի 10

Վուդը ստացել է Ձեր հեռագիրը և հաջորդ շաբաթ կմեկնի Դիարբեքիր: Ուիսթարը Խարբերդում է: Մեր թարգմանիչը զբաղված է անասունների ձեռքբերմամբ Արաբկիրում: Մենք կվերադառնանք Խարբերդ տաս օրից, այնուհետև կմեկնենք Մալաթիա: Տիֆի դեպքերն օրեցօր նվազում են: Ամեն ինչ լավ է:

Ջ. Հաբել

Ք. Գեյթսին, ամերիկացի, Խարբերդ Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 10

Նոր ստացա Վուդի նամակը, որում նա բացատրում է գումարի հատկացման եղանակը Բալուի գավառում: Այն շատ բովանդակալից է: Անչափ ուրախ եմ, որ նա կարողացավ օգտակար լինել Ձեզ: Մտավախություն ունեի, որ այդ գումարը մեր հատուկ միջոցն էր՝ նախատեսված սերմնացուների, գործիքների և անասունի համար, այժմ այն բավական ծուղ է: Խնդրում եմ ուղարկեք հետևյալ հեռագիրը Վուդին.

Չ. Վուդին, ամերիկացի. ---

Փոստով նոր ստացա Ձեր զեկույցը կատարած հիանալի աշխատանքի վերաբերյալ: Մենք երախտապարտ ենք Ձեզ՝ գործադրած հերոսական ջանքերի համար: Հիասկացա գումարի հատկացմանը վերաբերող գրառումը: Ամեն ինչ կարգին է: Հաջողություն եմ մաղթում:

Կ. Բարտոն

Ջ. Հաբելին, ամերիկացի, Արաբկիր Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 11

Ստացա Ձեր հեռագիրը: Ծրագրերը հաջող են, իսկ ողջ աշխատանքը՝ հիանալի: Վուդը հսկայական աշխատանք է կատարում: Ամսի 16-ի Ձեր հեռագիրը ստացա ուշացմամբ: Բ. Դուռն իսկույն պաշտոնական գործողություն ձեռնարկեց: Ձեր «գրառումները»

կցված են հեռագրին: Ամեն ինչ լավ է:

Կ. Բարտոն

Ֆ. Մակքալլմին,
ամերիկացի, Մարաշ — Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 12

Ստացա Ձեր հեռագիրն ու այնտեղի իրավիճակը ներկայացնող նամակը: Մեր սուղ միջոցները կարող են օգտագործվել միայն անասուն, գործիքներ և սերմնացուներ գնելու համար: Դուրս գրեք 1500 լիրա, այժմ մենք պետք է հնարավորին չափով խնայել յուրաքանչյուր լիրան: Ցավում ենք, որ չենք կարող ուղարկել անհրաժեշտ 4000 լիրան, քանի որ լավ ծանոթ ենք այնտեղի կարիքներին և գիտենք՝ ինչպիսի հիանալի աշխատանք է իրականացվել այսքան փոքր գումարով:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս — Բալու, 1896 թ., հունիսի 19

Դուք ճիշտ չհասկացաք հեռագրիս բովանդակությունը: Վաթսունհինգ հազար պիաստրը միսիոներների կողմից տրամադրված գումարն էր, որ հնարավոր չէր այլ կերպ բաժանել: Գյուղերում մենք բաժանում ենք միայն գործիքներ, հագուստ, անկողնային պարագաներ, անասուն և հացահատիկ: Չեմ կարող ավարտել Բալուի և Դիարբեքիրի հատկացումները մինչև հուլիսի մեկը: Այստեղից Սիլվանի գավառակ հասնելը կտևի վեց օր: Նոր ստացա Ձեր մայիսի 15-ին ուղարկած հեռագիրը: Աշխատանքները հաջողությամբ շարունակվում են:

Չ. Վուդ

Ք. Գեյթսին, Խարբերդ — Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 20

Հունիսի 2-ին հեռագրել էի Ձեզ դուրս գրել 5000 լիրան, որ խնայել էինք ես ու Փիթը: Դուք այն դո՞ւրս եք գրել: Մեր տղամարդիկ տեղյա՞կ են արդյոք գումարի մասին, օգտագործո՞ւմ են այն: Պատասխանեք:

Կ. Բարտոն

Ֆ. Մակքալլմին,
ամերիկացի, Մարաշ — Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 20

Հունիսի 12-ին հեռագրել էի Ձեզ դուրս գրել 1500 լիրա սերմնացուների, անասունի և գործիքների գնման համար: Դո՞ւրս եք գրել այն: Պատասխանե՛ք:

Կ. Բարտոն

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս — Խարբերդ, 1896 թ., հունիսի 21

Ուիսթարը կավարտի անասունի և գյուղատնտեսական գործիքների հատկացումը հաջորդ շաբաթ: Վուդն այսօր մեկնեց Ֆարկին: Մեր թարգմանիչը դեռ զբաղված է անասունի ձեռքբերմամբ: Հինտլանն Արաբկիրում է՝ հիվանդների կողքին: Բուշը մեզ հետ մեկնում է Մալաթիա եկող շաբաթ: Հիանալի աշխատանք եք կատարել: Բոլորը լավ են:

Ջ. Հաբել

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս — Խարբերդ, 1896 թ., հունիսի 23

Ձեր աշխատակիցները հրաշալի աշխատանք են կատարում՝ օգտագործելով ուղարկված գումարը:

Ք. Գեթյս

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս — Մարաշ, 1896 թ., հունիսի 23

Ստացա գումարը, շնորհակալությո՛ւն: Մակքալլմը չորեքշաբթի մեկնել է Ձեյթուն և շրջակա գյուղեր:

Հ. Մակքալլմ

Հ. Մակքալլմին,
ամերիկացի. Մարաշ Կ. Պոլիս, 1896 թ., հունիսի 24

Ստացա հեռագիրը: Դուրս գրեք 500 լիրա՝ ավելի շատ անասուն, գործիքներ և սերմնացուներ գնելու համար:

Կ. Բարտոն

(Հինգ հազար լիրա Խարբերդ ուղարկելուց հետո Ամերիկայից հավելյալ գումարներ էինք ստացել, ինչը հնարավորություն տվեց մեզ ավելի լավ արդյունքներով ավարտել աշխատանքը գործողության տարածքներում):

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., հունիսի 27

Հաբելի խումբն այսօր մեկնում է Կ. Պոլիս: Ուիսթարն ու Վուդը կվերադառնան մի շաբաթից:

Ռ. Ֆոնտանա

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Սիլվան, 1896 թ., հունիսի 27

Ժամանել եմ Ֆարկին, 1400 գործիքներ այստեղից ուղարկվում են Դիարբեքիր: Թուրքական իշխանությունները մեզ մեծապես օգնում են և ոչ մի դեպքում չեն միջամտում մեր աշխատանքներին: Կմեկնեմ Խարբերդ երեք օրից:

Չ. Վուդ

Կ. Բարտոնին, Կ. Պոլիս Խարբերդ, 1896 թ., հուլիսի 3

Ես և Վուդը մեկնում ենք Կ. Պոլիս: Խնդրում եմ հեռագրով տեղեկացրեք կնոջս:

Է. Ուիսթար

(Դոկտոր Հաբելը և աշխատակիցները հուլիսի 16-ին ժամանեցին Կ. Պոլիս, պարոն Ուիսթարն ու Վուդը՝ հուլիսի 20-ին):

Կարիք չկա ասելու, թե ինչպիսի երախտագիտության զգացումով ես դիմավորեցի հոգնաբեկ, թխադեմ աշխատակիցներին և գործակալներին, որոնք եկել էին գործողության տարածքից: Այն ժամանակին լի էր դժվարություններով և վտանգներով: Պակաս երախտապարտ չեմ իմ հավատարիմ և շնորհալի քարտուղարին՝ Փուլմընին, ով տքնում էր զօրուգիշեր՝ գեթ մի օր չբացակայելով աշխատանքից, մինչև որ դեմքը նիհարեց, աչքերը ներս ընկան: Նա սիրավառ սրտով մաքառում էր՝ հուսալով, որ ամեն ինչ լավ կլինի և *«երեխաներին կկերակրեն»:*

Երբ առաջին գրկախառնումներն ավարտվեցին և առաջին ճաշը մատուցվեց, տղամարդկանց ողջ երգչախումբը ձայնեց. *«Կրկին առ Հայրենիք», «Ազատության սիրելի երկիր», «Ավելի մոտ եմ քեզ, Տեր»:* Մեղեդին տարածվում էր Կ. Պոլսում Կարմիր խաչի գլխավոր գրասենյակի բաց պատուհաններից դուրս, զարնում քրիստոնյաների և մահմեդականների ականջներին: Եվ չնայած մեղեդին նոր էր և խորթ, բոլոր ներկաները զգացին, որ այն ինչ-որ տեղ, ինչ-որ մեկի համար ավելին էր, քան լոկ երաժշտության հնչյունները:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ելնելով թեմայի կարևորությունից՝ որոշեցինք տեղադրել այս հայտարարությունն առանձին էջում, քան կցել այն զեկույցին՝ որպես շարունակաբար քննարկվող հարցերի մի մաս: Մարդկանց մոտ ակնհայտ շփոթություն է նկատվում օգնություն ցուցաբերելու նպատակով Կարմիր խաչի կողմից գործածվող մեթոդների առնչությամբ: Մենք ցանկանում ենք այս հայտարարությունն անել այնպիսի շեշտադրությամբ, որ հոդվածը մակերեսորեն ընթերցողները ևս կարդան՝ *Ամերիկյան ազգային կարմիր խաչը երբեք չի հարկադրում կամ խնդրում հասարակությանը օժանդակել իրեն՝ հասնելու որևէ նպատակի:* Կարմիր խաչի համար անընդունելի են անգամ ժամանցի միջոցով, ինչպիսիք են թեյի հյուրասիրությունը, ցուցահանդեսները և այլն, գումարի հավաքման ավանդական կամ ճանաչված եղանակները: Մենք ժամանակ առ ժամանակ տեղեկանում ենք հանգանակության նման մեթոդների գոյության մասին, ըստ երևույթին, Կարմիր խաչի միջոցով: Այս մեթոդները կիրառվում են Կարմիր խաչից զատ կազմակերպությունների կամ մարմինների կողմից, որոնք օգտագործում են Կարմիր խաչի չպաշտպանված անունն ու տարբերանշանները իրենց անձնական նպատակների համար և հենց այդ նպատակով են կիրառում նշված մեթոդները, իսկ միջոցները երբեք չեն ուղղվում ազգային կազմակերպությունների օժանդակ աշխատանքներին:

Մենք միշտ և հստակորեն առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքով. բարեգործությունն ու բարերարությունը արժեզրկվում են, երբ նվազեցվում և կախվածության մեջ են մտնում մուրացկանության համակարգի հետ: Մենք ոչ միայն հասարակայնորեն քարոզել, այլև գործնականում խստորեն կիրառել ենք այս սկզբունքը:

Որոշ ընթերցողներ, միգուցե, հիշեն այն հոդվածը, որ հայտնվել էր *«Նյու Յորք Թրիբյունի»* 1896 թ. մայիսյան թողարկման մեջ: Ներկայացնում ենք հետևյալ սեղմ քաղվածքը սույն թողարկումից.

«Բավարար կլինի մի քանի տողեր մտորել և հիշեցնել ձեր ընթերցողներին այն փաստը, որ իր գոյության 14 տարիների ընթացքում Ամերիկյան կարմիր խաչը, օգնություն տրամադրելով գործողության բազմաթիվ տարածքներում, երբեք չի դիմել ոչ մեկի՝ իրեն օժանդակելու նպատակով: Կարմիր խաչի առաջին և հաստատուն սկզբունքն է երբեք

օժանդակություն չխնդրել: Կազմակերպության մեթոդն է՝ անմիջապես մեկնել նշված աղետի վայր՝ իր իսկ միջոցներով, պարզապես տեղեկացնել հանրությանն իր այցելության մասին, ուսումնասիրել և ծանոթանալ իրավիճակին, ազնվորեն տեղեկություն տրամադրել մարդկանց հանրային, նաև մասնավոր աղբյուրների միջոցով: Նման լիովին վստահելի տեղեկատվությունը մեզ միշտ բավարարել է:

Կարելի է հիմնավոր կերպով նշել՝ բանիմաց, մարդասեր և լիբերալ ամերիկյան ժողովրդին անհրաժեշտ է միայն հավաստիացնել, որ կա իրականում կարիք կա, և ցույց տալ այն ուղին, որով հնարավոր է օգնություն տրամադրել՝ ակնկալելով անհրաժեշտ գործողություններ: Նրանք նույնքան մարդասեր են, որքան մենք, և կարիք չկա մեզնից առատաձեռնություն պահանջել: Կարմիր խաչը կշարունակի հան-ությանը հստակորեն ներկայացնել իրավիճակները, սակայն չի հավակնի բարեգործական մենաշնորհի»:

ԷՄՄԱ ՄԵՅՍԸՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Միգուցե հիմնականում մայրական քնքուշ սիրո զգացմունքն էր իր որդու՝ Էռնեստի հանդեպ, որ ստիպեց Էմմա Մեյսընին ուղեկցել մեզ: Նրանց ընտանիքը երկար ժամանակ բնակվել էր արևելյան երկրներում, տիրապետում էր մի շարք լեզուների, իսկ ավագ որդուն որպես լեզվաբանի, ներգրավել էինք մեր առաքելության մեջ:

Մայրը նպատակ ուներ հասնել Իտալիա, ուր սիրված քաղաքացի էր: Նա գտնվում էր Վաշինգտոնում, նոր էր ապաքինվել սուր հիվանդությունից: Լոնդոնում նրա մոտ սկսվեց հազի սուր նոպա, որը ժամանակի ընթացքում ուժգնացավ: Կ. Պոլսում մի քանի օր ակտիվ կյանք վարելուց հետո տիկին Մեյսընը գամվեց անկողնուն: Նա քաղաքի լավագույն և հմուտ բժիշկների՝ իտալացիների ու անգլիացիների խնամքի տակ էր: Մի հիվանդությունը ծնեց մյուսը, մինչև անհրաժեշտություն առաջացավ տեղափոխել նրան հիվանդանոց Իտալիայում, ուր նրան ավելի լավ կխնամեին, քան տանը: Մեզնից ոմանք մնում էին նրա կողքին ամեն օր: Տիկին Մեյսընը կենսուրախ էր և հույսը չկորցրեց մինչև վերջին վայրկյանը: Նա մեզնից հեռացավ մարտի 24-ի գիշերը:

Տիկին Մեյսընը մեր ներկայացուցչության և գլխավոր հյուպատոսության աշխատակիցների ուշադրության կենտրոնում էր: Կարեկցասիրտ ամերիկացիներից բաղկացած փոքրիկ պաշտոնական խումբը ներկա էր թաղման արարողությանը: Նրա մասունքներն առ այսօր հանգչում են իտալական գեղեցիկ գերեզմանոցում՝ գարնան շուշանների և մանուշակների ներքո:

Չկա շնչող ավելի քաղցր հոգի,
Քան էլիզաբեթը՝ կինն իմ զավակի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Մարտադաշտի հրեշտակի» հայկական առաքելությունը 3

Ամերիկյան ազգային կարմիր խաչի նախագահ և
գանձապահ Կլարա Բարտոնի զեկույցը 16

Ամերիկյան ազգային կարմիր խաչի ֆինանսների
քարտուղար Ջորջ Հ. Փուլմրնի զեկույցը 66

Ֆինանսական հաշվեկշիռը 1896 թ. Փոքր Ասիայում
տրամադրած ծառայությունների և օգնության վերաբերյալ 78

Անատոլիայի ներքին շրջանների առաքելությունների
պատասխանատու, դաշտային ընդհանուր գործակալ
Ջ. Բ. Հաբելի (բ. գ. դ.) զեկույցը 82

Դոկտոր Հինդլյանի ենթագեկույցը 108

Երկրորդ առաքելության պատասխանատու, դաշտային
հատուկ գործակալ Էդուարդ Մ. Ուիթարի (Ֆիլադելֆիա) զեկույցը 111

Երրորդ առաքելության պատասխանատու, դաշտային
հատուկ գործակալ Չարլզ Քինգ Վուդի (Ֆիլադելֆիա) զեկույցը 122

Մարաշ և Զեյթուն քաղաքների չորրորդ օժանդակ դաշտային
առաքելության պատասխանատու բժիշկ,
դոկտոր Այրա Հարիսի (Տրիպոլի, Սիրիա) զեկույցը 138

Գործողության տարածքից ուղարկված
և ստացված հեռագրեր և այլ նյութեր 148

Հեռագրեր 150

Կարմիր խաչի սկզբունքները 189

Էմմա Մեյսընի հիշատակին 191

[3000 դր.]

ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0282074

А 8
99326

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ